ԳԱՐԵԳԻՆ ԽԱԺԱԿ



ԻՆՉ Է ԴԱՍԱԿԱՐԳԸ

Ի՞ՆՉ Է ԴԱՍԱԿԱՐԳԸ

ՄԱՏԵՆԱՀԱՐ
Հ. Յ. Դ. ՋԱՒԱՐԵԱՆ
ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

ԹԻՒ 5

ԳԱՐԵԳԻՆ ԽԱԺԱԿ

Ի՞ՆՉ Է ԴԱՍԱԿԱՐԳԸ

ՀԱՄԱՉԳԱՅԻՆԻ ՎԱՀԷ ՍԷԹԵԱՆ ՏՊԱՐԱՆ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

1972ին կը վերհրատարակէինք Քրիստափոր Միքայէլեանի «**Յեղափոխականի մտքերը**», իբրեւ առաջին գործը՝ «Մատենաշար Հ. Յ. Դ. Զաւարեան Ուսանողական Միութեան»: Ցստակ առաջադրանքով կը սկսէինք այս շարքի նախաձեռնութեան, — սատարել սփիւռքահայ երիտասարդութեան գաղափարաբանական-քաղաքական մտածողութեան բիւրեղացման, յղկումին, որպէսզի ուրոյն մօտեցումով, խիզախ կեցուածք ցուցաբերեն բոլոր այն հարցերուն նկատմամբ, որոնք կը պըղտորեն, կը շեղեն հայ երիտասարդը իր հարազատ մթնոլորտէն՝ **հայկականութենէն:**

Գարեգին Խաժակի «**Ի՞նչ է դասակարգը**» խորագրեալ գիտական ուսումնասիրութիւնը կ'ըլլայ մեր մատենաշարի հինգերորդ հրատարակութիւնը: Դաշնակցական տեսաբանի այս գործը, ամէն բանէ առաջ, իր ժամանակին մէջ պէտք է առնել, որովհետեւ հասարակագիտական վերլուծումները կը թուին «հինցած» ըլլալ ժամանակի ներգործօն ապդեցութեան տակ: Որպէսզի էապէս գաղափարաբանական բովանդակութիւն ներկայացնող այս գիտաշխատութեան բնութագրումը առարկայական եւ իրապաշտ ըլլայ, պէտք է մեկնի 20րդ դարու տիրող գաղափարական հոսանքներու ունեցած տարածուն կամ նեղ տրամագիծէն, յաճախ, ներյայտ հակասական մեկնակէտներու անճշգրտութենէն,

յատկապէ՛ս գաղափարական նախապաշարումներու սեղմումներու աներեւոյթ թափառումներէն:

Գ. Խաժակի **«Ի՞նչ է դասակարգը»** երկը հիմնականին մէջ կը ձաղկէ վուտ նիւթապաշտական-մարքսական խորք ունեցող դպրոցի աշխատաւորութեան սահմանումը եւ ատով իսկ թերի մեկնաբանութիւնը՝ դասակարգի, հետեւաբար, դասակարգային պայքարի մասին:

Գ. Խաժակի մտածումի վարգացման գլխաւոր առանցքը կը կազմէ գիւղացիութիւնը եւ ընկերային ամէն տեսակի շահագործումներու դէմ պայքարին մէջ անոր ունենալիք դերակատարութիւնը: Հոս տեղին է շեշտել, թէ Գ. Խաժակ ի մտի ունի Հայաստանի իրականութիւնը, ուր բնակչութեան ջախջախիչ մեծամասնութիւնը գիւղացիութիւնն էր:

Դասակարգերու չարիքին արմատը կը կայանայ անհատական սեփականատիրութեան մէջ, այն սեփականատիրութեան, որ շահագործող է եւ կեղեքող: Գ. Խաժակ իր սուր եւ խուզարկու դատողութեամբ կը մատնանշէ գաղափարական այն շփոթը, որ կայ սեփականատիրութեան, արտադրամիջոցներու, «յաւելեալ արժէք»ի եւ հողի սահմանումներուն միջեւ:

Ուշագրաւ է, առանձնաբար, Խաժակի քննադատական մօտեցումը դասակարգի եւ ազգի միջեւ անմիտ եւ յերիւրածոյ հակադրութեան:

Գ. Խաժակի այս աշխատասիրութիւնը կերպով մը վկայաբանութեանց համադրում մըն է նաեւ:

Ան կը մէջբերէ հողին առընչութեամբ վերաքննական մարքսական մտաւորականներու վերլուծումները: Փաստարկումներու մէկտեղումը եւ գաղափարական քողազերծումները բաւարար չափով լոյս կը սփռեն ընկերվարական կնճռոտ հարցերու պարզաբանումին վրայ:

Աշխատաւորութեան սահմանումը եւ աշխատանքի «յաւելեալ արժէք»ի բացատրութիւնները, կը կարծենք, արդի արհեստագիտական զարգացումին եւ վուգահեռ կառոյցներու ստեղծման բերումով, վերատեսութեան կ'ենթարկուին, ըստ պայմաններուն եւ կացութեանց: Արդ, դասակարգային երեւոյթներու խարսխումը միայն տնտեսական դատանիշերու վրայ պիտի նշանակէ անգամ մը եւս արծարծել դասակարգ-հայրենիք յարակարծութեան (paradoxe) անիմաստ թնճուկը:

Հայ գաղափարապաշտ երիտասարդութեան, մանաւա՛նդ դաշնակցական ուսանողութեան համար դասակարգի եւ դասակարգային պայքարի գընահատումը գիտական լուրջ քննարկման հարց է արդի ընկերութեան մէջ: Հակամէտ ենք կարծելու, որ այս գործը կ'առաջնորդէ յաւելեալ յստակացման, պայծառութեան, հրամայական իրատեսութեան եւ իրապաշտութեան:

Հ. Յ. Դ.
ՋԱՀԱՐԵԱՆ ՈՒՍ. ՄԻՈՒԹԻՒՆ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Մարդկային հասարակութիւնները շարժող լծակը մարդն է իր բովանդակ կարիքներով եւ իր ստեղծագործական ուժով:

Պատմութեան ընթացքում երբեք մարդ էակն անհատաբար չէ գործել: Նա միշտ ասպարէզի վրայ երեւացել է խմբական ձեւերով: Նախապատմական շրջանում մարդկութեան արտայայտութեան ձեւերը եղել են «անիշխանական խմբակները», տոհմերը, ցեղերը եւ ցեղերի դաշնակցութիւնները:

Գրաւոր պատմութիւնը բացւում է պետական հաղաքակրթութիւնների հետ միատեղ: Եւ երեւան են գալիս *ազգերն* ու *դասակարգերը*: Այդ երկու ձեւերն էլ անծանօթ էին վայրենի ու բարբարոս հասարակութիւնների համար:

Մեր նախընթաց աշխատութեան մէջ մենք պարզեցինք ազգութիւնների ծագումը, նրանց էութիւնը եւ նրանց կոիւը: Սակայն պատմութեան ընթացքում մենք հանդիպում ենք ոչ միայն ազգերի ընդհարումների, այլ շատ յաճախ, նոյնիսկ աւելի յաճախ քան ազգերի բախումները, մենք տեսնում ենք *դասակարգերի* ընդհարումները, նրանց կոիւները:

Այս վերջին կոիւները այնքան յաճախ են, որ

տաղանդաւոր ընկերաբաններից ոմանք մարդկային պատմութեան միակ լծակը համարեցին այդ կռիւը:

Այսօր հայկական յետամնաց միջավայրում էլ դասակարգային կռիւը մարդկանց սկսում է բաժանել որոշ խմբակցութիւնների: Հայերս ոչ դրժբախտ, ոչ էլ երջանիկ բացառութիւն ենք կազմում մարդկային պատմութեան մէջ: Մեր հասարակական կեանքն էլ պիտի ընթանայ, չնչին տարբերութիւններով, միւս ազգերի կեանքերի ընդհանուր ուղիով:

Դասակարգային կռիւը, որ դեռ եւս նոր է ձեւաւորւում մեզանում, առաջ է բերել զանազան հոսանքներ եւ կրքեր: Ոմանք պնդում են, որ ընկերվարականները, լինելով դասակարգային կազմակերպութեան կողմնակիցներ, պառակտում են մտցնում հայութեան մէջ, հայ ազգի ամբողջութիւնը, նրա միաձոյլ զանգուածը դատապարտում են բաժանման, ուրեմն եւ թուլացման:

Այս փոքրիկ աշխատութիւնով մենք ուզում ենք պարզել գիտութեան տեսակէտը դասակարգերի ծագման, նրանց էութեան եւ նրանց կռուի մասին եւ ապա բնութեան առնել *ազգի* եւ *դասակարգերի* փոխադարձ յարաբերութիւնները:

Մենք կարծում ենք, որ դրանով վերացրած կամ գէթ պարզած կը լինենք մի բանի վնասաբեր թիւրիմացութիւններ:

Գ. Խ.

Կ. Պոլիս, 1 *Փետրուար* 1912

ԳԼՈՒԽ Ա.

Մարդկային պատմութեան բաժանումն ըստ դասակարգերի — Առաջին շերտաւորումներ — Կին եւ այր — Մարդակերութիւն — Մարդը մարդու համար գայլ — Սկզբնական համայնքի քայքայումը — Ստրկութիւն — Դասեր Հռոմում եւ Աթէնքում — Դաս, կաստա [խաւ] եւ դասակարգ — Ճորտատիրութիւն — Հին եւ միջնադարեան աշխարհի բախումը — Քաղաքներ եւ համքարութիւններ կամ էսնաֆութիւններ — Սրանց քայքայումը — Մանուֆակտուրա կամ ձեռագործ արտադրութիւն — Մեքենան եւ դրամատիրութիւնը [capitalisme] — Վարձու բանուորութիւն:

Մարդկային հասարակութիւնների կեանքն ընդունուած է բաժանել երեք խոշոր շրջանների. վայրենական վիճակ, բարբարոսութեան շրջան եւ քաղաքակրթական աստիճան: Եթէ հասարակութիւնների զարգացման այդ ամբողջ ընթացքի վրայ մենք նայելու լինենք սեփականութեան տեսակէտից, եթէ նրանում մենք որոնելու լինենք դասակարգերի գոյութիւնը, այն ժամանակ վերեւում յիշուած երեք շրջանը կը չքանայ, կը դառնայ միայն երկու շրջան:

Եւ յիրաւի, ամբողջ մարդկութեան գոյութիւնը կարելի է վերածել երկու շրջանի, իրարից բաւական զգալի կերպով բաժանուող. մարդկային պատմութեան անդասակարգ, «անշերտաւոր» շրջան եւ նոյն պատմութեան դասակարգաւոր կամ շերտաւորուած շրջան:

Ինչ ասել կ'ուզէ, որ չկայ, գոյութիւն չունի ոչ մի չնչաւոր բաժանարար գիծ այդ երկու շրջանների մէջ: Մարդկային պատմութեան անդասակարգ շրջանն սկսւում է այն ժամանակներից, երբ չորեքթաթների տեսակից առաջին անգամ գոյացաւ, դանդաղ բարեշրջման շնորհով սերունդ մարդ-բանականը (homo sapiens) և կապմեց մի առանձին, աւելի բարձր տեսակ իր նման կենդանիների աշխարհում: Տասնեակ ու թերեւս հարիւր հազարաւոր տարիներ առաջ, խաւար ու անյայտ անցեալի գրկում ծնունդ առած մարդարարածը, նման լինելով բարձրագոյն կաթնասունների երկթաթ (bimane) կամ չորեքթաթ տեսակներին, չէր կարող ունենալ իր մէջ ոչ մի ըստորարաժանում, բացի էգն ու արձը, մանուկը, հասակաւորն ու ծերը, ուժեղն ու թոյլը: Մանրիկ հասարակութիւններով, կամ աւելի ստոյգ է ասել՝ «անիշխանական հորդաներով» ապրող մարդկային այդ հասարակութիւնների ներսում, բացի անհատական տարբերութիւնները, չէին կարող լինել ուրիշ տեսակի շերտաւորումներ, կամ, ինչպէս ընդունուած է ասել, դիֆֆերենցիացիա (difference=տարբերութիւն):

Մարդկային արեւնակից այդ խմբակների նեղսում, թէ՛ վայրենութեան եւ թէ բարբարոսութեան շրջաններում, տնտեսական տեսակէտից բոլոր անհատները եղել են հաւասարազօր: Նրանց ամբողջ խմբակը կազմելիս է եղել մի օրգանական ամբողջութիւն, բաղկացած չատ կամ քիչ թուով իրար միանգամայն իրաւահաւասար անհատներից: Հողը, որ այդ շրջանում ծառայել է իբր որսատեղ, իբր մի վայր, ուր ապրուստ են ճարել,— պատկանելիս է եղել բոլորին: Ինչ կասկած, որ հողերն այնքան առատ պիտի լինէին, որ մարդիկ նրանում նեղութիւն չքաշէին: Սակայն, ինչպէս բարձրագոյն կենդանիների կեանքը մեզ ցոյց է տալիս, այդ աստիճանի վրայ անգամ՝ սկզբնական մարդը պիտի պաշտպանէր իր «երկիրը», իր որսատեղը, իր հայրենիքը օտարներից, այսինքն այն անձերից, որոնք յանդգնում էին մտնել նրա որսատեղի սահմանը կերակուր ճարելու կամ մի այլ նպատակով:— Արեւնակից տոհմի բոլոր անդամները միասին էին որս անում, միասին ձուկ որսում, միասին պտուղներ ու արմատներ հաւաքում,— կարճ՝ միասին էին աշխատում, միասին ապրում, թշնամու դէմ միասին կռուի դուրս գալիս եւայլն: Դա է որ ընկերաբանութեան մէջ կոչւում է սկզբնական կոմունիզմ [համայնավարութիւն]:

Այդ սկզբնական կոմունիզմը,— որքան որ բերանացի աւանդութիւնները, գրաւոր յիշատակարանները եւ հնութեան այլ մնացորդները թոյլ

են տալիս պատմական դիտումներին եղրակացնելու, տեսել է զանազան երկրներում ոչ միայն չափ չրջաններով: Արեւելքի խոշոր քաղաքակրթությունների պատմության սկիզբը թաղուած է հնության մէջ: Չինաստանի, Փէնջափի, Աքէմենեան Պարսկաստանի, Քաղդէայի, Ասիրօ-Բաբելոնի եւ Եգիպտոսի պատմութիւնների ոչ միայն նախօրեակները են մեզ անյայտ, այլեւ դեռ պարզ ու անվիճելիօրէն չեն ստուգուած նրանց սկզբնական քայլերը քաղաքակրթության մէջ, պետական կառուցուածքում եւայլն: Սակայն Յունաստանն ու Հռոմը մեզ տալիս են ոչ միայն իրենց քաղաքակրթության առաջին քայլերի պարզ ու մեկին պատկերները, այլեւ իրենց նախապատմության վերջին չրջանները: Այդտեղ մենք վկայ ենք լինում արենակից եւ հաւասարասէր տոհմի քայքայմանը եւ դասակարգերի ծննդեան պրոցեսին (գործողության): Մենք տեսնում ենք, թէ ինչպէս աստիճանաբար քայքայւում է սկզբնական կոմունիզմը եւ նրա տեղը բռնում է մասնաւոր սեփականութիւնը, թէ ինչպէս միապաղաղ հասարակութիւնը, բաղկացած իրար միանգամայն հաւասար իրաւատէր անհատներից, սկսում է չերտաւորուիլ, ծնեցնել իր գրկում դասեր, կաստաներ ու դասակարգեր:

Ինչպէս ասացինք, սկզբնական կոմունիզմը բոլոր երկիրներում հաւասարաչափ ժամանակ չտեւեց: Մի քանիսում նա չափազանց չուտ քայքայուեց, տեղի տալով մասնաւոր սեփականու-

թեան, աշխատանքի բաժանման եւ դասակարգերին. մի այլ տեղ նա մի քիչ աւելի ուշ վերջացաւ, իսկ մի քանի վայրերում նա, այս կամ այն ձեւով ու չափով, դեռ մինչեւ օրս էլ չարունակւում է՝ իբր կենդանի նախապատմութիւն (préhistoire vivante): Այդպէս է, օրինակ, Աֆրիկայի մի քանի վայրենի ցեղերի վիճակը, այդպէս են Դակոտաները, Բատակուանները, Պատագոնացիները եւ մի քանի էսկիմական ցեղեր Ամերիկայում. այդ վիճակին են աւստրալական Կրոկինեներն ու Կումիտները, մի քանի Պապուներ եւայլն:

Ամենառաջին ու սկզբնական չերտաւորումը մարդկային հասարակութեան մէջ մարդ ու կնոջ տարբերումն է, մի տարբերութիւն, որ որոշ ձեւով գոյութիւն ունի նաեւ բարձրագոյն կենդանիների մէջ: Էգի եւ արձի տարբերութիւնը, — ի հարկէ ոչ իբր սեռերի տարբերութիւն, այլ իբր ուժեղութեան ու թուլութեան զանազանութիւն, — արդէն նկատւում է մի քանի կենդանական տեսակների մէջ: Այսպէս՝ թռչուններից մէջ առհասարակ էգն աւելի թոյլ է լինում, մարմնով յաճախ փոքր, զուրկ գունաւոր փետուրներից եւ այլ զարդերից: Նոյն արտաքին տարբերութիւնները մենք նկատում ենք նաեւ առիւծների, վագրերի, փղերի ու կապիկների մէջ, սակայն ներքինը՝ այսինքն ուժերի տարբերութիւնն այդտեղ ոչ միայն աչքի չէ ընկնում, այլ յաճախ էգը չատ աւելի կատաղի ու անխնայ է լինում, քան արձը:

Մարդկային հասարակութեան ծագման չըր-

ջաններում, հաւանօրէն, նոյնատեսակ վիճակի էին լինելու սեռերն, ինչպէս այժմ կապիկների մէջ են նրանք: Այդ եւ կնոջ տարբերութիւնը, — երեւի մասամբ ծառերի վրայ մագլցող, մասամբ արդէն երկրի վրայ ապրող — կայացել է լոկ սեռական օրգաններում, իսկ այժն ու աշխատանքի ունակութիւնը կնոջ մօտ եղել է համարեա՛ նոյնը, ինչ որ տղամարդունը:

Մարդկային հասարակութիւնը որքան աւելի ջոկուել է անասնութիւնից ու զարգացել, այնքան աւելի չեչտուել է էգի եւ արձի տարբերութիւնը: Վայրենութեան ստորին վերջերում՝ բարբարոսութեան շրջանի սկզբներում, հաւանօրէն այդ տարբերութիւնն արդէն այնքան է աճել, որ կամայ կամայ սկսել են երկու սեռերի զբաղմունքները տարբերուել իրարից: Կենդանիների ընտանեցումը, լինելով մի հսկայական առաջդիմական քայլ եւ բարօրութեան աղբիւր մարդկութեան համար, դարձել է կնոջ ստրկացման առաջին դրդապատճառներից մէկը: Բազմացող ու աճող հօտերին ձմեռը տաք-բարեխառն գօտու երկրներում կերակրելու համար՝ անհրաժեշտօրէն մարդ-էակը մտածել է ցանել ամէնից արագ աճող եւ բեղմնաւոր բոյսերը, հացահատիկները, հնձել, կուտակել նրանց: Ձմրան համար իրը կերակուր իր հօտերին երկար ժամանակ ծառայեցնելուց յետոյ է, որ մարդը, կարիքից նեղուած, փորձել է իրը իր սեփական կերակուր ծառայեցնել իր կենդանիների հատիկները: Սկսուել է երկրագործու-

թիւնը: Կինը, իբր մայր նորածիններուն, որ չէ կարող իր գաղջը բեռով չատ հեռու գնալ, եւ իբր արդէն աւելի թոյլ կամ գոնէ աւելի նուազ ճարպիկ էակ քան տղամարդն, սակայն ծախսուած է եղել մընալ բնակավայրի մօտերը, կատարել երկրագործական ու տնական աշխատանքները, միաժամանակ եւ հսկելով մանուկներուն ու դեռահասներուն վրայ, ի հարկէ՝ տեղն եկած ժամանակը փառաւորապէս եւ կառուցելով իր սեփական օջախի պաշտպանութեան համար: Իսկ տղամարդն իր վրայ է վերցրել ինքնապաշտպանութեան խիստ ծանր գործը եւ որսորդութիւնը: Որովհետեւ ինքնապաշտպանութիւնը պիտի կատարուէր չրջապատի բազմաթիւ ու անընդհատօրէն յարձակուող ցեղերի եւ ոչ նուազ վտանգաւոր ու բազմաթիւ գազանների դէմ, այդ պատճառով հասարակութեան ամենահին պաշտօնների մէջ հաւանօրէն առաջին տեղը բռնելու էր այդ իսկ գործը:

Ինչ կասկած որ սեռերի այդ բնական բաժանումից բխած հասարակական չերտաւորումը չէ ներկայացնում ոչ դասակարգ, ոչ դաս, ոչ էլ կաստա: Որդեծնութեան գործողութիւնից, նրան նախորդող ու յետնորդող պարտականութիւններից եւ այդ ամէնից բխած բնական թուլութիւնից առաջ են եկել սեռերի ֆիզիքական տարբերութիւնները, որոնք իրենց կարգին, պիտի բխեցնէին որոշ աշխատանքի բաժանում երկու սեռերի միջեւ: Բայց երբ մի անգամ բխել է այդ զբաղմունքների տարբերութիւնը, նա ազդել է այդ երկու սեռերի

մտաւոր ու բարոյական աշխարհների վրայ: Աւելի ուժեղն ու ճարպիկը, որ սկզբներում համարեա՛ աննշմարելի տարբերութիւններ ունէր էգից, աստիճանաբար աւելի եւս ուժեղանում է թէ՛ ֆիզիքական վարժութիւններով, թէ՛ ուղեղի փորձառութիւնով եւ դառնում է տէր հասարակութեան ներսում, աստիճանաբար հանդիսանալով հրամայող խեղճացող, յետ մնացող սեռին: Վերջ ի վերջոյ առաջւում է կնոջ ենթակայութիւնը եւ այր մարդու բռնապետութիւնն իրը կնոջ մասնաւոր սեփականատիրոջ:

Կրկնում ենք՝ այդ բաժանումը դասակարգային չերտաւորում չէ հասարակական օրգանական ամբողջութեան ներսում, այդ պատճառով էլ մենք, ստորագծելով, կամ աւելի շուտ, մատնացոյց լինելով այդ երեւոյթի վրայ, չենք զբաղւում նրա ոչ մանրամասն քննութիւնով, ոչ պատճառների ու հետեւանքների պարզաբանութիւնով, ոչ էլ նրա զարգացման պատմութիւնով:

Մարդկային արեւնակից խմբակների համար, բնականօրէն, ամէնից աւելի հոգ պատճառող խնդիրը լինելու էր գոյութեան կռիւը, այսինքն՝ թէ՛ անձնապաշտպանութիւնը նմանների ու գազանների դէմ եւ թէ ապրուստի միջոց հայթայթելը: Այդ երկու կարեւոր պաշտօններն (ֆոնկսիոն) էլ նրանք կատարում էին համայնօրէն, խմբով, որովհետեւ թէ՛ անձնապաշտպանութեան եւ թէ արտադրութեան գործիքները հնարաւորութիւն չէին ներկայացնում ոչ անհատօրէն պաշտ-

պանուելու մարդկանցից ու գազաններից, ոչ էլ անհատօրէն արտադրելու, կերակուր ճարելու:

Գոյութեան կռուի այդ կրկնակի յատկութիւնը մարդկային այդ մանրիկ խմբակներին դնում էր իրար հետ անվերջ ընդհարումների մէջ: Ամէն մի խմբակ, զարգացման սկզբնական շրջանում, հաւանօրէն թափառելիս է եղել որոշ, բաւական սահմանափակ վայրում, որովհետեւ սխալ է կարծել, թէ սկզբնական մարդը թափառում էր անտառների ու դաշտերի հսկայական տարածութիւններում, ոչ, հաւանօրէն նա վախենում էր այսինչ բլրից, այնինչ ձորից կամ անտառից այն կողմն անցնել, որովհետեւ անյայտութիւնը նրան սարսափեցնում էր: Թէ՛ խմբերի մանրութիւնը եւ թէ նրանց ընդհանուր թուի քչութիւնը պէտք է որ սկզբնական շրջաններում նրանց աւելի քիչ առիթներ տային իրար հանդիպելու, իրար զարնուելու, քան յետոյ, երբ թէ՛ արեւնակից խմբերն էին մեծանում եւ թէ խմբերի թիւն էր բազմանում, կամ, ինչպէս ընդունուած է ասել, երկրի աղգաբնակութեան ընդհանուր խտութիւնն էր մեծանում:

Իրար հանդիպում էին խմբերը որսատեղի սահմաններում իրար ձեռքից որսը խլելիս, գիտակցաբար, կանխամտածուած յարձակում գործելիս իրար վրայ՝ թալանի, մարդ, կին, անասուններ փախցնելու որոշ նպատակներով: «Վա՛յ յաղթուողին»: Սկզբնական շրջաններում ամենեւին միտք չունէր բռնել յաղթուածներին, տանել

իրենց տոհմի բնակարանը, պահել իրը դերի, իրը ստրուկ աշխատցնել նրան. միտք չունէր, որովհետեւ ստրկացուածը եթէ ամբողջ օրը ժիր աշխատէր, հազի՛ւ հազ իր «փոր հացը», իր ուտելիքը պիտի հանէր: Բացի այդ՝ միշտ ու անընդհատ պիտի տէրերը «չորս աչքով» նայէին նրա վրայ, հսկէին, որ չլինի թէ բռնէր սրա կամ նրա կոկորդից, սպաննէր իրը թշնամու եւ փախչէր, ազատուէր: Արտաքրուքեան գործիքների ծայրայեղ խակութիւնը թոյլ չէր տալիս այդ անվերջ ընդհարումների մէջ բռնուածներին պահել, ըստըրկացնել, որպէսզի նրա «յաւելեալ արժէքը» մշտապէս իւրացնեն. յաւելեալ արժէք չկար, չէր կարող լինել, որովհետեւ աշխատանքն արդիւնաւոր չէր:

Բռնած գերիներին ուտում էին եւ ոչ ստրկացնում: Դա մարդակերութեան շրջանն էր:

Այո՛, մարդկային այն արեւնակից խմբակները, որոնց ներսում բացարձակ կոմունիզմ եւ լիակատար իրաւահաւասարութիւն էր թագաւորում, որի ամէն մի անդամը պատրաստ էր զոհուել միւս անդամի, արեւնակից խմբերի համար, որի ներսում ալտրուիզմը կամ այլասիրութիւնը լիապէս տէր էր եւ էգոիզմի (եսասիրութեան), «իմ եւ քո»ի հասկացողութեան հետքն անգամ դեռ չէր կարող լինել. այդ խմբակներն իրար մէջ, մէկը միւսի համար կատարեալ գազան էին, հակառակորդ, մահացու թշնամի կամ, մի քիչ աւելի զարգացած՝ բարբարոսական շրջանում՝ մի

քանի խմբակներ, որոնց մէջ դեռ թարմ էր նախկին արեւնակցական կապի յիշատակը, կազմելով տոհմերի մի կապակցութիւն կամ մի ցեղ (tribu), վարում էին նոյն եռակող թշնամական յարաբերութիւնը միւս տոհմերի (gens) կամ տոհմերի խմբերի (fratrie) եւ կամ ցեղերի հետ: Այդ շրջանում «մարդը մարդու համար գայլ» էր:

Մարդկային ցեղի դանդաղ զարգացումը կամ բարեշրջումն առաջ էր գնում: Թուի աճեցողութիւնը եւ երկար կենակցութիւնը կամ կուտակուած փորձառութիւնը, որ կազմում է մարդկային նախ բանաւոր եւ ապա գրաւոր դիտութիւնն, ստեղծում են աւելի եւ աւելի կատարելագործուած միջոցներ մարդ-արարածի պահանջներին բաւարարութիւն տալու համար: Բարբարոսութեան շրջանում կենդանիների ընտանեցումը դառնում է այն ուժեղ հարուածներից մէկը, որ պիտի քանդէր նախնական համայնակեցութիւնը եւ սկիզբ դնէր մասնաւոր սեփականատիրութեան: Մարդ անհատը կարող էր «իր ընտանեցրած» կենդանու տէրը լինել, մասնաւոր սեփականատէրը, ինչպէս եւ իր փախցրած կնոջ մասնաւոր ամուսինը: Ինչ կասկած, որ սկզբներում կենդանիներ բռնելն ու ընտանեցնելն էլ լինում է համայնօրէն, իսկ յետոյ, աստիճանաբար փորձառութիւնն աճելով, մարդը սովորում է կենդանիներին բռնելու նոր ու նոր միջոցներ, եւ վերջապէս, հասնում է այնպիսի վիճակի, որ կարելի է անհատաբար տիրել կենդանուն, նրան ընտանեցնել, մեծացնել, աճեցընել:

կենդանիների ընտանեցումը, նրանից առաջ դեռ բրուտութիւնը եւ նրանից էլ յետոյ մանաւանդ երկրագործութեան սկզբնաւորումը սաստիկ չօրացրին մարդկային աշխատանքի սաստկութիւնը կամ էնտանսիտէն, նրա արդիւնաւորութիւնը: Մարդ-անհատի օրական աշխատանքն այնուհետեւ սկսեց ոչ միայն բաւականութիւն տալ աշխատասէր անհատի կարիքներին, այլեւ նա կարող էր տալ որոշ յաւելեալ արժէք, ի հարկէ որոշ պարագաներում: Եթէ աշխատասէր անհատն ապրէր իր ժամանակի զարգացման բարձրութեան վրայ, լիապէս բաւարարելով իր բոլոր պահանջներին, ի՛նչ ասել կ՚ուզէ, որ նրա աշխատանքի արդիւնքը հազիւ «ծայրը ծայրին հասցնէր», իսկ եթէ ոեւէ ուժեղ անհատ բռնէր նրան եւ ստիպէր աշխատել ու սպառել միայն այնքան, որ սովից չըմեռնի, այսինքն ամենաանհրաժեշտ նուազագոյն չափը,— ինչ ասել կ՚ուզէ, որ նրա աշխատանքի արդիւնքից կարող էր մնալ մի բան: Եւ այդ երեւոյթը չուշացաւ:

Մարդակերութեան չրջանից կամաց-կամաց մարդկային բարբարոս հասարակութիւնները բսկըսեցին անցնել ստրկատիրական չրջանին: Այդ երեւոյթը, հասանօրէն, պիտի տեղի ունենար բարբարոսութեան վերջին չրջանում, երբ արեւնակցական խմբակցութիւնները կամաց-կամաց մօտենում էին լուծուելու, երբ մի կողմից մարդիկ արդէն սկսում էին հնարել իրենց մաքերն արտայայտելու լաւագոյն ձեւը — այբուբենը,

միւս կողմից ծանօթանում էին երկաթի հանքի, նրանից երկաթ ստանալու եւ գործիքներ շինելու արհեստի հետ, երբ վերջապէս մասնաւոր սեփականութիւնը մուտք էր գործում ու տարբերութիւն էր նախնական անգիտակից կոմունիստական կարգերը եւ մայրական իրաւունքի վերջին մնացորդները տեղի էին տալիս հայրական իրաւունքին:

Ջափազանց յաճախ տեղի ունեցող պատերազմներում եւ յարձակումներում բռնուած գերիներն այլեւս չեն ուտւում, որովհետեւ ուտելով միայն մի անգամ օգուտ են տեսնում, մի անգամ մի քանի հոգով լաւ կչտանում, իսկ պահելով գերուն, ստրկացնելով նրան եւ դատապարտելով բռնի աշխատանքի, ամէն օր կամ մշտական կանոնաւորապէս ստանում են նրա արտադրած արդիւնքների մի մասը, նրա յաւելեալ աշխատանքը: Եւ դա մի հսկայական յառաջդիմական քայլ էր մարդկային հասարակութեան համար:

Կարելի է մի ամբողջ հատոր գրել ստրկութեան ծագման, զարգացման ու անկման մասին, ինչպէս արել է Ֆրանսիացի հանգուցեալ գիտնական Շարլ Լետուրնոն, բայց դա մեր նիւթից դուրս է, մեր նպատակն է այս մի քանի երեսներում պարզել հասարակական չերտաւորումների ծնունդը, նրանց գենէզիսը (genèse):

Ինչ ասել կ'ուզէ, որ ստրկատիրութիւնն էլ ծնունդ է առաւել սկզբնական կամունիզմի վերջին փուլերում եւ իր կողմից աւելի եւս արագա-

ցըրել է նախնական կամ արհեստական հաւասարակշռութիւնը: Նախ բռնուած դերինեը դառնում էին սեփականութիւն ամբողջ տոհմի, արածեցնում էին տոհմի հօտերը, մշակում տոհմի դաշտերը: Բայց այդ չէր նշանակում ստրկատիրութիւնը չէր կարող աճել, վարթամանալ, որովհետեւ ամբողջ տոհմը, նրա բոլոր անդամները դեռ եւս աշխատաւորներ էին, բոլորն էլ իրար հաւասար:

Մտնում էր մի արհեստական տոհմ ոեւէ դրացի, աւելի թոյլ տոհմի որսատեղը, կռուի բռնում նրա հետ, կամ յաղթուածը բնաջինջ էր լինում, կամ մի քանի մնացորդները դրդեգրուում էին յաղթող տոհմի կողմից, թեւերը ծակելով ու արիւնները իրար խառնելով, իրանց մօր ստինքը ծծեցնելով կամ իրանց օջախի առջեւ երկրպագութեան բերելով եւայլն, — եւ կամ, վերջապէս, տիրուած համայնքը դինազուրկ էր լինում, դառնում հպատակ, ստրուկ, հօտ կամ ռայա, իսկ տիրողները պահում էին իրենց ձեռքին ղէնքը — հպատակեցնելու այդ գերագոյն միջոցը, հանդիսանում տէրեր, ստիպում յաղթուածներին աշխատելու եւ նրանց աշխատանքով ապրում:

Այդ ստրկացման երեւոյթն էլ, ինչպէս բոլոր հասարակական երեւոյթները, պիտի առաջ գար աստիճանաբար: Սկզբներում անպայման չնչին կը լինէր ստրուկների թիւը: Նրանց կենդանի պահելու գործում դեր խաղացած կը լինէր եւ վերեւում յիշուած «յաւելեալ արժէքի» հնարաւորու-

թիւնը, եւ անկասկած, խղճահարութիւնն ու բարոյական կարգի այդ դրդումները: Տիրողներն էլ սկզբում անպայման դեռ լիապէս աշխատասէրներ էին: Որքան աւելի քայքայւում էր նախնական կոմունիստական արեւնակից համայնքը, որքան աւելի մասնաւոր սեփականութիւնը բուն էր դնում, այնքան աւելի զարգանում էր ստրկատիրութիւնը. աճում էր ստրուկների թիւը, սաստկանում եւ սրւում նրանց չհատուցման եղանակը: Տիրողներն էլ, նախ լիովին աշխատասէր, — աստիճանաբար սկսում են վարժուել ուրիշների՝ իրենց ստրուկների յաւելեալ արժէքով ապրելու արհեստին, այսինքն աստիճանաբար դառնում են պարազիտ, մակաբոյծ, աղնուական:

Այսպիսով հասարակութիւնը, որ արդէն քաղաքակրթութեան աստիճանի չեմքումն է, բաժանւում է երկու որոշ չերտերի,— մի կողմից ստրուկների, որոնց բաժինն է ֆիզիքական սեւ աշխատանքը, ամէնից տաժանելին ու ծանրը մարդկային աշխատանքներից — պահել անասուններ, մշակել հողը, տնկել այգիներ ու պարտէզներ, տքնօրէն խնամել նրանց, մի խօսքով՝ տքնել բաւարարութիւն տալ իրենց տէրերի բոլոր պահանջներին, — մեւս կողմից՝ ստրկատէրերի, որոնց բաժին է ընկնում կամ որոնք իրենց են վերապահում դէնքի արհեստը, կառավարական, հասարակական բոլոր գործերը, համեմատաբար աւելի դիւրին եւ «ազատ մարդուն վայել» համարուող զբաղմունքները: Նրանք են մշակում կուռե-

լու եւ կառավարելու արհեստը, փիլիսոփայությունը, գեղարուեստը, դիտութեան բոլոր ճիւղերը, որովհետեւ ստրուկներն աշխատում, անուղեն մատակարարում, իսկ իրենք ունենում են բաւական ազատ ժամանակ այդ բոլորի մասին մտածելու, մշակելու, դիտելու եւ համակարգելու:

Ստրուկ ծնուածը պարտաւոր էր մնալ ըստրուկ. ոչ մի դէպքում նա իրաւունք եւ հնար չունէր դառնալու ազատ. նրա միակ փրկութեան ուղին փախուստն էր եւ դուցէ մէկ էլ գնման համարեա՛ անհնարին միջոցը: Անհնարին ենք ասում, որովհետեւ ստրուկը ոչ մի ճար չունէր դրամ կամ այլ արժէքներ հաւաքելու եւ իր ազատութիւնը յետ դնելու: Սկզբնական բռնութեան եւ տնտեսական հրամայող կարիքի ծնունդ այդ դասակարգային ամենասկզբնական ու դառնիվիկ բաժանումը երկար դարերի զոյութեան ընթացքում դառնում է սովորոյթ, ադաթ, սրբազործւում է երկար անցեալով եւ մտնում իրաւունքի սահմանը: Կըրօնն էլ չուտով վրայ է հասնում եւ «աստուածային դիրք» յայտարարում այդ դաժան կարգը:

Ինչպէս վերեւում ակնարկեցինք, սկզբներում ստրուկների, բռնի հպատակեցուածների թիւը դեռ չափազանց քիչ է լինում. տէրերն էլ, դրա համեմատ, ե՛ւ օգտւում են ստրուկների նոր ըստկըսուող յաւելեալ արժէքով, ե՛ւ իրենք բոլորն էլ աշխատում: Քանի գնում, ստրուկների թիւն աճում է, սակայն նրա հետ զուգահեռաբար աճում է եւ տիրողների թիւն ու մանաւանդ նրանց պոր-

տաբուծական ունակութիւնը. նրանք խիստ արագօրէն վարժւում են ստրուկների յատկեալ արժէքով լիապէս ապրելու արհեստին: Շուտով նրանցում, տիրոջների մէջ ծնւում եւ ամրանում է այն համոզումը, որ ֆիզիքական բոլոր արտադրական աշխատանքներն անմաքուր են, անվայել արիւնով ազնիւ մարդկանց՝ Արիստոկրատներին Աթէնքում, Եւպատրիդներին Սպարտայում, Պատրիկներին Հռոմում, Ասպանիէին կամ Ազատորեաներին Հայաստանում եւայլն:

Բայի թուական յարաբերութիւնը երկու դասակարգերի միջեւ, կայ եւ մի այլ ուշագրաւ երեւոյթ: Տիրող, հրամայող դասակարգն, ունենալով խորհելու եւ ստեղծագործելու շատ ազատ ժամանակ, բաւական արագ քաղաքակրթւում է եւ դրա համեմատ էլ խիստ արագ աճեցնում իր պահանջների թէ՛ քանակը եւ թէ որակը, նրանց էնտանսիէն (սաստկութիւնը):

Այսպիսով՝ տիրոջների թիւն աճելով, մի կողմից էլ խիստ արագ զարգանալով նրանց անհատական ու հասարակական պահանջները, իսկ արտադրական միջոցները եւ ստրկական աշխատանքի արդիւնաւորութիւնն մնալով նոյնը, յաճախ նոյնիսկ աւելի ստորանալով, ճակատագրօրէն սահպում են երեւան գալու որոշ ժերտաւորման տիրոջների ամբողջութեան մէջ: Այլեւս անհնար է լինում տրուած թիւ ստրուկներով կերակրել «ազատներին»: Դեռ այդ քիչ է. ազատների մէջ էլ, մասնաւոր սեփականութեան չնորհով, ա-

ռալ է գալիս հարստութեան — հողերի, հօտերի ու սարուկների կուտակումը զանազան անհատների, զանազան հզօր տոհմերի ու ընտանիքների ձեռքում: Դրանից հետեւում է այն, որ տիրողների հասարակութիւնը, որ առաջ կազմուած էր հոմոժէն, միապաղաղ սարքերից — ղէնք կրող ու կառավարող, ուրիշի աշխատանքով ապրող անհատներից, — այժմ ծագում է չերտաւորում կամ դիֆֆերանսիասիոն. առաջանում են հարուստներ եւ աղքատներ, իսկական արիստոկրատիա (ազնըւականութիւն) եւ դէմոս կամ չունեւորների մի հոծ բազմութիւն:

Այդ չունեւոր բազմութիւնն սկզբներում դեռ ազնուական է, արիւնով ազնիւ, դեռ նա արհամարհում է ամէն տեսակ ֆիզիքական եւ տնտեսական աշխատանք: Տեղ-տեղ նա զբաղւում է ապրել հարուստների սեղանի փշրանքներով, ծախելով իր ձայնը քաղաքական ու հասարակական ընտրութիւններում: Այդպէս էր դէմոսն Աթէնքի ծագման շրջանում, երբ բոլոր ազատ քաղաքացիների թիւը — կին ու երեխայ հետը հաշուած — մօտ 90·000 հոգի էր, իսկ սարուկների թիւը 365 հազար հոգի էր երկու սեռից, 45·000 հոգի էլ մէտէֆիներ կային — օտարականներ եւ ազատուած սարուկներ, որոնք պարապում էին ղէխաւորապէս արհեստներով եւ առեւտուրով: Այսպիսով ամէն մի հասակաւոր քաղաքացու վրայ ընկնում էր, միջին թուով, 18 սարուկ: Բայց այդ սարուկներն ու մնացած հարստութիւնները հաւասարապէս

էին բաժանուած հասարակութեան բոլոր անդամներուն միջեւ։

Նրանք չուտով կենտրոնացան փոքրաթիւ հարուստներուն ձեռքերում, իսկ մեծամասնութիւնն, ինչպէս ասացինք, աղքատացաւ։ Շերտաւորումն սկսուեց։ Քրիստոսից 594 տարի առաջ, Աթէնքի հռչակաւոր օրէնսդիրը՝ Սոլոնը, նկատելով ազատականների մէջ բնականօրէն առաջ եկած այդ շերտաւորումը, բաժանեց հասարակութիւնը չորս դասակարգի, համաձայն ունեցած հողային հարըստութեան եւ նրանից ստացուող եկամուտի. Ա. դասակարգը պիտի ունենար գոնէ 500 մէդիմն հացահատիկ եկամուտ (մէկ մէդիմնը մօտ 41 ֆըրանսիական լիտր էր), Բ.ը՝ գոնէ 300, Գ.ը՝ 150, իսկ ով ղրանից պակաս ունէր կամ բոլորովին չունէր, ընկնում էր չորրորդ դասակարգի մէջ։ Եւ առաջին երեք դասակարգերից էին դուրս գալու կամ նրանց անդամներից էին լինելու բոլոր պաշտօնեաները, իսկ չորրորդ դասակարգը լոկ մի իրաւունք ունէր,— խօսք խնդրելու եւ խօսելու հասարակական դլխաւոր ժողովում, որը բաղկացած էր 400 անդամից. այդ ժողովն էր, որ նըշանակում էր պաշտօնեաներ — միայն առաջին երեք դասակարգերից։ Կը նշանակէ՝ Սոլոնի օրէնսդրութիւնն արդէն մեզանից մօտ 2500 տարի առաջ ազատների, տիրոջների մի խոշոր, չա՛տ խոշոր մասին զրկում էր պաշտօնեայ լինելու իրաւունքից, որովհետեւ այդ մասն արդէն աղքատացել, մի նոր խաւ էր կազմել հասարակութեան

Ներսում: Այդ աղքատացած հասարակութեանը մնում էր կամ դիմել ֆիզիքական աշխատանքի, մրցել ստրկական արտադրութեան հետ եւ իր ճակատի քրտինքով հայթայթել իր համար մի ամենաողորմելի ապրուստ, կամ, ինչպէս ասացինք, արհամարհել այդ «անպիտան» աշխատանքը, դառնալ հարուստների եւ պետութեան պարազիտ, անբարոյականանալ, մեղկանալ եւ անկման անդունդը գլորել յունական մանրիկ պետութիւնները, որ եւ տեղի ունեցաւ. Հռոմը գրաւեց նրանց երկիրը, կնքեց նրան «Պրովինց Աքէա» անունով եւ վերջ դրեց Յունաստանի բոլոր մանր ու խոշոր պետութիւնների ինքնուրոյնութեանը, թողնելով սակայն որոշ ատոնոմ կամ ինքնավարական իրաւունքներ յոյն ժողովրդին ու երկրին:

Նոյն չերտաւորումը տիրող պատրիկների կամ «Գէնտիլ» (տոհմական) ազնուականութեան մէջ մենք նկատում ենք Հռոմում, Սերվիոս Տուլլոս թագաւորին (rex) վերագրուող օրէնքների մէջ: Նա էլ, ինչպէս երեւում է, Սոլոնից օրինակ առնելով, հասարակութիւնը բաժանել էր հինգ դասակարգերի եւ երկու — վերին ու ներքին — չերտերի. Ա. կարգը պիտի ունենար գոնէ 100·000 աս (մօտ 18·000 ֆրանկ) կարողութիւն, Բ.ը՝ 75 հազար աս (մօտ 13·125 ֆր.), Գ.ը՝ 50·000 աս (10·000 ֆր.), Դ.ն՝ 25·000 աս (4500 ֆր.) եւ Ե.ը՝ 11·000 աս (1962 ֆր.): Այս վերջին թուից պակաս եւ ամենաերկն չունեցողները համարւում էին պրոլետարներ, որոնք ազատ էին եւ զինուո-

բական ծառայութիւնից եւ հարկերից: Իսկ Ա. դասակարգից էլ բարձր կար մի այլ, խիստ հարուստներից բաղկացած խաւ, որ կոչւում էր ասպետների դասակարգ: Սրանք 18 հարիւրեակ էին, եւ հարիւրեակների ժողովում (comitia centuriata), երկրի գլխաւոր օրէնսդիր մարմնում՝ ունէին 18 ձայն, Ա. դասակարգը ունէր 80 ձայն, Բ.ը՝ 22, Գ.ը՝ 20, Դ.ն՝ 22, Ե.ը՝ 30 ձայն, որովհետեւ ամէն մէկն էլ բաղկացած էր այդչափ հարիւրեակներից. Իսկ Զ. դասակարգը, ձեւի համար, կազմում էր մի հարիւրեակ եւ ունէր լոկ մի ձայն. թէեւ թուով ամէնից շատ էր, — նա չատ էր քան նախընթաց բոլոր դասակարգերը միասին վերցրած: Այսպիսով բոլոր ցէնտուրիաների կամ հարիւրեակների ձայների թիւը հասնում էր 193ի, իսկ կէսից աւելին անում էր 97 ձայն: Ձայները հաշւում էին վերեւից — սկսելով ասպետներից. սրանց եւ առաջին դասակարգի ձայների թիւը հասնում էր 98ի: Երբ այդ երկու դասերը մի որեւէ հարցում միանում էին, այլեւս միւսների ձայները հաշուելն անգամ աւելորդ էին համարում:

Հռոմում էլ մենք նկատում ենք Զ. դասակարգի կամ պրոլետարիատի անբարոյականացումը: «Հաց եւ կրկէս» էր պահանջում նա աշխարհի հզօրներից, եւ երբ այդ ստանում էր, նրան էր տալիս էր վարձու ձայնը, յաճախ նրա մօտ վեհերաւն էր գրւում, վարձկան դինուոր լինում, դառնում սքանչելի գործիք Մարիոսների, Սիլլաների եւ ուրիշ բռնապետների ձեռքին:

Ինչ էլ որ լինի այդ «դասակարգ» կոչուածների բախտը թէ՛ Հռոմում եւ թէ Յունաստանում, թէ՛ Սոլոնի եւ թէ Սերվիոս Տուլլոսի ռեֆորմների մէջ, այնուամենայնիւ սխալ է նրանց անուանել «դասակարգ»։ Նրանք դասեր են, որովհետեւ իրաւաբանօրէն որոշուած բաժանումներ են, որոնք չունեն տնտեսական չահերի որակական տարբերութիւնը։ Միակ զանազանութիւնը նրանցում բաւացուածքի ու եկամուտի քանակն է, չատն ու քիչը։ Իական տարբերութիւնը ներկայացնելու ճամբու վրայ են կանգնած վերջին դասակարգերը, որոնք եթէ դիմէին արհեստների, առեւտրի եւ այլ աշխատանքների, թերեւս կազմէին իական դասակարգեր, բաւ ներկայ տնտեսական մտքով։

Հին արեւելքի մի քանի պետութիւններում, ինչպէս օրինակ՝ Հնդկաստանում և Եգիպտոսում, յունական եւ հռոմէական դասային բաժանումները նոյնպէս տեղի ունեցան, բայց ոչ այն ձեւի ու զարգացման մէջ մնացին, ինչ նրանք ունեցան վերեւում յիշուած երկրներում։ Յունաստանում եւ Հռոմում, թէ՛ Սոլոնի ու Ս. Տուլլոսի օրինադրծած դասերը եւ թէ հետագային առաջացածները ամենեւին չէարացան, հաստատուն օրինական տեւողութիւն եւ կենսական անշարժութիւն չատացան. միչտ հնարաւոր էր, օրինակ, եկամուտը 11·000 ասից հասցնել մի կերպ 25·000ի կամ 50 հազարի եւ մի դասից անցնել միւսին եւ պակաս եկամուտ ունենալ եւ ընկնել ներքին դասի մէջ։

Ամբողջ արեւմուտքում երկու խոշոր բաժանումներ կային, որոնք էապէս որոշուած ու ամրացած բնոյթ ունէին — սորուկներ ու ազատներ՝ այդ երկուսի մէջտեղը կար պլէբսը եւ դէմոսը, որոնք վերջ ի վերջոյ աշնուականութեան հետ հաւասար իրաւունքներ ձեռք բերին եւ որոնք չէին կազմում դասակարգ՝ նեւրկայ տնտեսական մըտքով:

Տարբեր էր երեւոյթը Հնդկաստանում եւ Եգիպտոսում: Այդտեղ տէրողները եւ տիրուածները բաժանւում էին ոչ թէ երկու այլ 5–7 պարզ ու որոշ դասերի, որոնք օրէնքի ոյժ էին ստացել, քարացել ու դառել էին անփոփոխելի քանակութիւններ: Դասը դառել էր կաստա, — միանգամ ընդմիշտ բարացած դաս, անշարժ, յարակայուն: Մէկից միւս կաստան անցնել ոչ ոք չէր կարող, — ծնունդն էր մարդու վիճակը որոշողը եւ ոչ թէ վիճակը, ջանքը, չահերն ու գոյքը — մարդու այս կամ այն կաստային պատկանելը: Հասարակութեան բարձունքում կանգնած էին աշնուականները եւ քուրմերը կամ հոգեւորականները. երկուսն էլ սերուած էին միեւնոյն տէրող ցեղից: Այնուհետեւ գալիս էին զինուորականները (քշատրիաներ), յետոյ վաճառականների կաստան, յետոյ արհեստաւորների, վերջապէս երկրագործների կամ գիւղացիների կաստան: Թէ՛ Եգիպտոսում եւ թէ Հնդկաստանում այդ բոլորը կազմում էին երկրի հասարակութիւնը. դրանք էին, որ մարդ, հպատակ, քաղաքացի կոչուելու արժանի էին հա-

մարում այս կամ այն չափով: Մասիս արգիլուած էր այդ կաստաների մէջ ամուսնութիւնը, մասերմական յարաբերութիւնները: Այնուհետեւ Հընդկաստանում գալիս էին երկու դասեր — պարիաներ եւ պուլիաներ, որոնք չէին համարւում երկրի ազգաբնակութեան բազադրիչ մասը: Պարիային սպանելը չէր առաջացնում ոչ մի պատասխանատուութիւն երկրի օրէնքի առջեւ: Դրանք ըստրուկներ չէին, ստրուկից էլ աւելի վատ,— հալածուածներ, արհամարհուածներ, որսի կենդանիներ էին: Նրանց յաճախ բանեցնում էին իբր ստրուկներ... Եգիպտոսում այդ բոլոր կաստաներից դուրս՝ կար եւ ստրկութիւն, մի հակայական դասակարգ, որ ստրուկ էր բառի իսկական մաքով,— մարակի տակ աչխատող եւ տիրոջից սատցող լոկ այնքան, որքան հարկաւոր է չմեռնելու համար:

Այսպիսով հին աչխարհը ճանաչում էր իսկապէս միայն երկու խոչոր բաժանումներ,— ըստրուկներ եւ ազատներ: Դրանք էին միայն, որ կարող էին կոչուել դասակարգեր, իսկ միւսները — պլէբէյ եւ դէմոս, կամ դրամի ու ստացուածքի քանակի վրայ եղած օրինական բաժանումները դասակարգեր չէին, այլ դասեր, նոյն ազատ, ոչ ստրուկ հասարակութեան ստորաբաժանումները: Տիրուածներն ստրուկ էին դառել, որոնց մէջ արաջ էին եկել չերտաւորումներ հասարակական կեանքի դանդաղ զարգացման չնորհով: Այսպէս՝ Հռոմի տիրող ցեղերի զարգացումն ընթանալով

տարիք ապրելով, նրանցից մի քանիսը, դեռ նախապատմական շրջանում, գրաւոր պատմութեան նախօրեակին, աւելի չուտով էին անցել ապրական իրաւունքին, այդ պատճառով էլ կոչուածքին պատրիկներ (pater — հայր բառից), իսկ նոյն ցեղերի մի մասը դեռ աւելի երկար մնաց մայրական իրաւունքի բարբարոսական ու յետամնաց սովորութեան մէջ, այդ պատճառով կոչուեց պլէբէյ կամ պլէբս: Ուրեմն վերջիններս աւելի դանդաղօրէն զարգացող տոհմեր ու ցեղեր էին, քան առաջինները, որոնք աւելի չուտ անցան հայրական իրաւունքին, հօր բռնապետութեանը (patria potestas) եւ մանաւանդ անհամեմատ աւելի ուժեղ ու իրաւատէր դարձան, քան պլէբէյները: Սակայն այդ տարբերութիւնը չառաջացրեց չհաների ու զբաղմունքների հիմնական տարբերութիւններ այն չափով, որ դրանք դառնային հակադիր դասակարգեր, ինչպէս ստրուկներն ու ազատները: Նրանք բոլորն էլ սկզբներում երկրագործներ ու անասնապահներ էին, միայն չուտով պատրիկների ձեռքն սկսեցին անցնել պետական կամ հասարակական հողերը (ager publicus). Նրանք արագ հարստացան եւ, չնորհիւ իրենց աւելի կենսական կազմութեան, առաջուց արդէն խլել էին բոլոր հասարակական գործերի ղեկը, բոլոր պաշտօնները, որ նախ կատարում էին ճըրիաբար, յետոյ արդէն վարձատրութիւնով: Պլէբէյները զրկուել էին նախ հասարակական եւ պե-

տական բոլոր դործերի վարչութիւնից, իսկ յետոյ արդէն նաեւ պետական եւ հասարակական հոդերից: Եթէ դուրս հանենք իրաւական տարբերութիւնը, տեղում կը մնայ լոկ քանակի տարբերութիւնը. երկու դասերն էլ երկրադործներ եւ կռուողներ էին, միայն մէկը շատ հող ունէր, միւսը քիչ: Պլէբսը դարեւոր կռուի մտաւ պատրիկների հետ եւ վերջ ի վերջոյ ձեռք բերեց նրանց հետ լիակատար քաղաքական եւ քաղաքացիական իրաւունքներ: Դասերի իրաւական յարաբերութիւնները յղկուեցին, հարթուեցին, բայց այն ժամանակ սկսեց խաւորէն երեւան դալ տնտեսական հիմնական տարբերութիւնը — դասակարդային տարբերութիւնը: Յառաջացան խոշոր հողատէրեր, որոնց կալուածները կոչւում էին լատիֆունդիաներ, որ մշակւում էին հսկայական արկական բանակներով, բայց որոնց մի մասն արդէն սկսեցին տալ կապալով իրաւահաւասար, բայց սոված քաղաքացիներին: Կը նշանակէ՝ պատների մի չերորդը — սովածներն՝ ստիպուած եղան դիմել նորից երկրադործութեան, տալով իրենց եկամուտի մի մասը (յաւելեալ արժէքը) հողատէրերին: Սա արդէն իսկական դասակարդային բաժանման սկիզբն էր: Առաջ եկան բազմաթիւ «ազատուած» ստրուկներ եւ ազատանիներ, որ կարիքից ստիպուած՝ դիմեցին դէպի արհեստներ: Այդ նոյն «ազատուածների» մի խոշոր մասը հարստացաւ, դարձաւ խոշոր առեւտրական: Շատ հարուստ պատրիկներ, տեսնելով առեւտրի հըս-

կայական չահերը, մտան զինչումներուն ազատուած տարրերուն հետ, կազմեցին առեւտրական խոշոր ձեռնարկութիւններ այդ ազատուածներուն ձեռքով, որովհետեւ հին օրէնքն ազնուական պատրիկին արգիլում էր պարապել առեւտրով: Վերջապէս, ազնուականներուն, պլէբէյներուն ու ազատուած ըստրուկներուն մի խոշոր մասը հաւաքուեց քաղաքներում, կազմեց քաղաքային ամբոխը, պլեբեսը, որը ծառայում էր նաեւ իբր վարձու բանուոր, բայց որի գլխաւոր եկամուտի աղբիւրը պարապմունքներն էր, պորտաբուծութիւնը, հարուստների բաշխած կաշառքը՝ նրանց ձայնն ու օժանդակութիւնն առնելու համար ընտրութիւններում:

Այսպիսով՝ հին, սարկատիրական աշխարհում արդէն սկսում էին իսկական դասակարգային շերտաւորումներ, երեւան էին գալիս ռանտիէներ կամ հողի եկամուտով ապրողներ, հողը վարձու վերցնող մշակողներ, վարձու բանուորներ եւայլն: Հասարակութիւնը գնում էր դէպի դասակարգային իսկական զարգացում, բայց նրա այդ բնական ընթացքի թելը կտրուեց Աղգերի մեծ տեղափոխութեան, գերման բարբարոսների արշաւանքի, Հռոմի հսկայական կայսրութեան անկման եւ հին աշխարհի դասական քաղաքակրթութեան քայքայման պատճառով: Բարբարոս հիւսիսն ու հիւսիս-արեւելքը խուժեցին, խառնուեցին քաղաքակիրթ հարաւի հետ եւ կործանեցին Հին Աշխարհը: Դա ընդհարում էր մարդկային

զարգացման երկու խոշոր փուլերի — բարբարոսութեան ամենաբարձր զարգացման եւ սկզբնական քաղաքակրթութեան նոյնպէս ամենաբարձր աստիճանի: Գերման բոլոր ցեղերը բարբարոս էին, դեռ նոր անցած հայրական իրաւունքի, դեռ եւս նախնական կոմունիստական կարգերի ամենաթարմ յիշատակներով, նրանց մէջ կանայք դեռ եւս չէին ստրկացած տղամարդու ձեռքին, ստրկութիւնը համարեա՛ դոյութիւն չունէր. չկար հասարակութեան մէջ չերտաւորում:

Այդ երկու տարբեր աստիճաններն իրար խառնուեցին. ընկաւ, կործանուեց Հռոմի բարձր քաղաքակրթութիւնը եւ բարձրացաւ գերման բարբարոսութիւնը: Նրանց իրար բռնուելուց ծնունդ առաւ միջնադարեան քաղաքակրթութիւնը, որ սկզբներում ցածր էր Հռոմի քաղաքակրթութիւնից, բայց բաւական բարձր էր գերման ցեղի վիճակից:

Ինչպէս ասացինք մի քիչ վերեւում, Հին Աշխարհն արդէն սկսել էր նոր տեսակի անհաւասարգերի ու դասակարգերի ծայր տալ, երբ կործանուեց: Եւ իսկապէս, հին հսկայական հողային կալուածները (լատիֆունդիա), որ մշակւում էին ստրուկների բանակներով, այլեւս բաւարարութիւն չէին տալիս բոլոր պահանջների նըրբացած ու հսկայական չափերի հասած կարիքներին: Սարկատիրական լատիֆունդիար տնտեսութիւնն այլեւս ձեռնտու չէր, որովհետեւ հողային այդ հսկայական տարածութիւններում անհնար

էր հանել սարկական աշխատանքի վրայ եւ այդ աշխատանքն այլեւս զազարել էր ինքնասիրվ (խիտ, սատիկ) լինելուց: Սարկատէրերի համար շա՛տ աւելի ձեռնտու էր զարձնել իրենց սարուկներին «ազատուածներ», ստիպել նրանց զբաղուել առեւտուրով կամ արհեստներով եւ ստանալ նրանցից իսչոր փրկանք, քան պահել մշտապէս սարուկ: Այդ էլ դեռ ոչինչ. կեանքի փորձը սովորեցրեց հողատէր-սարկատէրին, որ շատ աւելի ձեռնտու է իրենց հողերը յանձնել իրենց նախկին սարուկներին,— ամէն մի ընտանիքին տալ մէկ կտոր հող, տալ նրան, որ նա ազատ է, թող մշակէ հողի այնինչ կտորն իր համար, իրը իր հողը, միայն եկամուտի այսինչ կամ այնինչ մասը (օրինակ՝ կէսը, մի երրորդը, մի քառորդը եւայլն) տայ իրեն՝ ազնուականին, որին պատկանում է հողի սեփականութիւնը:

Եւ այդպէս էլ եղաւ. սարկատիրութիւնը կամաց-կամաց վերացաւ եւ նրա տեղը բռնեց ճորտատիրութիւնը: Բոլոր սարուկները, բոլոր ստրուկները նստեցին հողի վրայ, կպան այդ հողին, ամրացան: Հողը պատկանում էր ազնուականին — բարոնին, վասալին, կոմսին, դուքսին, վանքին՝ ուրեմն նրա վանահօրն ու միաբանութեանը, իսկ գիւղացին ճորտ էր, հողից ժամանակաւորապէս օգտուող: Նա մշակում էր իր բաժին հողը եւ արդիւնքից որոշ մի մաս տալիս էր ազնուականին կամ հոգեւորականին. բացի այդ՝ մշակում էր նաեւ տիրոջ յատուկ հողը, նրա պարտէզն ու

այդին, կատարում էր նրա համար ձրի աշխատանքները — կոռ ու բեկեար, օլամ եւ ակարիա, եւայլն: Պատերազմի ժամանակ ազնուականն իր գիւղացիներից զօրք էր ժողովում եւ իր զօրքի գլուխն անցած՝ գնում էր կայսրի, կամ աւելի մեծ աւատական իշխանի բանակը զօրացնելու: Գիւղացին կամ ճորտը նախ վճարում էր իր արդիւնքին կէսը, մէկ երրորդը, մէկ չորրորդ մասը. իսկ յետոյ անտեսական, մտաւոր ու բարոյական զարգացման հետ միասին՝ սկսեց նուազել ճորտի վճարը եւ վերջապէս նա դարձաւ բերքի մի տասերորդը: Դա մի տուրք էր, որ յայտնի էր տասանորդ, dîme, աշխարհ անուններով զանազան ժողովուրդների մէջ: Նա այսօր դեռ եւս գոյութիւն ունի Թուրքիայում իբրեւ պետական մի հարկ երկրագործական ու գիւղատնտեսական բերքերի վրայ: Նա մնում է իբրեւ կամաւոր կամ պարտաւոր վճարում մեր եկեղեցու գործերում՝ «պաղի», «հասոյթ», «տասանորդ» անուններով: Ճորտերը պարտաւոր էին մատակարարել ազնուականի համար անհրաժեշտ ծառաներ, որոնց թիւը մինչեւ դարերում չափազանց շատ էր, դրանք եւ ամէն տեսակ ծառաներ եւ աղախիններ էին, եւ գինուած պահակ ուխտի համար: Իսկ տէրը կերակրում էր նրանց բոլորին, որովհետեւ բնատնտեսութեան թագաւորութիւն լինելով, ամէն մարդ արտադրում էր թէ՛ իր հացը եւ թէ իւղը, պանիրը, կաթը եւայլն. այդ արդիւնքները գնող չկար եւ այդ ազնուականի ստացած բերքերի ահագին պաշարը

(աստանորդը վճարւում էր բերքերով) կարող էր փոխել, ոչնչանալ: Այդ է պատճառը, որ ամէն մի ազնուական ունէր ահագին թիւ ծառաներ: Գիւղացու արած այս բոլոր ծառայութիւնների փոխարէն տէրը պաշտպանում էր նրա գաշտերն ու այգիները, նրա կեանքն ու գոյքը միւս ազնուականների, այդ ընտուած աւազակների անվերջ յարձակումներից:

Մարկութիւնը մեզմացաւ, դարձաւ ճորտատիրութիւն: Նախկին սարկատէրն ապրում էր բատրուկների յաւելեալ արժէքով, այժմեան ճորտատէրն էլ սկսեց ապրել իր ճորտերի յաւելեալ արժէքով: Թէեւ ճորտի վիճակն աւելի թեթեւ, աւելի մարդավայել էր քան սարուկինը, բայց այդ երկու դասերի կամ այդ երկու դասակարգերի անտեսական էութիւնը չփոխուեց, որովհետեւ երկուսն էլ մնացին ազնուականութեան եւ հոգեւորականութեան ձեռքին կեղեքուողները, նրանց ընթրիաբար կերակրողները. իրանք մնում էին կիսասոված եւ մերկ վիճակում, իսկ տէրերը՝ քանի գնում աւելի եւ աւելի փառաւոր էին ապրում:

Ինչպէս որ սարկատիրութեան ժամանակ ազատ դասակարգի բոլոր անդամներն իրար հաւասար չէին անտեսապէս եւ յաճախ նոյնիսկ իրաւապէս, այնպէս էլ ճորտատէր դասակարգը իր մէջ ունէր իր սեփական չերտաւորումը — հոգեւորականներ, խոշոր ազնուականներ, միջակ ազնուականներ, աղքատ ազնուականներ կամ հասարակ ասպետներ, որոնց ամբողջ հարստութիւնը

կայանում էր իրանց զրահից, զէնքերից, ձիուց, մի քանի զինուած ծառաներից եւ որեւէ ծերպի գլխին չինած այն ժամանակի համար անառիկ ամրոցից: Սարուկ դասակարգի վիճակը ոչ մի չերտաւորման հնար չէր տալիս սարուկներին: Այդպէս էր ճորտերի դրութիւնը, նրանց համեմատաբար ազատ վիճակը հնարաւոր էր դարձնում չերտաւորում ճորտերի մէջ. կային ազքատ եւ հարուստ ճորտեր, կային ճորտեր, որոնք միայն երկրագործ էին եւ այնպիսիները, որոնք եւ՛ երկրագործ էին, եւ՛ արհեստաւոր, եւ մի քիչ էլ առեւտրական:

Գերման բարբարոսները տիրելով Հռոմի լայնածաւալ երկրներին, տէր դարձան ամէն մէկը որեւէ գաւառի, նահանգի եւ առանձին քաղաքների: Նոյնիսկ տիրող թագաւորները (քոնունգ), դուքսերն ու հերցոգները, իրենց համարելով միւսների հետ լիապէս հաւասար կռուող, սկզբներում բաժանւում էին իրենց յաղթութեան բոլոր պտուղները բոլորի մէջ: Սկզբնական այս խառնակ վիճակից կամաց-կամաց զատւեց, դուրս եկաւ մի պետական կազմ, որ կոչուեց աւատականութիւն: Որքան որ Հռոմի պետութիւնը կեդրոնացած էր, այնքան աւելի է. եւ Ը. դարերի Եւրոպայում պետական կազմը ապակեդրոնացած էր. երկրի ամէն մի կտորը, յաճախ մի քաղաք, մի քանի գիւղեր ունէին իրենց ազնուական տէրերը, որոնք հպատակւում էին մի ուրիշ, աւելի խոշոր ազնուականի, նա էլ մի ուրիշին եւայլն,

մինչեւ արքան, մինչեւ կայսրը: Եթէ հողատէր ազնուականն ուժեղ էր, նրա հնազանդութիւնը անուանական էր, իսկ եթէ թոյլ էր եւ սիւզրէնը կամ իրանից բարձրը հզօր, հպատակութիւնը աւելի էական էր:

Նոյն ձեւի հպատակութեան ենթակայ էին նաեւ հնուց մնացած ու նոր հիմնարկուող քաղաքները, որոնք իրենց չուրջը եղած պարիսպներըը կամ բուրջերի անունով կոչւում էին բուրգեր կամ քաղաքներ, իսկ մէջի բնակիչները բուրժուաներ կամ քաղաքի բնակիչներ (քաղքցի)(*), որ այն ժամանակ հակադիր էր գիւղում ապրողներին — գիւղացիներին, որոնք ճորտեր էին: Քաղաքների բնակիչները երբեք չենթարկուեցին լիակատար ճորտացման. նրանք մնացին անձնականապէս ազատ, բայց հարկատու անհատները, ենթակայ կամ կայսրին, կամ արքային եւ կամ այս ու այն խոշոր ազնուականին: Բոլոր տիրողները քաղաքների ազգաբնակութեան հետ չատ մեղմ եւ

(*) Դժբախտաբար մեզ դեռ եւս չունենք ոչ մի հաստատուն տերմին bourgeois եւ citoyen բառերի համար, երկուսն էլ ստիպուած ենք եղել կոչել քաղաքացի: Մեր գրականութեան մէջ ընդունել ենք գործածել *բուրժուա* իբր դասակարգ եւ քաղաքացի՝ իբր պետութեան անդամ, իսկ քաղաքի բնակիչ (bourgeois) բառը մեզ դեռ եւս չունենք. լաւ կը լինէր գործածել ժողովրդական ձեւը — «քաղքցի» կամ քաղքենի:

շատ լաւ էին վարւում, որովհետեւ այդ ազգաբնակութիւնը նախ ներկայացնում էր խոշոր թիւ, երկրորդ՝ նա էր, որ մատակարարում էր հնչուն դրամ. ճորտերը տալիս էին լոկ բնական բերքեր: Ի հարկէ քաղաքներում էլ կար մի մաս, որ ապրում էր ծայրերում եւ մշակում քաղաքի շրջակայ հողերը. դա ռաշպաթ, երկրագործ մասն էր քաղաքում, որը յաճախ մատակարարում էր քաղաքի բնակիչների հացը եւ վաճառում դրամով, այդպիսով ընդունակութիւն ձեռք բերելով դրամական հարկ վճարելու պղնուականին:

Ճորտերից հարստացածները յաճախ դրամով, անասուններով կամ այլ հարստութիւններով դընում էին իրենց ազատութիւնը պղնուականից, թողնում դիւղը եւ բնակւում քաղաքում, պարապելով այնտեղ որեւէ արհեստով կամ նոյնիսկ քաղաքային հողերի մշակութիւնով: Պատահում էին յաճախ կորիճ, ճարպիկ, խորամանկ ճորտեր, որոնք իրենց տէրերին մատուցանելով այս կամ այն զգալի ծառայութիւնը, տէրերից ստանում էին, իբր չնորհ ու վարձատրութիւն, իրենց ազատութիւնը, մի քիչ էլ դրամ եւ դալիս հաստատւում էին քաղաքներում: Վերջապէս՝ յաճախ ոեւէ ճորտ փախչում, թաքնւում էր քաղաքներում, ծածուկ, առանց ձերբակալուելու ապրում էր որոշ թիւ տարիների եւ ապա դուրս էր դալիս լոյս աշխարհ, ապրում իբր ազատ մարդ: Նոյն ձեւի փախուստի դիմում էին նաեւ յանցագործ ճորտեր, որոնց սպառնում էր սիրոջ դաժան դանա-

կոծուքիւնը, բանտը կամ կախաղանը: Նա էլ մի կերպ թաքնւում էր քաղաքներում, մինչեւ որ իր գոյութիւնը մոռանում էին եւ ապա ապրում այնտեղ իբր քաղաքի ազատ բնակիչ: Ինչ ասել կ'ուզէ, որ օտարերկրացի սակաւաթիւ վաճառականների էլ միակ ապրուստատեղը քաղաքներն էին:

Այսպիսով մեծանում էին ու բազմանում միջնադարեան քաղաքները 10–11րդ դարերում մենք արդէն դտնում ենք բաւական թուով խոշոր քաղաքներ, որոնք ձեռք էին բերել մեծ նշանակութիւն երկրի առեւտրի եւ արտադրութեան մէջ: Նրանց բնակիչների ամենաէական զբաղմունքներն էին արհեստները եւ առեւտուրը: Արհեստաւորութիւնը, որ սկսում է կազմակերպուել իբր համքարութիւններ, ձեռք է բերում տիրող նշանակութիւն Եւրոպայի քաղաքներից մեծամասնութեան մէջ: Ծովափնեայ վաճառաշահ կենտրոններն են (կամ նաւարկելի գետերի ափերին), ուր տիրող դեր է կատարում առեւտրական դասը, պլուտոկրատիան կամ դրամի նորածին աղնուականութիւնը:

Համքարութիւնները կամ էսնաֆները նախ կազմւում են իբր զուտ տնտեսական միութիւններ, փոխադարձ օժանդակութեան, իրար վրայ հսկելու, արհեստի պատիւը բարձր պահելու համար: Համքարութիւնն ունէր իր պետը, իր ընտրովի խորհուրդը, իր սեփական դրամարկղը, աղքատներին օգնելու գանձանակը, Թաղման դրամարկղը եւայլն: Տնտեսական ու բարեգործական

այս նպատակներով կազմակերպուելով ամէն մի արհեստի անդամները, կամաց-կամաց բոլոր համքարութիւնները միացան, մի բանակ կազմեցին, որն իր ձեռքն առաւ ոչ միայն արհեստին վերաբերեալ ժամերի, աշխատավարձի, աշակերտելու, քարգաւութեան (օդնական վարպետ) տարինների թուի, վարպետ դառնալու պայմանների, չինուած ապրանքի որակի որոշման գործերը, այլեւ քաղաքի ինքնապաշտպանութեան, նրա ներքին վարչութեան բոլոր գործերը: Համքարութիւնը դարձաւ մի հզօր ոյժ, որ իր ձեռքն առաւ քաղաքի կառավարութիւնը. նա վերածուեց նաեւ քաղաքական միութեան:

Ուրեմն միջին դարերի հասարակութեան ընդհանուր պատկերը հետեւեալն է. մի կողմում կանգնած է ազնուականութիւնն իր դասերով, միւս կողմում ճորտերը, իսկ այդ երկուսից դուրս, քաղաքների ամուր բուրգերին ապաւինած, ծնունդ է առնում մի նոր դասակարգ — երրորդ դասակարգը (tiers état), որ հապէս տարբերւում է թէ՛ հոգեւորականութիւնից, թէ՛ ազնուականութիւնից եւ թէ ճորտերից: Նա բաղկացած է առեւտրականներից եւ արհեստաւորներից. նրա հետ միասին, նրա հետ համերաշխ ապրում են քաղաքներում ուսուցիչներ, վիճաբանները, ժամանակի բժիշկները, վարձու բանուորներ — աշակերտ եւ քարգար: Դրանք անճնականապէս բոլորն էլ ազատ են, բայց ազնուական չեն, — աւելի բարձր են. նրանք bourgeois են Ֆրանսիա-

յում, bürger են Գերմանիայում, կարճ՝ նրանք բոլորն էլ քաղաքի բնակիչներ են, աղատ անձնաւորութիւններ: Բայց այդ քաղաքի հասարակութիւնը մանրանկարն է մեր ներկայ հասարակութեան: Նա իր մէջ կրում է ներկայ շերտաւորումների ամբողջ սաղմերը. այնտեղ կան ունատէրեր եւ փոքրիկ հողատէրեր, որ վարձու են տալիս իրենց անշարժ կայքերը. կան նախաձեռնողներ — առեւտրականներ՝ իրենց գործակատարներով եւ խոշոր վարպետներ՝ իրենց տասնեակների հասնող աշակերտներով ու բանուորներով (քարդարներ): Վարձուր են գործակատարները, բանուորները, աշակերտները: Նրանք աշխատում են, եւ տէրը իւրացնում է նրանց յաւելեալ արժէքը: Սակայն դասակարգային այդ հակադրութիւնը դեռ աչքի չէ ընկնում երկու խոշոր պատճառներով. նախ՝ որովհետեւ վարպետը եւ խանութպատէրը դեռ եւս սովորեցնում են իրենց արհեստն աշակերտին, բանուորին ու գործակատարին, որոնց պահում են յաճախ իրենց տանը, համարում իրենց ընտանիքի բաղադրիչ մասը, երբեմն նոյնիսկ «տնփեսայ» դարձնում, իսկ միշտ նրանց վերջ ի վերջոյ՝ մի կտոր հացի են տիրացնում, վարպետ օրհնել տալիս, մի արհեստանոց բաց անում, մի խանութ տարքում՝ մէջը նստեցնում,— մի խօսքով՝ դարձընում են ինքնուրոյն առեւտրական կամ արհեստաւոր: Ներքին հակադրութեան չերեւալու երկրորդ խոշոր պատճառն էլ այն է, որ քաղաքի բոլոր բնակիչների, նրանց ամբողջութեան դէմ

կանգնած է մի հզօր թշնամի բանակ — ազնուականութիւնը, որի սպառնական ներկայութեամբ քաղաքի բնակիչների ներքին հակասութիւնները չէին կարող զարգանալ, հասնել որոշ բարձրութեան ու սրութեան: Ընդհանուր թշնամու ներկայութեամբ լռում էն ներքին հակասութիւնները, զսպւում ժամանակաւորապէս:

Համքարութիւններն ահեղին ու զօրացան: 16րդ դարում նրանք արդէն հասել էին իրենց զարգացման ու փարթամութեան գագաթնակէտին: Նրանց ներքին կանոնները կամ «ստատուտները» հասել էին ծայրայեղ ճշդութեան ու նրբութեան: Ճշդիւ որոշուած էր, օրինակ, թէ քանի աշակերտ կարող է ունենալ ոսկերիչ վարպետը, քանիա՝ կօչկակարը, դերձակը եւ բոլոր միւս արհեստաւորները. որոշուած էր բոլոր արհեստաւորների համար ունենալիք գարգարների բարձրագոյն թիւը, որից աւելի ոչ ոք չէր կարող ունենալ. սահմանուած էր, թէ ո՛ր արհեստում աշակերտը քանի՛ ամիս պիտի աշխատէ, ապա քարգար դառնայ եւ քանի տարի պէտք է բանուորութիւն անէ, որ արժանանայ վարպետութեան: Որոշուած էին վարպետ լինելու քննութեան բոլոր պայմանները, օրհնութեան արարողութիւնները եւայլն: Այդ դեռ քիչ է. յաճախ նոյնիսկ որոշուած էին լինում նաեւ այն բոլոր գործիքներն ու աշխատելու եղանակները, որոնցով պիտի կատարուէր արտադրութիւնը: Նորութիւն մտցնել համարեա՝ անհնար էր: Կար արդիւնքների բարե-

տեսակութեան վրայ հսկող մարմին, որ համքարական ամբողջ խորհուրդն էր կամ նրա մի մասը: Այսպիսով՝ համքարական կազմը, որ սկզբնեներում դեռ երկա՛ր ժամանակ հանդիսանում էր իբր առաջդիմութեան, կուլտուրայի մի զօրեղ խթան, հասարակական հարաստութեան աւելի հզօր աղբիւր, քան նախնական բնատնտեսական սիստեմը, որի մէջ գոյութիւն չունէր աշխատանքի հասարակական բաժանում,— այդ նոյն համքարական կազմն իր զարգացման բարձր չրջանում, դառնում է բռնակալ, յառաջդիմութեան խոչընդոտ եւ հեռաւոր զարգացման արգելարիւթ:

Սակայն թէ՛ մարդկանց թուի աճեցողութիւնը եւ թէ կուլտուրապէս բարձրացող անհատները — բոլոր մարդ էակների կարիքների չատանալը՝ պահանջում էին մարդկային հասարակութիւնից կամ հնարել արտադրութեան մի նոր, աւելի ինտենսիվ (սաստիկ), աւելի արդիւնատու ձեւ, մի ձեւ, որով քիչ եռանդ ծախսելով աւելի չատ արդիւնք ստացուէր, քան համքարական արհեստաւորական տնտեսութեան միջոցով եւ կամ դատապարտել հասարակութեան աւելացող թուի մի մասին կոտորուելու, սովամահ լինելու:

Եւ արտադրական նոր սիստեմը չուչացաւ: Այդ նոր ձեւի արտադրութիւնը կոչուեց «մանուֆակտուրական տնտեսութիւն» կամ ձեռնարուեստական արտադրութիւն: Վերածնութեան չրջանի ծաղկած դիստութիւնները ծնունդ տուին տպագրութեան, վառօդի դիւտին. բացուեց դէպի

Հնդկաստան չուրջաֆրիկեան ուղին, գտնուեց վերջապէս Ամերիկան. Բարտողդ Շուարց աթեղայի գտած վառօդը հնարաւոր դարձրեց ստեղծել «արքրուզը» կամ սկզբնական թնդանօթ-հրացանը, որի դնդակների առջեւ այլեւս չէին դիմանում աղքատացած մանր ազնուականների ու ասպետների զրահները, նոյնիսկ նրանց մանրիկ զըրեակները. մի կողմից մանր աւատական ազնուականութիւնն սկսեց ընկնել, կենտրոնական պետական իշխանութիւնը՝ հզօրանալ. առաջ եկան ազգային պետութիւններ, ինչպէս Ֆրանսիան, Իսպանիան, Անգլիան եւայլն, իսկ միւս կողմից՝ նոր գտնուած երկիրներն ու գիտական գիւտերը հնարաւոր դարձրին առեւտրի մինչ այդ չտեսնըւած մի հսկայական զարգացում:

Համքարութիւնների կողքին ծնունդ առան նոր տեսակի արհեստանոցներ: Ոեւէ նախաձեռնող հարուստ մարդ բաց էր անում մի խոշոր արհեստանոց, հաւաքում այնտեղ բազմաթիւ աղքատ արհեստաւորներ, բոլորին տալիս էր գործիքներ եւ հում նիւթ ու օրավարձով աշխատեցնում, նրանց արտադրած ապրանքը հանում կամ ներքին չուկայ, կամ արտահանում այլ վայրեր եւ վաճառում, կամ յանձնում օտար եւ տեղացի առեւտրականների վաճառելու: Ինչ ասել կ'ուզէ, որ այդպիսի նոր տեսակի հսկայ արհեստանոցը պիտի ղէմ լինէր համքարական տուտուտներին եւ համքարական կազմերն արդելք պիտի դառնային նրանց: Այդ արգելքն ստիպեց նոր ձեւի արհես-

տանոցներին քաշուել խոշոր գիւղերը, ուեւէ ազնուականի կալուածը կամ քաղաքների պարիսպներից դուրս, ուր չէր հասնում համքարութեան իրաւունքը:

Նոր բացուած հսկայական չուկան կարիք էր զգում ապրանքների, մանաւանդ ամէնից աւելի եւ ամէնից առաջ կտորեղէնների: Բուրդը դառնում է ամենաանհրաժեշտ հում նիւթ, որի գինը բարձրանում է:

Հողատէր մանր ու խոշոր ազնուականութիւնն սկսում է ոչխարներ պահել, բուրդը վաճառելու համար: Կամաց-կամաց գիւղացիների արտերն ու անտառները խլում են ձեռքերից եւ դարձնում իրենց խոշոր ու աճող հօտերի համար արօտատեղի: Գիւղացիների հողերն այնքան էին պակասում, որ նրանք սովից ստիպուած, թողնում էին իրենց տներն ու գիւղերը գաղթում դէպի քաղաքներ: Գիւղեր, տներ, եկեղեցիներ հողին էին հաւասարեցնում եւ վերածում արօտատեղերի ու որսատեղերի: 1533 թուին Անգլիայում հրատարակուած մի օրէնք ասում է, որ մի քանի հողատէրեր ունեն ամէն մէկը 24·000 ոչխար: Այդ օրէնքը նրանց արգիլում է 2000 ոչխարից աւելի պահել(*): Այդ երեւոյթն է որ տեղի է տուել անգլիական կանցլէր հռչակաւոր Թոմաս Մորին

(*) Տե՛ս Կարլ Մարքս — «Le Capital», հատոր Ա·, էջ 317:

իր «Ուտոպիա» գրուածքում խօսել մի օտարոտի երկրի մասին, «ուր ոչխարները մարդ են ուտում»:

Գիւղական ճորտ ազգաբնակութիւնն ազատ էր արձակուում, բայց ազատ՝ առանց հողի, առանց ապրուստի, «ազատ սովից մեռնելու», «թեթեւ ինչպէս օդը», համաձայն Մարքսի արտայայտութեան: Եւ այդ գիւղացիներն սկսեցին լցուել քաղաքները, խոշոր գիւղերը, թափառել մեծ ճանապարհների վրայ, թալանել, գողանալ, կողոպտել... Սոսկալի կերպով զարգացաւ թափառաշրջիկութիւնը: Կառավարութիւնները հրատարակեցին դրակոնական օրէնքներ թափառաշրջիկութեան դէմ: Ջինուած պահակները շրջում էին դաշտերում, ամէն կողմ ուր հանդիպում էին ճամբորդների, որոնց մօտ մի էկիւ (մէկ ֆրանկ) դոնէ չէր գտնուում, նրանց գնդակահարում էին իբր թափառաշրջիկ... Պարզ է ուրեմն, որ նոր ծնունդ առնող կապիտալիստական տնտեսութեան երկու խոշոր պայմանները կային առատօրէն. հում նիւթը առատ էր, մանուանդ բուրդը. աւելի քան առատ էր աշխատող ձեռքը: Փոր հացի համար պատրաստ էին հողազուրկ եղած գիւղացիներն ու բանուորները ծառայել, բայց էլի տեղ չէր լինում: Սկզբնական մանուֆակտուրական կապիտալիստն առաջին օրից իսկ հանդիսանում է իբր «բանուորի բարերար», նրա մասին հոգացող, նրան գործ ու ապրուստ մատակարարող:

«Կապիտալիստական սիստեմի հիմքում դո-

յութիւն ունի արտադրողի արմատական անջատումն արտադրութեան միջոցներից: Այդ անջատումը կատարւում է առաջատուութեան օրէնքով (քանի գնում՝ աւելի արագանում է նա). երբ մի անգամ արդէն կապիտալիստական սիստեմը հաստատւում է. բայց որովհետեւ այդ անջատումը կազմում է կապիտալիզմի հիմքը, այդ պատճառով աւանց նրան սա չէր կարող հաստատուել»(*) Արտադրական միջոցների այդ անջատումը կամ ճորտերի, դիւղացիների պրոլետարացումն ամէնից առաջ տեղի ունեցաւ Իտալիայում, ուր մանրիկ հանրապետութիւնները, ինչպէս Վենետիկը, Ջենովան, Միլանը, Ֆլորենցիան, Պիզան, Նէապոլը եւայլն, խիստ զարգացած արտադրութիւն (մանուֆակտուրա) եւ առեւտուր ունէին Միջերկրականի ընդարձակ աւազանում: Դրա համար էլ ճորտութիւնն ամէնից առաջ վերացաւ այնտեղից: Իսկ երբ ԺԴ. դարի նոր դիւտերն ու ճանապարհները թեքեցին առեւտրի ուղղութիւնը դէպի հարաւ ու արեւմուտք, այն ժամանակ ծաղկիլ սկսեցին Անգլիան, Հոլանդիան, Հանզէան քաղաքները, Ֆրանսիան, Սպանիան ու Փորթուգալը, իսկ Իտալիան սկսեց արագ ընկնել: Եւ քաղաքներում կուտակուած նրա ահագին թուով պրոլետարիատն ստիպուած եղաւ վերադառնալ դիւղերը, աստի-

---

(*) Քարլ Մարքս — Նոյն աշխատութիւնը էջ 315, առաջին սիւնակ:

ճանաբար տիրանալ մանր հողաբաժիններին եւ հաց ճարել երկրագործութիւնով, մանաւանդ բանջարաբուծութեամբ:

Առաջին խոշոր արհեստանոցներում դեռ խըմբըւում էին սեփականազուրկ արհեստաւորները, որոնք աշխատում էին դեռ եւս ինքնուրոյնաբար, ինչպէս մի խանութատէր. մի վարպետ եւ մի օգնական կատարում էին բոլոր աշխատանքները: Բայց աստիճանաբար առաջ եկաւ արհեստանոցներում աշխատանքի տեխնական բաժանում. ամէն մի արտադրուող առարկայ անցնում էր մի քանի վարպետի ձեռքով, որոնցից ամէն մէկը կատարում էր աշխատանքի մի որոշ մասը: Ասեղն, օրինակ, ըստ Ադամ Սմիթի, անցնում էր 19 վարպետի ձեռքով. մէկը երկաթն էր թել դարձնում, միւսը թելն էր յղկում, երրորդը որոշ չափով թելը կարատում էր ամբողջ օրը, չորրորդը սրում էր ծայրը նոյնպէս ամբողջ օրը, հինգերորդը տափակացնում էր միւս ծայրը, վեցերորդը ծակում էր այդ տափակացրած ծայրը, եօթերորդը փայլեցնում եւայլն, եւայլն:

Ամէն մի վարպետ կատարում էր լոկ իր բաժին գործողութիւնը տարիներ շարունակ, իր ամբողջ կեանքում. նա դառնում էր իր գործի ոգին, մի վարժ մեքենայ, մի վիրտուոզ: Աշխատանքի այդ տեսակ բաժանումն, ունենալով իր շատ խոշոր առաւելութիւնները, տալիս էր, քիչ ծախսով, շատ աւելի առատ եւ աւելի լաւ արդիւնք, քան համքարեան արհեստաւորական արն-

տեսութիւնն. այդ պատճառով մանուֆակտուրական տնտեսութիւնն սկսեց արագ զարգանալ, չըներկայելով համքարութիւնների մղած կատաղի կըռուին նրա դէմ: Կամաց-կամաց մանուֆակտուրական արտադրութիւնն սկսեց մանել քաղաքները, դրաւել ասպարէզները համքարական արհեստաւորների ձեռքից, քայքայել եւ մահուան մօտեցնել նրանց վատասուր կազմակերպութիւնները: Այդ կռիւը տեւեց մօտ երեք դար, սկսած ԺԵ. դարի սկիզբներից մինչեւ ԺԷ. դարի վերջը, մինչեւ Տիւրգոյի նախարարութիւնը Ֆրանսիայում Մեծ Յեղափոխութեան նախօրեակին, երբ նախարարական հրամանագրով լուծուած հրատարակուեցին բոլոր համքարութիւնները եւ ամէն մի արհեստաւոր ազատ ճանաչուեց օրէնքով: Դա կապիտալիստական արտադրութեան վերջնական յաղթանակն էր միջնադարեան մանր արհեստաւորական տնտեսութեան դէմ: Դրա հետ միասին Ֆրանսիական Մեծ Յեղափոխութիւնն ազատեց ճորտերին, քանդելով ճորտատիրական կարգերի բոլոր մնացորդները, հաւասար եւ ազատ ճանաչելով «մարդուն եւ քաղաքացուն» օրէնքի առջեւ: «Բոլոր մարդիկ եղբայրներ են եւ իրար հաւասար», ի հարկէ օրէնքի առջեւ: Սա՛ւրբ է մանաւանդ սեփականութիւնը: Մարդիկ ազատ են ամէն տեսակի տնտեսական ձեռնարկութիւններում:

Դա երիտասարդ կապիտալիզմի յաղթանակն էր: Աչխատանքի տեխնիկական (մեքենական) բաժանումը արհեստանոցի ներսում գործերը վեր-

ծելով ամենապարզ մասերի, դիւրացնելով այդ պարզ ու միապաղաղ գործողութիւնների համար մեքենաներ հնարելը: Ժէ. դարի վերջերից սկսուում է մեքենաների դիւտը եւ զարգացումը, որի արագ ընթացքը դեռ չէ դանդաղել մինչեւ օրս: Արհեստանոցի ներսում մի անհատ, կատարելով աշխատանքի լոկ մի չնչին մասը, հանդիսանում էր իբր ուրիշներից, բոլոր աշխատողներից կախուած մի էակ, որ ինքնուրոյնաբար ոչինչ չէր կարող արտադրել: Արհեստանոցի բոլոր բանուորները միասին վերցրած՝ կազմում էին մի օրգանական արտադրական ամբողջութիւն, որից եթէ մի աշխատանք կատարող պակասէր, ամբողջ օրգանիզմը կը հիւանդանար: Կարճ՝ աշխատանքը դարձաւ հասարակական, այն ինչ նա դուռ անհատական էր արհեստաւորական տնտեսութեան մէջ: Հսկայական արհեստանոցի, որ այժմ կոչւում է գործարան, տէրը մի մարդ էր, մի կապիտալիստ. նա վարձում էր բոլորին, վճարում որոշ աշխատավարձ եւ սակայն դալ գործարան, աշխատել 12, 14, 16 ժամ, արտադրել ապրանքներ եւ հեռանալ, չհաւնուելով ամենեւին նրանց, այդ իրենց ձեռքով արտադրուած ապրանքների դնի, վաճառման եւ նրանց դնի գանձման գործին: Տէրն էր ծախում արտադրած ապրանքները, օգուտ կամ վնաս անում, իւրացնում է՛ւ օգուտը, է՛ւ վնասը:

Մեքենաները հնարուելով ու զարգանալով, մտնում են գործածութեան. նրանք այլեւս աւելորդ են դարձնում նախկին արհեստ ուսանելու

կարիքը կամ չափազանց կրճատում են այդ ուսման ժամանակը: Հին ճեւի արտադրութեան մէջ թէ՛ համքարական եւ թէ մանուֆակտուրական, — բոլոր աշխատողներն արհեստի տէր մարդիկ էին, — կամ վարժուած վարպետներ, կամ վարժուող աշակերտներ ու քարգարներ, անվարժ, սեւ աշխատանքներ կատարող մշակներ համարեա՛ չըկային, եղածներն էլ աննշան թուով էին: Իսկ երբ մեքենան ներս մտաւ, աշխատողների մեծամասնութեան գործն այնքան դիւրացաւ, որ այլեւս սովորելու կարիք չկար. աշխատանքը դարձաւ «անորակ» (non qualifié): Եւ յիրաւի, ի՞նչ վարպետութիւն է հարկաւոր մեքենայի որոշ ծակերում իւղ ածել, կամ անիւը դարձնել, կամ վառելիք լցնել հնոցը... եթէ վարժութիւն էլ հարկաւոր է, ընդամէնը մի քանի օր բաւական է:

Այդ դեռ քիչ է, մեքենան յաճախ ոչնչացնում է նաեւ այժ գործադրելու պահանջը, որովհետեւ չափազանց դիւրացնում է աշխատանքը եւ դրանով հնարաւոր է դարձնում կանանց եւ երեխաների մուտքը գործարանները, դարձնելով նրանց մրցակից տղամարդ բանուորներին: Ընկնում է աշխատավարձը:

Մեքենան, մանելով գործի, բանուորութեան բոլոր անդամներին բաժանում է երկու բաւական որոշ չերտերի, որակուած, վարժութեան, կըրթութեան կարիք ունեցող աշխատանքներ կատարող բանուորներ եւ անորակ, վարժութեան, ուսման կարիք չունեցող աշխատանքներ կատարող

բանուորները: Առաջին մասը հանդիսանում է բանուորական արիստոկրատիան, կրթուած, համեմատաբար բարեկեցիկ եւ լաւ վճարուած: Իսկ երկրորդ մասը, որ բանուոր դասակարգի հսկայական մեծամասնութիւնն է կազմում, ընկնում է նիւթապէս, յետ է մնում մտաւորապէս:

Մանուֆակտուրական մեծ գործարանները եւ մեքենաների լայն գործածութիւնը, աւտոմատ առատացնելով արտադրութիւնը, ծնեցնում են կրկին հաղորդակցական նոր ու աւելի հզօր միջոցների: Եթէ արհեստաւորական ու բնական տնտեսութեան ժամանակ գործում էին կարաւանն ու եղան սայլը, մանուֆակտուրայի օրով հնարուեց առաջին անգամ Ֆրանսիայում (ԺԷ. դարում) խճուղին, իսկ մեքենաների արտավիժած հսկայական քանակութեամբ ապրանքների տեղափոխութիւնը կատարել կարելի էր միայն չոգենաւերով ու երկաթուղիներով, որոնք եւ լոյս աշխարհ եկան ԺԹ. դարի չեմքում: Դրանից ո՞րն է ծնողը, ո՞րը զաւակը, այդ հարցն անգամ անմիտ է. դրանք բոլորն էլ կազմում են մի ճոյլ ամբողջութիւն, հասարակական դրութեան մի անանջատելի մասերը, դրանք հաւասար եղբայրներ են, միատեղ ծնած, միեւնոյն հասակի, չկայ հայր եւ որդի նրանցում. նրանց բոլորի միատեղութիւնն է, որ կազմում է սինթեթիկական ամբողջութիւն:

Այսպիսով՝ մենք արդէն ատանում ենք նեղկայ հասարակութեան պատկերը: Կան հողատէրեր, կան գործարանատէրեր, կան առեւտրական-

ներ ու բազմաթիւ արհեստաւորնեը(*), կան մանրը հողատէր գիւղացիներ, կայ վարձու աշխատողների մի հսկայական բանակ, որի մէջ մըտնում են տարեկան 20-30·000 ռուբլի ստացող էնժենիորները, բժիշկները, քիմիկոսները, մեքենադէտներ եւայլն, կան եւ օրեկան հաշիւ 30-40 կոպեկ ստացող բանուորներ, պրոլետարներ:

(*) Ֆարլ Բիւխէրի կարծիքով, կան մօտաւորապէս 10 հազար տեսակի արհեստներ:

ԳԼՈՒԽ 2

Կեղեքուած դասակարգը — Յաւելեալ արժէք — Ներկայի գլխաւոր երեք դասակարգերը. հողատէր, դրամատէր եւ աշխատաւոր — Ադամ Սմիթ եւ Մարքս — Կաուցկին իբր շարունակող Մարքսի տեսակէտի — Էնգէլս — Արտադրութի՞ւնը թէ բաշխումն ընդունել հիմք դասակարգերի բաժանման — Ժամանակակից պրոլէտարի՞ատ թէ աշխատաւորութիւն — Աշխատաւորական տեսակէտը — Գիւղացին եւ բանուորը — Թուեր եւ տեսակէտներ — Ո՞ր դասակարգերն են ընդունակ ընկերվարօրէն մտածելու — Ընկերվարականները եւ գիւղացին:

Մարդկային հասարակութիւնների հնագոյն շերտաւորումն ստրկութիւնն է, որը, ինչպէս տեսանք նախընթաց գլխում, հին դարի վերջում եւ միջին դարի սկզբում վերածուեց ճորտատիրութեան, իսկ այդ վերջինն աստիճանաբար, սկսած ԺԴ.-ԺՋ. դարերից, վերածուեց ազատ վարձու բանուորութեան: Այդ երեք դարաշրջանների դասերի — թէ՛ ստրուկի, թէ՛ ճորտի եւ թէ վարձու աշխատաւորութեան եւ ստրկատէր, ճորտատէր ազնուականութեան ու ներկայի դործատէր ու հո-

դատէր բուրժուա դասակարգերի յարաբերութիւնների մէջ, չնայելով իրաւական դրութիւններուն հակայական տարբերութիւններին, կայ մի էական նմանութիւն. երեք վիճակում էլ մի դասակարգը կեղեքում է միւսին, աշխատեցնում է նրան եւ վճարում ոչ թէ նրա աշխատանքի ամբողջական արդիւնքը, այլ այդ արդիւնքի լոկ մի մասը, — այնքան, որ աշխատաւորն ապրել կարողանայ որեւէ կերպ, կէս կուշտ, կէս մերկ. իսկ մնացած արդիւնքը, որ կրում է յաւելեալ արժէք անունը, տիրող, կեղեքող դասակարգը գրպանում եւ իւրացնում է: Այդ իւրացրած յաւելեալ արժէքի մի մասը նա բաժանում է պետութեան, պաշտօնէութեան եւ ուրիշ կեղեքիչ կամ պորտաբոյծ դասակարգերի հետ, իսկ միւսից էլ հանելով իր փառաւոր ապրուստի համար անհրաժեշտը, մերնացորդը դարձնում է նոր կապիտալ, արտադրութեան նոր միջոցներ, որոնցով պիտի աշխատեցնէ աւելի թուով մարդիկ, քան առաջ, որպէսզի իւրացնէ աւելի քանակութեամբ յաւելեալ արժէք, քան առաջ: Ու այդպէս անվերջ — նոր կապիտալ, նոր ու աւելի թուով աշխատաւորներ, նոր չհատգործում, կապիտալի նոր աճում... կանգ առնել անհնար է. դա կապիտալիզմի յատուկ, ներքին զարդացողական օրէնքն է: Որ կապիտալիստը կանգ առաւ, չմեծացրեց իր արտադրութիւնը, դրանով իսկ նա կանգնում է մահուան ճանապարհին, որովհետեւ շրջապատի բոլոր գործատէրերը մեծանում եւ մեծացնում են իրենց գործը. արտա-

դրութեան ծախքերը դրանով նուազում են, իսկ մեր պարոնը մնում է նոյն վիճակում. այսօր չէ վաղը՝ նա այլեւս չէ կարող դիմանալ խոշորացած ու խոշորացող իր դրացիների մրցմանը. կամ դործից կը փախչի, հանելով իր դրամագլխի մի մասը եւ դրամական բէնտայով (%ներով) ապրելով, կամ կը անանկանայ, կը կորանցնէ իր ունեցածը, կը դառնայ վարձուոր իր նախկին դրացի մրցակիցների ձեռքին, որոնք, ի հարկէ, նրան չեն դարձնի անմիջապէս հասարակ մշակ, այլ նախ կը տան մի քիչ աւելի պատուաւոր տեղ, իսկ յետոյ, թերեւս աստիճանաբար իջեցնեն նա եւ դէպի ներքեւ:

Ինչպէս արդէն տեսանք, հին եւ միջնադարեան հասարակութիւնները, բացի այդ երկու խոշոր չերտերից, պարունակում էին իրենց մէջ նաեւ այլ տեսակի աստրաժանումներ կամ խաւեր: Ներկայի հասարակութիւնն էլ զերծ չէ այդ աստրաժանումներից:

Թէ՛ հնադարեան կաստաները, թէ միջին դարերի ու նոր ժամանակների դասերը (իրաւական խաւեր) միայն արտաքին նմանութիւն ունեն ներկայի դասակարգ հասկացողութեան հետ: Հնադարեան կաստան եւ այժմեան դասը իրաւական հասկացողութիւն են: Օրինակ՝ եգիպտական «արհեստաւորների կաստան» չէր ներկայացնում որեւէ մշտական մեծութիւն: Նրա մէջ կային եւ աղքատ արհեստաւորներ, եւ՛ հարուստներ, եւ՛ բանուորներ, եւ՛ աշակերտներ: Այդ բոլորը միասին

կոչւում էին՝ արհեստաւորները, ինչպէս որ գիւղացի են կոչւում եւ հարուստ ու աղքատ երկրագործները, ե՛ւ երկրագործ սեփականատէրն ու նրա մօտ վարձուած մշակները: Այժմ էլ եթէ մենք վերլուծենք «քաղքենի» կամ քաղաքաբնակների դասը կամ գիւղացիների դասը, կը գտնենք նրանց մէջ բաւական խոշոր չերտաւորումները, իրարից ահագին անդունդներով բաժանուած: Այսպէս, բաղբեցի կամ քաղաքաբնակ է կոչւում մի քաղաքացի աղքատ արհեստաւոր, մի վարձու բանուոր, մի խոշոր արհեստանոցատէր, որի մօտ աշխատում են 60–70 բանուոր եւ որոնց յաւելեալ արժէքը նա իր գրպանն է դնում: Իսկ «գիւղացի» բառն իր տակը թաքցնում է ե՛ւ գիւղական վաշխառու կապիտալիստին, ե՛ւ գիւղի դարբին-արհեստաւորին, ե՛ւ դերձակին, ե՛ւ բաւական խոշոր հողեր եւ հօտեր ունեցող գիւղական բուրժուային, որ ունի իր մօտ տասնեակներով վարձու մշակներ, եւ այն գիւղացուն, որը հազի՛ւ այնքան հող ունի, որ կարողանան ինքն ու իր ընտանիքի անդամները մշակել, ե՛ւ սակաւահող գիւղացուն, որը տարուայ մի խոշոր մասն անպատճառ պէտք է անցկացնէ գործարանում կամ ուրիշ գիւղացիների՝ հարուստների գործարանում՝ իբր վարձկան բանուոր, որպէսզի իր ապրուստը հանէ, — վերջապէս եւ հողազուրկ գիւղական պրոլետարին, որը ծախում է իր աշխատանքը եւ դրանով ճարում իր ապրուստը:

Այդպէս չէ դասակարգը: Նա բացառապէս

տնտեսական հասկացողութիւն է: Դասակարգ ասելով՝ այժմ մենք հասկանում ենք մարդկանց մի կարգ — չատ կամ քիչ թուով, դա մխեւնոյն է, — որի բոլոր անդամները ունեն միատեսակ շահեր. կամ, դիտականօրէն ճշդելով այդ միտքը, — որն ստանում է հասարակական ամբողջ արտադրութիւնից իր իւրայատուկ մասը: Այդ տեսակէտից նայելով՝ մենք նկատում ենք ներկայ հասարակութեան մէջ երեք խոշոր դասակարգեր. Ա. դասակարգ — հողատէրեր, որոնք հասարակական ամբողջ հարստութիւնից, ինչպէս ասում է Ադամ Սմիթը, ստանում են մի խոշոր մաս, իբր եկամուտ իրենց հողերի, իբր ըէնտա: Բ. դասակարգը կազմում են դրամատէրերը, որոնք ընդհանուր հարստութիւնից պահում են կրկնակի բաժին՝ նախ տոկոսներ իրենց դրամագլխի, երկրորդ՝ նախաձեռնողի վաստակ: Վերջապէս Գ. դասակարգ — գործաւորութիւն, որն ստանում է ընդհանուր եկամուտից իր բաժին աշխատավարձը: «Հողի եւ աշխատանքի տարեկան արտադրութեան ընդհանուր զանգուածը, կամ որ միեւնոյնն է, նրա արժէքի ընդհանուր գումարը, — ասում է Ադամ Սմիթը, — բաժանւում է երեք մասի. հողի եկամուտ (ըէնտա), աշխատավարձ եւ կապիտալի վաստակ. դրանք կազմում են ժողովրդի երեք տարբեր դասակարգերի եկամուտը: Այդ երեք մեծ բաժանումները կազմում են արդէն մի լուսաւորուած հասարակութեան երեք հիմնական դասակարգերը, որոնց եկամուտը վերջ ի վերջոյ

կազմում է ամբողջ աղքատնակութեան ապրուստի մինիմումը(*):

Պարզ եւ աներկբայելի բացատրութիւն. դասակարգերը որոշւում են՝ նայելով թէ հասարակական ամբողջ եկամուտի ինչ մասն են ստանում եւ ինչի՞ համար: Ադամ Սմիթի այդ միտքը հաւատարմութեամբ կրկնել է Կարլ Մարքսը: Վերցնելով ներկայ հասարակութեան յիշուած երեք խոշոր չերտերը, Մարքսը հարց է տալիս. «Ի՞նչն է նրանցից կազմակերպում հասարակական երեք խոշոր դասակարգեր»: Այդ հարցին նա պատասխանում է այսպէս.

«Առաջին հայեացքից՝ եկամուտների նոյնութիւնը եւ եկամուտի աղբիւրների նոյնութիւնը: Գոյութիւն ունեն հասարակական երեք խոշոր խմբեր, որոնց բաղադրիչ մասերը — նրանց կազմող անհատներն, ապրում են — աշխատավարձով, դրամատիրոջ վաստակով եւ հողային րէնտայով, օգտուելով իրենց բանուորական ուժից, իրենց կապիտալից եւ իրենց հողային սեփականութիւնից»(*):

Նմանութիւնն Ադամ Սմիթի հետ ակներեւ է: Մարքսը եւ դասակարգային բաժանման հիմքն ընդունում է բաշխումը, եկամուտների աղբիւրը,

---

(*) «Ազգերի հարստութիւնը», մէկ հատոր, էջ 477, 1860 թուի ռուսերէն թարգմանութիւնը:

(*) «Կապիտալ», Գ. հատոր, էջ 733 (ռուսերէն թարգմանութիւնը):

այդ եկամուտների նմանութիւնը: Բայց նա, իբր չարունակող Սմիթի, Ռիկարդոյի եւ ուրիշ դասական անտեսագէտների գործերի, ուզեցել է աւելի եւս խորացնել վարպետների տեսակէտները, առաջ մղել նրանց վերլուծութիւնը, այդ պատճառով նա չարունակում է նոյն երեսում.

«Բայց այդ տեսակէտից բժիշկները եւ պաշտօնեաները էլ, օրինակ, կազմում են երկու դասակարգ, որովհետեւ նրանք պատկանում են հասարակական երկու տարբեր խմբերի, եւ նրանց ամէն մէկի անդամները եկամուտ են ստանում միեւնոյն աղբիւրից: Նոյն բանը կարելի է ասել նաեւ չահերի եւ դրութիւնների այն անվերջ տարաձանութիւնների մասին, որ աշխատանքի հասարակական բաժանումն առաջ է բերում թէ՛ բանուորի, թէ՛ կապիտալիստների եւ թէ հողատէրերի մէջ, — վերջիններիս, օրինակ, վերածելով այդեպէրերի, արտատէրերի, անտառատէրերի, հանքատէրերի»...:

Ուրեմն, ըստ Մարքսի, հասարակութիւնը բաժանում է դասակարգերի՝ համաձայն ստացուող եկամուտի եւ նրա աղբիւրի նմանութեան: Եթէ մի խումբ մարդիկ ստանում են նման եկամուտներ՝ չնորհիւ այսինչ յատկութեան (օրինակ՝ չնորհիւ իրենց անձնական աշխատանքի, կամ կապիտալի եւ կամ հողերի), նշանակում է, որ այդ մարդիկը պատկանում են միեւնոյն դասակարգին: Սակայն Ադամ Սմիթի այդ բացատրութիւնը կրկնելով, Մարքսն ասում է, որ այդպիսի բացա-

տրուքիւնը միանգամայն ուղիղ եւ պարզ է թըւում առաջին հայեացքից. այսինքն՝ եթէ լաւ մըտածենք, կարող ենք գալ այն եզրակացութեան, որ այդ բացատրութիւնը մակերեսային է, որովհետեւ այդպէս մտածելով՝ բժշկին եւ պաշտօնեային, կամ արտատէրին եւ հանքատէրին էլ պիտի համարենք տարբեր դասակարգեր, ինչպէս որ պիտի տարբեր դասակարգեր համարենք օրինակ, գործարանական բանուորներին, երկրագործական մշակներին կամ արհեստաւորների քարգարներին եւայլն: Եւ ճշմարիտ որ՝ արտատէրերն ստանում են իրենց եկամուտները մի աղբիւրից. միանգամայն իրաւ նման — վարելահողերից, անտառատէրերի եկամուտի աղբիւրն էլ կտրած փայտն է, հնձած խոտը, հաւաքած վայրի մրգերը, որսի համար արուած թոյլտուութիւնը, անասուններ ածեցնելու համար ստացած դրամը եւայլն, ուրեմն՝ սրանք երկու միանգամայն տարբեր աղբիւրներ են ըստ երեւոյթին. կը նշանակէ, համաձայն այդ «եկամուտների եւ նրանց աղբիւրների նոյնութեանը» բանաձեւի՝ սրանք էլ պիտի կազմեն երկու ջոկ-ջոկ դասակարգեր:

Այո՛, մտածում է Մարքսը, բանաձեւը ճըշմարիտ է, բայց պէտք է նրան լրացնել, վերլուծութիւնը կամ անալիզը չարունակել: Ու ցանկացել է տաղանդաւոր տնտեսագէտը չարունակել, բայց նրա աշխատանքը կիսատ է մնացել. ձեռագիրն ընդհատուած է այնտեղ, ուր մենք բազմակէտեր ենք դրել:

Ուսուցչի կեսատ թողածն աշխատել է չարունակել Կ. Կաուցկին, ներկայումս «ուղղափառ» մարքսիզմի ամենահեղինակաւոր ներկայացուցիչը ոչ միայն Գերմանիայում, այլեւ ամբն տեղ:

«Անկարելի է, ի հարկէ, — ասում է Կաուցկին, — որոշ կերպով պնդել, թէ ինչ կը զարգացընէր այնուհետեւ Մարքսը: Բայց մենք ինքներս կարող ենք պատասխանել հարցին, ինքնուրոյնաբար հետազօտելով փաստերը»(*): Եւ նա բացատրում է:

Հասարակական ամբողջ եկամուտից բանուորն ստանում է աշխատավարձ, դրամատէրը՝ վաստակ, հողատէրը՝ ըէնտա: Եթէ ենթադրենք, որ ազգային եկամուտը, կամ աւելի ստոյգ է ասել՝ հասարակական եկամուտը, օրինակ, այս տարի ունի a մեծութիւն, այդ նոյն տարում, օրինակ, աշխատավարձը եթէ 1/3 a է, վաստակն էլ 1/3 a, ըէնտան էլ 1/3 a, — արդեօք ինչպէ՞ս կարող է հետեւել տարում աշխատավարձն աւելանալ, առնալ, օրինակ՝ 1/3 a+s, ի հարկէ՝ ենթադրելով, որ առաջներայ տարին էլ հասարակական ընդհանուր ե կ ա մ ո ւ տ ի գումարը նոյնն է — a: Արդեօք ո՞րտեղից պէտք է խլել այդ s-ը եւ դնել աշխատավարձը կազմող 1/3 a-ի վրայ եւ դարձնել նրան, օրինակ՝ $^1/_2$ a, հասարակական

(*) Կ. Կաուցկի — «Դասակարգային շաները», էջ 6 (ռուսերէն թարգմանութիւնը):

բոլոր եկամուտի կէսը: Ի՞նչ կասկած, որ կայ մէկն ու մէկն մի ելք. խլել այդ s-ը կա՛մ վաստակից, կա՛մ ըէնտայից եւ կամ երկուսից էլ եւ տալ աշխատավարձին: Այսպիսով՝ ակներեւ է, որ աշխատավարձի, ուբեմն եւ աշխատաւորութեան (բանուորների, — ասում է Կաուցկին) շահերը հակադիր են կապիտալիստների եւ հողատէրերի շահերին: Նոյն կերպով մտածելով, մենք կը գանք այն եզրակացութեան, որ ըէնտան էլ կարելի է աւելացնել մէկն պակասեցնելով կա՛մ աշխատավարձը, կա՛մ վաստակը եւ կամ երկուսն էլ: Բացարձակ նոյնն է համարում Կաուցկին, նրա հետ եւ Զերնովը, վաստակի յաւելումը:

Այդպիսով, կը նշանակէ, մենք արդէն գըտնում ենք որոշ յենակէտ, որոշելու համար դասակարգային շահի աղբիւրը, աչքի առաջ ունենալով նրա հակադրութիւնը մեւս դասակարգերի շահերի հետ: Ինչ կասկած, որ կարող են պատահել այնպիսի վայրկեաններ, երբ թէ՛ աշխատավարձը, թէ՛ վաստակը եւ թէ ըէնտան միաժամանակ կարող են բարձրանալ. օրինակ, արտադրական բարգաւաճման րոպէներում, բայց դա կարճատեւ վայրկեանների գործ է. անմիջապէս սկսւում է կամ ճգնաժամ, երբ ընկնում են բոլոր տեսակի եկամուտները եւ եկամտատէր դասակարգերն ամէն կերպ կռիւ են մղում անկման վնասները նետելու համար հակառակորդ դասակարգերի վզին, եւ կամ վրայ են հասնում կանգմանն, անշարժութեան րոպէները, երբ դասակարգերը կրկին մը-

ղում են կեանքի ու մահուան կռիւ, որպէսզի աւելացնեն իրենց եկամուտները ի հաշիւ միւս դասակարգերի:

Վերցնենք այժմ այդ երեք խմբերի ներքին սորտաբաժանումները: Բանուորներն, օրինակ, բաժանւում են բազմաթիւ տեսակների. հանքադործ բանուորները, տպարանական, երկրագործական, արհեստաւորական եւայլն, եւայլն: Ենթադրենք, որ հանքադործ բանուորների աշխատավարձն աւելացրին 10%: Ո՞ւմ հաշուից է արդեօք այդ յաւելումը կատարւում: Վնասո՞ւմ են դրանից, օրինակ, գրաշարները, կօշկակար բանուորները, կամ երկրագործական պրոլետարները, — ամենեւին. տրամաբանօրէն մտածելով, պէտք է հաստենք միանգամայն հակառակ եզրակացութեան: Հանքադործ բանուորների աշխատավարձի յաւելումը պիտի ծառայէ նախ իրը դրդիչ միւս տեսակի բոլոր բանուորներին ձգտելու այս կամ այն ձեւով բարձրացնելու նախ իրենց օրավարձը. երկրորդ՝ նա պիտի ծառայէ միւս գործատէրերին իրը օրինակ, իրը մղիչ աւելի չուտ դիմանելու իրենց բանուորների պահանջին աշխատավարձն աւելացնելու վերաբերմամբ: Պարզ է ուրեմն, որ հանքադործ բանուորների աշխատավարձի յաւելումը երբեք չի կարող կատարուել ի վնաս միւս բանուորների աշխատավարձի: Այդ յաւելումից տուժողը անպայման լինելու են հանքատէրերը: Եւ անշուշտ երբ մի հանքում բարձրացում տեղի ունեցաւ, միւս հանքերում էլ նաեւ

տեղի կ'ունենայ, այդպիսով վնասելով ոչ թէ անհատաբար այս կամ այն հանքատիրոջը, այլ բոլոր հանքատէրերին:

Քննենք այժմ կապիտալիստների տնօրաբաժանումները: Այդ դասակարգի վրայ առաջին անգամ նայողը կը տեսնի, որ դրա անդամների համար է տրքուած լատինական հին ասացուածքը· «Homo homini lupus est», — «Մարդը մարդու համար գայլ է»: Այդտեղ դուք կը տեսնէք ամէն մի կապիտալիստ,— լինի նա ճարտարարուեստական, առեւտրական, թէ դրամատիրական, — այդ միեւնոյն է, մրցակից իրար հետ: Ամէն մէկը քաշուած իր բունը, դաւեր է նիւթում ուրիշին: Մէկի արտադրութեան կամ առեւտրի խոշոր ընդլայնումն անպայման կործանման վտանգի մէջ է դնում միւսին: Մրցումը դասակարգի ներսում, նման ձեռնարկութիւնների մէջ, կատաղի է: Ճըշմարիտ է, այդ մրցումը կայ նոյնիսկ երկու բանուորի մէջ· երկուսն էլ դործ են որոնում եւ այդ վայրկեանին հանդիսանում են իրը մրցակիցներ: Միայն թէ աշխատաւորութեան մէջ, այդ կռիւը նախ տատիկ չէ· երկրորդ՝ չափազանց կարճատեւ է, իսկ կապիտալիստների մէջ այդ կռիւը չափազանց զօրեղ է եւ յարատեւ: Դժբախտաբար կ. կաուցկին այդ կէտը չէ ենթարկել քննութեան իր յիշատած յօդուածում: Ենթադրենք, որ մի դրամատէր (բանկիր) բուրժուա — դուտ %ներով ապրող, տալիս էր իր փողը մի գործարանատիրոջ 10%ով: Ենթադրենք նայնպէս, որ այդ բան-

կիրը հաւաքել է իր բանկում «մանր մարդկանց» խնայողութիւններ $3\frac{1}{2}$–4% ով: Կօչիկի գործարանը բացւում է. գործարանատէրն աշխատեցնել է տալիս մօտ 2000 բանուոր եւ նրանց վճարում է, ասենք, օրական մէկ ռուբլի, իսկ նրանց յաւելեալ արժէքը՝ 50 կոպեկ, գրպանը դնում: Կը նշանակէ յաւելեալ արժէքի նորման կամ չափը հաւասար է 50%ի: Ա.յսպիսով ձեռնարկող կապիտալիստը մի օրում ստանում է 1000 ռուբլի յաւելեալ արժէք: Դրանից նա վճարում է պետական տուրքերը, հանում է իր փառահեղ ապրուստի միջոցը, մաս է տալիս բանկիրին, հաշուելով 10% փոխ տուած կապիտալին. բանկիրն էլ, իր կարգին այդ 10%ից բաժին է հանում «մանր մարդկանց», խնայողներին՝ 4ական տոկոս, իսկ 6% աշխատում է դրանց դրամագլխից, իր սեփականից անպայման ստանալով 10% եւայլն:

Քննելով այս յարաբերութիւնները, անպայման մենք նկատում ենք, որ դրամատէր բուրժուայի տոկոսի բարձրութիւնը եւ գործատէր բուրժուայի վաստակի մեծութիւնն իրար հետ միանգամայն համեմատական չեն եւ չեն էլ կարող լինել: Սակայն երկուսի մէջ անպայման աւելի համեմատականութիւն կայ, քան բանուորական աշխատավարձի (աշխատավարձի) եւ յաւելեալ արժէքի միջեւ: Կապիտալիստների երկու խմբերն էլ, զգալով իրենց հակառակորդների ոյժը, սըրտատուչ համերաշխութեամբ միանում են ընդհանուր թշնամու, բանուորութեան դէմ եւ ձգտում

աւելացնել թէ՛ %ը եւ թէ վաստակն աշխատավարձի հաշուով։

Ինչ որ էլ լինի արտաքին երեւոյթը, մի բանկիրի չահն ամենեւին չէ մեծանում միւս բանկիրի չահի փոքրանալով։ Եթէ կայ մրցում կապիտալիստների մէջ, դա անհատական է։ Բոլոր բանկիրների չահը կամ բոլոր կապիտալիստների դասակարգի չահը դիտելով մի ընդհանուր ամբողջութիւն, այսինքն անհատական ներդասակարգային մրցումը վերացնելով (աբստրակտուն անել), դիւրին է նկատել, որ այդ չահը կարող է մեծանալ լոկ կա՛մ աշխատավարձի հաշուով, կամ հողավարձի (րէնտա) նուազելով։ Ընդհակառակը, եթէ մի բանկիր կարողանում է իր դրամը տալ, օրինակ, սովորականից 1–2% բարձր, դա լաւ կ՚ազդէ նաեւ այդ ապրանքի (դրամի) միւս տէրերի առեւտրի, նրանց ստացած %ների վրայ։ Կամ եթէ մի գործարանատէր կարողանում է թանկ գնով ծախել իր կօշիկները, դվխարկները եւայլն, դա կը նշանակէ, որ անպայման միւս գործարանների նոյնանման ապրանքները եւս պիտի բարձր գին ունենան, որովհետեւ չուկայում գները հաւասար են, եթէ ապրանքի որակն ու քանակը հաւասար է։

Ուրեմն թէեւ %ի եւ վաստակի աճեցողութիւնը յաճախ իրար հաշուով է կատարւում, բայց նրանք երկուսն էլ աւելի չուտ են իրար հետ միանում եւ երկուսն էլ միասին ճգտում են բարձրանալ աշխատավարձի հաշուով։

Բոլորովին նույնը պէտք է ասել նաեւ հողատէր դասակարգի համար: Նրա անդամներն էլ անհատապէս հանդիսանում են իբր մրցակիցները, բայց նրանցից մէկի հողի գնի բարձրացումն անպայման բարի նշան է նաեւ միւսների համանման հողերի համար: Սրանց չահն էլ, իբր ամբողջ դասակարգի, անպայման կազմում է մի ամբողջութիւն, հակադիր միւս դասակարգերի — աշխատաւորութեան եւ կապիտալիստների չահերի: Սրանք էլ կարող են ունենալ ներքին բազմաթիւ ատորաբաժանումներ, որոնց չահերն արտաքուստ բաւական իրար հակառակ, իրար մրցակից են հանդիսանում, բայց երբ քննում ենք նրանց դիրքը — հասարակական ամբողջ եկամուտի որ մասը կազմելն, այն ժամանակ տեսնում ենք, որ դրանք բոլորը մի դասակարգ են կազմում, եւ վերջ ի վերջոյ՝ որքան աւելի նրանք զարգանան, պիտակցեն իրենց դասակարգային չահերն, անպայման պէտք է աւելի եւ աւելի իրար մօտենան, կազմակերպուեն ընդդէմ միւս դասակարգերի:

Մենք դեռ մի քիչ առաջ կը գնանք այդ հարցում: Մենք կ'ասենք. որքան աւելի սրուեն դասակարգային յարաբերութիւնները ու մօտենայ նրանց ընդհարման վճռական վայրկեանն, այնքան աւելի պիտի երկու դասակարգերը — կապիտալիստները եւ հողատէրերն իրար մօտենան, խտացնեն չարքերը, միաձուլուեն եւ միահամուռ կռիւ մղեն աշխատաւորութեան դէմ, որովհետեւ հասարակական համայն եկամուտն էապէս պէտք

է բաժնել երկու մասի — անհրաժեշտ եւ յաւելեալ արժէքների: Թէ՛ հողատէրը եւ թէ կապիտալիստն իրենց բազմաթիւ ստորաբաժանումներով, վերջ ի վերջոյ ստանում են իրենց իւրաքանչիւր պատասխանները մարդկային քարացած աշխատանքից, որը մտել է մայր բնութեան տուած բնական բարիքների մէջ եւ նրանց վեր է ածել արժէքների, հարըստութեան: Կասկած չկայ, որ գործատէր կապիտալիստը կամ հողատէրը լրիւտորը եւս մրցըկնում են որոշ մաս այն հակայական ստեղծագործող աշխատանքի մէջ, որը տալիս է հասարակական ամբողջ հարստութիւնը, սակայն եթէ նրանք այդ հարստութիւնից ստանալին ճիշդ այնքան բաժին, որքան որ աշխատանք են թափել, դրա դէմ ոչ ոք ոչինչ չէր կարող առարկել: Բայց այն ժամանակ նրանք էլ կը դառնային աշխատաւորներ եւ այլեւս չէր լինի դասակարգային բաժանում. մի բան, որ այսօր ձգտման կէտ է, նըպատակ է աշխատաւոր դասակարգերի համար: Բայց բանն էլ հենց այդ է, որ կապիտալիստ եւ հողատէր դասակարգերն անպայման աշխատելով միայն րոպէներ ու ժամեր ամիսների ընթացքում, հասարակական եկամուտի հսկայական մասը վերցընում են ոչ իբրեւ վարձ իրենց աշխատանքի, այլ լոկ իբր կապիտալի %, նախաձեռնողի վաստակ (որ նա որոշ ռիսկ, որոշ վտանգ է յանձն առել ձեռնարկելով որեւէ գործ... չէ՞ որ նա կարող էր կորցնել այդ գործում իր ունեցածը...), իբր հողի վարձ եւայլն: Կարծես թէ կապիտալն

էլ իր կարգին երբեւէ չէ արտադրուել մարդկային աշխատանքով, կարծես թէ նա էլ այսօր մարդկային քարացած աշխատանքի կուտակում չէ: Եւ կամ հողը, բնութեան այդ ձրի պարգեւը կարծես թէ չէ պաղատուրում մարդկային կենդանարար աշխատանքով, կամ եթէ հողը թողնէիր մենակ, իր դլխի, կարծես թէ իր վրայ պիտի առնէր բուսցընէր, իր մէջի հանքերը պիտի ինքնիրան մչակէր, կամ պիտի ինքնիրան հերկուէր ու բոյսեր տար, միանգամայն յարմար լէնդլորդի կարիքներին բաւարարութիւն տալու: Ո՛չ, բոլոր արժէքների միակ աղբիւրն աշխատանքն է, որովհետեւ երկրորդ աղբիւրը՝ մայր բնութիւնը ամէն ինչ տալիս է ձրի եւ նա տալիս է իր գրկում առաջացած բոլոր էակներին՝ առանց բացառութեան:

Անկասկած՝ դասակարգերի աւելի խոր վերլուծութիւնը մեզ հասցնում է երկու չերտերի. մի չերտը, որն աշխատում է եւ ապրում, միւս չերտը, որը չէ աշխատում եւ ապրում աշխատողների յաւելեալ արժէքով: Ու այդ երկու դասակարգերի չահերն անպայման հակադիր են: Մէկի ըստացածի աւելնալն անպայման նուազեցնում է միւսի եկամուտը, որովհետեւ եթէ առաջինը չըստանար, բնականօրէն պիտի մնար երկրորդին:

Դասակարգերը գոյութիւն կ'ունենան քանի դեռ գոյութիւն կ'ունենայ դասակարգային չահերի հակադրութիւնը, նրանց իրար ջնջող որակը, կլանող բնոյթը, որ մենք տեսանք վերեւում: Իսկ այդ դասակարգային հակառակութիւնն ու հակա-

դրութիւնը միշտ կը լինի, քանի կայ կապիտալիստական տնտեսակարգը:

Ամէն մի դասակարգի տանձալիք մասի չափն ու մեծութիւնը հասարակական ամբողջ եկամուտից՝ կախուած է այդ դասակարգի տնտեսական զօրութիւնից, նրա քաղաքական կազմակերպութիւնից եւ խաղացած դերից, նրա մղած տնտեսական ու քաղաքական կռուից:

Աշխունքների այս բաշխման վրայ են հիմնըւում դասակարգային տարբերութիւնները. դասակարգային հակադրութիւնները եւ դասակարգային կռիւը... «Դասակարգի հասկացողութիւնն ամփոփում է իր մէջ դասակարգային հակադրութեան ըմբռնումը»(*):

Ֆրիդրիխ Էնգելսի մօտ մենք գտնում ենք այդ նոյն միտքը, միայն մի քիչ ձգձգուած, բայց աւելի խիստ ու վճռական ձեւով:

«Որոշ պատմական հասարակութեան արտադրութեան տեսակի եւ եղանակի ու նոյն հասարակութեան պատմական նախորդող պարագաների հետ միասին տրուած են լինում նաեւ արդիւնքների բաշխման տեսակն ու եղանակը»(**): Իսկոյն բերում է օրինակներ պատմական ասպարէզ

(*) Կ. Կաուցկի — «Դասակարգային շահեր», ռուսերէն, էջ 8:

(**) Ֆր. Էնգելս — «Փիլիսոփայութիւն, քաղաքատնտեսութիւն, ընկերվարութիւն», էջ 193, ռուսերէն:

մանող, մեծ մասամբ դեռ համայնական հողաի-
րութեան ու բնատնտեսութեան չրջանում ապրող
սկզբնական հասարակութիւններին, որոնց մէջ
արդիւնքների բաչխումը կատարւում էր բաւական
հաւասարաչէր ձեւով. «Ուր որ երեւան է գալիս
անդամների մէջ մի քիչ աւելի անհաւասար բաչ-
խում, դա արդէն ծառայում է իբր նչան սկսուած
քայքայման այդ համայնքի» (նոյն էջը):

Բաչխման անհաւասարութեան առաջին խոչոր
քայլը համարելով սարկաւիրութիւնը, Էնգելսն
ասում է, որ մանր ու խոչոր հողատիրութիւնը
դեռ կարող են պարունակել իրենց դրկում բաւա-
կան բազմազան բաչխում, իսկ երբ մետաղէ դը-
րամի գործածութիւնը առաջ է մղւում ու զարգա-
նում, այն ժամանակ աճում է եւ բաչխման ան-
հաւասարութիւնը, ուրեմն եւ աճում է հարուստ-
ների եւ աղքատների հակադրութիւնը: Սակայն
միջնադարեան համքարական կազմը թոյլ չէ տա-
լիս, որ գոյութիւն ստանան ու զարգանան խոչոր
հարուստներ, ինչպէս եւ նա անհնար է դարձնում
մշտական վարձու բանուորութեան դրութիւնը:
Դրանք յատուկ են միայն ներկայ տնտեսակար-
գին:

«Բայց, — չարունակում է նա, — բաչխման
դանազանութեան հետ միաժամանակ առաջ են գա-
լիս եւ դասակարգերի տարբերութիւնները: Հա-
սարակութիւնը բաժանւում է ընտրեալների եւ
հալածուածների, կեղեքողների եւ կեղեքուողնե-
րի, տիրող եւ կառավարուող դասակարգերի, եւ

ճիշդ այդպէս էլ պետութիւնը, որ զարգացաւ ու առաջ եկաւ միացեալ համայնքներից, սկզբներում լոկ իրենց չահերի (օրինակ՝ արեւելքում ոռոգման) եւ արտաքին թշնամիներից պաշտպանուելու համար, — այնուհետեւ սառնում է կոչում ուժով պաշտպանելու տիրող դասակարգի գոյութիւնը եւ տիրապետութիւնը»:

Այդ կտորի մէջ կարծես էնգելսն ուզում է կապել բաշխումն արտադրութեան զարգացման հետ. չէ՞ որ մարքսիզմի հիմնաքարն է «արտադրական յարաբերութիւնները, վերջին հաշուում՝ արտադրութեան մեքենական միջոցները»: Բայց այդ կապի նշանակութիւնը չափազանց չմեծացնելու համար, էնգելսն իսկոյն չարունակում է.

«Սակայն բաշխումը չէ հանդիսանում իբր կրաւորական հասարակ արդիւնք արտադրութեան եւ փոխանակութեան. նա իր կարգին հակազդում է արտադրութեան եւ փոխանակութեան վրայ: Արտադրութեան եւ փոխանակութեան բոլոր նոր եղանակները սկզբներում գտնուում են ոչ միայն իրենց հին ձեւերի եւ քաղաքական հիմնարկութիւնների ճնշման տակ, այլեւ նրանց առաջանալուն եւ զարգանալուն արդելափակ է լինելու նաեւ հին ձեւի բաշխումը»(*):

Ուրեմն մարքսիզմի հիմնադիրները — Մարքսն ու էնգելսը եւ նրանց աշակերտներից հեղինակաւորագոյնն այսօր — Կ. Կաուցկին, մեր թե-

(*) Նոյն գրուածքում, էջ 194:

ըած բոլոր վկայութիւններով գալիս են հետեւեալ եզրակացութեան. դասակարգերի կազմութեան մէջ վճռական նշանակութիւն ունի եկամուտի աղբիւրների ընդհանրութիւնը եւ դրանից բղխող շահերի ընդհանրութիւնն ու նրանց հակադրութիւնը հասարակական միւս խմբակցութիւնների շահերին:

Ուսուցիչների եւ գլխաւոր աշակերտի մտքերը դասական դերի նկատմամբ խիստ լաւ բնորոշում է ռուս երիտասարդ գրող Վ. Զերնովը. «Տարբեր դասակարգերի մէջ մարդկանց միացնում են նրանց եկամուտի այն հիմնական, տարբեր աղբիւրները, որոնք ազգային (հասարակական) ընդհանուր եկամուտի որոշ մեծութեան ժամանակ, կարող են ընդարձակել միայն մէկն ի վնաս միւսների»(*):

Բայց դժբախտութիւնը հենց նրանումն է, որ կաուցկի մի քայլ չէ մնում այդ տեսակէտի վրայ, երբ խօսում է բանուոր պրոլետարիատ դասակարգի մասին: Օրինակ՝ նա հիմնականապէս չեղուում է այդ տեսակէտից իր մի խոշոր աշխատութեան մէջ, որի վերնագիրն է «Ագրարային հարցը»: Այդ աշխատութեան մէջ նա մի ամբողջ գլուխ նուիրում է «գիւղացուն եւ բանուորին»:

Այդ գլխում նա իրար հակադիր չահերի տէր

(*) Վ. Զերնով — «Դասակարգային կռուի թէորիայի շրջանը», գրադարան «Ցառաջ»ի, էջ 33:

է հրատարակում գիւղացուն եւ բանուորին, որովհետեւ այլեւս «եկամուտի աղբիւրների եւ նրբանցից բխող չահերի նմանութեան» տեսակէտի վրայ չէ կանգնած դասակարգ հասկացողութեան որոշման մէջ, այսինքն այլեւս բաշխումը չէ դնում դասակարգերի բաժանման արմատում, այլ՝ արտադրութիւնը:

«Ժամանակակից պրոլետարիատի բնորոշ գիծը, — ասում է նա, — կայանում է այն կարեւոր դերում, որ նա խաղում է արտադրական պրոցեսում: Նրա վրայ է հանգչում այսօր դոյութիւն ունեցող կապիտալիստական արտադրական եղանակը»(*): Դրանով հենց ներկայ պրոլետարիատը, որ արդիւնք է մեր ժամանակների, տարբերւում է լումպենպրոլետարիատից կամ մուրացիկ պրոլետարներից, որոնք նեղն ընկած ժամանակը ձեռք են մեկնում, պորտաբոյծի կեանք անցկացընում: Վերջիններս աղբատներ են, նրանց համար արտադրական միջոցներ չունենալը ոչինչ է, մինչ ցաւ պատճառողն սպառման միջոցներ չունենալն է. «Իսկ ներկայ բանուորական պրոլետարիատի համար բնորոշ է հանդիսանում արտադրական միջոցների սեփականութեան բացակայութիւնը: Գործածութեան իրերի անբաւականութիւնը կարող է կապուել դրա հետ, բայց դա

(*) Կ. Կաուցկի — «Ագրարական կամ հողային հարցը» («Ագրարային ծրագիր» — Էժանագին հրատարակութիւն), էջ 6:

պարտադիր չէ։ Ժամանակակից վարձու բանուորը կը մնայ պրոլետար, քանի դեռ չի տիրանայ արտադրութեան միջոցներին, թէեւ նրա վիճակը, ինչպէս սպառող, կարող է լինել շատ տանելի եւ նա կարող է ձեռք բերել նոյնիսկ զարդարանքներ, կահ-կարասիներ կամ նոյնիսկ սեփական տնակ։ Եթէ նա ձեռք բերէ որոշ բարեկեցութիւն, դրանով չի դադարի դեռ վարձու բանուոր լինելուց, իր դասակարգային կռիւը չարունակելուց։ Ընդհակառակը, վիճակի այդ բարելաւումը «յաճախ նրան հնար է տալիս աւելի եւս ուժեղ կերպով մղելու այդ կռիւը։ Այդ կռիւը արդիւնք չէ նրա աղքատութեան, այլ արդիւնք այն անտագոնիզմի կամ հակադրութեան, որ կայ նրա եւ նրա արտադրութեան միջոցների միջեւ մէջ։ Ոչ թէ աղքատութեան ոչնչացումով, եթէ դա հնարաւոր լինէր, — կարելի է հաստատել հասարակական խաղաղութիւնը, այլ այդ հակադրութեան վերացումով։ Իսկ դա հնարաւոր է միմիայն այն ժամանակ երբ արտադրութեան միջոցները կդիմեն կ'անցնեն բանուորների ձեռքը»։ (Նոյն էջում)։

Արտադրութեան միջոցները կարելի է սեփականացնել երկու կերպ,— անհատօրէն եւ խմբակցութիւնով։

Անհատական տիրապետութիւնը կատեգիկին համարում է ամէն դէպքում կապիտալիստական կամ բուրժուական երեւոյթ։ Նրա համար միեւնոյնն է, թէ արդեօք ով է արտադրական միջոցի տէրը — մի կապիտալիստ, որը ծառայեցնում է

այդ միջոցներն ուրիշների, վարձու աշխատաւորների ձեռքով, որպէսզի յաւելեալ արժէք ստանայ, թէ՞ մի աշխատաւոր, որը, ինչպէս տրամաբանօրէն նկատում է Մարքսը, «Կապիտալ»ի Ա. հատորի վերջին գլուխներում, «դեռ փեսրած հաւ չէ դառել» եւ նա ոսքից յաւելեալ արժէք չէ կլանում, այլ իր ճակատի քրտինքով հազիւ իր հացն է ճարում, իր «իւղովը տապակւում»: Այդ հիմնական սխալից, ինչպէս յետոյ կը տեսնենք, բխում է այլ դաժան ու միանգամայն անմարդավայել, ոչ դիտական վերաբերմունք, որ կառուցում նման աշխարհահռչակ պիտնական եւ մարդասէր մարդը ցոյց է տալիս դէպի գիւղացին, այդ բոռն էլ գործածելով «գիւղացի դաս» վուլգէր կամ ընթացիկ մտքով: Երկրորդ տեսակի իւրացումը կատարւում է համբօրէն: Սակայն խումբն էլ յարաբերական հասկացողութիւն է. կարելի է տիրել արտադրական միջոցներին ասոցիացիաներով կամ մանրիկ համբակցութիւններով, որոնցից իւրաքանչիւր մէկը կը ներկայանայ օրէնքի առջև իբր մի իրաւական անհատ, այդպիսով դիտուելով կրկին անհատական սեփականատիրական մի երեւոյթ, եւ երկրորդ՝ կարելի է տիրել համայնօրէն, հասարակական կազմով: Համբակցական կամ ասոցիացիաներով կատարուած տիրապետութեան բոլոր փորձերը մինչեւ օրս յանդել են բուրժուական վախճանի: Այդ պատճառով էլ թէ՛ աշխատաւորութեան եւ թէ, մասնաւորապէս, պրոլետարիատի ձգտման գերագոյն կէտը լինելու

է արտադրական միջոցների հասարակական սեփականութիւնը, որովհետեւ այդպիսով միայն կարելի է վերջ դնել դասակարգերին ու նրանց հակադրութիւններին, վերջնականապէս հաստատել սոցիալական կամ ընկերային խաղաղութիւնը:

Միեւնոյն մարդու տուած երկու որոշումները միեւնոյն հասկացողութեան վերաբերմամբ, այսպիսով, իրարից բաւական տարբերւում են: Ի՞նչ է դասակարգը ընդհանրապէս: Այս հարցին Կաուցկին ձեզ կը պատասխանէ.— մի կարգ մարդիկ, որոնց եկամուտները եւ նրանց աղբիւրները իրար նման են եւ որոնք աղգային կամ հասարակական ընդհանուր եկամուտի մի մասը կազմելով, կարող են մեծանալ միայն ու միայն միւս դասակարգերի հաշուով, ի հարկէ եթէ ընդհանուր եկամուտի մեծութիւնը մնայ անփոփոխ: Ու այդ պատասխանն, ինչպէս տեսանք, համապատասխան է Մարքսի կիսատ թողած ձեռագրին եւ կազմում է նրա արտադրանական չարունակութիւնը: Դեռ մենք պէտք է տեսնենք, որ այդպիսի մտքեր Մարքսի մօտ յաճախ ենք պատահում, մանաւանդ երբ նա վերջ է լուծում արտադրական միջոցների կուտակման խնդիրը, երբ քննում է, թէ ինչ է վաչխառուութիւն, ինչպէս կապիտալիզմի ծնելուց առաջ արդէն բաշխումը միատեղել էր դործիքները որոշ ձեռքերում, եւայլն:

Անցնենք այժմ երկրորդ հարցին: Ի՞նչ է պրոլետարիատը կամ բանուոր դասակարգը: —

Պարզ նկատելի է, որ նախընթաց հարցը աւելի ընդհանուր նշանակութիւն ունի, քան սա, որ ժամում է նախընթացի մէջ՝ իբր մասնակի մի հարց ընդհանուր սկզբունքային որոշման մէջ: Դրա պատասխանը, համաձայն սկզբունքային նախկին որոշման, պիտի լինէր հետեւեալը.— «Բանուոր դասակարգը մարդկանց այն մեծ խումբն է, որի եկամուտի միակ աղբիւրը կազմում է աշխատանքը եւ որի բաժին չահը հասարակական ամբողջ եկամուտից՝ կարող է մեծանալ միւս դասակարգերի — կապիտալիստների եւ հողատէրերի եկամուտների հաշուով, ի հարկէ եթէ չմեծանայ ընդհանուր եկամուտը»: Ուրեմն՝ եթէ հետեւողական լինենք, անպայման պիտի հասնենք այն եզրակացութեան, որ բանուոր կամ պրոլետարիատ պէտք է կոչել այն բոլոր աշխատաւորներին, որոնց եկամուտի միակ աղբիւրը տեսական աշխատանքն է, որոնք չեն իրագործում ուրիշների յատկեալ արժէքը: Իսկ այդ որոշման տակ միանգամայն ընկնում են բոլոր մանր արհեստաւորները, բոլոր մանր գիւղացիները, որոնց ընդհանրապէս ընդունուած է կոչել աշխատաւորներ եւ համարել մի դասակարգ, որովհետեւ բոլորի եկամուտի միակ աղբիւրն անհրաժեշտ արժէքն է, կեղեքուած ու կեղեքուող աշխատանքը:— Բայց այդպէս չէ պատասխանում Կաուցկին: Պրոլետարիատը կամ բանուոր դասակարգը այն մեծ թիւն է,— ասում է նա իր «Հողային հարցը» գրքում,— որոնք նշանաւոր դերեր են կատարում արտա-

դրութեան մէջ, որոնց վրայ է յենուած արտադրական ներկայ կապիտալիստական ձեւը եւ որոնք, որ ամենաէականն է, չունեն արտադրական միջոցներ:

Պատասխանների այս երկուութիւնն առաջ է գալիս առհասարակ մարքսիզմի զարգացման պատմութեան երկու փուլերից կամ ճաղերից: Հնագոյն շրջանում, 40-60ական թուականներին Մարքսն ու Էնգելսը, իբր երիտասարդ մարդիկ, դեռ իրենց տեսութիւնը (թէորին) լաւ չհիմնաւորած, համարում էին գիւղացիութիւնն անպայման յեղափոխ տարր: Էնգելսը նոյնիսկ գրում էր, որ բանուորութիւնը ոչ շատ հեռաւոր ապագայում, դէպքերի բերումով առիպուած պիտի լինի «ճնշել ընդհանուր գիւղացիական պատերազմը», դուրս գալ գիւղացիական խաւար բանակի դէմ: Այդ այն երիտասարդական շրջանն էր, երբ «արտեսական մատերիալիզմը» հասած էր իր ծայրայեղ զործադրութեանը, երբ ամենայն ինչ բնեցրնում էին լոկ արտադրական յարաբերութիւններից եւ վերջ ի վերջոյ արտադրութեան տեխնիքական միջոցներից: Այդ շրջանում ընդգծուեց Մարքսի անմշակ եւ հում տեսակէտը մանր ազգերի կեդրոնացման եւ ապակեդրոնացման վերաբերմամբ: Սակայն նախընթաց հարցերի մասին ուսուցիչները ժամանակ ունեցան վերահաստատումներ կատարելու, ուղղելու սխալները, տալու նոր ծայրերը եւայլն. իր վերջին հարցերի վերաբերմամբ նրանք մինչեւ գերեզման մնացին

նոյն հին տեսակէտի վրայ, որովհետեւ դրանցով, իբր այն ժամանակներում երկրորդական նշանակութիւն ունեցող հարցերով, նրանք զբաղուել, իրենց տեսակէտը վերաքննել ու իւրացնել չկարողացան, ժամանակ չունեցան: Էնգելսն ինքը մեզ մեց իր ծայրայեղ տնտեսական մատերիալիզմն իր հռչակաւոր նամակներում, ուղղած «Սոցիալ Աէտեմիք» թերթի խմբագիր Կոնրադ Շմիթին, 1895 թուին: Իսկ մեզ հետաքրքրող հարցի վերաբերմամբ նա իննսունական թուերին բաց-աչկարայ յայտարարեց. «Այսպիսով՝ մենք վճռականօրէն կանգնում ենք մանր գիւղացու կողմը»:

Ֆառասունական թուականների հին մնացորդների արձագանգները գիւղացիութեան եւ բանուորութեան վերաբերմամբ՝ դեռ այսօր էլ մենք լսում ենք Գերմանիայում, ուր յաճախ լսւում են այսպիսի ֆրազներ. «Իսկական գիւղացիները միշտ մեր թշնամիներն են լինելու». կամ՝ «Գիւղացինեբը որպէս դասակարգ, պէտք է մեր դէմ կանգնած լինեն թշնամաբար...»: Վերջապէս՝ դրանց բոլորի միջից լսւում է Կ. Կաուցկու ձայնը՝ «Ագրարական հարցը» գրուածքում. «Պատմութեան մէջ բանուորներն ու գիւղացիները պէտք է գնան տարբեր ճանապարհներով, եւ այսօրուայ դաշնակիցը վաղը կարող է թշնամի լինել». եւ կամ հետեւեալ պարզ տողերը. «Պրոլետարիատի, նոյնպէս եւ հասարակութեան զարգացման եւ գաճաճային գիւղացիութեան շահերն ընթանում են հա-

կառավարության»(*): Իսկ ռուսական սոցիալ դեմոկրատիայի օրհնած սովորութեան համեմատ՝ այդ բոլոր հնացած կարծիքները մըշտապէս կրկնուում են Ռուսիայում, ինչպէս քիչ յետոյ կը տեսնենք: Բայց նախքան առաջ անցնելը, տեսնենք թէ այդ համոզման նախակարապետներն ովքեր են եղել Ֆրանսիայում, դասակարգային կռուի այդ դասական երկրում, ինչպէս կոչում է նրան պրոֆեսոր Զոմբարտը:

Ֆրանսական յայտնի սոցիալիստ Լուի Բլանն, իր «Histoire de dix ans» — «Տասը տարուայ պատմութիւնը» (1830-1840 թ.) խոշոր աշխատութեան մէջ բուրժուա հասկացողութիւնը բնորոշում է «իբրեւ այն քաղաքացիների դումարը, որոնք ունեն աշխատանքի գործիքներ եւ կապիտալ, աշխատում են իրենց սեփական միջոցներով եւ այդ պատճառով միայն որոշ չափով կախում ունեն ուրիշներից»: Իսկ «ժողովուրդ» կամ «բանուորներ» ասելով՝ նա ընդունում է այն «քաղաքացիների դումարը, որոնք ոչ մի կապիտալ չունեն եւ այդ պատճառով կատարելապէս կախում ունեն միւսներից, մինչեւ անգամ ամենատարրական կենսական պահանջների տեսակէտից»(**):

Թէ՛ Լուի Բլանի եւ թէ Կաուցկու որոշում-

(*) «Ագրարական հարցը», ռուսերէն, Ցոյն հրատարակութիւն, էջ 17:

(**) Վերցրել ենք վ. Չերնովի «Դասակարգային կռուի թէորիայի շուրջը» գրուածքից, էջ 19:

ներն աւնեն մի ընդհանուր գիծ. բանուորը նա է, որ զրկուած է արտադրական միջոցներից, դործիքներից: Դրան՝ այդպիսի բանուորին, Մարքսը, ինչպէս վերեւում ասացինք, կոչել է «փետրած հաւ»: Այդ սրամիտ ու թունալի համեմատութիւնն իսկ ցոյց է տալիս, որ կան եւ դեռ եւս «փետրած հաւ» չդառած, դեռ փետուրները վրան պահած հաւեր կամ բանուորներ՝ արտադրական միջոցներով:

Լուի Բլանը դնում է լոկ երկու հիմք կամ երկու բնորոշ հէտ բանուորի համար. կապիտալ կամ արտադրական միջոցներ չունեցող եւ կախման մէջ լինել ուրիշներից: Նախ մի կողմ դնենք կախման մէջ լինելը կամ «կախման աստիճանը», որովհետեւ դա բացարձակ անորոշ մի հասկացողութիւն է. թագաւորը կախուած է ժողովրդից, ժողովուրդը զօրքերից, կապիտալիստը անատէրից, անատէրն իր դրացուց, բուրժուան իր բանուորներից, որովհետեւ նրանք կարող են նրան լիապէս բոյկոտի ենթարկել, դործարանը փակել... մի խօսքով կախում կամ կախման աստիճան բառերը չունեն ոչ մի որոշիչ միտք:— Մնում է լոկ առաջին բնորոշիչ դիծը — «կապիտալ չունեն», եւ կապիտալ ասելով, նա ըմբռնում է արտադրական միջոցներ, այդ երկու տերմինները նա նոյնն է համարում — մի կոպիտ սխալ, որ կրկնում է եւ Կաուցկին, որի այդ սխալի առիթով դեռ պիտի խօսենք:

Լորենց ֆոն Շտայնը կարծում է, որ «բուր-

ժուռզիայի մէջ մարմնանում է սեփականութեան գաղափարը, իսկ պրոլետարիատը ոչ մի սեփականութիւն չունի, այլ ունի միայն աշխատանքի ուժ եւ ցանկութիւն այդ գործադրելու»: Պրոլետարը սեփականատիրոջ մէջ իր թշնամուն է տեսնում, նախ որովհետեւ իրեն նրանից ստոր է զգում եւ, համեմատելով բարձր կանգնածների հետ, նկատում անհամապատասխանութիւն իր ծախսած եռանդի եւ նրա հետեւանքների մէջ(*):

Ուրեմն Լ. Ֆոն Շտայնի կարծիքով էլ սեփականութիւն ունենալը եւ չունենալն է դասակարգերի որոշիչ գիծը: Սա աւելի եւս ախտաւոր որոշում է, որովհետեւ չկայ մարդ, որ որեւէ սեփականութիւն չունենայ: Իսկ երկրորդ որոշիչ յատկութիւնը, այն որ «պրոլետարն իրեն ստոր է զգում բարձր կանգնածներից» — այդ հոգեբանական գիծը դասակարգերի մէջ, մի նորութիւն է, որ չկայ մեր նախկին որոշումներում. սակայն դա էլ չափազանց առաձգական եւ անորոշ յատկանիշ է: Ա.յսպէս՝ արհեստաւորների մօտ աշխատող բանուորները նախանձում են խոշոր գործատանում կամ երկաթուղու վրայ աշխատող բանուորի վիճակին, զգալով իրենց աւելի ստոր վիճակում, քան նրանք: Երկրագործական պրոլե-

---

(*) L. Von Stein — «Geschichte des Sosialismus und Kommunismus des heutigen Frankreichs», որից առաջ է բերել Վ. Ջերնովը (նոյն էջ 20):

տարբառը իրեն անհամեմատ աւելի ստոր վիճակում է զգում այսօր Կովկասում, քան նաւթաղաչի բանուորները: Մետաքսագործարաններում — Նուխու, Շուշու եւ Օրտուբաթի չրջաններում առաւալող կիսասարուկ բանուոր-բանուորուհիներն անպայման նախանձում են չատ ուրիչ բանուորների վիճակին, զգալով իրենց չատ ու չատ աւելի ստոր պայմաններում քան նրանք: Սակայն այդ բոլոր բանուորները չեն զառնում տարբեր դասակարգի անդամներ, թէեւ զգում են իրենց վիճակների համեմատական ստորութիւնը, նրանք բոլորն էլ աչխատաւորութեան մեծ ընտանիքի անդամներն են:

ԺԹ. դարի սկզբներում Ֆրանսիայում գրող ու գործող պատմաբաններն, ինչպէս Գիզո, Միչլէ, Մինէ եւ ուրիչները, տուել են դասակարգերի վերաբերմամբ համանման որոչումներ: Նրանց հետեւելով՝ առաջինը եղան Լորենց Ֆոն Շտայնը եւ Վիլհելմ Մարրը, որոնք այս բնորոչումները արտայոլացրին գերմանական գրականութեան մէջ: Դրանց գործերից յայտ է, որ լոյս աչխարհ են գալիս Մարքսն ու Էնգելսն իրենց «Մանիֆեստով» եւ միւս գրութիւններով: Նրանք անպայման խոստացնում, առաջ են մղում դասակարգերի որոչման նորութիւնները եւ մանաւանդ, դասակարգային կռուի թէորին (տեսութիւնը): Ի՞նչ ասել կ'ուզէ, որ Կ. Կաուցկին ամէն ճիգ գործ է դնում աւելի եւս պարզաբանելու ուսուցիչների թողած բանաձեւերը:

ժամաՀակակից պրոլետարիատ ասելով, Կ. Կաուցկին նրա համար դնում է չորս յատկանիշ: Ահա նրանք. 1) Այն նշանաւոր դերը, որ նա խաղում է արտադրական գործում. 2) բացակայութիւն արտադրական միջոցների սեփականութեան: Այդ երկու պայմանը — կարեւորագոյններն անկասկած — մենք արդէն առաջ բերինք մանրամասնօրէն, այդ պատճառով այստեղ անց ենք կենում համառօտակի, աւելի կանգ առնելով հետեւեալ երկուսի վրայ: 3) Նա աշխատում է արտադրական այնպիսի միջոցներով, որոնցով կարող է օգտուել ոչ թէ մի անհատ, այլ ամբողջ ասոցիացիա, մի ընկերակցութիւն կամ խմբակցութիւն: Արտադրութեան ներկայ միջոցների այդ ներքին յատկութիւնն է, որ պրոլետարիատին դարձնում է խմբակցութեան համայնական, համատարական աշխատանքի մարդ, այսինքն՝ տրամադրում է նրան դէպի սոցիալիզմ: 4) Նա այժմ օտար է գործատիրոջ տնից: Առաջ վարձու բանուորը համարւում էր մի տեսակ անբաժան մաս գործատիրոջ ընտանիքի, նրա տնտեսութեան, յարաբերութիւնները — «հին բարի ժամանակների» նահապետական յարաբերութիւններն էին: Այսպէս՝ բանուորը գործից դուրս էլ մշտապէս տիրոջ աչքի առջեւն էր, նրա վերահսկողութեան տակը, նրան ենթակայ: Իսկ այժմեան բանուորը աշխատանքը վերջացնելուց յետոյ, ինքնիշխան է, աղատ տիրոջ մթնոլորտից, նրա հսկող աչքերից: Կապիտալիզմի զարգացումով եւ միջնադարեան

առեւտրական ճեւերի վերացումով՝ աւելի եւ աւելի ազատագրւում է բանուորը եւ գործից ազատ ժամանակ դառնում մարդ, հասասար կապիտալիստին:

Ահա այն չորս յատկանիշները, որոնք անհրաժեշտ են ժամանակակից պրոլետարիատ սիտղոսն ատանալու համար: Ինչ կասկած, որ Կառուցկու այդ չոր սյատկանիշներն այն ատոիճան սահմանափակում, քչացնում են պրոլետարիատ դասակարդի թիւը, այնքան են նրան կրճատում, որ այդ պրոլետարիատի բանակով հասարակական խնդիրներում կարելի է լոկ «աքանչելի առանձնացման» մէջ մնալ եւ ոչ ոյժ կազմել ու ձգտել աշխատաւորութեան վրկութեան գործին:

Այդ դեռ ոչինչ. «մենք քիչ ենք, բայց մենք կը չատանանք, մերն է ապագան»... Եթէ այդ նախադասութիւնը հնարաւոր լինէր ասել այդ ժամանակակից պրոլետարիատի մասին, կրկին կարելի էր մխիթարուել, բայց այդ էլ անհնար է ասել:

Եւ յիրաւի, եթէ այդ չորս յատկանիշ պահանջներով մօտենանք ներկայ բանուորութեան, պէտք է նրանցից դուրս վանենք, անկասկած ամէնից չուտ, գիւղացիներին. նրանք բուրժուաներ են, թէեւ մանր, որովհետեւ սեփականութիւն ունեն — գործիքներ, տնակ, հող, — մի խօսքով՝ «ինվէնտար», ասում է Կառուցկին: Երկրորդ, պիտի դուրս անենք մայր բանակից մանր արհեստաւորներին ու արհեստաւորների մօտ աշխատող

բոլոր բանուորներին, որովհետեւ սրանց խաղացած դերն այնքան մեծ չէ արտադրութեան մէջ, որովհետեւ առանց նրանց էլ արհեստանոցի տէրը վարպետ է, կարող է մենակ աշխատել· չէ՞ որ նա ունենում է իր մօտ ընդամէնը մէկ, երկու կամ երբեք բանուորներ եւ մի երկու աշակերտ: Մոլորը արհեստանոցի տէրերն արդէն մօտենում են կապիտալիստի, որի անհրաժեշտ յատկանիշներից մէկն էլ բանուորների հետ չաշխատելն է· երկրորդ՝ այդ սակաւաթիւ բանուորները չեն աշխատում «այնպիսի գործիքներով, որոնցով կարող է օգտուել մի ամբողջ ընկերութիւն»· սրանց գործիքներն անհատական են եւ ոչ կենտրոնացած, հասարակական: Դուրս են ընկնում եւ տան ծառաներն ու աղախինները, որովհետեւ նրանք չեն համապատասխանում չորրորդ կէտին·— նրանք միշտ տէրերի աչքի առջեւ են, նրանց վերահսկողութեան տակ եւ նրանց տնտեսութեան մշտական ու անհրաժեշտ մասը: Ինչ ասել կ'ուզէ, որ «ցընդոտինների պրոլետարիատը» կամ «լումպէնպրոլետարիատը» նոյնպէս «ժամանակակից» չէ, թէեւ նա ծնունդ է մեքենական խոշոր կապիտալիստական արտադրութեան, յատկապէս 19րդ դարի վերջին կէսերի: Բայց նա «չէ խաղում նշանաւոր դեր արտադրական գործում»: Դուրս են ընկնում նաեւ երկրագործական պրոլետարները, որոնք թէեւ ամէնից աւելի նմանում են քաղաքային պրոլետարներին, բայց միաժամանակ նրանցից տարբերւում են նրանով, որ կազմում են ուրիշի տնտեսութեան

ու ընտանիքի յաւերումը, նրա մի բաղադրիչ մասը, ասում է ինքը, Կաուցկին:

Այս բոլոր աշխատաւորական չերտերը դուրս վանելով «ժամանակակից պրոլետարիատից», այլ եւս ի՞նչ է մնում տակին: Մի չերտ միայն դուս խոչոր գործարանների բանուորութիւնը, քանուրական արիստոկրատիան: Եւ այնուհետեւ մեզ թւում է ծիծաղելի, երբ Կաուցկին հետեւեալ բառերն է գրում.

«Եթէ որ սոցիալ-դեմոկրատիան իր չարքերն ընդունէ պրոլետարիատի ամբողջ դանդուածը (էլ ո՞ւր մնաց «ժամանակակիցն» իր քառանդամ յատկանիշներով) եւ այն բոլոր գիւղացիներին ու արդիւնագործներին, որոնց ինքնուրոյնութիւնը լոկ երեւակայական է եւ որոնք փաստօրէն հանդիսանում են կապիտալի վարձկան բանուորները, այն ժամանակ չի դոնուի մի այնպիսի ուժ, որը կարող լինէր նրան դիմադրութիւն ցոյց տալ»(*):

Մի՞թէ մի րոպէ կարելի է կասկածել, որ դասակարգային կռիւ մղելու համար պէտք է ոյժ կազմել: Իսկ աշխատաւորութեան դասակարգային կռուի միակ նպատակն է սոցիալիզմին հասնելը: Ուրեմն, ապագայ լուսաւոր կարգերին հասնելու համար՝ պէտք է ոյժ կազմել: Իսկ քառեակ բնորոշումները վանում են, կրճատում, ջախջախում

(*) «Ագրարական հարցը», յիշուած հրատարակութիւն, էջ 13:

աշխատաւորութեան ոյժը, թողնելով այնտեղ տրէդ-ունիոնիստական բանուորներին, բանուորական արիստոկրատիային, որն իր շահերի, իր կոպեկների համար գործադուլներ կ'անէ, բայց որը, փոքրիկ անյաջողութեան դէպքում անգամ, կը խորտակէ իր երէկուան կուռքերը, կը դաւաճանէ իր սկզբունքներին:

Այդպէս վարուեց Իւանովո-Վոզնեսենսկի, հնագոյն արդիւնագործական կենտրոններից մէկի «ամենադիտակից» հուշակուած պրոլետարիատը, «իսկական ժամանակակից պրոլետարիատը». նա սպանեց իր շրջանի ամենայայտնի սոցիալիստ հռետորին, դարձաւ «սեւ հարիւրակային» տարր ... որովհետեւ... գործադուլն անյաջող էր անցկացել...(*): Դրանով չենք ուզում ասել, թէ պրոլետարիատը, մանաւանդ նրա «արիստոկրատիան» այդպէս է, այդպէս էլ պիտի լինի: Ամենեւին: Երբ դիւղացու աշխատաւոր մասը համարում են հակայեղափոխական տարր, երբ նրան, իբր «մանաւոր սեփականատիրոջ», անընդունակ են համարում ընկերվարօրէն մտածելու, քերելով փաստեր ու ինչ որ կասկածելի, վերացական դատողութիւններ, այն ժամանակ մեր մէջ են դա-

(*) Ե. Տագ-ին [Մաքսիմալիստ] — «Աշխատաւորական թէորիայի սկզբունքները», 1906 թ., Ս. Պետերբուրգ, էջ 56: Այսպիսի փաստեր կան եւ այլ երկրների «գիտակից» բանուորների կեանքից:

լիս նաեւ բանուորութեան յաճախ ցոյց տուած այդպիսի յեռաւիմական քայլերը, որոնք պիտի դրդեն հետազօտողներին չհիմնուել այս ու այն պատահական երեւոյթի, արտաքին, ձեւական յատկանիշի վրայ, այլ աւելի խորը թափանցել դասակարգային չերտաւորումների սկզբունքային տարբերութիւնների մէջ: Եւ կառուցկին յեռոյ շարունակեց այդ գործողութիւնը. «Ադրարային հարցից» յեռոյ դուրս եկած իր աշխատութեան մէջ, յատկապէս նուիրուած դասակարգերի հարցին, նա, քննելով «դասակարգային չահերը», եկաւ այն եզրակացութեան, որ առաջ բերինք այս գլխի սկզբում:

Իր այդ եզրակացութիւնները հիմնելով Մարքսի կիսատ մնացած ձեռագրի վրայ, կառուցկին նրանց ամրապնդել է աշխատում փաստերով, թուանշաններով, որոնք մեզ աւելի եւս կը պարզեն նրա միտքը դասակարգերի վերաբերմամբ: Նրա բերած թուերը վերաբերում են Գերմանիային, այն էլ 1895 թուին: Առեւտրի եւ արդիւնաբերութեան մէջ կային.

1) Ձուլեւորներ (*ինքնուրոյն, առանց օգնականների եւ զբաղուած տնայնագործութիւններով*) — 1·721·418 հոգի:

2) Մանր վարպետներ եւ առեւտրականներ (*տէր եւ ղեկավար 2–5 բանուորնոց գործերի* — 900·850 հոգի:

3) Մանր կապիտալիստներ — (5–20 *բանուոր ունեցող գործատէրեր*) — 200·471 հոգի:

4) Խոշոր կապիտալիստներ — (20ից աւելի անձերով ձեռնարկութեան տէրեր) — 48·765 հոգի:

Ինչպէս տեսնում ենք, առաջին խմբի անունը կարող ենք ամենայն հանգստութիւնով դնել աշխատաւորական կամ պրոլետարական խմբակ, որովհետեւ դրանք բոլորն էլ իրր թէ իմքնուրոյն են, առանց օգնականների, իրենք աշխատող, իրենք իրենց ճակատի քրտինքով ապրուստ ճարողներ. ոչ ոք դրանցից չէ ապրում ուրիշի յաւելեալ արժէքով, չէ կեղեքում ոչ ոքի, այլ անշուշտ այս կամ այն ձեւով ինքն է կեղեքւում աշխարհի հզօրներից... «Իրր թէ իմքնուրոյնների թուի մէջ, — ասում է Կաուցկին, — փաստացի պրոլետարների թիւը չատ աւելի է, քան մանր կապիտալիստների թիւը, հեռու միասին վերցրած նրանց, որոնք կանգնած են կապիտալիսմի եւ պրոլետարիատի միջավայրում. եւ դա դեռ «առեւտրական եւ արդիւնաբերական ձեռնարկութիւններում»: Բայց, նկատում է նա, չամաչ 4–5 հոգի աշխատաւոր պարունակող առեւտրական ձեռնարկութիւնը կարող է չատ խոշոր կապիտալ պարունակել, այն ինչ «երկու բանուորներով, օրինակ՝ մի քարգալ եւ մի աշակերտ ունեցող, մի բանի ձեռնարկութիւններ պէտք է համարել պրոլետարական»(*):

Ահեռեւ է, որ այստեղ բաժանման հիմք դըր-

(*) Կ. Կաուցկի — Դասակարգային շահերը»: Էջ 19:

ւած է կեղեքման սկզբունքը, բաշխումը եւ ոչ արտադրութեան մէջ խաղացած դերն ու արտադրական միջոցների սեփականութիւնը: Ուրիշ կերպ նա երբեք «ինքնուրոյններին եւ տնայնագործներին», որոնք ունեն արտադրական միջոցներ, նոյնիսկ «մի քանի ձեռնարկութիւններ երկու բանուորով», չէր դնի պրոլետարական բաժնի մէջ:

Յետոյ նա անցնում է դէպի երկրագործները: Այստեղ այլեւս «Ագրարական հարցի» Կաուցկին չէ, որ «գիւղացի» բառի տակ խցկում է բոլոր գիւղական դասը, որ բոլոր գիւղում ապրողներին համարում է մի դասակարգ: Ոչ, այժմ նա գիտնականին վայել խորաթափանցութեամբ, հողատէր գիւղացիներին բաժանում է չորս կարգի.

1) Զուներորներ (2 հեկտարից նուազ հող ունեցողները), 548·572:

2) Մանր գիւղացիներ (2–5 հեկտար հող ունեցողները), 694·850:

3) Միջակ գիւղացիներ (5–50 հեկտար հող ունեցողները), 1·221·284:

4) Խոշոր հողատէրեր (50-ից աւելի ունեցողները), 98·224:

Հեկտարը մեր դեսեատինից (երկու օրավարից) մի քիչ փոքր է (դեսեատինը 2400 քառ. սաժէն է, իսկ հեկտարը՝ 2100 քառ. սաժէն): Վերածելով մեր չափերին, մենք տեսնում ենք որ առաջին երկու խմբերն անպայման աշխատաւորական են, այսինքն՝ կազմուած են այնպիսի գիւղացիներից, որոնց հողը կամ բոլորովին բաւական

չէ լրենց եւ ստիպուած են տարուայ մի խոշոր մասը որոնել աշխատանք այլ տեղ՝ — ծախել լրենց աշխատանքը, տալ ուրիշին լրենց «յաւելեալ արժէքը», կեղեքուել ամենագռեհիկ ձեւով, կամ (երկրորդ խումբը) այնքան հող ունեն, որ հաղիւ-հաղ բաւարարութիւն է պատճառում արտադրող ընտանիքին, որը կարողանում է իր սեփական ուժերով, առանց կողմնակի վարձուոր բանուորների, առանց ուրիշին կեղեքելու, առանց յաւելեալ արժէքի թօյնը ներմուծելու, — աշխատել եւ ապրել սեփական աշխատանքով: Առաջին երկու խումբը միասին կազմում են 1·243·422 ընտանիք: Ինչ կասկած, որ ընտանիքի անդամների թուի եւ ունեցած հողերի քանակութեան յարաբերութեան աւելի խիստ քննութիւնը մեզ կը տալ սակը երրորդ խմբից մի խոշոր մաս 5-6-10 հեկտար ունեցող չատ սեփականատէրերի նետել նախընթաց երկու խմբերի — գուտ աշխատաւորների գիրկը: Այն ժամանակ վերջին երկու խմբերի 1·319·508 թիւը կը նուազէր եւ աշխատաւորական ընտանիքների թիւն անպայման կը գերազանցէր գիւղական մանր ու խոշոր բուրժուազիային, որն անպայման օգտւում է, բացի իր ընտանիքի անդամներից, նաեւ կողմնակի վարձուոր մշակների աշխատանքից, իւրացնում է յաւելեալ արժէքը, դասակարգերի բաժանման այդ «ծառ պտղոյ գիտութեան բարւոյ եւ չարի»: — Իսկ առաջին երկու խմբերից որ ընտանիքն էլ վերցնէք, դժուար թէ գտնէք այնպիսին, որի աշխատաչափից աւելի

լինի հողը: Ի հարկէ այդպիսի դէպքերում չպէտք է բուրժուա համարել, օրինակ, մի այրի կնոջ իր 2–4–5 մանր, աշխատելու դեռ եւս անընդունակ որբուկներով, եթէ այդ ընտանիքն, իրերի դաստուրբութիւնից ստիպուած վարձում է աշխատող ձեռքեր: Կամ բուրժուա չէ Զանգեզուրցի այն ընտանիքը, որի տղամարդ անդամներից 2–3ը Բագուում բանուոր են, իսկ տանը մնացած հայրը հրաւիրում է վարձու բանուորներ իր հողերը մշակելու, որովհետեւ եթէ որդիները տունը մնային, նրանց իւրաքանչիւրի տեղական աշխատանքը տալու էր տալիս տարեկան, ասենք, 50–60–100 ռուբլի, իսկ Բագուում նրանք ստանում են 240–360 ռուբլի եւ աւելի վարձատիր: Կեանքի մէջ այդպիսի բազմաթիւ խորտուբորտութիւններ կան, որոնց մէջ պէտք է կարենալ դիրք բռնել, առանց բռնազատելու ընդհանուր սկզբունքները:

Միջակ գիւղացիների 1·221·284 ընտանիքի թուից, ինքնըստինքեան հասկանալի է — անկարելի է ջոկել եւ ասել, թէ քանիսը դրանցից աշխատաւորական ընտանիքներ են, որովհետեւ վիճակագրական տեղեկութիւններում չեն լինում ամէն մի ընտանիքի անդամների եւ նրանց ունեցած հողի քանակութիւնները առանձնապէս: Ուստի՝ կաուցկին չէ կատարում եւ անկարող էր կատարել այդ աշխատանքը, բայց նա կարող էր եւ պարտաւոր էր ակնարկել այդ, ինչպէս արել է նախընթաց խմբերի երկու դործօտւոր ունեցող ձեռնարկութիւնների մասին: Դժբախտութիւնն էլ

հենց նրանում է, որ այսուհետ էլ կառուցվին միայն առաջին խումբն է համարում «իրը թէ սեփականատէր» եւ դնում պրոլետարիատի չարքը, իսկ երկրորդ խումբը վեռեղում է «սեփականատէրի» մէջ, առանց աչքի առաջ ունենալու, որ այդքան հողը հազիւ բաւականութիւն կարող է տալ գիւղական ընտանիքին: Դրանից էլ բխում է հետեւեալ թուերի մէջ սպրդած սխալը:

Այնուհետեւ նա առաջ է բերում գիւղատնտեսական ապարէզում նաեւ վարձու բանուորների չերտը եւ առանում է հետեւեալ թիւերը.—

1)	վարձու բանուորներ	5·723·967
2)	ինքնուրոյններ, որոնք վարձւում են	548·572
	Գումար՝	6·272·539

Այնուհետեւ երրորդ խմբի մէջ կառուցվին միացնում է 2–5 հեկտար հող ունեցող գիւղացիներին 5–50 հեկտար ունեցող գիւղական բուրժուազիայի հետ եւ կազմում մի չերտ.—

3)	Գիւղացիներ	1·916·134
4)	Խոշոր հողատէրեր	98·224

Մենք բացարձակ անարդար եւ անհետեւողական ենք գտնում երրորդ խմբի 1·916·134 ընտանիքների միատեղումը գիւղացի անուան տակ, ո-

բովհետեւ դրանցէից 694·850 ընտանիք զուտ աշխատաւորական են, առանց այլոց յաւելեալ արժէքի ապրող, իսկ միւս 1·221·284 ընտանիքն, այսպէս թէ այնպէս, մանում են բուրժուազիայի չըջանը, որովհետեւ 5–50 հեկտար հող չեն կարող լոկ իրանց ընտանիքի ուժերով մշակել. նրանք պարտաւոր են վարձել բանուորներ, իւրացնել նրանց յաւելեալ արժէքը: Այդ պատճառով մենք 694·850 ընտանիքն, իբր աշխատաւոր, աւելացնում ենք 6·272·539 վարձու եւ կիսավարձու ընտանիքների վրայ եւ ստանում 6·967·389 ընտանիք:

Առեւտրական եւ արդիւնաբերական ձեռնարկութիւնների համար ստացւում են հետեւեալ թիւերը.—

1)	Վարձու բանուորներ	7·714·410
2)	Ինքնուրոյն չունեւորներ	1·721·418
	Գումար՝	9·435·828
3)	Մէջին դասակարգ	1·101·32
4)	Խոշոր կապիտալիստներ	48·765

Այդ բոլորը միասին վերցրած, կը ստանանք.—

1)	Վարձու բանուորներ	13·438·377
2)	Ինքնուրոյն չունեւորներ	2·964·840
	Գումար՝	16·403·217

3) Մէջին դասակարգ 2·322·605
4) Ծոչոր կապիտալիստներ եւ հողատէրեր 146·989

Ինչպէս ասացինք, մանր գիւղացիութիւնը կ. կաուցկին միատեղում է մէջին բուրժուազիայի հետ եւ, առաջին ու երկրորդ խումբը համարելով վարձուորներ, ստանում է նրանց համար 15 միլիոն 708·367 թիւը, իսկ «մէջին դաս» կոչուածի թիւը հասցնում է 3·017·455ի:

Ի նկատի ունենալով այդ ընտանիքների անդամների ընդհանուր թիւը, մենք կը տեսնենք, որ վարձուոր եւ ինքնուրոյն չունեւոր ընտանիքների անդամների մեծ մասն արդէն իսկ աշխատողներ լինելով, բաւական քիչ է դուրս գալիս ընդհանուր թիւը.

1) Վարձու բանուորական ընտանիքների բոլոր անդամները 28·757·058—55,55%

2) Չունեւոր անկախ ընտանիքների անդամների ընդհ. թիւը 6·492·384—12,54%

3) Հասարակ կամ աշխատաւոր ընտանիքներ 3·474·300—մօտ. 7%

4) Մէջին դասակարգ կամ բուրժուազիա 12·400·350—23,66%

5) Ծոչոր կապիտալիստներ եւ հողատէրեր 646·242—1,25%

Համախմբելով բոլոր աշխատաւորական տարրերին ի միասին, այն տարրերը, որոնց չահերն անպայման իրար համերաչխ են,— իսկ մանր ու խոշոր բուրժուազիային (բոլոր յաւելեալ արժէքով ապրողներն) էլ միասին, կը ստանանք.

1) Աշխատաւորական տարրեր եւ նրանց ընտանիքի անդամները 38·723·742—75% (մօտ)

2) Կապիտալիստական եւ հողատիրական տարրեր եւ նրանց ընտանիքի անդամները 13·046·592—25% (մօտ)

Այդ թուերի լեզուն հետեւեալն է: Ամբողջ ազգաբնակութեան 75 առ հարիւրը կամ երեք քառորդ մասը 1895 թուին Գերմանիայում ապրում էր անպայման կեղեքուելով, կամ իր ամբողջ աշխատանքը ծախելով (55,55 առ հարիւր) կամ ծախելով իր աշխատանքի մի խոշոր մասը (ազգաբնակութեան 12,54 առ հարիւրը) եւ կամ ոչ ուրիշին իր աշխատանքը ծախելով, ոչ էլ ուրիշներից աշխատանք ծախու առնելով (մօտ 7 առ հարիւր): Դրանցից առաջին երկու խմբերն անմիջապէս, գրեթէ ճեւով կեղեքուողներն են, իսկ մի փոքրաթիւ մասը — մանր ինքնուրոյն երկրագործները, 2-5 հեկտար հող ունեցողները, կեղեքւում են չեզակի, ծուռումուռ ճանապարհներով, թէ՛ իբր

հողերը գրաւ դնելու համ հիպոթէք միջոցով, թէ իբր վաճառող ու գնող, ինչպէս կը տեսնենք մի քիչ յետոյ:

Լոկ այդ փոքրիկ համրակն է, այդ 7 առ հարիւրը, որ կառուցկին, համարելով միջին դասակարգ, գնում է բուրժուազիայի մէջ: Նրան դրդում է այդպէս վարուելու այն թիւր ու սխալ ըմբռնումը, թէ ամէն մի արտադրական միջոցներ ունեցող բուրժուա է, կապիտալիստ է, որովհետեւ արտադրական միջոց եւ կապիտալ կառուցկու համար հանդիսանում են նոյնութիւն:

Այս բոլոր բացատրութիւններից ակներեւ է, որ մենք կանգնած ենք երկու խոշոր տեսութիւնների առջեւ — հնաւանդ մարքսիստական եւ աշխատաւորական: Այդ երկու տեսութիւնների մէջ թէ՛ պրոլետար կամ վարձու բանուոր եւ թէ կապիտալիստ ու խոշոր հողատէր հակադրութիւնները միանգամայն պարզ են: Վիճելի միակ չերտը հանդիսանում է մանր, աշխատաւոր գիւղացիութիւնը եւ մանր աշխատաւոր արհեստաւորութիւնը: Պարզենք նորից նախ աշխատաւորական տեսակէտը, որ հնագոյնն է Ռուսաստանում:

Դեռ նախքան Մարքսի «Կապիտալ»ի Ա. հատորի երեւալը, նախքան կառուցկու գրական ասպարէզ մտնելը, 1864 թուին մենք պատահում ենք ռուսական ամենամեծ հանճարին՝ Ն. Գ. Չերնիշեւսկուն, որ իւրայատուկ պարզութեամբ, իր մտքի սրաթափանց եղանակով մեզ ներկայացնում է աշխատաւորական թէորիան կամ տեսութիւնը:

«Ըէնտան, ասում է նա, վաստակի եւ աշխատավարձի ճիշդ նոյնպիսի դեր է խաղում, որպիսի դեր խաղում է վաստակն աշխատավարձի վերաբերմամբ: ...Ըէնտան դիմում է դէպի վաստակի եւ աշխատավարձի կլանումը»: Կապիտալիստական սիստեմի մէջ եռանդամ բաշխման մասերն իրար դէմ մրցում են. «Այս սիստեմում վաստակը դիմում է դէպի բանուորի հպատակեցումը կապիտալիստին, իսկ ըէնտան ձգտում է կապիտալիստին եւ բանուորին միասին հպատակեցնել հողատիրոջը»: Այնուհետեւ նա պարզաբանում է իր առաջադրած դասակարգային չահերի մրցումը՝ կենսական պարզ օրինակներով:

«Ըէնտան ձգտում է իրեն հպատակեցնելու վաստակն ու աշխատավարձը: Եթէ դա վերածենք իրական վաստակի, կը նշանակէ, որ լենդլորդը (հողատէր լորդը) թշնամի է ֆէրմերի (կապալառու) եւ բանուորի ինքնուրոյնութեանը: Եւ մենք Անգլիայում տեսնում ենք, որ կալուածատէր լորդն աշխատում է նրանց պահել իրենից կախուած, մինչեւ անգամ ի վնաս բոլորի, ի վնաս իր չահերի»:

«Մենք տեսանք, որ վաստակը ձգտում է կլանել աշխատավարձը. դա նշանակում է, որ կապիտալիստը պէտք է բանուորին կախուած պահէ իրենից այնպէս, ինչպէս որ կալուածատէր լորդը պիտի պահէ կապիտալիստին եւ բանուորին: Բոլոր քաղաքակիրթ երկիրների պատմութիւնն այդ ձգտման մշտական գոյութեան անընդհատ վկայութիւնն է տալիս»:

«Մենք տեսանք, որ բէնտայի չահերը հակադիր են վաստակի եւ աշխատավարձի չահերին միասին: Մէջին դասակարգը եւ հասարակ ժողովուրդը միշտ միասին դաշնակցել են այն դասի դէմ, որին բաժին է ընկնում բէնտան: Մենք տեսանք, որ վաստակի չահը հակադիր է աշխատավարձի չահին: Հենց որ բանուորների եւ կապիտալիստների դասերը դաշնակցելով իրար, յաղթահարում են բէնտա ստացող դասին, այնուհետեւ այդ երկրի պատմութեան դլխաւոր նիւթն է դառնում մէջին դասի (բուրժուազիայի) կռիւը ժողովրդի դէմ»(*): Ի հարկէ աւելի ճիշդ կը լինէր ասել «ժողովրդի կռիւը բուրժուազիայի դէմ», որովհետեւ «ժողովուրդը աշխատաւոր մասսան է, որ կռիւ է մղել բուրժուազիայի դէմ, նրանից որոշ իրաւունքներ պոկելու նպատակով, իրաւունքները, որ բուրժուազիան խլել է ժողովրդից՝ առանց որեւէ զգալի դիմադրութեան հանդիպելու:

Զերնիշեւսկի, Գերցէն, Լաւրով, Միխայլովսկի եւ վերջերս էլ սոցիալ յեղափոխականների մի ամբողջ շարք թէորիտիկոսներ զարդացրին այդ տեսակէտը, որ ստացաւ «աշխատաւորական թէորիա» անունը: Մենք արդէն տեսանք, որ Մարքսն ու Ինգելսն էլ, իրենց զարդացման լաւ-

(*) Ն. Գ. Զերնիշեւսկու գործերը, Գ. հատոր, էջ 201–205: (Այս վկայութիւնը առաջ է բերուած նաեւ Զերնովի կողմից):

պոյն չբլանում, նոյն թէորիայի սկզբունքներով էին մօտենում դասակարգային կռուի եւ առհասարակ դասակարգերի բաժանման երեւոյթին։ Այդ էլ դեռ քիչ է։ Մենք տեսանք նոյնպէս, որ Կ. Կաուցկին դասակարգերի բաժանման հարցում ակներեւ երկուութեան մէջ է։ Երբ նա քննում է ընդհանրապէս դասակարգն ու դասակարգային շահերը, բաժանման սկզբունք դնում է հարբերութիւնների բաշխումը, մի բառ անգամ չասելով արտադրական յարաբերութիւնների մասին։ Իսկ երբ մասնաւորապէս նա խօսում է հողային հարցի մասին, չօշափում է բանուոր եւ գիւղացի դասակարգերի բնորոշման խնդիրը, նա դնում է արտադրութեան մէջ մասնակցելու եւ արտադրական միջոցների սեփականութեան խնդիրը, հետեւելով հին մարքսիզմի քարոզներին։

Բառերի այդ չնչին տարբերութիւնից առաջ է գալիս այն, որ իրենց աշխատանքով ապրող մարդիկ դառնում են բուրժուա, ինչպէս մանր արհեստաւորները, մանր աշխատաւոր գիւղացիները եւայլն։ Իսկ արտադրական միջոցներ չունեցող եւ ահագին առճիկներ ստացող բժիշկները, փաստաբանները, ինժիներները, պաշտօնեաները, քիմիկոսները, համաձայն այդ որոշման, պիտի մնան «պրոլետարիատի» շարքերում։

Կրկնենք մի անգամ եւս մեր տեսական դրութիւնները։

Աշխատաւորական տեսակէտն, ուրեմն, ընկերվարութիւն է ընդունում հասարակական հարստու-

թեան բաշխումը. ով ապրում է իր սեփական աշխատանքով, առանց ուրիշների յաւելեալ արժէքը իւրացնելու, առանց կեղեքելու, — նա աշխատաւոր է. իսկ ով որ մասամբ կամ ամբողջովին ապրում է յաւելեալ արժէքով, — նա բուրժուա է: Այս որոշումը պարզ է արեւի լոյսի նման: Ամէն տեսակի բանուորները, բոլոր մանր արհեստաւորները, բոլոր մանր հողագործը, սակաւահող եւ անհող գիւղացիները աշխատաւորներ են: Աշխատաւորներ են նաեւ մտաւոր պրոլետարները, որոնք իրենց սոցիալական դրութիւնով աւելի մօտ են կանգնած աշխատաւորութեան, որովհետեւ լոկ իրենց մտքի աշխատանքով են ապրում, մասնակից չլինելով յաւելեալ արժէքի, այլ յաճախ իրենք եւս կեղեքուելով:

Այս պարզ ու յստակ տեսութեան դէմ ռուսական սոցիալ դեմոկրատիան, համաձայն իր հնաւանդ սովորութեան, դնում է 40–50 թուականների մարքսիզմի հնացած, իրենց՝ Մարքսի եւ Էնգելսի կողմից վերաքննուած, սրբագրուած եւ ուղղուած տեսակէտը: Կառուցկուց էլ նրանք վերցընում են ո՛չ այն տեսակէտը, որ նա պաշտպանել է, յենուելով Մարքսի կիսատ ձեռագրի մրցքերի տրամաբանական ամբողջութեան վրայ, այլ օգտւում են այն չարաշրութիւնից, որը հին մարքսիզմի արձագանգն է կազմում:

Ռուսական սոցիալ-դեմոկրատիան, որի թէորիքների մի խոշոր մասը հաւաքուած էր մի ժամանակ «Իսկրա» (կայծ) կոչուած արտաահմանե-

ան Քերքի չուրջը, հետեւեալ տեսակէտն է պաշտպանում դասակարգերի բաժանման խնդրի առթիւ: Դասակարգը «մարդկանց աւելի կամ պակաս ընդարձակ մի կարգ է, որոնք արտադրութեան նոյնանման յարաբերութիւնների մէջ են դէպի միւս կարգերը»(*):

Առաջին վայրկեանից իսկ տեսնում ենք, թէ ինչ սարկական ընդօրինակումն է այդ որոշումը կ. Կաուցկու տուած որոշման, որ մենք առաջ բերինք վերեւում «Ագրարային հարցը» գրքից: Բայց այնտեղ դոնէ մարդ զգում է, որ դիտնականը, տեսնելով իր բնորոշման խախուտութիւնը, պրոլետարիատի համար դնում է չորս տարբեր, իրար լրացնող յատկանիշներ, իսկ այստեղ, խորաթափանց գիտնականին ոչ սազական մի չարժումով, պարոն Թէորետիկոսներն ամէն ինչ լուծել, ամէն ինչ պարզել, նոյնիսկ դուեհկացրել են: Նրանք գիտեն, որ ուսուցիչները միաժամանակ ասել են, որ հասարակական բոլոր երեւոյթներն «արտացոլումն են արտադրական յարաբերութիւնների». եւ այդ դոգման (հաւատալիքը), այդ կրօն դարձած նախապաստութիւնն ուզում են գործադրել ամէն տեղ: Կարծես թէ այդ մարդոց համար գոյութիւն չունի ո՛չ միայն Մախի, Աւենարկուսի, Ալֆրէդ Բինէի, Բելֆորտ Բաքսի, Շտամլէրի, Ժորէսի եւ ուրիշների սինթետիքական մոնիզմը, այլեւ երեսից

(*) «Իսկրա», թիւ 33, էջ 4 (ըստ Ջերնովի):

Իսկ ուսուցիչների, մանաւանդ Էնգելսի կատարած վերջին սրբագրութիւնները «անտեսական կամ դիալեքտիքական մատերիալիզմի» վարդապետութեան մէջ նրա մտցրած «փոխազդեցութեան» դաղափարը: Նրանք անպատճառ ուզում են դասակարգերի բաժանման սկզբունքն անմիջապէս կապել արտադրութեան հետ, համարելով բաշխումն իբր արտադրութեան պարզ հետեւանք: Այնինչ Մարքսի մօտ մենք գտնում ենք բոլորովին տարբեր մտքեր այդ առիթով:

«Կապիտալիստական սիստեմի հիմքում դրուած է արտադրողի արմատական անջատումն արտադրական միջոցներից: Այդ անջատումը տեղի է ունենում յառաջատուական անդուլքով, հենց որ կապիտալիստական սիստեմը մի անգամ արդէն հաստատուում է: Բայց որովհետեւ առաջինը (անջատումը) կազմում է երկրորդի (կապիտալիզմի) հիմքը, ուրեմն՝ վերջինս չէր կարող հաստատուել՝ առանց առաջինի: Որպէսզի նա աշխարհ գար, պէտք էր որ, ուրեմն, գոնէ մասամբ, արտադրական միջոցներն արդէն, առանց ֆրազի, խլուած լինէին արտադրողներից, որոնք գործ էին ածում այդ միջոցներն՝ իրականացնելու համար իրենց սեփական աշխատանքը»(*):

Արտադրական միջոցների կուտակումը մի քա-

(*) Ք. Մարքս — «Le Capital», Ա. հատոր, էջ 315, առաջին սիւնակ, թարգմանութիւն Ռոյի:

նի ձեռքերում, գոնէ մասամբ, պիտի տեղի ունեցած լինէր՝ նախքան կապիտալիստական արտադրութեան երեւան գալը: Իսկ ի՞նչ է արդեօք «արտադրական միջոցների կուտակումը» եւ «արտադրողի զրկուելը» այդ միջոցներից. մի՞թէ դա արդէն բաշխման գործողութիւն չէ: Այո՛, դա բաշխումն է: Բաշխումն ազդում է արտադրական նոր եղանակի վրայ, իսկ վերջինս, մի անգամ արդէն ծնունդ առնելով, իր կարգին աւելի եւս արագացընում է հասարակական այդ անհաւասար բաշխման եւ դասակարգերի հակադրութեան գործողութիւնը:

Դրանից շատ աւելի պարզ ու յստակ ձեւով արտայայտուել է Մարքսը «Կապիտալ»ի Գ. հատորում. «յամենայն դէպս՝ կարելի է ասել, որ կապիտալն ինքն արդէն ենթադրում է բաշխումն, այն է՝ բանուորներին զրկելն աշխատանքի միջոցների սեփականութիւնից, այդ նոյն միջոցների կենտրոնացումը փոքրամասնութեան ձեռքում»(*):

«Կապիտալ»ի այս կտորների հետ ամենեւին գործ չունեն «Իսկրա»ի թէորետիկոսները:

Մեկնելով իր տուած ախտաւոր որոշումից, «Իսկրա»ն շարունակում է մի այլ յօդուածում.

«Հասարակական արտադրական միջոցների այս կամ այն մասի իւրացումը եւ նրանց գործա-

(*) «Капиталъ», Г. изд., русскій, էջ 729:

դրութիւնը մասնաւոր տնտեսութեան համար, այսինքն՝ արդիւնքները վաճառքի հանելու տնտեսութեան համար,— ահա ժամանակակից հասարակութեան մի դասակարգի (բուրժուազիայի) հիմնական տարբերութիւնը պրոլետարիատից, որը զրկուած է արտադրական միջոցներից եւ ծախում է իր աշխատանքի ոյժը»(*):

Նախ եւ առաջ մի անմիտ խառնաչփոթութիւն: «Արտադրութեան հասարակական միջոցներ» տերմինն է գործածում յօդուածագիրը, այսինքն թերթի խմբագրութիւնը: «Արտադրութեան հասարակական միջոցներ» կոչւում են այն միջոցները, որոնցով չէ կարելի գործել անհատօրէն, այլ պէտք է աշխատել խմբով, հասարակական աշխատանքով: Այդպէս էին կապիտալիստական սկզբնական շրջանի մանուֆակտուրական արտադրութեան միջոցները, որոնց ամէն մէկ գործիքով թէեւ աշխատում էր մի մարդ, բայց այդ մի մարդը պատրաստում էր, օրինակ, ասեղի 1/19րդ մասը եւ որը, առանց միւս 18 ընկերների, որոնք պատրաստում էին ասեղի միւս մասերը,— ոչինչ էր, նա չէր կարող արտադրել ոչինչ, առանց արհեստանոցի ներսի բոլոր համայնքի, բոլոր բանուորների հասարակութեան: Դա կոչւում էր «հասարակական աշխատանք», իսկ դրա գործիքներն «արտադրական հասարակական միջոցներ» են,

(*) «Իսկրա», թիւ 27, էջ 2 (ըստ Ձերնովի):

թէեւ արդիւնքի իւրացումը կամ սեփականացումը, այսինքն բաշխումը կատարւում է անհատապէս, մասնաւոր սեփականութեան տեսակէտից: Նոյնպիսի հասարակական աշխատանք է պահանջում նաեւ ներկայի «մաշինո-ֆակտուրական» արտադրութիւնը, ինչպէս սրամտօրէն կոչում է Վ. Զերնովը կապիտալիստական խոշոր արտադրութիւնը: Այս վերջին ձեւի արտադրական միջոցներն էլ կոչւում են «արտադրական հասարակական միջոցներ», որովհետեւ պահանջում են խմբական, գործակցական կամ հասարակական աշխատանք:

Արդ, եթէ բնորոշումն աչքի առաջ ունի այդպիսի «հասարակական արտադրական միջոցներ», իբր հակադրութիւն մանր արհեստաւորի կամ մանր գիւղացու արտադրական միջոցներին, որոնք կարելի է գործադրել անհատօրէն, անհատական աշխատանքով,— այն ժամանակ թէ՛ մանր արհեստաւորը, որ ունի իր արտադրական անհատական միջոցները եւ թէ մանր գիւղացին — 2–5 հեկտար հող ունեցող, որ ունի իր գութանն ու արօրը, իր եղն ու կովը, իր տունն ու հողը՝ բոլորն էլ «արտադրական մասնաւոր միջոցներ»,— այդ երկու խաւերն էլ հանդիսանում են բանուորներ, պրոլետարներ, աշխատաւորներ:

Բայց հենց դժբախտութիւնն այն է, որ «Իսկրա»ի խմբագրութիւնն այդ մտքով չէ գործածում «արտադրական հասարակական միջոցներ» տերմինը, այլ այնպէս, լոկ ձեւի համար է դըր-

ւած հասարակական բառը, որովհետեւ նոյն այդ խմբագրութիւնը, չափազանց խոշոր յանդգնութեամբ, «մանր բուրժուա» է կոչում այն բոլոր մտածողներին, որոնք պաշտպանում են մանր, աշխատաւոր գիւղացիներին եւ արհեստաւորներին:

Այնուհետեւ բնորոշման մէջ ասուած է, որ բուրժուայի եւ պրոլետարի էական տարբերութիւնը նրանումն է, որ մէկը ունի արտադրական միջոցներ, իւրացրել է դրանք եւ «գործադրում է մասնաւոր տնտեսութեան — արդիւնքները վաճառելու տնտեսութեան համար», այնինչ մեւսը — պրոլետարը, «զրկուած է արտադրական միջոցներից»: Այդ բառերից տրամաբանականօրէն հետեւում է, որ 2–3–5 հեկտար հող ունեցող աշխատաւոր գիւղացին եւ աշխատաւոր արհեստաւորը, որոնք ունեն արտադրական միջոցներ, կապիտալիստ են, բուրժուա են, այնինչ մի խոշոր առեւտրական, որ, օրինակ, ունի 20–30·000 ռուբլի դրամագլուխ, որ ոչ մի դեր չէ խաղում արտադրութեան մէջ եւ չունի արտադրական ոչ մի միջոց — ոչ հասարակական, ոչ էլ անհատական, կամ մի խոշոր պաշտօնեայ, որ ստանում է տասնեակ հազարներով ռոճիկ, կամ մի բանկիր, մի ֆնժեներ, մի բժիշկ... բոլորն էլ բուրժուա չեն, կապիտալիստ չեն... Դրանք «արտադրական միջոցներ» չունեն, իրենց մասնաւոր տնտեսութեան, այսինքն արդիւնքները վաճառելու տնտեսութեան համար չեն գործածում արտադրական չեզած մի-

ջոցները· իսկ աշխատաւորը արհեստաւորն ու աշխատաւոր գիւղացին արտադրում են ծախելու համար եթէ ոչ իրենց բոլոր արտադրած ապրանքները, գոնէ նրանց մի մասը:

«Բուրժուա» գաղափարի որոշման մէջ ռուս սոցիալ-դեմոկրատիան մնացել է «սառուցման կէտի» վրայ· նա կրկնում է Լուի Բլանի բնորոշումը: Դրանում մեղանչում է եւ Կաուցկին, մի-այն ոչ բոլոր դրուածքներում, այլ «Ագրարային հարցի» մէջ: Դրանք բոլորն էլ բուրժուա են անուանում արտադրական միջոցներ ունեցող բոլոր անհատներին, որովհետեւ նրանց համար, Կաուցկուն էլ հետները հաշուած, ամէն մի արտադրական միջոց կապիտալ է, ուրեմն՝ ամէն մի արտադրամիջոցի տէր կապիտալիստ է, բուրժուա է: Ահա այն ողբալի թիւրիմացութիւնը, որը բխում է «կապիտալ» բառի բնորոշման հնութիւնից:

Ի՞նչ է կապիտալ: Ֆրանսացի յայտնի Ֆիզիոկրատ եւ Մեծ Յեղափոխութեան նախօրեակին մինիստր Տիւրգոն այսպէս է որոշում.— «Ով մըշատպէս... ամէն տարի, ստանում է աւելի արժէքներ, քան ծախսում է, նա կարող է աւելորդները կուտակել: Այդ կուտակուած արժէքները կազմում են կապիտալ կոչուածը: Բոլորովին միեւնոյն է, թէ արդեօք այդ կուտակուած արժէքների գումարը դրամների՞ց է բաղկացած, թէ այլ իրերից — որովհետեւ դրամը ներկայացնում է իրերից ամէն տեսակի արժէքները, ինչպէս եւ բո-

լոր միւս տեսակի արժէքները ներկայացնում են դրամ»(*):

Ինչպէս պարզ երեւում է, այս որոշումով ամէն մի արժէք, որ աւելանում է մարդու գործածութիւնից, կապիտալ է: Կապիտալ են բոլոր գործածական արժէքները, բոլոր ուտելիքները, որ մի քիչ աւելացել են սովորական սպառումից. կապիտալ են բոլոր տեսակի զարդերը, մեքենաները... կապիտալ է, օրինակ, մի ճեռք զգեստը, որ նեղ է եկել քեզ վրայ եւ մնացել տանն՝ առանց գործածութեան: Պարզ է, որ այդ որոշումն ախտաւոր, պակասաւոր է: Պէտք է տալ այնպիսի որոշում, որ ամփոփէ բոլոր տեսակի կապիտալները, չմոռնալով մանել այդ անուան տակ տարբեր երեւոյթներ ու հակայղութիւններ:

Շատ աւելի գիտական, ամփանաւորուած եւ իրականութեան մօտ է քաղաքատնտեսութեան հիմնադիր Ադամ Սմիթի որոշումը, որ տուել է իր «Ազգերի հարստութիւնը» եռահատոր գրուածքում. «Երբ մարդ ունի այնպիսի քանակութիւն խնայած պահեստների, որ բաւական է նրա կեանքի պահպանման համար ամիսներ ու տարիներ, այն ժամանակ նա, բնականաբար, աշխատում է եկամուտ ստանալ այդ պահեստների մեծ մասից,

(*) Turgot — «Réflexion sur la formation des richesses». 359.

*թողնելով իր ներկայ գործածութեան կամ ապառ-
ման համար նրանցից այնպիսի քանակութիւն, ո-
րը բաւական լինէր իր դոյութիւնը պահելու հա-
մար մինչեւ այն ժամանակ, երբ նա կը սկսի ե-
կամուտ ստանալ: Կը նշանակէ՝ այդ բոլոր պա-
հեստները կարելի է բաժանել երկու մասի. պա-
հեստների այն մասը, որից նա ապասում է եկա-
մուտ ստանալ, կոչւում է կապիտալ: Իսկ միւս
մասը ծառայում է անմիջական գործածութեան
համար... Կուտակուած եւ կապիտալ դարձած
արժէքները կարող են գործածուել կամ այն մար-
դու ձեռքով, որին նրանք պատկանում են, կամ
կարող են տրուել մի կողմնակի մարդու վար-
ձով»(*):*

*Թէեւ Ադամ Սմիթից յետոյ շատ ուրիշ որո-
շումներ են տրուած, բայց պաշտօնական քաղա-
քատնտեսութիւնը դրծ է ածում Շէոնբերգի որո-
շումը, որ մօտաւորապէս այն որոշման համաձո-
տութիւնն է, ինչ որ տուել է Ա. Սմիթը. «կապի-
տալ են մարդկային աշխատանքով ստեղծուած այն
արժէքները, որոնք գործ են ածւում նոր արժէք-
ներ ստանալու համար» (Schönberg, 1. c. էջ 173):*

*Ժան Բատիս Սէյ, խօսելով արտադրութեան
գործօնների — բնութեան եւ աշխատանքի մասին,*

(*) A. Smith — «Recherches sur la nature et les causes de la richesse des Nations», vol. II. ch. 1.

չարունակում է. «Մեւս արտադրական գործիքները բնութիւնից չեն ստեղծուած. նրանք աւելի առաջ եղած ճարտարարուեստի (ինդուստրիա) պտուղ են: Դրանք արդիւնքներ են. օրինակ՝ սերմնացուն, որ ձեռք է բերուած երկրագործութեամբ, ներկեր, բամպակ, որ մեզ տուել է առեւտուրը, գործիքներ, մեքենաներ, չէնքերը, որ կառուցուել են, անասուններ, որոնց աճեցրել ու պահել են մարդկային խնամքով: Կոչենք այս գործիքները, կամ գոնէ նրանք, որոնք միայն մի հատիկ արդիւնաբերական ձեռնարկութեան կարող են ծառայել — կապիտալ: Կոչենք կապիտալային արժէք նրանց ունեցած բոլոր արժէքը»(*):

Կապիտալը կարող է ընդունել չատ բազմապան ձեւեր. օրինակ, ղրամի ձեւ, անեղի, կահկարասիքի, ապրանքների ձեւ եւայլն: «Ըստ պատճառով, չարունակում է նա 137րդ էջում, հենց որ այդ արժէքն ամփոփուած է արդիւնաւոր գործողութեան մէջ գործադրուող առարկաներում, ես այդ կոչում եմ կապիտալ, ինչ առարկայի մէջ էլ որ ամփոփուած լինի այդ արժէքը»:

Ռօշէր գերմանացի տնտեսագէտի որոշումը չատ աւելի կարճ է. «Մենք անուանում ենք կապիտալ այն արդիւնքը (Produkt), *որը պահպան-*

(*) F. B. Say — «Cours complet d'économie politique pratique», Paris, 1840, p. 135.

ւում է հետապայ արտադրութեան համար»(*):

Վերեւում բերուած բոլոր որոշումները տալիս են «կապիտալ» բառի իմաստը, ենթադրելով, որ այդ կապիտալը հասարակական է: Այսպէս՝ որ հասարակութիւնը լինէր ամբողջապէս մի տնտեսական միութիւնից բաղկացած, իր արտադրական բոլոր միջոցները տէրը, կարելի էր այն ժամանակ ասել, որ ամէն մի արտադրական միջոց կապիտալ է եւ դրա համեմատ էլ՝ ամբողջ հասարակութիւնը դիտել իբր մի կապիտալիստական եղանակով արտադրող ամբողջութիւն, դուրս նետելով «կապիտալիստ» հասկացողութիւնից վարձու բանուորներ բանեցնելու, յաւելեալ արժէք իւրացնելու զազափարը: Ճշ յիրաւի, այդ բոլոր որոշումների համեմատ, մի փոքրիկ արհեստաւոր, մի աշխատաւոր գիւղացի դառնում են կապիտալիստներ, չնայելով որ այս վերջին բառի հետ անխզելիօրէն միացած է վարձու բանուորի պատկերը, նրան կեղեքելու ըմբռնումը:

Այդ բոլոր որոշումները մենք վստահօրէն կարող ենք անուանել բուրժուական: Նրանց հեղինակները երբեք չեն ընդունում, որ կապիտալի գործադրութիւնը կապիտալիստի կողմից անպայ-

---

(*) Schönberg — «Handbuch der Polit. Oeconomie», S. 172, vol. 1.

Այդ հատորում բերուած են բազմաթիւ այլ որոշումներ, որոնցից վերցրել ենք մի երկուսը:

ման իր մէջ ունի մի բաղադրեալ, մի ճակատագրական տարր — ուրիշի յաւելեալ արժէքի իւրացում, դրամի աճեցողութիւն ուրիշի աշխատանքով, որովհետեւ կապիտալիստի ամենաքնքոյշ նշաններից մէկն էլ իր չաշխատելն է կամ ուրիշներին աշխատացնելն է իր դրամի միջոցով:

Ադոլֆ Վագնէրը (պրոֆեսոր Բերլինում) փորձում է դիտել կապիտալիստը նախ իբր «Rein ökonomische kategorie» — «իբր զուտ տնտեսական կատեգորիա»: Ինչելով իբր այդպիսին, նա «պաշար է այնպիսի տնտեսական բարիքների, որոնք պիտի գործադրուին մի տնտեսութեան մէջ. — նա արտադրական միջոց է: Այդ տեսակէտից հողը կապիտալ է այն չափով, որչափով որ նա, մարդկային աշխատանքի չնորհով, դառել է տնտեսական բարիք»... Մի քանի տող յետոյ նա դիտում է կապիտալը պատմա-իրաւական տեսակէտից եւ գտնում, որ նա անհատի կարողութեան այն մասն է, որը ծառայում է այդ անհատի համար իբր եկամուտ բերող աղբիւր...»(*):

Ակներեւ է, որ Վագնէրն, իբր «մինչեւ ուղն ու ծուծը» բուրժուա տնտեսագէտ, չէ կարողացել կամ չէ կամեցել քննել կապիտալն իբր պատմա-իրաւական երեւոյթ, այլ այդ տեսակէտը դրբել է, որպէսզի խոշոր հողատէր դասակարգին էլ առնէ դիտական պաշտպանութեան թեւերի տակ:

(*) Ad. Wagner — «Grundlegung», 1 Aufl. 27

Այդ տեսակէտը լիապէս ներկայացուած ենք գտնում մենք Մարքսի եւ Լասսալի մօտ։

«Դրամն իբր դրամ եւ դրամն իբր կապիտալ, — ասում է Մարքսը, — նախ եւ առաջ իրարից տարբերւում են իրանց շրջանառութեան գնացքի ձեւերով։ Ապրանքների շրջանառութեան անմիջական ձեւն է Ա.–Փ.–Ա. (Ապրանք–փող–ապրանք), ապրանքի ձեւափոխումը դրամի եւ դրամի վերաձեւափոխումը կամ կրկին ձեւափոխումն ապրանքի. ծախել՝ գնելու համար։ Բայց այդ ձեւի կողքին մենք գտնում ենք մի բոլորովին տարբեր ձեւ, Փ.–Ա.–Փ., փողի ձեւափոխումն ապրանքի եւ սրա կրկին ձեւափոխումը փողի. գնել՝ ծախելու համար. այս վերջին շրջանը կատարող ամէն փող դառնում է կապիտալ, ձեւափոխում է կապիտալի եւ իր կոչումով իսկ արդէն կապիտալ է»։ Այնուհետեւ Մարքսն ակսում է այդ շրջանառական ձեւի խոր քննութիւնը եւ դուրս բերում, որ Փ.–Ա.–Փ. չարքի Փ. եւ Փ. իրար հաւասար չեն, այլ վերջին Փ. անպայման աւելի մեծ է, քան առաջինը։ Եթէ այդպէս չլինէր, այլեւս անմիտ կը լինէր եւ՛ առեւտուրը, եւ՛ կապիտալիստական արտադրութիւնն։

Մանրազնին քննութիւնը հասցնում է Մարքսին հետեւեալ եզրակացութեան. «Կապիտալը փող է, կապիտալն ապրանք է։ Բայց նա իբր արժէք՝ այստեղ ներկայացնում է իբր մի ինքնաշարժ էութիւն (substance automatique) եւ ինքնաբերաբար, ինչպէս մայր արժէք, արտադրում է նոր

ծել, մի յաւելեալ արժէք, եւ վերջապէս ածում է իր սեփական յատկութիւնով: Մի խօսքով՝ — կարծես թէ արժէքը ձեռք է բերել մի խորհրդաւոր յատկութիւն — ծնելու նոր արժէք, նրանով, որ նա արժէք է, բերելու ձագեր եւ կամ, գո՛նէ, ածելու ոսկէ ձուեր»(*):

Իր միտքն աւելի եւս պարզաբանելու համար, Մարքսը վերցնում է հետեւեալ օրինակը. 100 ֆ. ստերլինգը տալիս՝ գնում են 200 լիտր բամպակ, իսկ վերջինը ծախում, ստանում են 110 ֆունտ ստերլինգ: Եթէ հետազօտենք, որ այդ չրջանառութիւնն առաջին կապիտալիստական գործողութիւնն է աչխարհիս վրայ, մենք կը նկատենք, որ 110 ֆ. ստերլինգը «տարբերում է իր մէջ և՛ւ իր սկզբնական արժէքը, և՛ւ իր յաւելեալ արժէքը, ճիշդ այնպէս, ինչպէս Աստուած զանազանում է իր անձի մէջ հօրը եւ որդուն, եւ ինչպէս որ երկուսը մի են եւ միեւնոյն հատակն ունին, որովհետեւ 10 ֆ. ստերլինգ յաւելեալ արժէքի չնորհով է, որ սկզբնական 100 ֆ. ստերլինգը դառնում է կապիտալ: Եւ հենց որ այդ արդէն կատարուել է, հենց որ հայրը ծնել է որդուն եւ ընդհակառակը, ամէն մի տարբերութիւն չքանում է եւ մնում է միայն մի էակ.— 100 ֆ. ստերլինգ»: Դրանից յետոյ եզրակացնում է. «Ուրեմն՝ արժէ-

(*) K. Marx — «Le Capital», T. II, section I, chap. IV, pages 61 et 64.

քը դառնում է պրոդլեսիվ (աճող) արժէք, մըշտապէս ծիլեր արձակող, յարաճուն ղրամ, եւ իբր այդպիսին՝ — կապիտալ (էջ 65)։ Ու անմիջապէս Մարքան իր խոշոր գիտական պաշարով պատրաստ ունի օրինակներ. «Կապիտալը մի կայուն արժէք է, ասում է հռչակաւոր ֆրանսիացի անտեսագէտ Սիմոն դը Սիսմոնդի, որը ինքնիրեն աճում է անընդհատ»(*)։

Վերջապէս, ամենակարուկ եւ իւրայատուկ բացատրութիւն է տալիս մեր հեղինակը. կապիտալն է «փ.–փ. դրամ կամ փող, որ ածում է փող. ղրամ, որ ձագ է բերում, — այս է կապիտալի բնորոշումն՝ իր առաջին մեկնաբանողների — մերկանտիլիստների բերանում» (էջ 65)։

Վաղուց է որ մարդիկ զազարել են հրաչքների հաւատալ։ Իսկ ինքնիրեն յայտնապէս, անընդհատ աճող ղրամի գոյութիւնը մի հրաչք է։

Մեռաղը կարող է աճել. Մոլլա Նասրէդդինի անեկդոտներում, որոնց մէջ կաթսան զաւակ է բերում, մի փոքրիկ կաթսայ, որպէսզի միւս անդամ խորամանկ մոլլան տանի ղրացու «ձագ բերող» մեծ կաթսան եւ այլեւս չվերադարձնէ, առարկելով, որ «նա մեռել է»։ Եւ ինչո՞ւ չէ կարող «ձագ բերող» կաթսան նաեւ մեռնել։ Խորամանկ է եղել Նասրէդդին խոջան. խորամանկ են

(*) S. Sismondi — «Nouvaux principes de l'économie politique», T. I. page 90.

եւ բոլոր կապիտալիստները, փոխանակ մեռոզի ծնունդը իւրացնելու, սեփականացնում են մարդ արարածի ծնած հարստութիւնները: Նրանք ունեն կապիտալ, իսկ մարդկանց մի հսկայական չերտ ոչինչ չունի, — սոված է: Վերջիններս ունեն աշխատելու ընդունակ բազուկներ: Եւ ահա ձեզ կապիտալ: Նա այն բոլոր արժէքներն է, որոնք ստեղծուած են մարդկային աշխատանքով (ի՞նչ ասել կ՚ուզէ — նաեւ բնութեան տուած նիւթերով) եւ որոնք գործադրւում են վարձու բանուորների ձեռքով նոր արժէքներ ստանալու համար:

Ֆ. Լասսալը չա՛տ աւելի պարզ ու աներկբայելի բացատրութիւն է տալիս կապիտալի մասին. «Կապիտալն է աշխատանքի բաժանման, փոխանակական արժէքներ արտադրելու սիստեմի եւ ազատ մրցման ժամանակ նախապէս իրականացուած այն պայմանը, որ անհրաժեշտ է արտադրողների կեանքի պահպանման համար՝ մինչեւ արդիւնքի ծախսելը վերջնական սպառողին, եւ որին հետեւում է այն՝ որ այդ ապրանքի մէջոցներից աւել մնացած եկամտամասը մնում է այդ մարդուն կամ բաժանւում է այն մարդկանց մէջ, որոնք մատակարարել են այդ պայմանը»: Իսկ դրանից մի տող առաջ, նա ասում է. «Աշխատանքի գործիքը, որ գտաւել է ինքնուրոյն եւ դերը փոխել բանուորի հետ, կենդանի բանուորին նետել է մեռած գործիքի դրութեան մէջ, իսկ աշխատանքի մեռած գործիքը զարգացրել, դարձրել է

վերարտադրության կենդանի օրգան. ահա այդ է հենց ինքը կապիտալը»(*):

Գերմանացի բուրժուա-տնտեսագէտ Կլիան-վեհաէրն, առաջ բերելով Մարքսի եւ Լասսալի այդ որոշումների էութիւնն, աւելացնում է. «Երկուսն էլ — Մարքսն ու Լասսալը, չատ աւելի կարճ ու պարզ կերպով բացատրած կը լինէին իրենց տեսակէտով կապիտալը, եթէ ասէին. «կապիտալը կեղեքման միջոց է», այսինքն մի կարողութիւն է, որն իր տիրոջ՝ գործատէրը կապիտալիստին ներկայ հասարակական տնտեսակարգում հնար է տալիս բանուորին կեղեքելու, այսինքն նրա աշխատանքով ստացած եկամուտի մի մասը ապօրինաբար սեփականացնելու(**):

Բուրժուական տեսակէտը պարզ է. նա կապիտալ է համարում այն բոլոր արժէքները, որոնք ստեղծուած են մարդկային աշխատանքի եւ բնութեան մատակարարած իրերի միացումից, եւ որոնք ծառայում են նոր արտադրության համար. կարճ — ամէն տեսակ արտադրական միջոցներ — ահա կապիտալը:

Դրա դէմ ղրուած են Մարքսի եւ Լասսալի որոշումները, որոնք յանգում են միեւնոյն սկզբ-

---

(*) Lassale — «Herrn Bastial-Schulze» — ռուսերէն Գ. հատոր, էջ 189:

(**) Kleinwächter — «Der volkswirisch. Produktion» — Schönbergի գրքում, Ա. հատոր, էջ 173:

բունքին: Դա սոցիալիստական տեսակէտն է, որն աւելացնում է բուրժուական տեսակէտի վրայ, իբր անհրաժեշտ բաղադրիչ մաս կապիտալի հասկացողութեան, նաեւ կեղեքման, յաւելեալ արժէքի գաղափարը: Կապիտալը մարդկային աշխատանքով ստեղծուած եւ նոր արտադրութեան համար գործադրուող այն արժէքներն են, որոնք պահանջում են վարձու բանուորներ կա՛մ մասամբ, կամ ամբողջովին:

Առաջին որոշման համեմատ՝ կապիտալի տէր կամ կապիտալիստ են այն գուտ պրոլետարները, որոնք ունեն մի քանի ռուբլի խնայողութիւն որեւէ խնայողական արկղում. արհեստաւորները, որոնք իրենք են աշխատում, թերեւս ունենալով մի աշակերտ, որին սովորեցնում են արհեստ. գիւղացին, որը հաղիւ այնքան հող ունի, որ կարողանում է ինքն ու իր ընտանիքը մշակել, մի կերպ ապրել... Սրանք բոլորը կապիտալիստներ, բուրժուաներ են. ինչ ասել կ՚ուզէ — մանր բուրժուաներ:

Երկրորդ որոշումը, լինելով շատ աւելի դիտական, հնարաւորութիւն չէ տալիս մի «փինաչու», որի կապիտալը մի խոշոր կոճղ է, մի երկու ասեղ, մի բիզ ու մի հատ դեղին թուղէ «մուշտի»՝ կաշի ծեծելու գործիք, — մի այդպիսի ողորմելի փիճաչու կոչել կապիտալիստ, բուրժուա... Թէեւ փոքր... Նա հնար չէ տալիս Կոմկասեան սոցիալ-դեմոկրատ պրոպագանդիստներին հասնելու այն ծաղրածուական եզրակացու-

թեան, թէ «կապիկ պարածողը, տրամաբանօրէն մտածելով, բուրժուա է, որովհետեւ ունի տուֆ եւ կապիկ,— այսինքն արտադրութեան միջոցները»:

Ո՛չ, ո՛չ: Մարքսի նման հանճարը չէր կարող այդքան մակերեսային, այդքան ծանծաղ լինել:

«Նոյն չահը, որ մղում է կապիտալի փոքրագլուխ պաշտօնեային — տնտեսագէտին, պաշտպանելու իր մօտ կապիտալիստական սեփականութեան եւ նրա հակադրութեան տեսական նոյնութիւնը, նրան ստիպում է գաղութներում մտնել խոստովանութիւնների ճանապարհը, բարձրաձայն յայտարարել այդ երկու հասարակակարգերի անմիատեղելի լինելը: Նա սկսում է ապացուցանել, որ կամ պէտք է հրաժարուել աշխատանքի համայնական կարողութիւնների զարգացումից, դործակցութիւնից, աշխատանքի մանուֆակտուրական բաժանումից, մեքենաների լայն գործադրութիւնից եւայլն, եւ կամ գտնել արդարացուցիչ պատրուակներ սեփականազուրկ անելու աշխատաւորներին եւ դարձնելու նրանց արտադրական միջոցները կապիտալ»(*):

Կասկած կարո՞ղ է լինել, որ մեծ տնտեսագէտի համար «աշխատաւորի արտադրական միջոցները» կապիտալ չեն: Եթէ այդ մի օրինակը բաւական չէ, չարունակենք. «Կապիտալ»ի առաջին

(*) K. Marx — «Le Capitale», T. 1. chap. XXXIII, page 343.

հատորի 32րդ գլխում, մանրամասն քննելով, թէ ինչպէս մանր, անկախ աշխատաւորներին կապիտալիստական տնտեսութիւնը սեփականազուրկ է արել, նա գրում է. «Հենց որ ձեւավորման այս գործողութիւնը բաւարար կերպով քայքայել եւ վար ու վեր է արել հին հասարակութիւնը, երբ արդէն արտադրողները դառել են պրոլետարներ, իսկ նրանց աշխատանքի պարագաները — կապիտալ»(*), երբ կապիտալիստական ռեժիմը միայն իրերի բերումովն է դիմանում, — այդ-պիսի պարագաներում, չարունակում է Մարքսը, արտադրութեան բոլոր միջոցների հասարակացումը կամ սոսիալիզասիոնը պիտի նոր ձեւեր ստանայ. այժմ պէտք է սեփականազուրկ անել ոչ թէ անկախ աշխատաւորներին, այլ կապիտալիստներին...

Այս ամբողջ հատուածի մէջ մեզ հետաքրքրողը լոկ մեր ստորագծած կտորն է. «Նրանց աշխատանքի պարագաները դառել են կապիտալ»: Կրկին «արտադրական պարագաները» հակադրուած են «կապիտալին»:

Մի ուրիշ, աւելի պարզ օրինակ. «... Դրամ ունենալը, ապրուստի միջոցներ, մեքենաներ եւ արտադրական այլ միջոցներ ունենալը, մարդուն երբեք կապիտալիստ չէ դարձնում, քանի դեռ չէ կայ մի լրացուցիչ մաս, որն է վարձուորը, մի այլ մարդ, որը, կարճ ասենք, բռնադատուած լի-

(*) Նոյն տեղում, էջ 342:

նի ինքն իրեն վաճառելու կամովին: ...Կապիտալը մի իր չէ, այլ անհատների միջեւ հասարակական յարաբերութիւն, որը հաստատւում է իրերի միջոցով»(*):

Այո՛, ոչ ոք կապիտալիստ չէ, քանի դեռ այս կամ այն ձեւով, անմիջապէս — ինչպէս գործատէրը, միջնորդապէս — ինչպէս բանկիրը կամ կալուածատէրը, չէ կեղեքում «անհրաժեշտ լրացուցչին» — վարձու բանուորին: Մարքսը դեռ իր երիտասարդ ժամանակի գրուածքներից մէկում՝ «Վարձու աշխատանք եւ կապիտալ» (1844 թ.) յայտնել է նոյն միտքը կապիտալի էութեան մասին, որ նա իրը ինքը չէ, ոչ գործիքը, ոչ էլ մեքենան, այլ գործարանատիրոջ եւ վարձու աշխատողի միջեւ մի յարաբերութիւն է, մի իրաւունք՝ իրացնելու նրա աշխատանքի ամբողջ պտուղը, տալով նրան դրամ, կամ ապրելու այլ միջոցներ:

Վերջապէս Մարքսին են պատկանում հետեւեալ խօսքերը. «Ամէնքին յայտնի է, որ արտադրութեան եւ կերակրուելու միջոցները, որոնք պատկանում են անմիջական արտադրողին, աշխատաւորին, իրեն կապիտալ չեն: Նրանք դառնում են կապիտալ միմիայն այն ժամանակ, երբ ծառայում են իրը միջոց կեղեքելու եւ տիրանալու աշխատանքին: Բայց նրանց այդ յատկութիւնը, — այսպէս ասենք՝ նրանց կապիտալիստական հոգին — այնքան է խառնւում նրանց նիւթական

(*) Նոյն, էջ 344:

դոյութեան հետ անտեսագէտի ուղեղում, որ նա նրանց կնքում է կապիտալ անունով՝ բոլոր հանգամանքներում, նոյնիսկ այն ժամանակ, երբ նրանք ուղղակի կապիտալի հակառակն են»(*):

Ոչ մի թիւրիմացութիւն թոյլ չտուող այս պարզ, այս ակներեւ մտքերն են, որ Մարքսի մտերմին եւ հին դպրոցի մարքսիզմի ամենափայլուն ներկայացուցիչներից մէկին, հանդուցեալ Էրկնեխտին ստիպել են ասել. «Ճաճախ աչխատել են մեզ դոյց տալ իբր բացառապէս բանուորների պաշտպան. «բանուոր» բառն էլ բացատրելով վարձու բանուորների նեղ ու սահմանափակ մտքով: Բայց մի՞թէ երկրագործութիւնն էլ նոյնպիսի մի արդիւնագործութիւն չէ, ինչպէս եւ միւսները: Ոչ թէ միայն քաղաքի ու գիւղի վարձու բանուորն է բանուոր, այլ այն բոլոր մարդիկ, որոնք չեն ապրում ուրիշի աչխատանքի չահագործութիւնով, ուրեմն՝ նոյնպէս եւ գիւղացին ու մանր արհեստաւորը»(**):

Էրկնեխտի մահից յետոյ՝ նրա մի փոքրիկ, չվերջացրած աչխատութիւնը տպուեց դեմոկրատիայի կենտրոնական օրգանում, «Vorwärts»-ում: Այնտեղ եւս հեղինակը յայտնում է նոյն կարծիքը, համարեա՝ բառացի. «Բանուոր դասակարգի գաղափարը չպէտք է չափազանց նեղ ըմբռնել: Բանուոր դասակարգ ասե-

(*) Նոյն, էջ 344:

(**) «Gund-und Bodenfrage».

լով, մենք հասկանում ենք այն բոլոր մարդկանց, որոնք ապրում են բացառապէս կամ գլխաւորապէս իրենց սեփական աշխատանքի արդիւնքով եւ որոնք չեն հարստանում ուրիշների սեւ աշխատանքի հաշուով»:

Ներկայումս Գերմանիայում գործող սոցիալիստներից ամէնից առաջ ու ամէնից անկասկածելիօրէն աշխատաւորական տեսակէտը յայտնել է Վոլմարը, որ պատգամաւոր է Բայխստագում Բաւարիայից, այդ «Գերմանական Վանդէայից», ըստ կաուցկու արտայայտութեան: Ի միջի այլոց ասենք, որ Կաուցկին Բաւարիան Վանդէա է կոչում, որովհետեւ գիւղացիութիւնը այդտեղ կազմում է ազգաբնակութեան 61 առ հարիւրը: Վոլմարն իր տեսակէտն այսպէս է պարզաբանում. «Տնտեսութիւնների ընդհանուր թուից 9/19րդը մենք պէտք է համարենք սեփական անտեսութիւն ունեցող (selbstwirtschafter — սեփական տնտեսատէր), որոնք մշակում են իրենց հողը իրենց եւ իրենց ընտանիքի անդամների ձեռքի աշխատանքով: Այդ գիւղացիները ներկայ պրոլետարիատից տնտեսականօրէն զանազանւում են միմիայն նրանով, որ դեռ եւս ունեն իրենց արտադրամիջոցները: Բայց այդ «տէր լինելը», այդ սեփականատիրութիւնը, որ յենուած է անկախ աշխատող անհատի եւ նրա աշխատամիջոցների անբաժանութեան վրայ, հիմնականապէս տարբերւում է սեփականութեան կապիտալիստ ձեւից, որ իր էութեամբ իսկ հիմնուած է ուրիշի աշխատան-

քի չահագործութեան վրայ: Այդ գիւղացիների առաջադրանքները նոյնն են, ինչ որ են վարձու բանուորներինը. եւ այդ առաջադրանքների աղբիւրը այն փաստն է, որ կապիտալիստական չահագործումն աւելի եւ աւելի է ներս թափանցում գիւղատնտեսութեան ասպարէզը: Գիւղատնտեսութեան զուտ արդիւնքն աւելի ու աւելի անցնում է կապիտալիստների ձեռքը. ահա դրանով է, որ գիւղացին ընկնում է ամէն կամ տգայ կապիտալի հասարակ կառավարիչի, գործակատարի, նրա հարկատուի, նրա սարուկի աստիճանին»: Ցոլմարի կարծիքով, իր եւ իր ընկերների դաւանած սկզբունքը չպէտք է լինի «պրոլետարիատի, վարձու բանուորութեան նեղ կուսակցական դոքտրին, այլ պէտք է արտայայտէ ամբողջ աշխատաւոր ժողովրդի չահերն ու ձգտումները»(*):

Միանգամայն ճշմարիտ, միանգամայն իրատսպի միտք, միանգամայն հիմնական ու գիտական տեսակէտ: Բայց դա է հենց որ կոչւում է աշխատաւորական տեսակէտ: Մենք արդէն տեսանք, որ Մարքսը, Ենգելսը, Լասսալը, Լիբկնեխտը եւ Կաուցկին (իր կեանքի մի մասում) պաշտպան են այդ տեսակէտին: Տեսանք նոյնպէս, որ նոյն Կաուցկին մի այլ աշխատութեան մէջ, շատ ուրիչ գերմանական սոցիալիստ-դեմոկրատ-

(*) «Handbuch für Landtagswähler», Nurenberg, 1899 (ըստ Զերնովի):

ներ, նրանց արձագանգելով նաեւ ռուսական սոցիալ-դեմոկրատները, դէմ են գնում այդ տեսակէտին, հակադրելով նրան «զուտ մարքսիստական» մի տեսակէտ, որի համեմատ Մարքսը դադարում է «մարքսիստ» լինելուց:

Մեր աշխատութեան ծաւալը չմեծացնելու պատճառով է, որ մենք առաջ չենք բերում Բերնշտայնի, Երիտասարդ Լիբկնեխտի, Վանդերվելդի, Ժորէսի եւ շատ ուրիշների կարծիքները, որոնք միանգամայն զուգընթաց են «Կապիտալ»ի խորհրդային հեղինակի տեսակէտին այդ հարցի առիթով:

Ի՞նչ է գնում Կաուցկին («Ագրարական հարցում») այդ տեսակէտի դիմաց, ի՞նչպէս է «խորհրդային» տարբերութիւններ գտնում «դիւղացու» եւ բանուորի մէջ. ի՞նչպէս վերջապէս, նա իրար է խառնում «կապիտալն» ու «արտադրութեան միջոցը», վերեւում մենք այդ մասամբ տեսանք. չարունակենք այժմ մեր վերլուծութիւնը:

Կաուցկին «Ագրարական հարցում» միշտ գործ է ածում «պրոլետարիատ» տերմինը, կարծես նա խուսարում է «բանուոր» բառից, որպէսզի աւելի թանձր գոյնով դուրս բերէ «դիւղացու» եւ յատկապէս «պրոլետարի» իրրեւ թէ հակադրութիւնը կամ, գոնէ, նրանց տարբեր «տեսակներ», տարբեր հասարակական կատեգորիաներ լինելը:

Պրոլետարիատի համար գնելով մեզ արդէն ծանօթ չորս բնորոշիչ գծերը, նա չարունակում է. «Պրոլետարիատի այդ բոլոր որոշիչ յատկու-

թիւններն ամենեւին չէ կարելի զոնել գիւղացու վրայ»: — Ահա մի խոշոր սղբիւր խոչորագոյն թիւրիմացութիւնների համար, որոնց մէջ անվերջ շրջում է եւ ինքը կաուցկին: «Գիւղացի»·— արդեօք ո՞ր գիւղացին է դա· վաչխառո՞ւն, հարուստ գիւղական բուրժուազի՞ն, որ 5–50 եւ աւելի հեկտար հող ունի· արդեօք 1–5 հեկտար հող ունեցող աշխատաւոր գիւղացի՞ն, թէ կիսապրոլետարիատը — երկու եւ աւելի նուազ հող ունեցողը, կամ անհող, հողազուրկ գիւղական զուտ պրոլետարը, «բատրակը», ինչպէս ասում են ռուսները: Մենք իրաւունք ունենք «չորս» խիստ նուրբ տարբերութիւններ պրոլետարիատի վերաբերմամբ գնող գիտնականից պահանջել, որ նա լինի նոյնքան խիստ ու նուրբ վերլուծող «գիւղացի» հասկացողութեան: «Մատնացոյց են լինում գրաւելու կապիտալիստի վրայ, որն իբր թէ հանդիսանում է նրա կայքի փաստական տէրը: Բայց՝ իրապէս՝ գիւղացու եւ այս վերջինի յարաբերութիւնները, ինչպէս տեսանք, յիշեցնում են ոչ թէ կապիտալիստի յարաբերութիւնները դէպի բանուորը, այլ հողատիրոջ եւ ձեռնարկողների յարաբերութիւնները: Հողի գրաւ ղրուելուց գիւղացին նոյնքան քիչ է պրոլետար դառնում, որքան եւ գործարանատէրը նրանից, որ արտադրութիւնը կատարում է ոչ թէ իր սեփական չինութեան մէջ, այլ մի վարձու բնակարանում: Գիւղացին այնուամենայնիւ, մնում է արտադրութեան միջոցների տէր, իր գործիքների, իր կահ-կարասիքի, իր անա-

սուններէն, մէկ խօսքով՝ իր ինվէնտարի սեփակա-նատէրը»(*):

Տեսակէտն արտաքուստ խիստ տրամաբանա-կան է, եթէ չլինի «դիւղացի» մութ ու բազմաքո-վանդակ բառը: Հետեւողական է, աւելի հետեւո-ղական, նա եւ դրանից յետոյ եկող միտքը: «Ի հարկէ այդ բոլորն էլ կարող են գրաւ դրուել, այնուամենայնիւ նա կատարում է ձեռնարկողի դեր կամ ֆունկցիա եւ իրը այդպիսին, դանում է հարկադրութեան մէջ պրոլետարիատի հետ, ինչպէս եւ այն գործարանատէրը, որն իր գործը տանում է պարտք վերցրած կապիտալով, որին չեն պատկանում արտադրութեան միջոցները, բայց որը վարում է ձեռնարկութիւնը, ինչպէս գործատէրը եւ, ինչպէս այդպիսին, թշնամական յարաբերութեան մէջ է դանւում պրոլետարիատի հետ»:

Մեզ համար խի՛ստ պարզ է գործարանատի-րոջ դրութիւնը — լինի նա սեփական կապիտալի, թէ %-ով վերցրած կապիտալի տէր.— նա ունի բանուորներ, որոնց յաւելեալ արժէքով պիտի ա-ճեցնէ իր կապիտալը: Բայց անըմբռնելի է, թէ արդեօք ո՞ր պրոլետարի հետ է հակադրութեան, անտագոնիզմի մէջ գիւղացին. իր մօտ աշխատող բանուորի հե՞տ, թէ ընդհանրապէս պրոլետա-րիատի հետ է այդ հակադրութիւնը: Եթէ այդ

(*) «Ազգարական հարցը» — յիշուած հրատարակու-թիւն, էջ 7:

գիւղացու մօտ կան պրոլետարները, ուրեմն՝ նա բուրժուա է. մեզ համար ամենաւէն նշանակութիւն չունի նրա գիւղացի կամ քաղաքացի լինելը. նա յաւելեալ արժէքի համը տեսնում է. նրա նով է ձեռք բերում եթէ ոչ իր ամբողջ ապրուստը,— գոնէ նրա մի մասը: Եւ եթէ կան որոշ նըպաստող պարագաներ, նա կարող է ամեցնել իր կապիտալը, կպցնելով նրան իր բանուորների յաւելեալ արժէքի մի մասը:

Բայց ինչպէս երեւում է հետեւեալ նախադասութիւնից, Կաուցկին այստեղ չէ խօսում «գիւղական բուրժուազիայի» մասին, «կարողաւոր գիւղացիների» մասին, ինչպէս ինքն է ասում, այլ երեւի 2–5 հեկտարնոց մանը, աչխատաւոր գիւղացիութեան մասին է խօսքը: — «Այդ հակադրութիւնը աւելի խստօրէն երեւան է գալիս այն գիւղացիների մօտ, որոնք դիմում են վարձու բանուորների չհաշտարծման, այսինքն՝ կարողաւոր կամ ունեւոր գիւղացիների մօտ»(*):

Ուրիշ խօսքով, կը նշանակէ նա — այդ հակադրութիւնը — կայ բոլոր գիւղացիների եւ պրոլետարների մէջ առհասարակ, բայց «չունեւոր» կամ «վարձու բանուորներին չշահագործող» գիւղացիների եւ բանուորների մէջ նա խստօրէն երեւան չէ գալիս: Սա միակ տրամաբանական եզրակացութիւնն է, որ անհրաժեշտօրէն բխում է Կաուցկու խօսքերից: Եւ նա կանգ չէ առնում այդ

(*) Նոյն, էջ 8:

եղրակացութեան առջեւ. մի անգամ հիմքը սխալ դնելով, նա նոյն ծուռ ճանապարհով բարձրանում է մինչեւ վեր:

«Աւելի նուազ ուժեղ է հակադրութիւնը պրոլետարիատի եւ միջակ գիւղացիութեան միջեւ, որ կամ ֆիչ է օգտւում, կամ ամենեւին չէ օգտւում վարձու բանուորներով, որն իր ընտանիքի ուժերով է վարում արտադրութիւնը, բայց եւ այնպէս ապրում է՝ արտադրելով շուկայի համար գործածելու իրեր»:

Դիտմամբ մենք ստորագծել ենք այդ կտորի մէջ երկու տեղ: Շատ հետաքրքրական է կտուցկու դրած «կամ» շաղկապը երկու իրերից միանգամայն տարբեր հասարակական եւ տնտեսական երեւոյթների միջեւ. «քիչ է օգտւում կամ ամենեւին չէ օգտւում վարձու բանուորներով»: Վրատանգաւո՛ր նախադասութիւն: Մեր կարծիքով՝ միեւնոյնը կը լինէր, եթէ այդ նախադասութիւնը թարգմանէինք այսպէս. «մանր բուրժուա է կամ աշխատաւոր»... այդ միեւնոյն է... Ահա այն ներքին հակասութիւնը, որ թաքնուած է նրա տակ: Այն գիւղացին, որ ամբողջովին կամ մասամբ վարում է իր անտեսութիւնը վարձու բանուորներով — բուրժուա է, և հարկէ մեծ կամ փոքր: Իսկ ով ապրում է իր եւ իր ընտանիքի աշխատանքով, նա բանուոր է, նա աշխատաւոր է, արտադրում է լոկ իր գործածութեան համար, կամ սպառում է իր արտադրածն ինքն անմիջապէս, թէ նրան վեր է ածում, Ա.-Փ.-Ա. շրջանի միջոցով, նախ

պողի եւ ապա այլ գործածական իրերի, — դա մեզ համար բացարձակ միեւնոյնն է: Իսկ կառուցկու համար դա ծառայում է իրը բաժանման գիծ գիւղացու եւ բանուորի միջեւ: Շարունակելով վերեւում մեր առաջ բերած տողերը իր աշխատանքով ապրող գիւղացու մասին, նա գրում է.

«Այստեղ, ի հարկէ, չկայ այն հակադրութիւնը, որը գոյութիւն ունի կեղեքողի եւ կեղեքուողի միջեւ, բայց մնում է վարձու պրոլետարիատի հակադրութիւնը բոլոր ապրուստի միջոցների արտադրողների վերաբերմամբ, գնողի եւ վաճառողի միջեւ եղած հակադրութիւնը»(*): Ու պարզաբանում է նա իր այդ միտքն այսպէս. «Երկրագործի համար ցանկալի է վաճառել իր արդիւնքները որքան կարելի է թանկ, իսկ բանուորի համար — գնել որքան կարելի է էժան»(**):

Բայց չգիտեմ բարեբախտութի՞ւն, թէ դժբախտութիւն անուանեմ այն, որ Կաուցկին ինքն իսկոյն եւեթ ցոյց է տալիս գիւղացու եւ պրոլետարի համեմատութիւնը: Չէ՞ որ հաց, կաթ, իւղ, միս մատակարարողը, գոնէ մասամբ, պիտի լինի աշխատաւոր գիւղացին, որը, որքան էլ իր սեփական գործածութեան համար արտադրէ, չէ կարող դերծ մնալ վաճառելու գործողութիւնից, որովհետեւ միայն ուտելիքը չէ մարդու պահանջը. կայ եւ հագնելիք, եւ խմելիք, եւ բնակա-

(*) Նոյն, էջ 8:

(**) Նոյն, էջ 9:

բան, է՛ւ մտաւոր պահանջներ... Իսկ հացը կամ կաթը չէ կարելի հագնել, ոչ էլ կարդալ. պէտք է այդ քերթը կամ այդ գործածական արժէքը դարձնել ապրանք, հանել չուկայ, վերածել դրամի,— ի հարկէ ոչ հարստանալու, ոչ վաստակելու նպատակով, այլ նոյն դրամով կօշիկ, զգեստ, գիրք, պայտ, դուքեան եւայլն գնելու համար: Նա վաճառում է, բայց վաճառում է միայն նոր ապրանք գնելու կամ հարկերը դրամով վճարելու նպատակով: Ի հարկէ այդպիսի գիւղացու համար ցանկալի է, որ բանուորը լաւ աշխատավարձ ստանայ, որպէսզի իր ապրանքը երբեք ստիպուած չլինի գիւղացին վաճառել մեռած գներով որեւէ մանր առեւտրականի, մի «մատրաքազի», կամ խոշոր կապիտալիստի ամէն կողմ վխտացող գործակալ գնորդներին. նրա համար ցանկալի է, որ բերէ ապրանքը չուկայ եւ անմիջապէս ծախէ ըստ պատուղին, բարեկեցիկ բանուորին, միջնորդ առեւտրականին ու վաշխառուներին հասանելիք եկամուտի մի մասն իրեն առնելով, իսկ մի մասը թողնելով գնորդին: Այո՛, այսօր գիւղացիութիւնը գրեթէ բոլորովին կտրուած է Եւրոպայում իր արդիւնքներն անմիջապէս սպառողներին ծախելու հնարաւորութիւնից. բաղմաթիւ մանր ու խոշոր կապիտալիստներ, ցրուած գիւղերն իրենց գործակալներին, հաւաքում, առնում են գիւղացու բոլոր այն արդիւնքները, որոնք պիտի վերածուեն դրամի, որպէսզի յետոյ դրամով վճարուեն հարկերը, գնուեն այլ տեսակի գործածական ար-

ժէքները, որ գիւղացին ինքը չէ արտադրում։ Այդ դեռ քիչ է։ յաճախ կանխավճարով նա արդէն ծախած է լինում 1–2–3–6 ամիսներ յետոյ ստանալիք իր բերքերը — իր ցորենը, գարին, կաթը, խաղը, պանիրը... Իբր վաճառող, երբ գիմացը կանգնած է կապիտալիստը, գիւղացին տալիս է խոշոր գնորդին յաւելեալ արժէք։ Նրա ապրանքն անպայմանն շատ արժէ, այսինքն արժէ այնքան, որքանով ծախում են չուկաներում, իսկ նա ծախում է քչով։ Եթէ այդպէս չլինէը, էլ ի՞նչ միտք կ'ունենար կապիտալիստի կատարած գնելու եւ վաճառելու գործողութիւնը, էլ ո՞րտեղից դուրս կը գար նրա խանութի վարձը, նրա վճարելիք պատենաի փողը, նրա փառահեղ ապրուստի խոշոր միջոցները... Այստեղ գիւղացին հանդիսանում է իբր տնայնագործ, իբր մի արտադրող, որն իր սեփական գործիքներով եւ հում նիւթերով արտադրում եւ վաճառում է կապիտալիստին, տալով նրան իր յաւելեալ արժէքը։ Իսկ եթէ գիւղացին բերէ չուկայ եւ վաճառէ անմիջապէս սպառողին, ինչ կասկած, որ մի քիչ աւելի գնով կարող է վաճառել, քան նա վաճառում է կապիտալիստին կամ նրա գործակալներին, բայց այդ գինը կը լինի անպայման աւելի նուազ, քան այն, որով նոյն ապրանքը ծախում է չուկայում կապիտալիստը։

Անկասկած է, որ եթէ սպառող հսկայական մեծամասնութիւնը, — աշխատաւորը գառաակարգը, — լինի բարեկեցիկ, եթէ վարձու բանուորը

լաւ աշխատավարձ ստանայ, աշխատասէր գիւղացուն դա աւելի ձեռնտու է, որովհետեւ ժողովրդի մի ահագին մասի գնողական կարողութիւնն աճելով, աւելի պահանջ կը ծագի գիւղացու բերած հաւերի, հաւկիթների, իւղի, պանրի, որ բարեկեցութեան պակասութեան պահուն՝ վարձու բանուոր դասակարգը երբեք հնար չունի գործածելու: Բայց տարօրինակ է կատւցկու մտածելակերպն այդ առիթով:

«Եւ ի՞նչ օգուտ գիւղացուն՝ բանուորի աշխատավարձի աւելանալուց, — հարցնում է նա,— եթէ աւելանալը տանում է դէպի աւելի զօրեղ գործածութիւն մարզարինի, ամերիկեան ճարպի, աւստրալական մսի եւ զանազանակերպ կոնսերւների: Գիւղացին ձգտում է հեռացնել չուկայից բանուորների համար ա՛յնքան ձեռնտու մրցումը եւ արհեստականօրէն բարձրացնել իր արդիւնքների գինը» (էջ 9):

Առաջին տարօրինակութիւնը նրանումն է, որ կատւցկին կարծում է թէ, եթէ երկրում գիւղատնտեսական ապրանքների պահանջը չատացաւ, վարձու բանուորը չպիտի գործ ածէ իր երկրի գիւղացու իւղն ու պանիրը, ձուն ու կաթը, այլ պիտի դիմէ աւստրալական մսին, ամերիկեան ճարպին եւայլն: Ինչո՞ւ, մի՞թէ բանուորի ճակատին այդպէս է գրուած... Ինչո՞ւ պիտի նա ամերիկեան ճարպ գործածէ, եթէ որ լաւ աշխատավարձ է ստանում, եւ ոչ գերմանական «բաուէրի բուտերը» (գիւղացու իւղը): Սա արդէն միանգամայն անըմբռնելի է:

Գիւղացին միշտ պիտի ջանայ չուկայից հեռացնել օտար մրցակիցներին, ասում է Կաուցկին, որպէսզի արհեստականօրէն բարձրացնէ իր վաճառքի հանած ապրանքների գները: Նախ եւ առաջ ասենք, որ դժուար թէ գիւղացին այդպիսի բաներ մտածէ, եթէ նա կազմակերպուած չէ, չունի ղեկավարներ, որոնք հասկացնէին նրան տնտեսական խնդիրները, պրոլետարի բարդ հարցերը: Երկրորդ, — եթէ գիւղացին այնքան զարգացել, այնքան ենթարկուել է կազմակերպութեան եւ պրոպագանդի, որ ըմբռնում է մրցակիցներին հեռացնելու անհրաժեշտութիւնը և դրա միջոցը, — դրսից եկած երկրագործական արդիւնքների վրայ խոչոր, պահպանողական մաքսեր նշանակելը, այն ժամանակ այդ նոյն գիւղացին եւ նրա ղեկավարները պիտի իմանան դեռ 1840ական թուերին ապացուցուած այն տնտեսական ճշմարտութիւնը, որ խնամող մաքսերը երբեք չեն օգնել, երբեք չեն նպաստել գիւղացու վիճակի բարձրացման, այլ նրանք հնարուել են միշտ ու ամէն տեղ լոկ խոչոր հողատէրերի, խոչոր կալուածատէրերի շահերի համար: Նրա ղեկավարներն անշուշտ պիտի ըմբռնեն, որ խնամարկող մաքսերով (պրոտեկցիոնիզմ) չէ որ գիւղացին պիտի մրցի օտարերկրեայ գիւղատնտեսական բերքերի հետ իր հայրենի չուկայում, այլ մըրցման միակ ու միակ ուղին է գիտութեան, զարգացման ուղին. պիտի տարածել, տարրացնել գիտութիւնը գիւղերում, որպէսզի գիւղացին հնար

ունենայ աւելի արդիւնաւոր կուլտուրա մտցնել իր անտեսութեան մէջ, որ նա երկրագործական աշխատանքներից ազատ ժամերը նուիրէ որեւէ այլ արտադրութեան, որեւէ օժանդակ արհեստի, — որ նա, միանալով իրեն նմանող աշխատաւոր գիւղացիների հետ, կազմէ գիւղացիական արտադրութեան եւ սպառողական միութիւններ, ճգտի հողերի եւ նրանց մշակման համայնացման...: Ահա այն միակ ու ճշմարիտ ուղին, որով կարելի է յաղթել օտարերկրեայ մրցման: Իսկ եթէ օտար երկրից բերում են այնպիսի ինքնաթիլ արդիւնքներ, որ այն երկրում, բնական այս ու այն պայմանի չնորհով, շատ աւելի էժան է նստում, քան մեր երկրում, — այդպիսի դէպքում էլ ինչո՞ւ մրցել· թող այդ ապրանքը բերուի, ծախուի էժան գնով, աւելի էժան քան մեր գիւղացին կարող է արտադրել· իսկ մեր գիւղացին չուկայից դուրս կը քաշէ այն բոլոր օտարերկրեայ մրցակիցներին, որոնք վաճառքի են հանում մեր երկրում, մեր գիւղացու համար հեշտ եւ էժան արտադրելի իրեր:

Զարմանալին այն է, որ կառավարին, դնելով գիւղացու մէջ մրցումը հեռացնելու զօրեղ ցանկութիւնը եւ միաժամանակ պնդելով, որ հովանաւորող կամ խնամարկող մաքսերը երբեք գիւղացուն չեն օգնել, այլ վնասել են նրան, — չէ յանկանում ենթադրել, որ կարող են գիւղացիները հետեւել աւելի առողջ, աւելի դիտական ուղղութեան, որ կարող են նրանց մօտենալ ոչ միայն

կարճատես անտեսագէտներ, որոնք քարոզում են օտարերկրեայ մրցումից ազատուել միայն մաքսային սիսթեմով, այլեւ այնպիսի մարդիկ, որոնք կարող են դիւղացուն կանգնեցնել համայնացման, ընկերակցութեան, սոցիալիստական էական կուլտուրական ճանապարհի վրայ:

Այժմ արդէն մենք մօտենում ենք ամենահետաքրքրական կէտին: Ո՛չ, չեն կարող դիւղացու մօտ յայդուքիւն գտնել վերջին տեսակի պրոպագանդիստները, որովհետեւ ամէն մի պրոպագանդ յայդուքիւն է գտնում այն ժամանակ, երբ յենւում է զանգուածի, այն խաւի իրական շահերի վրայ, որի մէջ կատարւում է պրոպագանդը: Խոշոր կալուածատէրերին ու կապիտալիստներին որքան որ կ'ուզես քարոզիր սոցիալիզմ — հողերի եւ արտադրական բոլոր միջոցների համայնացում ու հասարակական արտադրութիւն միահամուռ ուժերով. նրանց մէջ յայդուքիւն չես գըտնի, որովհետեւ այդպիսի հասարակական կազմը վնաս է նրանց, նրանք զրկուելու են իրենց ահագին կարողութիւններից, իրենց պորտաբուծական կեանքից եւ հրէշաւոր ճոխութեան հասած ապրուստից: Անկասկած, կարող են պատահել լուսամիտ անհատներ, որ կ'ըմբռնեն քո քարոզած տեսակէտը, իրենք էլ կ'ընդունեն, որ այդպիսի կազմը լաւ է մարդկութեան համար. կ'անցնեն քո բանակը, կը դառնան չնորհալի, նոյնիսկ հզօր ու անճնաղոհ գործիչներ... բայց դրանք կը լինեն անհատներ, սակաւաթիւ, հազուագիւտ: Իսկ ամ-

բոլոր դասակարգը կը վանէ քեզ իր միջից, կը ծաղրէ, կը ստեղծէ իր սեփական տեսութիւնները, իր սեփական իդէոլոգները, որոնք, փրփուրը բերաններին, կ'աշխատին ապացուցանել, որ միակ բնական ու խելացի հասարակակարգը ներկայում գոյութիւն ունեցողն է, որի այս կամ այն թերութիւնները պիտի չհկել, սրբագրել· որ կապիտալ է ամէն մի արտադրական միջոց· որ այդ կապիտալը ծնունդ է խնայողութեան· որ բանուորներն ու գիւղացիները խմում են, չոայլում, յիմար են, չեն խնայում, որ իրենք էլ կապիտալիստ դառնան եւայլն, եւայլն:

Ձիչդ նոյնանման անյայողութեան կը մատնուի սոցիալիստական պրոպագանդը գիւղացիների մէջ, մտածում է Կաուցկին, նրա հետ էլ շատ ուրիչ մարքսիստներ: Ինչո՞ւ: Պատասխանը մոայլ է, ողբերգական:

«Երկու հոգի կայ գաճաճ տնտեսութիւն ունեցող գիւղացու մէջ — գիւղացու եւ պրոլետարիատի: Պահպանողական կուսակցութիւնները ունեն բոլոր հիմքերը պահպանելու նրա մէջ գիւղացիական հոգին· իսկ պրոլետարիատի, նոյնպէս եւ հասարակական ընդհանուր զարգացման ու նոյն այդ գիւղացու շահերն ընթանում են հակառակ ուղղութիւնով»(*):

Այդ երկու հոգին դեռ եւս այն գիւղացու մէջն է, որը տարուայ մի խոշոր մասն անպատճառ

(*) Կաուցկի — «Ագրարական հարց», նոյն, էջ 17:

պէտք է գործ դնէ իբր վարձու բանուոր, որովհետեւ նրա գաճաճ անտեսութիւնը նրան հնար չէ տալիս այլ կերպ ապրելու: Իսկ այն գիւղացին, որին մենք կոչում ենք նոյնպէս «աշխատաւոր», իսկ Կաուցկին՝ «մանր ու միջակ», այդ գիւղացին, որ ստիպուած չէ վարձուել իբր բանուոր, բայց սրը չէ վարձում եւ ուրիշներին իբր բանուոր ու մշակ, — այդ գիւղացին, ինչ ասել կ'ուզէ, մեայն մի հոգի ունի, ի հարկէ ըստ Կաուցկու: Եւ այդ հոգին լիապէս պահպանողական է, որովհետեւ դա երկրագործական արդիւնքներ չուկայ ծախելու հանող մարդու հոգին է եւ ոչ նոյն չուկայում բանուորական ոյժ վաճառող պրոլետարի հոգին:

Այսպէս, կրկին մենք հասանք այնտեղ, որտեղից մեկնեցինք. այսինքն, գիւղացին իբր վաճառող, իր չահերով ղէմ է բանուորին իբր գնողի. միտք, որի սխալ լինելը մենք արդէն ապացուցինք:

Եւ տեսէք, որպիսի անհեթեթութեան է հասցընում այդ «վաճառողի եւ գնողի չահերի հակադրութեան» դժբախտ սխալը Կաուցկու նման ճարպիկ դիալեկտիքին կամ տրամաբանին: Նա հասնում է այն եզրակացութեան, որ պրոլետարը պրոլետար չէ, ոչ աւել, ոչ պակաս, — ճիշդ այդպիսի աբսուրդի է յանգում նրա խորաթափանց եւ ճարպիկ վերլուծութիւնը, որովհետեւ ելակէտը սխալ է:

«Այնտեղ, ուր գոյութիւն ունի բերքերով վը-

ճարուղ աշխատավարձ, երկրագործ բանուորները չահագրգռուած են կենսական մթերքների բարձր գնով, որպէս աշխատավարձ ստացողներ: Եթէ նրանք, ասենք թէ, աշխատավարձի մի մասն ստանում են հաճարով, որ նրանք ծախում են, այդ դէպքում նրանք չահագրգռուած են հաճարի բարձր գնով, նոյնպէս եւ նրա վրայ եղող մաքսերով: Նրանք չուկայում հանդիսանում են ոչ թէ մխիթարի իրը կենսական մթերքներ վաճառողներ»: (Նոյն տեղ, էջ 16):

Ահա վերեւում ասածը: Դուրս է գալիս, որ գիւղական կամ երկրագործական պրոլետարը պրոլետար չէ... Եւ այդ խորհրդաւոր հետեւանքն ստացւում է այն պատճառով, որ այդ պրոլետարը յիմարաբար ստանում է իր աշխատավարձի մի մասը ցորենով կամ հաճարով, որ, ստիպուած, ծախում է, որպէսզի օրինակ, կօշիկ գնելու դրամ ունենայ... Բայց ենթադրենք, որ իրը ծախող, այդ պրոլետարի չահը պահանջում է, որ ցորենի գինը բարձր լինի եւ, երկին ենթադրենք, որ այդ պրոլետարը ճայն է տալիս հովանաւորոք մաքսերին, որպէսզի իր ցորենով ստացած աշխատավարձը թանկ գնով ծախէ: Ենթադրենք նոյնպէս, որ մաքսերը տար ցորենի վրայ դրուել են եւ գները բարձրացան. 3–4 ամսում նոր գներն սկսեցին դառնալ սովորական երեւոյթ: Այնուհետեւ: Անկասկած Պր. Կաուցկին չի ենթադրում ապուշներ այն հողատէրերին, որոնց մօտ աշխատում են այդ գիւղական պրոլետարները: Եթէ այդ հո-

գաւէրներն ու հարուստ գիւղացիները ապուշ չեն, ուրեմն նրանք, ցորենի նոր գներն ամրանալուն պէս իսկոյն կը պակսեցնեն ցորենով արուող աշխատավարձը եւ պրոլետարի համար կրկին կը դայ նոյն դրութիւնը, ռէալ աշխատավարձի նոյն քանակը: Իսկ «ռէալ աշխատավարձ», արդէն Րիկարդոն վաղո՛ւց ապացուցել է, կոչւում են այն բոլոր գործածական արժէքները, կենսական անհրաժեշտ արժէքները, որ կարելի է գնել «անուանական» կամ «նոմինալ» աշխատավարձով եւ որ նոմինալ աշխատավարձի մեծութիւնը կարող է փոփոխուել այն ժամանակ, երբ ռէալ աշխատավարձը մնում է նոյն չափին: Պարզ է, որ պրոլետարիատի համար էական նշանակութիւն ունեցողը ռէալ աշխատավարձն է եւ ոչ նոմինալը: Եթէ առաջ նա ստանում էր, օրինակ, ամսական 20 պուդ ցորեն, որի պուդն արժէ 80 կոպեկ, գիներն էժան էին, իսկ այժմ եթէ նոյն բանուորն ստանում է 16 պուդ ցորեն եւ պուդն արժէ մէկ ռուբլի,— ինչ ասել կ'ուզէ, որ բանուորի համար դա բացարձակ միեւնոյնն է, դեռ երկրորդ դէպքում նա եւս անպայման պիտի աւելի ուժէ, որովհետեւ ինքն էլ հաց գործածող է, որի համար այժմ մի քիչ աւելի պիտի վճարէ քան առաջ:

Ո՛չ, հացի գինը բարձրանալը ցորենով աշխատավարձ ստացող բանուորի համար, վարձադնի տեսակէտից, բոլորովին նշանակութիւն չունի, իսկ իրը սպառող — նրա համար վնաս է անպայման: Էլ ո՞ւր մնաց Կաուցկու գիւղական պրո-

լետարի չահերն իրը վաճառողի, ո՞ւր մնաց այդ պրոլետարի չահերի հակասութիւնը քաղաքի եւ ուրիչ պրոլետարների չահերի հետ, իրը գնողների: Զափազանց առերեւոյթ է եւ խարուսիկ կարուցկու հնարած «գնողի եւ վաճառողի չահերի հակասութեան» այդ առասպելը: Նա չոգի է, նա օդն է ցնդւում քննադատութեան թափանցող ճառագայթների առջեւ:

Այսպէս ուրեմն, գիւղացին թէեւ վաճառող է, բայց ոչ կապիտալիստ վաճառող, այլ կեղեքուող վաճառող, մի վաճառող՝ որի համար անպայման ձեռնտու է աշխատավարձի աւելանալը: Ինչպէս ասացինք, կաուցկին ինքն է մատնանիշ լինում այդ երեւոյթը, այդ ներդաշնակութեան հնարաւորութիւնը: Բայց անմիջապէս սկսում է հերքել այդ, անուանելով դա առերեւոյթ:

«Այդ փաստաբանումն, ասում է նա, նորութիւն չէ. նրան են դիմում միշտ, երբ ցանկանում են գտնել չահերի ներդաշնակութիւն: Բանուորների բարեկամներն ասում են դործարանատէրերին, որ նրանք պարտաւոր են աւելացնել աշխատավճարը. դա լաւագոյն միջոցն է ներքին չուկան մեծացնելու եւ ճգնաժամերից ազատուելու: — Միւս կողմից, դործարանատէրերի բարեկամները բանուորներին մատնանիշ են լինում, թէ ինչպէս նրանք չիմարաբար են վարուում, ստիպելով դործարանատէրերին բարձրացնելու աշխատավճարը: Դրանից կա՛մ աւելանում են կենսամթերքների դները, եւ այն ժամանակ բանուորը

մի կողմում չահածը՝ կորցնում է միւս կողմում, կամ նուազում է վաստակը: Բայց չէ՞ որ որքան բարձր է վաստակն, այնքան աւելի արագանում է կապիտալի կուտակումը, նոյնքան արագանում է բանող ձեռքերի պահանջը, — աշխատավճարի բարձրացման այդ հզօր միջոցը: Այսպիսով՝ բանուորների չահն է հեռացնել այն ամէնը, ինչ որ առաջ է բերում վաստակի նուազում.— գործադուլները եւայլն: Հետեւաբար, բանուորները նոյնպէս չահագրգռուած են վաստակի յաւելումով, ինչպէս եւ գործատէրերը. այդպիսով՝ նրանց չահերը լիովին համապատասխան են իրար»(*): — Սակայն, չարունակում է նա, այդ բոլորը ցոյց են տալիս, որ կապիտալիստական հասարակութիւնը մի օրգանիզմ է, որի զանազան մասերն ունեն որոչ կապակցութիւն, բայց որովհետեւ նա չա՞տ անկատար օրգանիզմ է, այդ պատճառով էլ այդ կապերից զոկ՝ կան նաեւ բազմաթիւ խոչոր հակադրութիւններ, որոնք աւելի հզօր են, քան համերաչխութեան կապերը:

Կաուցկու բերած համեմատութիւնը բանուորի եւ գիւղացու մի կողմից, իսկ միւս կողմից նոյն բանուորի եւ կապիտալիստի միջեւ առերեւոյթ է, մակերեւութական. չկայ ոչ մի խորութիւն այդ համեմատութեան միջոցով կատարուած վերլուծութեան մէջ: Երբ զանազան Միկարիմասուններ քարոզում են կապիտալիստին աւե-

(*) Կաուցկի — «Ագրարական հարց», նոյն, էջ 9:

լացնել իր գրպանից աշխատավճարը, որպէսզի աւելանայ բանուորի սպառողական եւ գնողական կարողութիւնը, եւ ներքին շուկան մեծանայ, դա նշանակում է, որ այդ Միկարներն ասում են կապիտալիստին.— «Դու քո դրամով գնիր քո ապրանքները, որպէսզի գերարտադրութեան տեղիք չտաս»· այլ խօսքով՝ «հանիր աչ դրպանից եւ դիր ձախ դրպանդ քո դրամներդ· եւ դեռ կէսն էլ այդ գործողութեան պահուն թաւթփելու պայմանով»։

Երբ նոյն Միկարները բանուորներին քարոզում են գործադուլ չանել, որպէսզի վաստակը բարձր մնայ, նրանք, այլ խօսքով, հրամայում են բանուորին մնալ անխօս, լո՛ւռ վիայ եւ չբողոքել, տեսնելով թէ ինչպէս կապիտալիստն իր վաստակն աւելացնում է, պակասեցնելով բանուորի աշխատավճարը։

Թէ՛ առաջին եւ թէ՛ երկրորդ դէպքում մի կողմի շահը կարող է աւելանալ առհասարակ մեւսի շահերի նուազումով, աշխատավճարն աւելանում է վաստակի հաշուով, իսկ վերջինը՝ նախորդի հաշուով։ Մենք արդէն դիտենք, որ այդ երկուսն էլ կարող են միասին աւելանալ խի՛ստ բացառիկ պայմաններում եւ դա կը լինի կարճատեւ։ Բայց մի րոպէ դեռ այս վերջին հնարաւորութիւնը հանենք մէջտեղից։

Արդեօք այդպէ՞ս է դիւղացու եւ բանուորի շահերի յարաբերութիւնը հասարակական ընդհանուր եկամուտի դրկում։ Ամենեւին. չկայ եւ ոչ մի կաթիլ նմանութեան, եւ ոչ մի դիծ նմանարա-

նութեան: Երբ աւելանում է աշխատավճարը, դա կատարւում է կապիտալիստի վաստակի հաշուով, իսկ գիւղացու դրպանը մնում է մի անդամայն անձեռնմխելի այդ երեւոյթի ժամանակ, ինչպէս եւ դրա հակառակ պարագային: Ընդհակառակը, եթէ որեւէ փոփոխութիւն կատարւում է այդ պահուն գիւղացու դրպանում, դա հետեւեալն է, որի վերայ վերեւում երկար կանգ առանք. աշխատավարձի յաւելումով աճում է եւ գիւղացու քերքերի պահանջը, որից կարող է գիւղացին տեսնել որեւէ օգուտ, նրա դրպանը կարող է մտնել մի քիչ աւելի դրամ: Իսկ երբ նուազում, ընկնում է աշխատավճարը, գիւղացին կարող է վնասուել բանուորների սպառողութեան կրճատումից, նրանց գնողական կարողութեան նուազումից, որովհետեւ չուկայում կը քչանայ գիւղատնտեսական արդիւնքների պահանջը եւ կ'ընկնի նրանց գինը:

Մի հարց: Արդեօք եթէ կապիտալիստը գիտեներ, որ հնարաւոր է բարւոքել բանուորների բնակարանները, բանալ նրանց համար ղպրոցներ, աւելացնել աշխատավճարը, չէ՞ր անի այդ ամէնը, ի հարկէ, եթէ որ դա չպահանջէր իրենից ոչ մի կոպեկ: Ուզում էք տուէք այդ հարցը, պատասխանը կը լինի դրական: Եթէ կապիտալիստից ոչ մի ծախք չպահանջէ, նա պալատների մէջ կը բնակեցնէ իր բանուորներին: Եւ արդեօք սակա՞ւ են այդպիսի դէպքեր Եւրոպայի դասակարգային չարժումների տարեգրութիւններում: Ամենեւին: Կապիտալիստները շատ յաճախ պաշտ-

պանել են երկրագործական բանուորներին, իսկ հողատէրերը բռնել են յաճախ գործարանական բանուորների կողմը, որպէսզի նուազեցնեն վաստակը կամ ընդհատեն եւ իրենք ձեռք բերեն պրոլետարիատի մի մասի դէթ ժամանակաւոր համակրանքը, եւ որ գլխաւորն է, թուլացնեն իրենց հասարակական հակառակորդին, հողատէրերը՝ կապիտալիստներին եւ ընդհակառակը: Երբ հողատէրերը յաջողում են թուլացնել կապիտալիստների ազդեցութիւնը, դրանով նրանք հանդիսանում են դրութեան տէրերը թէ՛ պարլամէնտում եւ թէ հասարակութեան մէջ:

Միւս կողմից՝ մենք ունենք չատ աւելի փայլուն փաստեր, որոնք ցոյց են տալիս, որ բանուորը ուրախութեամբ ցանկանում է վաստակի յաւելումը, որովհետեւ այդ յաւելումը ոչ միայն չէ կատարում իր հաշուով, ոչ միայն նա կատարում է ուրիշների՝ օրինակ՝ գաղութների, ուրիշ երկիրների հաշուով, այլեւ այդ յաւելումից մի քիչ էլ ինքն է օգտւում: Երկա՛ր տարիներ անգլիական բանուորները մնում էին բոլորովին անմասնակից սոցիալիստական քարոզների ու կազմակերպութեան համար. նրանք միշտ համերաշխ էին գնում լիբերալ-բուրժուազիի հետ, որովհետեւ վաստակն ու աշխատավճարը միաժամանակ աճում էին օտար երկիրների հաշուով: Ջերնովն իր բրոշիւրում առած է բերում մի երկու փաստ, վերցրած «Petite République» թերթի 1900 թուի Հոկտեմբեր 7ի համարից եւ այլ տեղերից, թէ

ինչպէս անգլիական բանուորները, օրինակ, Շէֆֆիլդի թնդանօթարանների ճուլիչ բանուորները, ձայն են տուել Զեմբըրլէյնի նման մի բուրժուա իմպերիալիստի, մի Չինդոյի կամ մի օտարակեր եւ զրաւողական քաղաքականութիւն քարոզող թթու ազգասէրի: Ինչո՞ւ: Որովհետեւ իրենց արհեստի շահը պահանջում է չատ թնդանօթ ծախել(*): Բացի այդ՝ Ֆրանսիական Մեծ Յեղափոխութեան ժամանակ ազնուականութեան կողմը բռնեցին երկու ծայրեր — խաւար Վանդէա նահանգի մութ ու մոլեռանդ գիւղացիութիւնը եւ ամէնից աւելի զարգացած զօրաբանական կենտրոնը — Լիոնը, որ արդէն մետաքսի ահագին գործարաններ ունէր, բազմաթիւ եւ բաւական գիտակից բանուոր դասակարգով մի խասին, որը ԺԸ. դարի ընթացքում, նախքան Մեծ Յեղափոխութիւնը, տասնեակներով գործադուլներ էր արել իր վիճակի բարւոքման համար(**): Լիոնը և առհասարակ բազմաթիւ զարդեղէններ արտադրող կապիտալիստներ բռնեցին հին կարգի կողմը, որովհետեւ նրանց անմիջական, ոչ խորապէս ըմբռնուած դիւրքը հասցրեց այնտեղ, ուր յեղափոխութեան

(*) Ձերնով — «Գիւղացին եւ բանուորը»:

(**) Տե՛ս Մ. Կովալեւսկի — «Ժամանակակից դեմոկրատիայի ծագումը», Ա. հատոր: Ժ. Ժորէս — «Ֆրանսական Յեղափոխութեան Պատմութիւնը» — պատճառներ: Մարեշալ — «ԺԹ. դարի պատմութիւնը»:

պաշտպանները երկաթի կտորներով լցրած ռումբեր էին նետում հրապարակներում հաւաքուած «հայրենիքի թշնամիների» մէջ եւ կոտորում, որովհետեւ գիւղիոտինն ու կախաղանը բաւական չէին: Եւ այդ «հայրենիքի թշնամիները» Լիոնում, Մարսէյլում, Բորդոյում եւայլն, ոչ միայն ազնուականներն էին, այլեւ երբորդ դասակարգից շատ առեւտրականներ եւ գործարանատէրեր:

Ակներեւ է, որ գիւղացու համար ամենեւին միեւնոյնը չէ բանուորի բարօրութեան ասպիճանը. նրա չահը պահանջում է, որ բանուորը լինի լաւ վիճակի մէջ:

Իսկ ի՞նչպէս է վերաբերում բանուորը դէպի գիւղացին: Նրա համար էլ անպայման ցանկալի է, որ գիւղացին լինի բարօր վիճակում: Նրա չահն այդ է պահանջում: Կանգ առնենք այդ խընդրի վրայ:

Մեծ քաղաքների ազգաբնակութիւնն աճում է, իսկ գիւղերինն առհասարակ նուազում: Քաղաքների ազգաբնակութիւնն արդիւնք չէ միայն նրա բնական աճեցողութեան, այլ թէ՛ դրա եւ թէ գիւղերից անդադար քաղաք հոսող գաղթականութեան: Այսպէս՝ 1848 թուին Գերմանիայում գիւղական ազգաբնակութիւնը կազմում էր ամբողջ երկրի բնակչութեան $^3/_4$ մասը կամ 75 առ հարիւրը. իսկ 1882 թուին գիւղացիները 19·225·000 հոգի էին, այնինչ բոլոր ազգաբնակութիւնը 45 միլիոն 222·000 մարդ էր, ուրեմն գիւղացիութիւնը կազմում էր բոլոր բնակիչների մօտ 2/3րդ մասը

կամ 54 առ հարիւրը։ Ժթ. դարի վերջերին երկրի աղգաբնակութիւնը բաղկացած էր 51·500·000 հոգւոց, որից միայն գիւղացիները 18·500·000 հոգի էին, բոլոր բնակիչների մօտ 1/3 մասը, կամ 35 առ հարիւրը։ Ֆրանսիայում 1876 թուին գիւղական աղգաբնակութիւնը կազմում էր երկրի բոլոր բնակիչների 51,4 առ հարիւրը, 1881ին՝ 48,4 առ հարիւրը, 1886ին՝ 46 առ հարիւրը, իսկ 1889ին՝ 45 առ հարիւրը։ Այդ երկու երկիրներում, ինչպէս տեսնում ենք թուերից, քաղաքների աղգաբնակութիւնն աճում է, իսկ գիւղերինը՝ պակասում։

Անգլիայում այդ գործողութիւնը հասել է իր գագաթնակէտին։ 1890 թուին Անգլիայում գիւղացիութիւնն արդէն ընկել էր ամբողջ աղգաբնակութեան 10 %ին։ Այդ նոյն չարժումը հասել է որոշ բարձրութեան Բելգիայում, Աւստրիայում, մասամբ Իտալիայում եւայլն. նա սկսել է եւ բաւական ուժեղ թափով առաջ է գնում Ռուսիայում եւ միւս բոլոր կուլտուրական պետութիւններում։

Գիւղական աղգաբնակութեան արտագաղթն ունի բազմաթիւ պատճառներ, որոնց մէջ տնտեսական պատճառներն անպայման ահագին տեղ են բռնում։ Դեռ մի կողմ թողնենք երկրագործութեան դանդաղ յառաջդիմութիւնը, նրանում տեխնիկայի կամ մեքենաների կրիայի քայլերով մուտ գործելը եւ այլ այդ կարգի երեւոյթներ, որոնք նոյնպէս պատճառ են դառնում աղգաբնակութեան արտագաղթին։ Վերցնենք գլխաւոր պատճառնե-

րից երկուսը միայն, խոշոր կալուածներէ մըցումը մանր արտադրողներէ դէմ եւ գիւղացիութեան դեգերումները պարտատէրերէ ձեռքին:

Գիւղական ազգաբնակութիւնն այնքան ծանրաբեռնուած է կապիտալիստներից ու կալուածատէրերից բաղկացած եւ նրանց չահերին միայն ծառայող ներկայ պետութեան ճղմող հարկերով, որ յաճախ ստիպուած է լինում դառնալ գործիք ամէն մի վաչխառու կապիտալիստի ձեռքում, զրաւ դնելով նրա մօտ թէ՛ իր հողը, թէ՛ անասուններըը եւ թէ նոյնիսկ իր գործիքները: Գիւղացու ունեցած հողը, նրա արտադրական միջոցները չատ յաճախ նրան ստրկացնում, կապում են հողի հետ, չթողնելով նոյնիսկ դառնալ վարձու պրոլետար, ստանալ աշխատավճար եւ աւելի բարձրը վիճակի հասնել: Մրցումը դրացի խոշոր հողատէրերի հետ երբեմն մահացու հարուածներ է հասցնում մանր, աշխատաւոր գիւղացուն, որը յաճախ ստիպուած է լինում հողի սակաւութեան պատճառով՝ դիմել դրացի խոշոր հողատէրին, վճարելով նրան չափազանց բարձր րէնտա կամ կապալադրամ եւ մշակել նրա հողը: Այդ հողից ստացուած բերքը, վճարուող րէնտան ու գիւղացու թափած աշխատանքը քննելով, մենք տեսնում ենք, որ հողատէրն առնում է գիւղացուց չատ աւելի բարձր յաւելեալ արժէք, քան ոեւէ գործարանատէր իր բանուորից:

Այս բոլոր պարագաները ստիպում են գիւղացուն ընկնել պարտքի տակ, թողնել իր տնտեսու-

Թիւնը կամ մասամբ, կամ ամբողջովին,— այսինքն կամ ընտանիքի մի մասը մէկ, երկու եւ աւելի անդամը, եւ կամ ամբողջ ընտանիքը, — դաղթել քաղաք, դառնալ վարձու բանուոր: Քանի դեռ նա գիւղացի էր, իր սեփական արտադրական միջոցների տէրը, նրան կեղեքում էր գնող կապիտալիստը, որ տանում էր նրա արդիւնքները քաղաք եւ նրանց վաճառումից ահագին դրամ վաստակում: Արտադրող գիւղացին յաճախ իր ընտանիքի համար գործածելու պահած ցորենը վաճառում էր, իսկ յետոյ, նեղն ընկնելով, նորից պարտք էր անում, մէկին մէկ, մէկին երկուս եւ աւելի վճարելով, յետ էր գնում իր ծախած ցորենը վաչխառու հացավաճառից, որ իր ընտանիքը կերակրէր: Իսկ այժմ քաղաք է գալիս. դառնում է բանուոր եւ հանգստանում, խի՛ստ հանգստանում, որովհետեւ գիւղացի եղած ժամանակ նա ենթակայ էր մի չարք, մի երկա՛ր չարք կեղեքումների. նրանցից քերթում էին, Զերնովի ասածի պէս, մի քանի կաշի: Իսկ այժմ գոնէ նրան քերթողը մի մարդ է եւ այն էլ մի անդամ:

Գիւղից մարդկանց հոսանքը լցւում է քաղաքները: Դրանք ամէն միջոցից զուրկ մարդիկ են, տնանկներ, զրկուածներ: Դրանց ու վարձու բանուորների ընդհանուր դումարն է, որ կոչւում է աշխատաւիճի պահեստի բանակ: Այդ հսկայական բանակի անդամներն առաջարկում են իրենց ուենցած միակ ապրանքն — աշխատանքը: Նրանք չուկայ են հանում այդ ապրանքից ահագին քա-

նակութեամբ: Տնտեսական անխախտելի օրէնք է, որ երբ առաջարկը գերակշռում է պահանջից, ապրանքի գինն ընկնում է չուկայում: Այդ պատճառով կապիտալիստների համար անպայման ցանկալի է մեծացնել պահեստի բանակը, գիւղերից աւելացնել ազգաբնակութեան հոսանքը դէպի քաղաք, որպէսզի մշտապէս ունենան իրենց ձեռքի տակ պատրաստի աշխատող բազուկներ, որքան ցանկանան եւ մանաւանդ ցածր գներով:

Ուրեմն՝ պարզ է, որ բանուոր դասակարգի շահը պահանջում է բարձրացնել գիւղական ազգաբնակութեան մտաւոր զրուխլունը, տարածել կրթութիւն, գիտութիւն, կազմակերպել, ուժեղացնել աշխատաւոր գիւղացուն, դնել նրան այնպիսի վիճակում, որ նա չզրկուի իր արտադրական միջոցներից, չդառնայ «փետրած հաւ», մնայ իր արտադրական միջոցների տէրը, մի խօսքով՝ տոկուած չլինի խուժել քաղաք, աւելացնել պահեստի բանակի ծաւալը եւ կոտրել աշխատավճարի նորմը կամ չափը:

Այո՛, բանուորի եւ գիւղացու շահն այդ տեսակէտից էլ անպայման զուգընթաց են, համերաչխ: Գիւղացին, ունենալով բարօր վիճակ, հասարակական ընդհանուր եկամուտից նուազեցնում է հողատէր կամ կալուածատէր բուրժուազիայի բէնտան: Նրա ստացած բաժինն ընդհանուր եկամուտից աշխատավճարի մի տեսակէն է, տարբեր իր ձեւով, բայց բացարձակ միեւնոյնն իր էու-

թիւնով։ Թէ՛ գիւղացու եւ թէ բանուորի աշխատավճարները համեմատաբար են եւ երկուսը միասին թշնամի են ու հակադիր կապիտալիստի վաստակին ու հողատիրոջ ընտանիքին։

Ստեղծելով այս բոլոր «հակասութիւնները» բանուորի եւ գիւղացու շահերի միջեւ, Կաուցկին ձգտում է ցոյց տալ, ինչպէս վերեւում առաջ բերինք, որ գիւղացու մէջ ապրում է «երկու հոգի — պրոլետարական եւ գիւղացիական», եւ որ այդ երկու հոգին նրան դարձնում են մի երկերեսանի էակ, կրկնակի շահերի ճանկերում դեղերուող, անվերջ հակասութիւնների մէջ մաշուող։ Այս բոլոր վերլուծութեան մէջ տարօրինակ է Կաուցկու երկու տարբեր չափ ունենալը — մէկը վարձուոր բանուորի ու «բանուոր գիւղացու» համար, իսկ միւսը սեփականատէրը, բայց աշխատուոր գիւղացու համար։ Չենց որ վարձուելու մի նշան տեսնում է Կաուցկին, իսկոյն մեղմանում, քնքշանում է գիւղացու վերաբերմամբ եւ ամէն կերպ նրան պաշտպանելու հնարներ է մտածում։

«Աւելի լաւ է երկրագործական այն բանուորների դործը, որոնք ունեն նաեւ մի քիչ հող։ Այն հանգամանքը, որ նրանք ունեն սեփական հող, երբեք նրանց պրոլետարիատից բարձր չէ դնում, որովհետեւ այդ հողը լոկ մի աւելցուկ է նրանց տնային անտեսութեան, իսկ մենք արդէն տեսանք, որ ժամանակակից պրոլետարի տարբերիչ գիծը ոչ թէ սեփական գործածութեան իրերի պակասութիւնն է, այլ չուկայի համար ապ-

բանքներ արտադրելու միջոցների բացակայությունը: Ինչպէս որ հանքագործ բանուորը մընում է պրոլետար, եթէ ունենայ մի տնակ, մի կտոր հող՝ դեռնախնձոր ցանելու համար եւ մի կով, այնպէս էլ պրոլետար է մնում հողի մի պաճաճ չերեկ տէր, քանի դեռ նրա արտադրութիւնը ծառայում է միմիայն նրա անտեսութեան համար»(*):

Ուրեմն՝ եթէ մի հանքագործ բանուոր, մի երկաթուղային պահապան ունենայ մի կտոր հող դեռնախնձոր կամ ցորեն ցանելու համար, մի կով, որի կաթը գործածեն բանուորն ինքը, նրա կինն ու երեխաները,— ի հարկէ դա ոչինչ: այդ բանուորը բանուոր է, թէեւ ունի արտադրական սեփական գործիքներ, բահ, թեբեւս դուբան, սերմացու եւայլն: Բայց ենթադրենք, որ այդ բանուորը «չատակեր եւ բազմածնունդ է» Շարայի նման — ունի 8–10 երեխայ, մի պառաւ մայր, մի ծերունի հայր եւայլն, ու բաւական քանակութեամբ հող, օրինակ 6 օրավար, որը տալիս է այնքան արդիւնք, որով կարելի է կերակրել հաղիւ եօթը մարդ, իսկ մնացած եօթի համար էլ այդ մարդը վարձուել է բանուոր: Ի հարկէ 6 օրավար հողը մշակելու համար անհրաժեշտ է արօր, դուբան, մի երկու լուծ եզ կամ դոմէշ, մի խօսքով՝ սեփական արտադրական միջոցներ: Այդքան մարդու համար անհրաժեշտ է մի քանի կով

(*) «Ագրարական հարցը», նոյն, էջ 15:

ու ոչխար՝ կաթի, մածնի, իւղի ու պանրի համար: Եւ ահա ձեզ մի տնտեսութիւն, գիւղացիական մի բաւական խոշոր տնտեսութիւն: Ի՞նչ է այդ պահապանը — բանուո՞ր, թէ գիւղացի: Կաուցկին թերեւս տատանուի դրան որեւէ վճռական պատասխան տալ, որովհետեւ «գետնախնձոր ցանելու համար» յատկացուած նրա «մի կտոր հողը» մենք մեծացրինք, դարձրինք 3 հեկտարից էլ մի քիչ աւելի — 6 օրաւար, որովհետեւ աւելացրինք եւ նրա ընտանիքի անդամների — ուտող բերանների թիւը: Մի կովը դարձրինք մի քանի կով եւ ոչխար...: Մի խօսքով, մենք քանակն աւելացրինք, բայց որակը նոյնը թողինք. այդ բոլորը ծառայում են լոկ այդ մարդու խոշոր ընտանիքի գործածութեան համար եւ ոչ չուկայ հանելու, ծախելու համար:

Այս դէպքում պահապանն ստանում է աշխատավճար, հնչուն դրամ, որով կարող է առնել իր զաւակներին կօշիկ, զգեստ, դասագիրք եւայլն: Բայց երեւակայենք, որ դրամի կարիքը նեղում է նրան. փողը բաւական չէ այս ամիս, որովհետեւ մի երեխան հիւանդացաւ. բժիշկ, դեղ եւայլն, պակասեցրին նրա ողորմելի բիւդջէից, օրական՝ 5 ռուբլի: Ի՞նչ անել: Ընտանիքն իրեն զրկում է. կաթ չէ խմում, մածուն չէ ուտում. մնում է չոր հացի կտոր, օրինակ, երկու ամիս, եւ այդ ժամանակամիջոցում իր ունեցած կաթն ու մածունը հանում է չուկայ, վաճառում եւ 5 ռուբլին, որ պարտք էր վերցրել, եւ նրա մի ռուբլի տոկոսը

լրացնում, պարտքից ազատում:

Այդ է աշխատասեր գիւղացիութեան տնտեսութեան ընդհանուր պատկերը: Դրանից բարձր կանգնած տնտեսութիւնները դժուարութեամբ կարելի է ասել «աշխատաւորական» տնտեսութիւն: Երբ արդէն 5 եւ աւելի հեկտար հող ունի գիւղացին, նա կամաց-կամաց սկսում է մշակները, հնձուորները, հօտաղները բանեցնել, դառնալ գիւղական բուրժուա, անցնել կեղեքողների դասակարգը: Իսկ մինչ այդ, քանի դեռ նա աշխատասեր գիւղացի է, նա արտադրում է իր աշխատանքով եւ իր արտադրածի ամենախոշոր մասն ինքն է գործածում, իսկ մի չնչին մասն, ստիպուած կամ հարկերից, կամ իր արտադրական ուժից դուրս գործածական արժէքների կարիքից, հանում է վաճառքի, յաւելեալ արժէք տալիս կապիտալիստ գնողներին, դրամ դարձնում է եւ ապա այդ դրամով հարկերը վճարում, կօշիկ ու զգեստ առնում իր ընտանիքի գործածութեան համար: Վաճառելը նրա տնտեսութեան մի լրացուցիչ մասը, էական նշանակութիւն չունեցող մի պոչն է կազմում, ինչպէս գիւղական կիսապրոլետարի կամ հանքագործ բանուորի մի չնչին չերտ հողը, իր զաճաճ տնտեսութիւնը:

Զարմի այդ երկուութիւնը հասնում է մինչեւ այն աստիճանի, որ Կաուցկին դառնում է անսիրտ, դաժան, դէպի գիւղացին: Եթէ նոյնիսկ գիւղացու հողը, նրա տունը, գործիքներն ու անասունները լինեն գրաւում, պարտքի տակ, չի

վայելի կառուցիւռ պաշտպանութիւնն ու համակրանքը, որովհետեւ նա կատարում է ձեռնարկողի համ գործառիրոջ ֆունկցիա (դեր) եւ, իբր այդպիսին, հակադրութեան մէջ է գտնւում պրոլետարիատի հետ, ինչպէս եւ գործարանատէրը, որ գործը վարում է պարտք վերցրած կապիտալով: Ուրեմն բոլոր հողն ու անասուններըը պարտքի մէջ թաղած գիւղացին նմանեցւում է մի կապիտալիստի, որը տոկոսներ է վճարում իր փոխառած կապիտալի համար:

Քննենք այդ համեմատութիւնը:

Մենք արդէն վերեւում մի անգամ ասացինք, որ գործատէրը, վերցնելով բանկիրից դրամ, ձեռնարկում է որեւէ գործի՝ վարձու բանուորներ բանեցնելով. նա առնում է դրանց յաւելեալ արժէքը, նրանից մի խոշոր մաս հանում բանկիրին, մի մասից էլ սովորական բաժիններըը տալիս պետութեան ու, թերեւս, կալուածատիրոջը, իսկ յաւելեալ արժէքի մի մասն էլ մնում է իրեն: Այս վերջին մասը կարող է լինել շատ, հարստացնել ձեռնարկողին, ազատել նրան պարտքից, դարձնել ինքնուրոյն. սակայն նա կարող է լինել եւ փոքր, հազիւ ձեռնարկողին ապրելամիջոց մատակարարող: Ինչ էլ որ լինի, նա չէ կարող լինել բացարձակ վնասաբեր, որովհետեւ, այդպիսի դէպքում, իսկոյն ձեռնարկողը կը անհետանայ. գործից կը քաշուի, դուրս կորզելով դրամագլուխից այնքան, որքան՝ հնարաւոր է: Երկու դէպքում էլ ձեռնարկողը հանդիսանում է յաւելեալ

արժէք իւրացնող, եւ այն էլ՝ յատկապէս իր բանուորների յաւելեալ արժէքը:

Պարագայով կարող է մի այլ ձեռնարկող վերցնել որեւէ կալուածատիրոջ, որեւէ լենդ-լորդի հողը կապալով, վարձել մշակներ ու բանուորներ եւ մշակել հողը, ստանալ վարձուորներից յաւելեալ արժէք, բաժանել իր, պետութեան, կալուածատիրոջ, նոյնպէս եւ բանկիրի միջեւ: Իր բաժինն այս դէպքում էլ կարող է լինել շատ կամ քիչ, բայց ղրանից ձեռնարկողի, կապալառուի էութիւնը չի փոխուի. նա միշտ կը լինի իր շահերով հակադիր իր մշակներին: Որքան քիչ վճարէ իր բանուորներին, այնքան իրեն ձեռնտու է, որքան նրանց երկար եւ ինտենսիվ (սաստիկ) աշխատեցնէ, նոյնպէս ձեռնտու է իրեն, որովհետեւ վաստակը կը բարձրանայ, աշխատավճարը մնալով նոյնը: Ինչ ասել կ'ուզէ, որ գործարանատէր կապիտալիստը, որ իր դրամը փոխ է առել բանկերից տոկոսով, նոյնպէս հակադիր է իր բանուորներին ճիշդ այդ մտքով. որքան իր բանուորների աշխատավարձը պակասեցնէ, այնքան իր վաստակը կ'ածի:

Վերցնենք այս երկու տեսակի ձեռնարկողից որը կ'ուզէք եւ համեմատենք դիւղացու հետ: Սկսենք ուղղակի չահերի հակադրութիւնից: Ձեռնարկողը — թէ՛ կապալառուն, թէ՛ գործարանատէրը, ձգտում են պակասեցնել իրենց բանուորների աշխատավարձը. իսկ դիւղացին ո՞ւմ աշխատավճարն է նուազեցնելու, որ իր, ըստ կաուց-

կու, այդ «Unternehmer»ի կամ ձեռնարկողի վաստակն աւելանայ:

Այստեղ կապիտալիստն ու բանուորը նոյն անձերն են: Դուրս է գալիս, որ գիւղացին ձգտելու է նուազեցնելու իր սեփական աշխատավարձը, որպէսզի իրեն ղրկէ, հարստացնելու համար ձեռնարկողին — կրկին իրեն: Ուրեմն՝ գիւղացին պակասեցնում է իր սեփական աշխատավարձը: Ահա այն անմտութիւնը, որին հասնում է մարդկային տրամաբանութիւնը, քննելով կառուցկու յառաջադրած առաջին թեզը:

Կայ մի ղրկողութիւն այդտեղ, այո՛, բայց այդ ղրկանքը պարտադրւ է կրել գիւղացին, եթէ ոչ կայ օրէնք, կայ բանտ, կայ նրա հողի, տան, անասուններուի ղրաւում: Չէ՞ որ ժամանակից պետութիւնը կարողաւորների — կապիտալիստների եւ կալուածատէրերի պետութիւն է: Այդ բանը վաղո՛ւց նկատել է Ադամ Սմիթը, բուրժուական քաղաքատնտեսութեան հիմնադիրը, եւ արտայայտել է չափազանց կծու ձեւով. «Ամէն տեղ, ուր օրէնսդրութիւնը ձգտում է կանոնաւորել բանուորների եւ նրանց տէրերի տարաձայնութիւնները, ամէն տեղ նա ունեցել է իբր խորհրդակից՝ տէրերին»: Մեզ հետաքրքրող դէպքում օրէնքն իսկոյն իրաւունք է տալիս վաշխառուին, ոստիկաններ է ուղարկում կամ գիւղացու կալուածը ծախում, վաշխառուին տալիս իր ղրամը կամ կալուածը յանձնում վաշխառուին: Երկու դէպքում էլ ղրկւում է գիւղացին մնում «ազատ»

արտադրական միջոցներից, «ազատ՝ ասվից մեռնելու»: Ահա այդ վիճակին չընկնելու գօրեղ ցանկութիւնն է, որ ստիպում է գիւղացուն ղրկել երեն, զաւակներին, կէս-կուչա մնալ, ոտաբոպիկ, կիսամերկ... եւ հասցնել վաչխառուի տոկոսները եւ, եթէ հնարաւոր է, ղրամագլխից էլ մի մաս պակասեցնել: Այստեղ գիւղացին հանում է ինքնիրենից, բռնութեամբ, չատ աւելի խոշոր յաւելեալ արժէք, քան բանուորը, եւ լցնում վաչխառուի գրպանը: Դժբախտութիւնը հենց նրանումն է, որ այդ ինքնազրկման գործն արտաքուստ ազատ կեղեւ ունի, թւում է մի կամովին վարմունք... բայց դա բռնութիւնների գերագոյնն է, որովհետեւ հնար չէ տալիս գէթ բողոքելու, պոռալու: Գոնէ բանուորն այդպիսի բռնութեան պահուն կարող է գործադուլ անել, մի ուրիշ գործարան չուել...

Անցնենք երկրորդ կէտին: Ձեռնարկողը հակադիր է պրոլետարին, որովհետեւ նա ձգտում է երկարացնել աշխատանքի ժամերի թիւը,— աշխատեցնել միանակ բանուորի համար ցանկալի 8 ժամին, 12, 13, նոյնիսկ 14-15 ժամ, որպէսզի իր վաստակն աճի, աշխատավճարը մնալով նոյնը: Բացի դրանից, նա Արդոսի աչքերով հետեւում է բանուորին, որ վերջինս մի րոպէ անգամ անգործ չմնայ, ինչպէս ասում են, «քիթ սրբելու ժամանակ չէ տալիս», ու աշխատանքն էլ հրամայում է կատարել արագ, ուժով, խստօրէն կամ, օտար բառով ասենք,— ինտենսիվ:

Այժմ զործադրենք այդ բանը գիւղացու վերաբերմամբ։ Այստեղ կայ մի մարդ-գիւղացին, ե՛ւ տէրը, ե՛ւ ծառայ։ Այնտեղ կայ մի ենթակայ-ձեռնարկողը, մի հատ էլ առորագրեալ, որի կաչին քերթելով, որին երկար ու ինտենսիվ աշխատեցընելով, ենթական — տէրը՝ աւելացնում էր իր վաստակը։ Իսկ այստեղ կայ մի մարդ. նա ո՞ւմ ժամերն է երկարացնելու, ո՞ւմ է ստիպելու կաչուից դուրս գալ, «քիթ սրբելու ժամանակ» չկորցընել... ինքն իրե՞ն։ Ուրեմն կրկին հասանք նախընթաց անմտութեանը, գիւղացին կեզեքում է ինքնիրեն, զրկում է ինքնիրեն, հալումաշ է անում ինքնիրեն, որպէսզի, ըստ Կաուցկու տրամաբանութեան, իրը «Unternehmer», իրը ձեռնարկող, հարստանայ։ Չէ՞ որ ամէն մի ձեռնարկողի միակ իղձալն է հարստանալ, խլելով բանուորներից որքան կարելի է մեծ յաւելեալ արժէք։

Ո՛չ, գիւղացին, որ ընկել է պարտքի տակ, որ «իր բերանից կտրում» ու տոկոսներ է վճարում վաչխառուին, ոչնչով, բացարձակ ոչնչով նման չէ ձեռնարկողի՝ ոչ զործարանական տապարէզի, ոչ էլ կապալառուական տապարէզի վրայ զործող։

Ակամայ միտքս են գալիս Ֆ. Լասալի խօսքերն, ուղղած Շուլցէ Դելիչին. «Եւ այնուամենայնիւ, Պր. Շուլցէ, ձեր սեփական զգացմունքը ձեզ թոյլ չի տայ կոչելու այդ հնդիկին (որ ունի տէզ, նիզակ, նետ ու աղեղ, մի խօսքով՝ որսորդի բոլոր արտադրական միջոցները) կապիտա-

լիատ»(*)։ Եւ այնուամենայնիւ, Պր. Պր. Կաուցկի եւ հետեւորդները, ձեր սեփական դպացմունքը, ձեր խիղճը ձեզ թոյլ չի տայ այդ գիւղացուն անուանել կապիտալիստ, որովհետեւ նա ունի արտադրութեան սեփական միջոց, թէեւ պարտքի տակ, թէեւ գրաւի մէջ. միջոցները, որոնք, ինչպէս մենք ապացուցինք, ձեր ուսուցիչների վկայութեամբ իսկ կապիտալ չեն։

Գիւղացու եւ բանուորի վիճակների բարեխիղճ եւ անկաշառ ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ երկուսն էլ կեղեքւում են կապիտալի ձեռքով, որ այդ երկու՝ ձեւով միայն իրարից զանազանուող աշխատաւորական չերտերի չահը մէկ է եւ հակադիր մերթ կապիտալիստների, մերթ կալուածատէրերի չահերին աւելի խոշորին, իսկ միշտ կանգնած է այդ երկու կեղեքողների չահերի դիմաց. որ գիւղացու եւ բանուորի եկամուտների յաւելումը կատարւում է անպայման ի վնաս կապիտալի վաստակի եւ հողի րէնտալի, իսկ վերջիններիի եկամուտի յաւելումը, ընդհանրապէս միշտ ունի իբր հետեւանք, բանուորի եւ գիւղացու աշխատավճարի նուազումը։

Այդ բոլորն աչքի առաջ է ունեցել Կ. Մարքսը, երբ «Կապիտալ»ի Գ. հատորում ասել է, հակառակ Կաուցկու, Պլեխանովի, Լենինի եւ ուրիշների. «Ինչպէս տեսնում էք, գիւղացու չահագոր-

(*) Ֆ. Լասսալ — «Գործերի ժողովածուն», Գ. հատոր, էջ 158 (ռուսերէն)։

ծումը միայն իր ձեւովն է տարբերում բանուորի չհատուցծումից։ Թէ՛ մէկին եւ թէ միւսին չհատուցծողը մեւնոյնն է — կապիտալիստը»։ Եւ իբր միջոց գիւղացուն այս վիճակից փրկելու, նա առաջարկում է հետեւեալը. «Միայն կապիտալի անկումը կարող է բարձրացնել գիւղացու վիճակը»։

Ի՞նչ ասել է «կապիտալի անկում». մի՞թէ դա կը նշանակէ վերացնել, ոչնչացնել «այն բոլոր արժէքները, որոնք արտադրուած են մարդկային աշխատանքով եւ գործադրւում են նոր արժէքներ արտադրելու համար»։ Մի՞թէ այդպիսի անմտութիւն կարող է ցանկալ ոեւէ տնտեսագէտ, այլ ոեւէ մարդ, որը դեռ չէ խենթացել։ Դա կը նշանակէր սուված կոտորել մարդ արարածին, կամ ստիպել նրան վայրենանալ, դառնալ խոտաճարակ։ Այո՛, եթէ ամէն մի արտադրական միջոց կապիտալ է, ուրեմն Մարքսի այդ բառերը պիտի այդ միտքն ունենան։

Ո՛չ, այդ չէ Մարքսի քարոզածը. «կապիտալի անկում» ցանկալ, կը նշանակէ ցանկալ ներկայ բաշխման ոչնչացումը եւ ներկայ հասարակական, համայնական աշխատանքի ընդլայնումը, բոլոր արտադրական միջոցների համայնացումը, ի հարկէ հողն էլ համարելով «դուռ արտադրական միջոց», կը նշանակէ համայնական արտադրութիւն եւ հարստութիւնների կազմակերպուած բաշխում բոլոր աշխատողների մէջ։ Իսկ այդ ձգտումը չէ ենթադրում ոչ մի չաշխատող, ոչ մի յաւելեալ

արժէքով ապրող, ոչ մի պարապիտ (պոլտաբոյծ) անձնաւորութիւն:

Վերեւում առաջ բերած բոլոր փաստերի ու դատողութիւնների վրայ յենուած, մենք ղէմ ենք կանգնում Կաուցկու ասածին, թէ «երկու հոգի կայ մանր գիւղացու մէջ»: Վերեւում մենք այդ ֆրազն առաջ բերելով, ասացինք, որ մտենում ենք Կաուցկու տեսակէտի ամենահիանդ կողմին:

Քննենք այդ վերջին կէտն էլ:

Իր սեփական աշխատանքով ապրող եւ իր ունեցած աշխատաչափ հողով բաւականացող գիւղացին Կաուցկու համար մի «unternehmer» — մի ձեռնարկող է, մի կապիտալիստ, որի արտադրական միջոցները դրաւի մէջ են պարտքի փոխարէն՝ թէ ոչ, դա մեւնոյնն է սկզբունքի տեսակէտից: Այդպիսի աշխատաւոր գիւղացուն Կաուցկին դնում է «մէջին դասակարգի» մէջ, այսինքն՝ համարում է բուրժուա: Ի՛նչ ասել կ՚ուզէ, որ այդ գիւղացին մի հատիկ հոգի ունի իր մէջ — բուրժուական, պահպանողական, մանր սեփականատիրական մի հոգի, որն անընդունակ է ըմբռնելու սոցիալիստական վարդապետութիւնը, նրա մանր բուրժուական չահերը նրան չղթայում են իր մի կտոր հողին, որ նա միշտ յոյս ունի մեծացնել, դառնալ խոշոր գիւղացի, բանեցնել ուրիշ բանուորներ... Ահա Կաուցկու մտածելակերպն աշխատաւոր գիւղացիութեան մասին:

Իսկ մանր գիւղացին, որի ունեցած զաճաճ հողաչերտն իրեն դարձրել է կէս-գիւղացի, կէս-

վարձու բանուոր, — այդ մանր գիւղացին, ինչպէս տեսանք, կաուցկու կարծիքով, ունի երկու հոգի — գիւղացիական կամ բուրժուական եւ վարձուորական կամ պրոլետարական: Դրանից առաջինը միշտ ձգտում է դէպի յետ, դէպի միջնադար, միշտ երազում է չատացնել իր հողը, դադարել վարձով աշխատելուց, դառնալ միջին ու խոշոր հողատէր: Այդ հոգին դէմ է սոցիալիզմի, նա անընդունակ է ըմբռնել սոցիալիզմը, մտածել սոցիալիստօրէն: Նա միշտ կը գնայ պահպանողական, նոյնիսկ յետադէմ տարրերի եռեւից, կը կազմէ նրանց զօրավիգը, նրանց յենարանը: Եւ յիրաւի՝ մանր ու միջակ աշխատաւոր գիւղացիութիւնն է պրուսական իւնկերների, ագրարական կուսակցութեան, կենտրոնի կղերա-բուրժուական կուսակցութեան բանակը: Իսկ նրա երկրորդ հոգին պրոլետարական է, ընդունակ թռիչքներ գործելու, ընդունակ ըմբռնելու ապագայ հասարակարգը, ընդունակ սոցիալիստի պէս մտածելու: Այդ ոգին անպայման յառաջդիմական է, նոյնիսկ յեղափոխական, որովհետեւ պրոլետարիատի շահերը պահանջում են դասակարգերի վերացում, անդասակարգ կամ ապադասակարգ մի հասարակութեան ստեղծում, որի մէջ բոլորը լինեն աշխատող, իսկ արտադրական բոլոր միջոցները պատկանեն ընդհանրութեան: Այդ ոգին դէմ է բոլոր յետադէմ ու պահպանողական կուսակցութիւններին: Պրոլետարիատը՝ կազմում է սոցիալիստական կուսակցութիւնների հիմքը, նը-

բանց յենարանն ու նրանց մարտնչող բանակը:

Աւելորդ է ասել, որ քաղաքի եւ գիւղի պրոլետարիատն առհասարակ մի հոգի ունի, հակադիր գիւղացու պահպանողական, մանր-սեփականատիրական հոգուն:

Պարզ է, ի հարկէ, որ «երկու հոգի» ասելով, Կաուցկին հասկանում է սեփական դասակարգային չահի երկուութիւնն եւ ոչ իսկական երկու հատ հոգի մի մարմնի մէջ:

Հոգիների այդ բաժանման ու ատիճանաւորման հիմքը կազմում է հետեւեալը. «...Ձկայ ոչ մի դասակարգ, բացի պրոլետարիատից — այսինքն՝ վարձու բանուորներից, որը հետը հաչուած ամենամանր գիւղացիները, արհեստաւորները եւ մանր անձնագործները, — որն իր եկամուտի գէթ մի մասն ստանալիս չլինի ուրիշներին կեղեքելու չնորհով, որը չհագեցուած չլինի որեւէ տեսակի կեղեքումով ու ճնշումով»(*):

Մենք արդէն տեսանք, որ իր սեփական արտադրական միջոցների տէր գիւղացուն, որի համար իր հողն էլ «զուտ արտադրական միջոց է», այդ գիւղացուն Կաուցկին, անուանելով կապիտալիստ, դուրս է հանում պրոլետարիատի ցանկից: Տեսանք արդէն, որ նրա բերած բոլոր հիմքերը սխալ են, հիմնովին սխալ. նրանք բնաւորոշ չեն եւ չեն կարող ծառայել իրը հիմք իրար հակադիր չահերի տէր հրատարակելու բանուորին և

(*) «Դասակարգային չահերը», էջ 13:

աշխատաւոր գիւղացուն: Բացի այդ, մենք տեսանք, որ այդ խնդրում կաուցկին հանդիսանում է հակառակ կարծիքների տէր Մարքսի ու Լասալի հետ, որոնց տեսակէտը թէ՛ կապիտալի, թէ՛ արտադրական միջոցների եւ թէ առուծախի հարցերում միանգամայն գիտական եւ խորաթափանց է:

Հիմնուելով իր սխալ ելակէտի վրայ, կաուցկին անընդունակ է համարում աշխատաւոր գիւղացիութիւնն ըմբռնելու սոցիալիստական սկզբունքները, հետեւելու այդ վարդապետութեանը, նրա համար մարտնչող մի բանակ կազմելու՝ բանուորութեան հետ միասին: Այդ դեռ քիչ է. նա ընդունում է երկու հոգի կիսապրոլետար, սակաւահող գիւղացու մէջ, բայց չէ կարողանում իր այդ միտքը մինչեւ վերջը պաշտպանել եւ նրան հրատարակում է մի դասակարգ պրոլետարիատի, մանր արհեստաւորութեան եւ մանր ապրանքագործների հետ միասին:

Ուրեմն, երկու տեսակէտների տարբերութիւնը որոշ է, արեւի լոյսի պէս պարզ. մէկն ասում է, որ աշխատաչափ հող ունեցող գիւղացին կապիտալիստ է. միւսն ասում է, որ նա աշխատաւոր է, բանուոր դասակարգի միայն մի մասը, որի կեղեքումը տարբերւում է միայն իր ձեւով: Դրանից անմիջապէս հետեւում է, որ գիւղացին (աշխատաւորը) իբր դասակարգ, չէ կարող լինել հետեւորդ սոցիալիզմի, ասում է առաջին կարծիքը. նա կարող է լինել հետեւել սոցիա-

լիստական վարդապետութեան, իր ուսերի վրայ տանել այդ ցանկալի ապագայի համար մղուող մարտը, մտածում են երկրորդ տեսակէտն ունեցողները:

Առաջին տեսակէտն ամրացնելու, նրա ճշմարտութիւնն ապացուցանելու նպատակով, Կաուցկին ասում է, որ կապիտալիզմը քաղաքում եւ առհասարակ ճարտարարուեստի մէջ հաւաքող դեր է կատարում. նա միախմբում է բանուորներին, իրար մօտեցնում, նրանց աշխատանքը դարձնում համայնական կամ հասարակական, բաշխումը թողնելով անհատական. նա մայրն է ներկայ հըսկայական քաղաքների: Իսկ գիւղո՞ւմ:

«Այլապէս է ներգործում կապիտալիզմը գիւղի վրայ: Այստեղ նա չէ միացնում, այլ ցրւում է մարդկանց: Նրա զարգացումը, որոշ աստիճանի հասնելով, ոչ միայն համեմատաբար, այլեւ բացարձակ կերպով նուազեցնում է գիւղական ազդաբնակութիւնը: Կապիտալիստական զարգացումը գիւղից դուրս է քաշում հենց ամենագործունեայ, եռանդուն եւ ինտելիգենտ տարրերը, թողնելով այնտեղ ամենաթոյլերին եւ անօգնականներին: Գիւղի դատարկման հետ միատեղ ընթանում է նրա մտաւոր անկումը»(*):

Այդ ճեւի դատողութիւնը ծառայում է Կաուցկու ձեռին իրը ապացոյց այն բանի, որ գիւ-

(*) Կ. Կաուցկի — «Ագրարական հարցը», էջ 14:

ղում պրոպագանդ մղելը դժուար է, որովհետեւ չկան ընդունակ տարրերը, չկայ մտաւորականութիւն: Ամէն մի ընթերցողի համար ակներեւ է, որ կառավկին այդ հարցում ընկնում է «դոգմայի» (հաւատամքի), իր վարդապետութեան կանխակալ ներչնչմանը եւ ուռեցնում, մեծացնում է կեանքի երեւոյթները: Կապիտալիզմը ներս է թափանցում գիւղ կրիայի քայլերով: Ոչոր հողատիրութիւնը դեռ եւս չի կարողանում մրցել մանր հողատիրութեան հետ: Մանր հողատէրը գիւղացիութիւնն անպայման հանդիսանում է ընդունակ տարր գիւղական պրոլետարիատի հետ միասին կազմակերպուելու: Կասկած չկայ, որ թէ՛ գիւղացու եւ թէ գիւղական բանուորութեան երկրագործական զրաղումները հանում են մեծամեծ դժուարութիւններ ժողովների, դասախօսութիւնների պրոպագանդի եւ կազմակերպութեան համար: Անվիճելի է նոյնպէս, որ ինդուստրիական բանուորը, իր մղած աշխատանքի, իր գործիքների ու իր չարժած մեքենայի չնորհով, իրեն ըզգում է հրամայող բնութեան, նրա դէմ կռուող. նա վստահութիւն է ձեռք բերում թէ՛ անհատապէս իր ուժերի եւ թէ մանաւանդ՝ իր նմանների համայնական միահամուռ կազմակերպական ուժի վրայ: Այդպէս չէ գիւղացին: Նա յաճախ խաղալիք է բնութեան տարերային ուժերին ձեռքին. նա թէ՛ իրեն եւ թէ իր բոլոր նմաններին համարում է անուժ, ողորմելի գործիք բնութեան ձեռքին... կարկուտ, անձրեւ, քամի, չորութիւն —

նրա տէրն են, նրան տարկացնողները:

Ճշմարիտ է, շատ աւելի դիւրին է կազմակերպել քաղաքներում կենտրոնացած հսկայական բանուոր զանգուածը, քան գիւղերի անհուն դաշտերում ցրուած նրանց եղբայրներին, — բոլոր տեսակի աշխատաւոր գիւղացիներին: Բայց մի՞թէ դժուարութիւնը մի որեւէ սկզբունքային հարց է.— ամենեւին: Նա քանակի խնդիր է եւ ոչ որակի: Դժուար է նրանց կազմակերպելը, այո՛, ճշմարիտ է, բայց ոչ անհնարին. չկայ չհաղթի որեւէ հակադրութիւն, որը չթոյլատրէր գիւղացուն եւ բանուորին կազմակերպուել միասին, միեւնոյն սկզբունքներով՝ վարելու կռիւ միեւնոյն վերջնանպատակի, միեւնոյն իդէալի համար:

Կառուցկին ծայրայեղօրէն թերահաւատ է դէպի գիւղը եւ նրա յառաջդիմութիւնը: Թէ՛ դրսորոցական գործի եւ թէ հողագործական միջոցների զարգացումը, որոնք հնար են տալիս այնտեղ ներմուծել գրքեր ու լրագրեր, շատ սակաւ են օգնում գործին: Եւ դիտե՞ք ինչու, որովհետեւ գիւղացիները կարդում են վատ գրքեր, վատ լրագիրներ, որոնք քարոզում են ծայրայեղ յետադիմութիւն, որոնք չեն լուսաբանում ներկայի հարցերն այնպէս, ինչպէս որ հարկաւոր է: Որովհետեւ «վազուց անցած դարերի արդիւնք Աստուածաշունչի հետ միասին, նրանց համար ընթերցանութեան նիւթ են ծառայում ամենավատ տեսակի փողոցային վէպերը, որոնք ներկայացնելով իրականութիւնն աղաւաղուած ձեւով, չափազանց վը-

նասակար եղրակացութիւններէ են յանգեց-նում»(*):

Այդ ասելով, կարծես թէ կաուցկին գանում է դա գիւղացու էութեան հետ կապուած մի երե-ւոյթ: Բնական է, երբ կաուցկին եւ ուրիչ ուղղա-փառները, հակառակելով Վոլմարի եւ ուրիչների խորհուրդին, չեն ուզում գործել գիւղում, չեն ուզում կազմակերպել այդ «մանր բուրժուանե-րին», չեն ուզում նոյնիսկ որեւէ պաշտպանու-թիւն ցոյց տալ նրանց պարլամենտներում(**), բնական է, ասում ենք, որ գիւղը կը մնայ լայն ասպարէզ քահանաների, հոգեւորականների, ազ-բարների եւ այլ տեսակի ամենագարշելի տարրե-րի, որոնք ուժ կը տան իրենց Աստուածաչունչին, Սաղմոսին, հաւատարմութիւն եւ հնազանդութիւն քարոզող վէպերին: Այո, «Kreutz-Zeitung»ի, «Reichsbote»ի եւ «Kölnische Zeitung»ի նման խաւարամիտ, բորբոնած ուղղութեան եւ դեռ ա-ւելի լրբենի օրգանների: Մտէք այնտեղ, տարա-ծեցէք ձեր գրքերը, ձեր թերթերն ու հրատարա-կութիւնները, կազմակերպեցէք գիւղացուն գա-սակարգօրէն, որպէսզի նա, ձեռք ձեռքի տուած բոլոր աշխատաւորական տարրերի հետ, մար-տընչէ յանուն հաւասարասէր կարգերի, յանուն

(*) Կ. կաուցկի — նոյն, էջ 14:

(**) Տես կաուցկու «Arbeiterschutz und Bauer-schutz» յօդուածը:

համայնական արտադրութեան եւ կազմակերպուած, արդար բաշխման: Դժուար է այդ ամէնը, բայց ոչ անհնար. սկզբունքային արգելք չկայ: Երբ մի անգամ արդէն չահերի հակամարտութիւն չկայ, մնում է գիտակցութիւնը, մնում է, որ բոլոր միատեսակ չահեր ունեցողները կամ, աւելի շուտ, հնարաւորութեան մէջ եղողները՝ գիտակցեն այդ երեւոյթը, հասկանան իրենց չահերը: Եահ ասուած բանը բացարձակ օբեկտիւ կամ առարկայական երեւոյթ է, իսկ նրա գիտակցութիւնն անձնական կամ սուբեկտիւ է: Ո՞րն է այդ երկուսից աւելի կարեւոր — արտաքին, առարկայակա՞նը, օբեկտի՞ւը, թէ ներքինը, սուբեկտիւը: Դասակարգային կուռւ տեսակէտից՝ երկուսն էլ հաւասարապէս անհրաժեշտ են: Երկար դարեր իրար եռեւից գոյութիւն են ունեցել բռնաբուկներ ու ճորտեր, որոնց ամենագռեհիկ ձեւով կեղեքել են իրենց տէրերը, բայց բողոքող չէ եղել կամ եղել է հատ ու կտոր, անկազմ, անգիտակցօրէն: Ձեն եղել այն բոլոր օբեկտիւ պայմանները, որոնք հնարաւոր դարձնէին չահերի ներքին խոր հակասութիւնն ըմբռնել. որ ըտիպէին մարդկանց մտածել, տեսնել այդ տընտեսական, կրօնական ու քաղաքական դաղանիքները, բայց անէին աստուածների դաղանիքը. բռնոյականութեան, հայրենիքի, բնական դիրքի եւ այլ այդպիսի սրբագործուած բառերի երեսից պատռէին դիմակը եւ մերկացնէին անտեսական ու բարոյական չահագործման իսկական պատկե-

րը: Լինում էին փայլուն, հանճարեղ անհատներ, որոնք պարզ ըմբռնում եւ գիտակցում էին այդ ե-րեւոյթները: Այդպէս էին Սպարտակը հին դարե-րում, Թոմմաս Միւնցէրնը, Լէյդենցի Ցովհան-նէս դերճակը եւ շատ ուրիշ յայտնի եւ անյայտ մնացած անուններ. նրանք առեղծեցին երբեմն չնչին, երբեմն էլ աչխարհաշարժող շարժումներ — ստրուկների ապստամբութիւնը Հռոմում եւ Սի-կիլիայում, գիւղացիական շարժումները Գերմա-նիայում, Ժաքերի շարժումը Ֆրանսիայում, Լո-լարդներինը եւ Լաւելերներինը Անգլիայում եւայլն: Բայց գիտակցութիւնը չտարածուեց, չընդ-գրկեց ամբողջ դասակարգեր, որովհետեւ օբեկ-տիւ պայմանները դեռ չէին հասունացել: Եւ այ-սօր ո՞րն է դրանցից կարեւորագոյնը: Մենք կըրկ-նում ենք՝ երկուսն էլ, առանց մէկի՝ միւսը ո-չինչ է:

«Պրոլետարիատը հզօրագոյն դասակարգն է, ասում է Կաուցկին, (ի հարկէ իր թուով, կ'ա-սենք մենք): Դեմոկրատական արդիւնաբերական մի երկրում նրա յաղթանակը ապահովուած կը լինի այն վայրկեանին, երբ նրան կը յաջողուի զարթեցնել դասակարգային գիտակցութիւնն իր բոլոր դասակարգային ընկերների մէջ եւ յետ պա-հել, չթողնել նրանց զնալու բուրժուական կու-սակցութիւնների եաեւից»(*):

Մենք դիտմամբ ստորագծեցինք այդ բառե-րը: Դասակարգային կռուի տեսակէտից կարեւո-րութիւն ունեցողը գիտակցութիւնն է, սուբեկտիւ

տարրը. եթէ ոչ օբեկտիւ տարրը, այս կամ այն ձեւով, գոյութիւն ունեցել է ահա 3000 երկա՛ր տարիներ է: Նա կայ այսօր եւ կայ վերին ատիճանի յաջող, ձեռնտու կերպով, որպէսզի բոլոր հնարքներն ու արտաքին յարմարութիւնները տայ գիտակցութեան զարթնելուն, օրինակ՝ Գերմանիայում, Բելգիայում, Ֆրանսիայում, Աւըստրիայում, Անգլիայում, ուր մեծ քաղաքներն իրենց հսկայական մարդկային կուտակումներով կամ ագլոմերատներով, ուր խոշոր ճարտարարուեստը, հսկայական թիւ ներկայացնող բանուոր դասակարգը, մի խօսքով՝ ուր ամէն ինչ կայ, գոյութիւն ունի դասակարգային պայքարի յաջող ընթացքի համար. պակասում է տակայն մի բան — գիտակցութիւնը: Աշխատաւորական տարրերին պէտք է բերել գիտակցութեան, պէտք է կազմակերպել, պէտք է կորզել նրանց լիբերալների, խաւարամիտների, քրիստոնեայ կոչուած սոցիալիստների, ագրարների, «հայրենասէրների» բանակներից. պէտք է աշխատաւորական երկու խոշոր շերտերը — գիւղացիութիւնն ու բանուորութիւնը միատեղել, դարձնել մի գիտակից բանակ, դասակարգօրէն կազմակերպուած եւ դասակարգօրէն պայքարող:

Երբ արտադրական խոշոր միջոցները կը զարգանան այնքան, որքան հնարաւոր կը դարձնեն համայնական աշխատանքով կատարել այնպիսի նախագծուած, գիտակցօրէն ծրագրուած արտա-

---

(*) «Դասակարգային շահերը», էջ 12:

դրութիւն, որ լիապէս բաւականացնէ գոյութիւն ունեցող հասարակութիւնը. երբ աշխատաւորութեան կազմակերպութիւնը, դրա հետ միաժամանակ ու զուգընթացաբար, իր գրկից կը սաեղծէ ապագային հիմք ծառայող արհեստակցական միութիւնները կամ սենդիկաները, արտադրական ու սպառողական խոշոր միութիւնները, որոնց միահամուռ գործակցութիւնը կը նախապատրաստէ աշխատաւորութեանը ներկայի մանաւոր սեփականատիրական կարգերից անցնել համայնական կարգերին,— այն ժամանակ հարցը հասունացած կը լինի. հասարակութեան «կապիտալիստական չրջաթաղանթը կը պատռուի, ջարդուիրշուր կը լինի: Կը նշանակէ՝ հնչել է կապիտալիստական սեփականութեան ժամը: Ուրիչներին սեփականազրկողները, իրենց կարգին, սեփականազուրկ են լինում»(*):

Բայց այդ խղճալին երբեք չէ կարելի հասնել, եթէ նա հրատարակուի լոկ վարձու բանուորների սեփականութիւն, եթէ նրա իրականացման համար չմարտնչեն բոլոր աշխատաւորները եւ հասարակութեան բոլոր լաւագոյն, մտաւորական տարրերը: Երեւակայել, որ լոկ վարձու բանուորութիւնն այնքան կը մեծանայ, որ մի օր կլանող մեծամասնութիւն կը կազմէ, իր մէջ կը ձուլէ հասարակութեան բոլոր մնացած տարրերը,

(*) Կ. Մարքս — «Le Capitale», Ա. հատոր, 32րդ Գլուխ, էջ 342:

դա այն սխալն է, որ գործեցին Մարքսն ու Էնգելսն իրենց դեռ չատ երիտասարդ հասակներում։ Ո՛չ, հասարակութեան միջին շերտերը չեն վերանում եւ երբեք չեն չքանայ անհետ։ Մանր արհեստաւորութիւն եւ մանր սեփական տնտեսատէր գիւղացիութիւն միշտ կը լինի, ինչպէս խոստովանեց Էնգելսն իր «վերջաբանի արտաղրութիւններում», ինչպէս ապացուցին Բէրնշտայնը, Կրապոտկինը եւ չատ ուրիշներ։

Եթէ հասարակական գործիչների համար թանգ է ոչ թէ դոգման, ոչ թէ «վարդապետի քարոզած կրօնը», այլ տառապող մարդկութեան օր առաջ ազատագրումը, նրա օր առաջ հանգիստը համայնական հաւասարասէր կարգերի,— ուրեմն՝ նրանք չպէտք է այդ իդէալը համարեն լոկ վարձով աշխատող պրոլետարիատի սեփականութիւն, որովհետեւ այն ժամանակ այդ իդէալն «անընդունակ է յաղթելու, — ասում է Լիբկնեխտը, այդ Ֆանատիկոս մարքսիստը. բայց, չարունակում է նա, — նրա յաղթանակն ապահովուած է, եթէ նա ըմբռնուած է աշխատաւոր ժողովրդի ամբողջութեան եւ ազգի ընտիր մասի, նրա մտաւոր եւ բարոյական տարրերի կողմից»։

Մեզ համար կարեւորն այն էր, ինչ լիապէս ապացուցինք այս գլխում. բանուորն ու գիւղացին կազմում են միեւնոյն դասակարգի ստորաբաժանումները. մանր, աշխատաւոր արհեստաւորութեան շահերն էլ զուգընթաց են այդ երկուսի շահերին։ Նրանց բոլորին կեղեքողը մէկ է — կա-

պիտալիստը եւ կալուածատէրը, որոնք ապրում են բանուորի եւ գիւղացու յաւելեալ արժէքով: Բոլոր յաւելեալ արժէքով ապրողներին (մասամբ թէ ամբողջապէս՝ միեւնոյնն է) մենք կոչում ենք կեղեքիչ կամ բուրժուական դասակարգեր, իսկ այն բոլոր մարդկանց, որոնք ապրում են սեփական աշխատանքով, առանց ուրիշի յաւելեալ արժէքի, մենք կոչում ենք աշխատաւոր ժողովուրդ (das werktätige volk):

ԳԼՈՒԽ Գ.

Բաժանման գիծը — Բուրժուական դասակարգ — Աշխատաւորութիւնը — Դրանց ստորաբաժանումները — Մտաւորականութիւնը եւ նրա դերը — Խոշոր արտադրութիւնը — Նրա ճակատագրական անհրաժեշտութիւնը — Նրա լաւ եւ վատ կողմերը — Նրա վատ կողմերը վերացնելու միակ միջոցը:

Նախընթաց գլխում մենք յուշադրեցինք հիմնական սկզբունքը եւ հանեցինք նրանից բխող կարեւորագոյն հետեւանքներից մի քանիսը:

Հասարակական գիտութիւնների մէջ անհնարին է զանազան խնդիրներ ստիմանաւորել պարզ ու անանցանելի գծերով, ինչպէս այդ տեղի ունի մաթեմաթիքի կամ մասամբ նաեւ բնական գիտութիւնների մէջ: Հասարակական երեւոյթների ընկերութիւնքները որոշելիս, միշտ պէտք է աչքի առաջ ունենալ, որ այդ սկզբունքները գործադրութեան մէջ մեզ երեւում են խոշոր գծերով, առանց իրարից խստապէս բաժանուելու, առանց ակնառ բաժանարերութիւնների: Կեանքն այդպիսի սահմաններ չէ սիրում, լաւն ու վատը, կեանքն ու մահը, զեղեցիկն ու տգեղը, կեղեքումն ու սեփա-

կան աշխատանքով ապրելը — այս բոլորն այնպիսի երեւոյթներ են, որ անհուն մանր ու նուրբ չերտաւորումներով միանում են իրար, իրար մէջ մտնում, ղօղւում, կապկպւում որոշ տեղերում: Իսկ երբ այդ միացման կամ իրար մէջ անցնելու սահմաններից սկսում ես հեռանալ, այն ժամանակ՝ քանի դնում, տարբերական տարրը խտանում է, զանազանութիւնը չեչւում:

Այսպէս — ո՞ւր է վերջանում կեանքը եւ որտեղի՞ց սկսած է տիրում մահը: Առաջին հայեացքից այնպէս է թւում, որ դրանից դիւրին որոշելու բան չկայ աշխարհում: Սակայն լուրջ եւ դիտական մտածողութիւնը մեզ բերում կանգնեցնում է մի այնպիսի վիճակի առջեւ, ուր մենք ստիպուած ենք լինում խոստովանիլ մարդկային բանականութեան անզօրութիւնը: Եւ յիրաւի, մարդ ամէն վայրկեան, ամէն երկվայրկեան ե՛ւ մեռնում, ե՛ւ ապրում է միաժամանակ. մի կողմից մարդու մարմնի վանդակիկները ծերանում, թեւի դառնում ու թափւում են, կամ քրտինքի հետ չաղախուելով՝ աղտ են դառնում ու հեռացւում են կաշու վրայից, ածխածին դառնալով արտաշնչւում են թոքերով եւայլն, — դա մահուան գործողութիւնն է, որ մշտական ու անընդհատ է. իսկ միւս կողմից արիւնն անընդհատ չրջանառութիւն է գործում, մարմնի բոլոր մասերին նոր ու թարմ անունդ հասցնելով... Քանի դեռ մանուկ ու թարմ է էակի կազմուածքը, աննդատու կամ կենսատու ուժն աւելի է, կեանքն աւելի զօրեղ է.

էակն աճում, մեծանում է: Գալիս է մի վայրկեան, երբ կեանքն ու մահը հաւասարակշիռ ուժերը են հանդիսանում եւ զարգացումը կանգ է առնում, որպէսզի այնուհետեւ մահը դերակշռէ եւ էակն աստիճանաբար դիմէ դէպի սպառում, անկում, քայքայում: Բայց թէ յատկապէս կեանքի վերջում ե՞րբ մեռաւ մարդը, ե՞րբ կեանքը վերջնականապէս դադարեց էակի մէջ, կրկին անհնարին է մաթեմաթիքօրէն վճռել: Գալիս է բժիշկը, բռնում է զարկերակը, հաստատում սրտի կանգ առնելը, արեան շրջանի դադարումը եւ յայտարարում էակը մեռած: Այդ որոշման ձեւը կոչւում է «խոշոր գծերով որոշել»:

Ճիշդ նոյնպիսի երեւոյթի առջեւ ենք կանգնում հասարակական գրեթէ բոլոր խնդիրներում: Նոյնն է եւ դասակարգերի բաժանման հարցում: Ո՞վ է բուրժուա, ո՞վ է կեղեքուող կամ ոչ կեղեքող, ոչ էլ կեղեքուող, այլ լոկ իր «հպարտ» աշխատանքով ապրող, իր ճակատի քրտինքով կերակրուող:

Մի սկզբունք մենք արդէն ընդունած նախընթաց գլուխներում եւ պարզաբանեցինք: Մեր բաժանման գիծը կեղեքման սկզբունքն է կամ չափելու արժէքը:

Այն բոլոր մարդիկ, որ ամբողջապէս կամ մասնակի օգտւում են ուրիշների արտադրած չափելու արժէքից, այսինքն որոնք իւրացնում են ուրիշների աշխատանքի պազի մի մասը, չվճարելով նրա արժէքի ամբողջ չափն աշխատողին —

այդ բոլոր մարդիկը կեղեքողներ են, ուրեմն՝ բուրժուաներ:

Անկասկած՝ նրանցից մէկը կարող է շատ կեղեքել կամ իւրացնել մեծաքանակ յաւելեալ արժէքներ, իսկ միւսը քիչ: Մէկը կարող է ամենեւին չաշխատել, այլ հանդիստ ու փառահեղօրէն վայելել կեանքն ուրիշների թափած քրտինքով, իսկ մի ուրիշը կարող է աշխատել ինքն էլ, բայց իւրացնել նաեւ ուրիշների աշխատանքի պտուղները առանց փոխարինութեան:

Դրանցից մէկը կը լինի աւելի մեծ կեղեքիչ, իսկ միւսն աւելի փոքր: Եւ փոխրի ձգտումը կը լինի մշտապէս աշխատել մեծանալ, աւելի շատ յաւելեալ արժէքներ իւրացնել, աւելի շատերին կեղեքել, աւելի շատ թուով մարդկանց աշխատեցընել, իսկ ինքը որքան կարելի է քիչ աշխատի, այլ միմիայն իր ձեռքն առնէ մի հաճելի եւ շատ դիւրին բան — գործի սանձը, բանկիրից դրամներ ստանալը եւ, որ ամէնից հաճելին է, առատ ծախսելը:

Իսկ այն բոլոր մարդիկ, որոնք կամ իրենք են կեղեքւում կամ ոչ կեղեքում են, ոչ էլ կեղեքւում, — կոչւում են աշխատաւորներ:

Ահա ուրեմն մի մտաւոր, մի գաղափարական դիծ — յաւելեալ արժէք: Ով օգտւում է դրանով, կեղեքող է, ով չէ օգտւում՝ աշխատաւոր է: Այդ գաղափարական սահմանից դէպի ա՛յ, դէպի յաւելեալ արժէքի աւելի եւ աւելի իւրացումն, ընթանում են բուրժուաների խոտացող ու թանձրա-

ցող չարքերը, իսկ դէպի ձախ, դէպի յաւէտեան ապիժէքի հեգացումը եւ գրկանքի ամեհացումը ճգնում են աշխատաւորների չարքերը — նախ բաւական գիրուկ, իրենք իրենց ապրող եւ ապա, քանի դէպի ձախ էք հեռանում սահմանագծից, այնքան աւելի նիհար, այնքան աւելի ոսկրացած եւ տառապող:

Մի ծայրում կանգնած են դէր, ինքնաբաւական միլիոնատէրերը եւ միլիարդիատները, միւս ծայրում կանգնած են նիհար, մշտապէս սոված թշուառների ու դժգոհների դնդերը: Որքան դէպի աջ էք գնում, այնքան նօսրանում են չարքերը, բայց անհատները խոշորանում, գիրանում, որքան դէպի ձախ էք դիմում, այնքան խտանում են չարքերը, բազմանում ամբոխը, իսկ անհատները լղարում, մանրանում, մաշւում: Իսկ որքան մօտենանք դէպի մեր դծած գաղափարական սահմանը, այնքան աւելի անհատներ սկսում են իրար մօտենալ իրենց չափերով, իրենց գրպաններով, իրենց վայելքների քանակովն ու որակովը: Եւ գալիս է մի բաւական ընդարձակ շերտ, երբ ամենախստապահանջ սկզբունքային անձն անգամ կանգնում, չուարում, մնում է, թէ արդեօք ո՞ր դասակարգին վերագրէ այս ու այն անհատներին:

Այսպէս, ի՞նչ անուն տալ մի արհեստաւորի, որ իր սեփական խանութում աշխատում է անձամբ, որ ունի մի երկու աշակերտ, որոնց սովորեցնում է իր արհեստը. մի կամ երկու բանուոր, որոնց կատարելագործում է արհեստի մէջ, բայց

որոնց աշխատեցնում, որոնց կեղեքում է: Քննել եւ ակում բոլոր գործերը եւ պարզւում է հետեւեալ պատկերը: Այդ վարպետն ունի արտադրութեան գործիքներ, որոնք խոշոր դումար չեն ներկայացնում. նա ինքը շատ լաւ վարպետ է. ում մօտ էլ վարձով աշխատի, դրեթէ նոյնքան, թեբեւս եւ աւելի վարձ կը ստանայ, քան այժմ է ստանում իր սեփական խանութում: Նրա մօտ աշխատող բանուոր վարպետներն էլ դրեթէ նոյնքան են ստանում, որքան եւ ինքը, սակայն ազատ են խանութի պատասխանատուութեան բոլոր դէպքերից: Բազմաթիւ դէպքեր են պատահել, երբ գործատէրն առաջարկել է իր իսկ բանուորներին աշխատել ընկերովի, իբր հաւասար ընկերներ, սակայն բանուորները մերժել են...

Ի՞նչ անուն տալ այդ արհեստաւորին, որ բուրժուա կոչուելու արտաքին նշաններ ունի, դէթ մասամբ: Ո՞ր դասակարգի մէջ դեռեղել նրան:

Ահա թէ ինչու մենք ասում ենք, որ կեանքի մէջ սկզբունքային հարցերը իրականացած ենք տեսնում յաճախ, միայն խոշոր գծերով:

Այդպիսի մանր արհեստաւորին նոյնիսկ ուղղափառ մարքսիստ Կ. Կաուցկին դեռեղում է բանուոր դասակարգի մէջ: Սակայն դրանք ոչ բուրժուա են, ոչ էլ աշխատաւորը: Դրանք նմանում են այն ստորին «կենդանաբուսական» օրգանիզմներին, որոնք ոչ բոյս են, ոչ էլ կենդանի, այլ

այդ երկուսի մէջտեղը, նրանց ծնունդ տուող մայրը:

Մարդկային հասարակութեան այդ չերտն անդադար վերլուծութիւնների, յեղյեղումների մէջ է: Նրա անհատներից շատերն անցնում են խակ-կան աշխատասիրութեան, նոյնիսկ անմիջապէս կեղեքուողների շարքերը. սակայն պատահում են, թէեւ խիստ սակաւ, նաեւ այնպիսիները, որոնք հարստանում, ընդարձակում են իրենց գործերը, զարգացնում են իրենց անտեսութեան մէջ գոնը-ւող կեղեքման սպմերն, ինչպէս որ մեծամաս-նութեան անտեսութիւնից դուրս են մղւում կե-ղեքման վերջին նշաններն անդամ եւ անհատները կա՛մ մնում են իրենց անձի թափած չանքի յոյ-սով ապրելուն, կամ ընկնում են վարձուորների բանակը:

Զպէտք է խաչ քաշել այդ երկերեսանի, անո-րոշ չերտի վրայ, իբր անյոյս, բուրժուական տարրի վրայ, այլ պիտի մօտենալ ու կազմակեր-պել նրա անդամներին, որովհետեւ դրանք — այդ մանր արհեստաւորները, այդ 3–5 օրավար հող ունեցող գիւղացիները, այդ մանր առեւտրական-ները, որ մի տեսակ ակամայ գործակատարներ են խոշոր առեւտրականների ձեռքին — այդ բո-լոր «մանր մարդիկն» անպայման օգուտ կ'ունե-նան ընկերվարական կարգերի առաջացումից. նրանց համար, անկասկած, ձեռնտու է ընկերվա-րութիւնը, որովհետեւ ինչ էլ որ լինի, նա նը-րանց կը տայ մէջտեղ բարօրութեան աւելի բարձր

մի չափ, քան նրանք այսօր ունեն ներկայ բուրժուական կարգերի տիրապետութեան տակ:

Այդ մտածելակերպն է, որ կոչւում է ընկերվարական մտածելակերպ: Պէտք է մօտենալ և կազմակերպել այն բոլոր հասարակական խաւերը, որոնց չահը հակադիր չէ ընկերվարական ըմբռնումներին: Եթէ ունէ անհատի կամ հասարակական որեւէ խաւի համար աւելի ձեռնտու է ամբողջ հասարակութեան միահամուռ արտադրութիւնը եւ արտադրած բոլոր հարստութիւնների բաշխումը համաձայն ամէն մի անհատի թափած միջին հանրօգուտ աշխատանքի (կոլլեկտիւիզմ) եւ կամ ամէնքին հաւասարապէս (կոմունիզմ) — այդ անհատի կամ այդ հանրային խաւի մտածելակերպը կարելի է դարձնել ընկերվարական. նրան կարելի է կազմակերպել յանուն ընկերվարութեան:

Իսկ եթէ մի անհատ — օրինակ 50 օրավար հող ունեցող մի գիւղացի, մանի ընկերվարականների չարքերն, արդեօք ի՞նչ չահ, ի՞նչ օգուտ նա կարող է ունենալ ապագայում իրականանալի ընկերվարական կարգերից: Արդեօք այդ կարգերը կարո՞ղ են նրան ապահովել կենսական այնպիսի վայելքներ ու բարեկեցութիւն, որքան այժմ ինքը ունի կամ կարող է ունենալ — խելացիօրէն մշակելով իր 30–50 օրավար հողը: Պատասխանը պարզ է.— ոչ: Ուրեմն՝ նիւթական չահերի տեսակէտից նրա համար ձեռնտու չէ ընկերվարութիւնը: Մենք չենք խօսում այս ու այն բարձր

բարոյականի ու անհատականութեան տէր անձերի մասին, որոնք բարոյական ներքին բաւականութեան համար կարող են դառնալ համոզումներով ընկերվարական, իրենց գոյքը, նոյնիսկ կեանքը զոհել աշխատաւոր մեծամասնութեան վիճակի բարելաւման գործին: Դրանք անհատներ են, փայլուն ու զօրեղ բացառութիւններ. հասարակական խաւերն ու զանգուածներն իրենց հասոզումների եւ նիւթական կեանքի մէջ ունենում են ընդհանրապէս մի սրտառուչ ներդաշնակութիւն:

Աչքի առաջ ունենալով մեր առաջադրած ընկերվարութիւնը եւ նրա կենսական ձեւերը, քննենք այժմ հասարակութեան մէջ գոյութիւն ունեցող դասակարգերը:

Հասարակական խաւերից հնադոյններն են եղել հոգեւորականութիւն եւ զինուականութիւնը մի կողմից, աշխատաւորութիւնը — ստրուկ, ճորտ, վարձուոր — միւս կողմից: Բուրժուազին կամ պլուտոկրասին (դրամատիրութիւնը) համեմատաբար ուշ ծնուած խաւեր են:

Ներկայ քաղաքակիրթ հասարակութեան մէջ հոգեւորականութիւնը չունի այն դերը, ինչ նա ունեցել է սկզբնական վայրենի ու բարբարոս հասարակութիւնների մէջ: Այդ դեռ քիչ է. այժմ նա չունի այն ուժն ու ազդեցութիւնն, ինչ որ ունէը հին, միջին եւ նոյնիսկ նոր դարերի սկզբներում: Որքան հասարակութիւնները քաղաքակրթւում, որքան նրանք լուսաւորւում են, այն-

քան աւելի ընկնում է հոգեւորականութեան ազդեցութիւնը:

Վայրենի եւ բարբարոս հասարակութիւնների մէջ վհուկը, սկզբնական այդ հոգեւորականը, քուրմը տէր են կեանքի բոլոր ճիւղերում: Նրանք սերում են աստուածներից. նրանք համարում են ամենազօր, ամենագէտ. նրանք բարձր են սովորական պղտւականութիւնից եւ առնուազը հաւասար են արքայական տոհմերին: Թէ՛ Փարաւոնների Եգիպտոսում, թէ՛ Ինկաների Պերուի մէջ, թէ՛ արեւելեան չատ երկրներում ամբողջ երկրի հողը բաժանւում էր երեք մասի. մի երրորդը հոգեւորականներինն էր, մի երրորդը ազնուականներինը, մի երրորդը մնացած բոլոր մարդկային էակներինը(*):

Հին քաղաքակիրթ աշխարհների թէ՛ կառավարական եւ թէ մանաւանդ քրիստոնէական ըրջաններում հոգեւոր դասի թէ՛ նիւթական եւ թէ բարոյական ուժը դեռ ահագին չափերի էր հասնում, թէեւ ոչ այնքան ամենակարող եւ ամենապարփակ ձեւերով, ինչ որ վայրենական եւ բարբարոսական ըրջաններում:

Այսօր հոգեւորականութիւնը կորցրել է իր

(*) Այդ հարցով հետաքրքրուղներին յանձնարարում ենք կարդալ Շարլ Լետուրնոյի «Evolution de la propriété» եւ «Evolution religieuse» գրուքիւնները, եմիլ դը Լաւրլէի «De la propriété et de ses formes primitives» եւայլն:

նախկին թէ՛ բարոյական եւ թէ մանաւանդ նիւթական ուժը: Բայց եւ այնպէս նրա ձեռքին կան դեռ եւս բաւական խոշոր հարստութիւններ: Կաթոլիկ, օրթոդոքս եւ մահմեդական հոգեւորականութեան — վանքերի, մզկիթների ու միաբանութիւնների կարողութիւնը հասնում է միլիառների: Համեմատաբար աւելի չնչին է աւետարանական, բողոքական, լութերական եւ այլ բարենորոգուած եկեղեցիների ու հայ հոգեւորականութեան հարստութիւնը:

Հոգեւոր դասի վերին կամ բարձր խաւերը այսօր հանդիսանում են հողատէր կամ խոշոր կալուածատէր դասի կողքին նստած: Այդ բարձր կոչուած խաւերը մի կողմից վայելում են հողային рէնտան (rente) կամ հողի եկամուտը — կեղեքելով հողը անմիջապէս մշակող աշխատաւորներին, կամ այդ անմիջական կեղեքումը յանձնելով միջնորդ կապալառուների կամ ֆէրմէրների, իսկ իրենք ստանալով հողի եկամուտը (рէնտան): Միւս կողմից էլ նրանք — իրը եկեղեցու պաշտօնեաները — առաջնորդ, քարոզիչ եւայլն, ստանում են չաղ-չաղ ռոճիկներ կամ անմիջապէս ժողովրդից կամ պետութիւնից: Այսպիսով նրանք հանդիսանում են կրկնակի կեղեքիչներ:

Հարցը մի քիչ աւելի բարդանում է, երբ ուզում ենք քննել ստորին հոգեւորականութեան խնդիրը: Այստեղ մեր առջեւ այլեւս չեն կանգնած հողի եկամուտով ու խոշոր ռոճիկներով ապրող անհատներ, այլ մեր դործն այնպիսի անձերի

հետ է, որոնք պիտի ապրեն կամ պետութեան տուած չնչին ռոճիկով, կամ ծխականներից ըստացուող կիսապարտաւորական-կիսակամաւոր նուէրներով, որոնք յաճախ ողորմութեան ձեւ են առնում: Արդեօք դրանց ստացած այդ վարձատրութիւնը պէ՞տք է համարել աշխատութեան վարձ, թէ պօրտաբուծական կամ պարագիտական մի երեւոյթ,— ահա հարցը:

Նայենք հարցի վրայ ամենածայրայեղ տեսակէտով: Ասենք, թէ «կրօնը մարդկային մտքի տըկարութեան, նրա չիմարութեան արդասիքն է եւ ոչ նրա զօրութեան, նրա խելացիութեան պտուղը» (Շարլ Լէտուրնոյի խօսքերն են), համաձայնինք անգլիական հանճարեղ բանաստեղծի՝ Բայրընի հետ, որ

«Նոյնիսկ աստուածներն ընկնում, գահավիժում [են,
Կրօններն իրար են յաջորդում.
Երբեմն Իւպիտէրի կրօնն էր,
Այժմ Մահմէդինը եւ ուրիշները.
Տարբեր կրօններ դուրս կը ցայտեն
Ուրիշ տարիների հետ միասին,
Մինչեւ որ մարդը վերջապէս կը հասկանայ,
Որ իր խուճկը զուր է ծխում,
Որ իր զոհերի արիւնը զուր է ցայտում»:
(«Ջայլտ Հարոլտ»)

Ընդունենք, որ կրօնները փոխուում, բարեչըմման են ենթարկուում: Վերջապէս՝ ընդունենք նաեւ այն բաւական համարձակ ու անհաւանական

տեսակէտը, թէ մի օր կրօն ասուած բանը պիտի վերանայ: Այդ բոլորն աչքի առաջ ունենալով հանդերձ, զրական կամ պոլիտիկ մտածողութեան տէր ուղեղի համար դեռ եւս մնում է մի բաց խնդիր.

— Այսօր կրօնը կայ ժողովրդի սրտում. կան եւ նրա ծէսերն ու արարողութիւնները. ուրեմն՝ ի՞նչպէս վերաբերուել դէպի այդ կարիճին բաւարարութիւն ստող անհատները. համարել նրանց հասարակական պաշտօնեաներ, ինչպէս, օրինակ, գինուորականներին, որոնց մատուցած ծառայութիւնն էլ ժամանակաւոր է եւ մի օր պիտի վերանայ:

Իբր մարտնչող (միլիտան) հասարակական գործիչ, իբր կուսակցական անհատ, դուք կարող էք չատ բան ասել կռուի վայրկեաններին, բայց իբր դիտութեան մարդ, դուք պարտաւոր էք պընդել, որ քանի դեռ կայ կրօնական պահանջը ժողովրդի մէջ, հոգեւորականութիւնը կը լինի, ինչպէս նաեւ քանի դեռ կայ պատերազմի երկիւղը, կը լինի գինուորականութիւնը. ուրեմն՝ նրանք պիտի ատանան նաեւ իրենց աշխատանքի վարձը:

Երբ մի անդամ այս գիտական տեսակէտը ընդունեցինք, այնուհետեւ հարցը կը դիւրանայ: Արդեօք ի՞նչ դասակարգ է հոգեւորականութիւնը. յետադէմ՞ մ թէ յառաջադէմ: Կասկած չկայ, նա յետադէմ է: Սակայն նրա վերին չերտերը, բացի յետադէմ, բացի խաւարամիտ լինելը, նաեւ կեղեքիչներ են, իսկ ներքին չերտերը — հասա-

րակ ծխատէր քահանաները, մոլլաները, քարոզիչները եւայլն, լինելով հանդերձ պահպանողական բանակի մարդիկ, յաճախ տառապում են ժողովրդական աղքատ խաւերի ցաւերով, որովհետեւ վիճակակից են նրանց: Աչխարհի չատ յեղափոխութիւնների մէջ այդ դիւզական պարզ քահանաներն ու վարդապետները երբեմն կատարել են չատ լաւ դերեր: Բայց ամբողջ դասն, երբ հոգեւոր սկզբունքի ներկայացուցիչ, միչտ եղել է հնազանդութեան կողմնակից, «ձեր տուրը, մեր պարանոցը» զարձուածքի երկրպագու:

Մտածել, թէ երբեւէ հոգեւորականութիւնը կարող է լինել ընկերվարական, միանգամայն անմտութիւն է: Մօտենալ հոգեւոր անհատներին՝ նրանց կազմակերպելու, ընկերվարական չարքերի մէջ առնելու համար,— դա եւս անմտութիւն է, որովհետեւ ներկայումս գոյութիւն ունեցող բոլոր կրօնների էութիւնը դէմ է այդ վարդապետութեան — կարմիր աւետարանի ոգուն:

Տարբեր խնդիր է, երբ մի ժողովուրդ մղում է ազգային ազատագրման կռիւ: Դաչնակցութեան կամ Հնչակեանութեան մէջ անցեալում, երբ նրբանք մարանչում էին Թուրքահայի ազատագրման խնդրի համար, ամէն մի հայ մարդ կարող էր տեղ բռնել նրանց չարքերում, որովհետեւ նա էլ հայ էր, նա էլ կամենում էր ազգի ազատագրումը: Նոյնը կարող ենք ասել նաեւ Մակեդոնացիների նկատմամբ, նախքան Թրքական Սահմանադրութիւնը:

Բայց երբ կայ սահմանադրութիւն, երբ կայ խօսքի եւ ժողովների ազատութիւն, այն ժամանակ ամէն մի կուսակցութիւն պարտաւոր է որոշել, թէ ինքն ի՛նչ խաւի ներկայացուցիչ է, ի՛նչ դասակարգի շահերի պաշտպան: Երբ ամէն մի դասակարգ յառաջ կը մղէ իր սեփական կազմակերպութիւնը, այնուհետեւ չատ կը դիւրանայ հասարակական հարցերի լուծումը: Կը մրցին իրար հետ կազմակերպութիւնները, կը կռուին: Իսկ եթէ եղան այնպիսի համազգային պահանջներ, ինչպէս լեզու, դպրոց, զրականութիւն, ազգի ֆիզիքական գոյութիւն եւայլն, բոլոր կուսակցութիւնները կամ բոլոր դասակարգերը կարող են կազմել ժամանակաւոր համաձայնութիւններ կամ բլոքներ:

Այդ մասին մենք դեռ երկար պէտք է խօսենք հետեւեալ գլխում: Այժմ այսքանը միայն ասենք, որ հոգեւորական դասն անպայման անընդունակ է ընկերվարական սկզբունքը որդեգրելու. նրա մի մասն ապրում է չահագործութիւնով եւ համերաշխ չահեր ունի հողատէրի եւ միւս տիրող դասերի հետ, իսկ սոսրին մասը նիւթապէս ընկճուած, նեղ վիճակի մէջ է, եւ քանի գնում վիճակն աւելի եւս վատանում է, որովհետեւ ժողովրդի պետակցութեան բարձրանալով, ընկնում է նրա յարգանքը դէպի եկեղեցականը:

Անցնենք այժմ հետեւեալ դասակարգին, կամ աւելի չուտ, նոյն կեղեքող դասակարգի հետեւեալ աւելի ընդարձակ խաւին — տնտեսականութեանը:

Ազնուականութիւնն այնքան հին չէ, որքան հոգեւորականութիւնը: Այն ժամանակ, երբ մարդկային հասարակութիւններն ապրում էին հաւասարաչէր կամ կոմունիստական կարգերով, երբ համայնքի ներսում բոլորն էլ նիւթապէս իրար հաւասար էին, երբ հողերն ու հօտերը կազմում էին հանրութեան սեփականութիւն եւ բոլորն աշխատում, բոլորն էլ զրեթէ հաւասարապէս ապրում էին, — ահա այդ չքնաղ դեռ ազնուականութիւն չկար՝ նոյնիսկ սաղմային ձեւով, այնինչ հոգեւորականներն արդէն կային,— վհուկներ, համայդներ, դուշակներ, քուրմեր եւայլն՝ կազմում էին բաւական օրերէզ հասարակական մի խաւ: Ազնուականութիւնն աւելի ուշ է երեւան գալիս, այն ժամանակ, երբ մասնաւոր սեփականութիւնը ծնունդ է առնում եւ երբ առաջ են գալիս տիրուած սարուկներ, հպատակներ եւ ոչխարներ, նրանց հաշուով ապրողներ:

Ազնուականութիւնն անմիջապէս իրեն աչք է հրաւիրակում երկրի բոլոր հողերի, անպատճառ մի խոշոր բաժին հանելով աստուածների ներկայացուցիչներին կամ կրօնաւորներին, իսկ վերջիններս էլ աստուածների դիւք են յայտարարում աշխարհի օրաւորների հաստատած կարգերը, նրանց կեղեքումները: Թէ՛ հին, թէ՛ միջին եւ թէ նոր դարերում ազնուականութիւնը միշտ իր ձեռքըն է պահել երկրի հողերը: Երկրագործութիւնը երկա՛ր դարեր միակ արտադրական խոշոր ոլորտն էր. ճարտարարուեստը կամ էնդիւստրին,

արհեստներն ու արտադրութեան այլ ճիւղերը դեռ այնքան չնչին արդիւնք էին տալիս, որ հարըստութեան միակ աղբիւրը, նոյնիսկ ԺԸ. դարի վերջում, Քէնէն, Տիւրգոն եւ ուրիշ տնտեսագէտներ, յայտարարեցին հողը եւ երկրագործութիւնը: Այդ ուղղութիւնը դաւանողներն են, որ կոչւում են ֆիզիոկրատներ:

Ֆրանսիական մեծ յեղափոխութիւնը խորտակեց բոլոր հին դասերը: Միւս կողմից էլ ճարտարարուեստի զարգացումը, մեքենաների գիւտը, երկաթուղիների ու չոգենաւերի ստեղծումը ԺԹ. դարում՝ հիմնապէս փոխեցին արտադրութեան եղանակը: Երկրագործութիւնը մնաց իբր զբաղմունքի առարկայ եւ հարստութեան աղբիւր համեմատաբար աւելի յետամնաց երկիրներում, իսկ առաջընթաց ժողովուրդները դիմեցին գործարանական եւ հանքային արտադրութեան: Ֆրանսիական յեղափոխութիւնը եթէ սպանել էր աշնուականութիւնն իբրեւ տեսակէտից, սակայն հողերը մեծ մասով կրկին թողել էր նրա ձեռքում, եթէ ոչ Ֆրանսիայում, գոնէ ուրիշ երկրների մէջ: Իսկ ԺԹ. դարի տնտեսական ահաւոր զարգացումն սպանեց աշնուականութեան տնտեսական նշանակութիւնը: Նրանց հողերն ամէն տեղ սկսեցին ծախուել՝ յաճախ հրապարակային աճուրդների մէջ: Հողն սկսեց բաժանուել, ընկնել դրամատէրերի, արհեստաւորների եւ գիւղացիների ձեռքն էլ: Անգլիան էր միայն, որ բուսական ազատ մնաց այդ չարժումից, իր հողային յատուկ

օբէնքի չնորհով։ Այնտեղ հօր թողած հողն անմիջապէս մնում է երէց որդուն։ Այդ պատճառով էլ այնտեղի աղնուականութիւնը դեռ հողատէր է եւ դեռ բաւական հզօր դեր է խաղում երկրի մէջ։

Աղնուականութիւնն իբր ուրոյն դաս, իբր արտօնեալ մի միութիւն՝ չքացաւ, բայց հողը կրկին մնաց մի հասարակական խաւի ձեռք։ Այդ խաւը կոչւում է հողատէր դաս։ Այն ժամանակ, երբ ազնուական լինելու համար պէտք էր կամ ծնիլ ազնուական հօրից եւ կամ երկրի պետից ստանալ այդ կոչումը անձնապէս կամ ժառանգների համար եւս, այժմ հողատէր լինելու համար ոչ մի ձեւականութիւն չէ պահանջւում, բաւական է ունենալ դրամ եւ հող գնել։

Սակայն ամէն մի հող ունեցող հողատէր չէ։ Եթէ այնքան հող ունես, որ հաղիւ կարող ես մի տուն չինել ու մէջն ապրել, եթէ այնքան հող ունես, որ հաղիւ դու քո ընտանիքի հետ միասին կարող ես մշակել ու ապրել. կամ եթէ այնքան է քո հողը, որ չես կարող տալ վարձով եւ դուտ արդիւնք ստանալ,— դու հողատէր չես։ Հողատէր են բոլոր այն մարդիկ, որոնք իրենց սեփական աշխատանքով մշակելու չափից աւելի ունեն եւ տալիս են կա՛մ կապալով, կամ ուղղակի երկրագործներին մշակելու, որոնք իրենց հողից բէնտա են ստանում՝ ոչ իրենց, այլ ուրիշների աշխատանքի չնորհով։

Ներկայիս հողատէրերի մի մասը նախկին ազնուականներն են, բայց մեծագոյն մասը դրամով

հող գնած բուրժուաներն են, նախկին երկրագործները, պետական պաշտօնեաները եւայլն: Ինչ կասկած, որ հողատէրերն էլ կարող են լինել մանրը, միջակ եւ խոշոր հողատէրեր: Մանրները յաճախ իրենք էլ են աշխատում, բայց աշխատեցնում են նաեւ 2-3ից աւելի վարձու մշակներ: Սակայն այդ մանր հողատէրերի վիճակն այնքան էլ մեծ տարբերութիւն չէ կարող ունենալ հասարակ աշխատաւոր գիւղացիների վիճակից: Միջակ հողատէրերն արդէն իրենք այլեւս չեն աշխատում, անմիջապէս գործ չունեն հողի հետ, այլ ղեկավարում են գործերը եւ վաճառում են արդիւնքները: Իսկ մեծ հողատէրերն առհասարակ ղրաղուած են լինում պայմանագրեր ու թղթեր գրելով, բանկերից ղրամներ առանալով եւ ղուարճանալով:

Հողատէր դասակարգն անպայման յաւելեալ արժէքով ապրող է: Նա կամ անմիջապէս կեղեքում է մշակ գիւղացիներին, աշխատեցնելով նրանց իր հողերի վրայ, եւ կամ իր հողերը տալիս է կապալով, կապալառուն է կեղեքում երկրագործներին, հաւաքում նրանց արտադրած յաւելեալ արժէքները եւ մի մասն իրեն պահում, միւսը տալիս հողատիրոջն իբր կապալադրամ:

Նախընթաց գլխում մենք արդէն մանրամասն քննութեան ենք ենթարկել, թէ ո՞ւր է աշխատաւոր գիւղացու եւ հողատիրոջ սահմանը: Մենք արդէն տեսել ենք, որ հողազուրկ, սակաւահող եւ 3-5 օրավար հող ունեցող բոլոր գիւղացիներին

կարելի է կոչել աշխատաւոր, իսկ նրանցից բարձրը արդէն ներս է մտնում կեղեքման սկզբունքը: Ուրեմն՝ մինչեւ այդ աստիճանը եղողներին կարելի է մօտենալ, կազմակերպել իբր աշխատաւորներ, իբր ընկերվարականներ, իսկ նրանցից բարձր մանր, միջակ ու խոշոր հողատէրերին, որոնք կամ մասամբ կամ ամբողջովին ապրում են ըէնտայով, նրանց չէ կարելի կազմակերպել իբր ընկերվարականներ:

Այստեղ եւս պէտք է յիշենք, որ մեր խօսքն անհատների մասին չէ, այլ ամբողջ հասարակական մի խաւի, հողատէր դասի մասին:

Կեղեքումով ապրող կամ բուրժուական դասակարգի ամէնից ընդարձակ եւ ամէնից զօրաւոր մասը դրամատէրերի կամ կապիտալիստների խումբն է: Ցաճախ, շատ յաճախ՝ երբ բուրժուա կամ բուրժուազի են ասում, հասկանում են միայն կապիտալիստների դասակարգը, իսկ նախընթաց երկու խաւերին կոչում են հողատէր դասակարգ եւ հոգեւոր դաս: Իսկ մենք, ինչպէս մինչեւ այժմ մեր դրածից երեւում է, այդ բոլոր խաւերը միասին համարում ենք մի դասակարգ — կեղեքողների, յաւելեալ ապրողների դասակարգ, իսկ հոգեւորականութիւն, հողատիրութիւն եւ կապիտալիստներ համարում ենք այդ դասակարգի մասերը կամ նրա զանազան խաւերը:

Հոգեւորականութեան ծագումը թաղուած է դարերի մթութեան մէջ: Նրա ուժը միշտ եղել է գերբնականը, անյայտը, Աստուածը, ամենազօ-

բը, ոգիները եւայլն: Նա տիրապետել, կեղեքել ու փառահեղօրէն ապրել է, յենուելով մարդկային հաւատի, նրա անոտիապաշտութեան վրայ: Երկիւղն ու ապազգայի խոստումը, դժոխքն ու դրախտը եղել են նրա մշտական ու հաստուն զէնքերը:

Համեմատաբար աւելի նոր ու աւելի պարզ է հողատէր դասակարգի ծագումը: Նախ այդ դասակարգը ազնուականներից էր բաղկացած: Մի խումբ մարդիկ, զէնքը ձեռքերին, տիրում, հպատակեցնում են ուրիշներին, ստիպում են նրանց պահել իրենց հօտերը, մշակել իրենց — ազնուականների հողերը: Ժամանակակից արտադրութեան բոլոր միջոցները — հողն ու հօտերը իւրացնում են. իւրացնում են նաեւ ինքնապաշտպանութեան միակ միջոցը — զէնքը. զինազուրկ են անում տիրածներին եւ կեղեքում:

Այդպէս հզօր ու չառաչալի ծագում չունի կապիտալիստ դասակարգը, Ֆրանսիական յեղափոխութեան հռչակաւոր Tiers Etat կամ երրորդ դասակարգը: Նախընթաց գլուխներում տեսանք, թէ ինչպէս նա աստիճանաբար ծնունդ է առել միջնադարեան բուրգերում կամ քաղաքներում եւ ինչպէս այդ խոնարհ, հպատակ վիճակից, աստիճանաբար զարգանալով, ժր. դարում քայքայել է միւս հզօր դասակարգերին եւ դառել ղրութեան աչքին ամբողջ քաղաքակիրթ աշխարհում:

Նրա բաղադրիչ տարրերը եղել են միջնադարեան արհեստաւորների համքարները կամ էնաֆ-

նները, վաճառականները եւ մանուֆակտուրական արտադրութիւնով զբաղուողները:

Ներկայումս կապիտալիստ դասակարգի մէջ կարելի է նշմարել հետեւեալ տորբաժանումները. ա) Գործարանատէրը, բ) Հանքատէրը, գ) Առեւտրականներ կամ վաճառականները, դ) Բանկիրներ կամ Բանկիէներ եւ ե) նաւային, երկաթուղային եւայլն հաղորդակցական միջոցների ճեռնարկողները:

Գործարանատէր բուրժուազիի նախահայրերը եղել են մի կողմից հարստացած եւ իրենց մանր արհեստանոցներն ընդարձակած միջնադարեան արհեստաւոր էնաֆներ, իսկ միւս կողմից՝ միջին դարերի վերջերում խիստ զարգացած մանուֆակտուրական կամ ճեռագործ արտադրութեան ներկայացուցիչները, որոնք մրցման մտան արհեստաւորների միջնադարեան հզօր կազմակերպութիւնների հետ եւ, երկու դար կռուելով, ժԸ. դարավերջում յաղթահարեցին, քայքայեցին նրանց:

Քաղաքատնտեսական դիտութեան մէջ ընդունուած է գործարան անուանել այն ճարտարարուեստական հիմնարկութիւնը, որի մէջ 5ից աւելի գործաւորներ են աշխատում: Իսկ մէկից մինչեւ հինգ մարդով գործող հիմնարկութիւնը կոչւում է արհեստանոց:

Գործարանատէր բուրժուազիի եկամուտի աղբիւրն իր բանեցրած աշխատաւորների կամ պրո-

լեռարնների արտադրած յաւելեալ արժէքն է։ Ճիշդ չէն անգամ աւելորդ է, որ կան մանր, միջակ եւ խոշոր գործարանատէրեր։

Բուրժուա կապիտալիստների երկրորդ խաւն են կազմում հանքատէրերը կամ հանքագործ բուրժուաները։

Եթէ ոեւէ բուրժուա հողեր ունի, բայց ինքը չէ մշակում, այլ տալիս է ուրիշներին կապալով մշակելու, նա այլեւս չէ կոչւում հանքատէր, այլ անուանւում է հողատէր եւ դասաւորւում է ընտտայով ապրողների մէջ։ Հանքատէր կամ հանքային բուրժուաներ նրանք են, որ անմիջապէս հանքերի գործով են զբաղուած, իսկ հանքը կարող է իր սեփականը լինել։— Եւ այդ դէպքում բուրժուան ստանում է ե՛ւ հողի ընծտան, ե՛ւ նախաձեռնողի կամ ձեռնարկողի եկամուտը,— կամ թէ չէ՝ հանքը կարող է լինել ուրիշից կապալով վերցրած, եւ այդ դէպքում հանքագործ բուրժուային կը մնայ միայն նախաձեռնողի օգուտը եւ դրամագլխի տոկոսը, իսկ հողի ընծտան կը գնայ հողատիրոջ գրպանը։

Եթէ մի քիչ աւելի խորը, աւելի սկզբունքային տեսակէտից մօտենանք հարցին, բուրժուական այս խաւի մի չերորը կարող ենք համարել հողատէրերի մի մասը։ Սակայն, գործնական տեսակէտով, աւելի յարմար է սրանց բոլորին դասաւորել կապիտալիստների մէջ, քան հողատէրերի, որովհետեւ հողատէրը կարող է կապիտալ

չունենալ իր սեփական հողը մշակելու, բայց այդ՝ հողատէրն ստանում է յաւելեալ արժէքը ոչ անմիջապէս, այլ միջնորդի — ֆէրմէրի, կապալառուի ձեռքով, իսկ հանքագործ բուրժուազին գործունի բանուորի հետ անմիջապէս:

Բուրժուական դասակարգի երրորդ խաւն է վաճառականութիւնը կամ առեւտրական դասը:

Հին, չափազանց հին երեւոյթ է առեւտուրն ու առեւտրականութիւնը: Դեռ գրաւոր պատմութեան նախօրեակում երգուած Հոմերական երգերում մենք արդէն հանդիպում ենք առեւտրականների: Այդ դեռ քիչ է· բարբարոս ու վայրենի հասարակութիւնների մէջ անգամ գործածական արժէքներն իրար հետ փոխանակելու դաղափարը կայ, թէեւ յաճախակէս միայն այդ գործով պարապող անհատներ դեռ չկան: Վայրենիները, իրենց ունեցած որսերից աւելորդները տալիս են իրենց դրացիներին եւ փոխարէնն ստանում են ուրիշ գործածական նիւթեր, որ իրենք չունեն: Բարբարոս հասարակութիւնների մէջ այդ փոխանակութիւնն աւելի եւս սաստկանում, կանոնաւորւում է: Քաղաքակրթութեան առաջին աստիճաններում իսկ մենք արդէն տեսնում ենք բաւական ծաղկած մի վաճառականութիւն, բաւական հարուստ մի առեւտրական դաս, նոյնիսկ ամբողջ ժողովուրդներ, ինչպէս փիւնիկեցիները, Յոյները, կարթագենացիները,— որոնք պարապում են դրեթէ բացառապար առեւտրով:

Վայրենական չրջանում, ինչպէս ասացինք,

դործածական արժէքները փոխում են իրար դէմ. տալիս են, օրինակ, մի քանի ճու, ստանում այսչափ միրգ եւայլն: Բարբարոսական չքնաղում արդէն ամբողջովին փոխանակութեան նուիրուած անհատներն աստիճանաբար սկսում են բոլոր ապրանքների մէջից ընտրել մի յատուկ ապրանք — չուտ չփճացող եւ համեմատաբար չատ թուով մարդկանց պէտանի մի իր — եւ դարձնում դա փոխանակական միութիւն կամ դրամ: Մի տեղ այդ սեփական դրամի դերը կատարում է ոչխարը, մի այլ տեղ, օրինակ Միջին Ասիայում՝ մոնդոլների մէջ — չունը կամ չան կաշին (բէօփէկ, որից եւ ծագել է ռուսական կոպեկը), մի երրորդ տեղ՝ թանկագին մորթեր, մի չորրորդ տեղ՝ եղը, աղի տափակ կտորները եւայլն, եւայլն: Վերջ ի վերջոյ դրամի դեր է յատկացւում թանկագին մետաղներին, բայց սկզբներում դեռ քաշով, կըտոր-կտոր օղակների ձեւով, իսկ վերջը միայն իսկական դրամ է կտրւում: Հնագոյն դրամը, որ յաջողուել է գտնել մինչեւ օրս, Լիդիայի թագաւորութեան մայրաքաղաքի՝ Սարդայի աւերակներից գտնուած կտրած դրամն է:

Դրամը մի ապրանք է, որ ամէն մարդ ընդունում է, որովհետեւ ում էլ որ տաս, նա քեզ կը տայ այդ դրամի փոխարէն իր ունեցած աւելորդ իրերից այս կամ այն չափով: Նա բոլոր ապրանքների էֆիվալենն է, հաւասարազօր արժէքը, փոխանակական միութիւնը: Թանկագին մետաղները դրամ դարձան, որովհետեւ նրանք չեն փչանում,

իրենց քաչը չեն կորցնում, չափազանց երկար են դիմանում, կարող են ծեծուել ու տափակել, կլոր-կտոր լինել ու ղրանով նրանց արժէքի կամ գնի մէջ ոչ մի փոփոխութիւն չի յառաջանայ:

Երբ ղրամի գործածութիւնը հնարուեց ու տարածուեց, ապրանքների փոխանակութիւնն արագ առաջ ընթացաւ, դրա հետ միասին՝ զարգացաւ նաեւ առեւտրական դասը: Հին պատմութիւնը ճանաչում է չատ աւելի հզօր վաճառականութիւն, քան միջին դարերը, որովհետեւ միջնադարեան ծայրայեղ բաժանականութիւնը կամ պարտիկուլարիզմը թոյլ չէին տալիս առեւտրի ազատ զարգացումը: Եթէ հնադարեան Հռոմի կայսրութեան մէջ ազնուականութիւնն ամօթ էր համարում առեւտրով զբաղուել եւ այդ ձեռնտու գործը թողնում էր սարկութիւնից ազատուածներին եւ «նոր մարդկանց» (homo novus), միջին դարերում էլ ամէն մի մանր հողատէր կամ աւատական (ֆէոդալ), մաքս էր առնում իր երկիրը մանող, կամ իր հողով ու ջրով անցնող ապրանքներից: Ֆրանսիական Յեղափոխութեան նախօրեակին, Լիոնից մինչեւ Միջերկրական ծովը Ռոն գետով ապրանք իջեցնելու համար պէտք էր 29 տեղ մաքս վճարել...

Եթէ հին դարերն ունէին իրենց Փիւնիկեցիները, Յոյները եւ Կարթագենացիները, միջին դարերն ունեցան իտալական մանր հանրապետութիւնները — Վենեդիկը, Ջենովան, Նէապոլը, Մելանը, Պիզան, Ֆլորենցիան, — ունեցան իրենց

Հանգէյեան քաղաքները — Լուբեկը, Համբուրգը, Բրեմէնը եւայլն:

Նոր դարը, մինչեւ Ֆրանսիական Յեղափոխութիւնն, ունեցաւ այնպիսի առեւտրական կենտրոններ, ինչպէս Պորտուգալիան, Հոլանդիան, Ֆլանդրիան, Սպանիան եւ, վերջապէս, Անգլիան ու Ֆրանսիան:

Առեւտուրը եւ առեւտրական դասը հսկայական զարգացման հասան այն ժամանակ, երբ Վասկո-դէ-Գաման Աֆրիկայի հարաւային ծայրը շրջելով՝ գնաց Հնդկաստան, երբ Գոլոմպոսը յայտնագործեց Ամերիկան: Այդ եւ մի քանի այլ յայտնագործութիւնները հզօր զարկ տուին ծովային առեւտրին: Սակայն նա իր այսօրուայ համաչխարհային ու տիտանական չափերին հասաւ այն ժամանակ, երբ հնարուեց շոգեշարժը — շոգենաւը եւ երկաթուղին, հեռագիրը, այսինքն՝ ԹՒ. դարի մէջ:

Որքան առեւտուրը զարգանում էր, այնքան աւելի առեւտրական դասի ազդեցութիւնը հզօրանում էր հասարակութեան մէջ: Եւ այսօր, ներկայ բուրժուական կարգերում, այդ դասի ազդեցութիւնը խիստ մեծ ու զօրաւոր է, իսկ նրա հարստութիւնը հասնում է հսկայական չափերի:

Առեւտրականը հանդիսանում է եւ՛ անմիջապէս իր մօտը բանող աշխատաւորների — ծառաների, բեռնակիրների, գործակատարների կեղեքիչ, եւ միւս կողմից, նա խոշոր մաս է ստանում գործարանատիրոջ ստացած յաւելեալ արժէ-

քից: Ուրեմն՝ նա ներկայացուցիչ է Թէ՛ անմիջական եւ Թէ, եթէ կարելի է այսպէս ասել, կողմնակի կամ միջնորդապէս առաջուղ յաւելեալ արժէքի:

Այս դասի մի ծայրում կանգնած են մելիառելիսանները եւ մելիոնատէրերը, իսկ միւս, վարի ծայրում կանգնած են մանր առեւտրականները, փերեզակները, որոնք ապրանք առանում են խոշոր առեւտրականներից ապառիկ, տանում կամ իրենց մանրիկ խանութներում կամ փողոցներում, ոտի վրայ վաճառում, Շաբաթ օրը դրամը տանում, մեծ վաճառականին տալիս, իրեն պահելով մի ընչին, մի ողորմելի բաժին: Այսպիսով՝ ոչ միայն նրանց նիւթական վիճակն է մօտենում բանուորների եւ աշխատաւոր գիւղացիների խոնարհ եւ թշուառ վիճակին, այլ նաեւ նրանք կարծես թէ հանդիսանում են վարձու աշխատաւորներ, մեծ առեւտրականների գործակատարներ: Յաճախ, շատ յաճախ իսկական գործակատարները շատ աւելի տանելի պայմաններում են լինում, քան այդ մանր առեւտրականները: Գործակատարն ունի աշխատանքի որոշ ժամեր եւ որոշ ոռճիկ: Նա մտանգիից չէ ապրանքի վիճանալուց, հրդեհից, նաւարկութիւնից եւ այլ բաներից առաջ եկող վնասներին: Նա մտանգիից չէ հին ապրանքների գնների անկումից եւ այլ այդպիսի երեւոյթներից ծնած նիւթական վնասներին: Իսկ մանրը առեւտրականը ենթակայ է դրանց մեծ մասին: Բացի այդ, խանութն իր սեփականը լինե-

լով, նա չա՞տ աւելի երկար է աշխատում, քան մեծ վաճառականի գործակատարը: Իսկ եկամո՞ւտը: Դա այնքան անկայուն եւ անհաստատ է, որ նա յաճախ կարող է չոր հացի յոյսով մնալ:

Այս մի քանի տողերից պարզ է, որ առեւտրականութեան մէջին եւ խոշոր խաւերն անպայման պէտք է դէմ լինեն ընկերվարութեան, որովհետեւ ընկերվարութիւնը նրանց չահերին դէմ է, նրանց մահն է ցանկանում: Իսկ ստորին, մանրը առեւտրական խաւերի մէջ բազմաթիւ անհատներ կարող են՝ եթէ ոչ անմիջապէս ընկերվարական կազմակերպութիւնների մէջ, գոնէ կարող են լինել նրանց չատ մօտ եւ համակիր տարրեր, թէ՛ ամսավճարներով եւ թէ ընտրական քէմպէներով, եւ մանաւանդ, թէ մարտական ուժով, նպաստել ընկերվարական բանակի միջուկին — բանուորութեանն ու աշխատաւոր գիւղացիութեանը:

Այսօր բանկային բուրժուազին, թէեւ մուռ քիչ, խաղում է ահագին դեր քաղաքակիրթ հասարակութիւնների մէջ:

Բուրժուական այս խաւն անծանօթ էր հին աշխարհին իր ներկայ ձեւով: Նրա իսկական նախահայրերը ծնունդ են առել իտալական մանր հանրապետութիւնների մէջ, ԺԲ. եւ ԺԴ. դարում: Հսկայական դրամական գործողութիւններ էին կատարում Վենեդիկի, Ջենովայի, Միլանի եւ, մանաւանդ, Ֆլորենցիայի բանկիրները կամ սարրաֆները: «Բանկ» բառը ծնունդ է առել այդ

դրամափոխների ունեցած սեղաններից (սեղանատոր —le banc)։ Երբ մի սեղանատոր կամ անանկանում էր կամ խարդախութիւն անում ու բըռնըւում, հրապարակաւ կոտրում, ջարդում էին նրա bancը կամ սեղանը եւ յայտարարում նրան «բանկ-րուտ» կամ անանկ։

Յետոյ, աւելի ուշ, այդ գործածութիւնը տարածուեց նաեւ պորտուգալական, հոլանդական եւ անգլիական քաղաքներում, իսկ ԺԷ. եւ ԺԸ. դարերում հիմք դրուեց ներկայ բանկերի։

Աւելորդ է այստեղ կանգ առնել բանկիրի եւ առհասարակ վարկի (կրէդի) նշանակութեան վրայ մեր ներկայ կեանքում. դա մեր նիւթից դուրս է եւ չատ հեռու կը տանի մեզ։

Բուրժուական այս խաւն էլ եւ ուղղակի, անմիջապէս կեղեքում է իր մօտ եղող աշխատաւորներին — հաշուապահ, թղթակից, գրագիր, ծառայ, գրամահաւաք, բեռնակիր եւայլն եւ մանաւանդ, նրա եկամուտը բազկանում է այն տոկոսներից, որ նա ստանում է ուրիշներից. իսկ այդ ուրիշները կամ իրենք են անմիջապէս կեղեքում բանկից կամ թէ չէ իրենք էլ կեղեքում են ուրիշներին եւ բերում մի մասը տալիս բանկին, իբր տոկոս։

Բուրժուական խոշոր ներկայացուցիչներից են նաւատէրերը, երկաթուղատէրերը, կառքերի, օտոմոբիլների, հանրակառքերի եւ փոխադրութեան այլ միջոցների տէրերը։ Դրանց մի մասը եղել են նաեւ հին ու միջին դարերում, իսկ մի

մասն էլ էապէս ժթ. եւ ի. դարերի ծնունդ են։ Դրանք էլ իրենց ձեռքի տակ ունենում են մշակները, բանուորները, վարձու գործակատարները, կառավարիչները եւայլն, որոնց կեղեքում են, որոնց յաւելեալ արժէքները իւրացնում։

Բացի հոգեւորականութիւնից, բուրժուական միւս բոլոր խաւերի մէջ այսօր մտել է քաժնեւոր ընկերութեան սովորութիւնը։ Հիմնւում են ակցիաներով կամ բաժիններով ընկերութիւններ, ծախւում են այդ թուղթերը բորսաներում կամ անհատաբար, կազմւում է մեծ կամ փոքր մի դրամագլուխ, որի տէրը մի մարդ չէ, այլ շատերն են, յաճախ նոյնիսկ իրար բոլորովին անծանօթ։ Ընտրւում է մի վարչութիւն, բացւում մի բանկ, կամ մի մեծ վաճառատուն, կամ կառուցւում մի նաւ, մի երկաթուղի, մի քանի կառքեր կամ ինքնաշարժներ (օտոմոբիլ) եւայլն, եւ գործում, դրամ վաստակում ու իրենց բաժնետէրերին դիվիդենտ կամ զուտ արդիւնք տալիս տոկոսների ձեւով՝ ամէն մի թղթին իր չափով։

Այսպիսով դադարում է կապիտալն անհատական լինելուց եւ դառնում խմբական։ Մի խումբ կապիտալիստներ կեղեքում են մի խումբ բանուորների։ Եւ ոչ մի կասկած չկայ, որ կեղեքողների խումբը թուով շատ նուազ է, փոքր, իսկ կեղեքուողներինը թուով առատ է, խոշոր։

Անկասկած եւ անհերքելի է, որ դրամի տոկոսով ապրող բաւական խոշոր թիւ կազմող անհատներն ապրում են ուրիշների յաւելեալ ար-

ժէքով: Դրանք իրենց դրամները անձնում են բանկային հիմնարկութեան եւ ձեռք քաշում ամէն տեսակ աշխատանքից: Դրամատան վարչութիւնը կատարում է բոլոր աշխատանքները, նրանցից փոխառութիւն կատարող կապիտալիստները նոյնպէս կատարում են աշխատանքի մնացած մասը: Ձեռնարկողների այդ երկար չարքը ճգտում է մի բանի. ստեղծել հարստութիւններ, այսինքն՝ բնութեան ընծայած ձրի բարիքների մէջ խտացնել մարդկային ստեղծագործող աշխատանքը եւ նրանց վերածել արժէքների կամ հարստութիւնների. այդ հարստութիւններից մի փոքրիկ մասը տալ աշխատաւորներին ապրելու, գոյութիւնը եւ սերունդը — ապագայ աշխատաւորութիւնը չարունակելու համար, իսկ հարստութիւնների մնացած մասը իւրացնել, բաժանելով հողատիրոջ, գործատիրոջ, բանկիրի, առեւտրականի, պետութեան, փոխադրող կապիտալիստի միջեւ: Իսկ բանկիրն իր ստացած բաժնից մաս է հանում նաեւ այն մարդկանց, որոնք իրենց դրամները յանձնել են բանկին՝ տոկոսներ ստանալու պայմանով:

Այսօր քիչ են դրամի տոկոսներով մխայն ապրող անձերն: Արտաքուստ նրանք ամենեւին կեղեքիչի հանգամանք չունեն, բայց երբ քննում ես նրանց ապրուստի իսկական աղբիւրները, տեսնում ես, որ նրանց ստացած եկամուտն էլ յաւելեալ արժէքի մի մասն է միայն:

Մինչեւ այժմ մենք համառօտակի աչքէ անցըրինք բուրժուական կամ կեղեքիչ դասակարգե-

ըի ծագումը, պատմական զարգացումը եւ այսօրուայ կերպարանքը: Սակայն ինչպէս այս գլխի սկզբում եչտեցինք, կենսական երեւոյթներն իրարից խստօրէն չեն բաժանուում, չունեն չեզոքացած սահմանագծեր: Այժմ էլ պարտաւոր ենք ասել, որ բուրժուական խաւերից իւրաքանչիւրը մէկը,— որն էլ կ'ուզէք,— մի ծայրում ունի հարուստներ, միւս ծայրում աղքատներ: Եւ այդ ներքին, աղքատ ծայրին կանգնածներն այս կամ այն չափով մօտենում են աշխատաւորներին:

Սակայն միայն այդքանը չէ, բացի խաւերի ներսում եղած տատիճանաւորումից, մենք նկատում ենք նաեւ խաւերի տեսակների տատիճանաւորում: Այսպէս, զուտ բուրժուական խաւերից յետոյ անմիջապէս չեն գալիս զուտ աշխատաւորների խաւերը, այլ այդ երկուսի միջեւ գտեղուած են կիսաբուրժուական խաւերը, որոնք իրենց պորտի աղիքով կպած են լինում աշխատաւորութեան, բայց որոնք արդէն սկսել են օգտուել նաեւ չհատուցման բուրժուական միջոցներից:

Այդ կիսաբուրժուական խաւերն են խոշոր արհեստաւորները եւ գիւղական բուրժուաները:

Անկասկած՝ կարելի է այդ բոլորը հաշուել բուրժուական խաւերի մէջ, խաւերի ներսի տարբերական տատիճաններից որեւէ մէկի վրայ գտեղել նրանց: Այսպէս՝ կարելի է խոշոր արհեստաւորներին, որոնք ե'ւ իրենք են աշխատում ե'ւ դրամով կապում աշխատաւորութեան բանակի

հետ, եւ աշխատեցնում են 1–2ից աւելի վարձու բանուորներ եւ դրանով մանում յաւելեալ արժէք իւրացնողների չարքերը,— այդպիսի արհեստաւորներին, ասում ենք, կարելի է համարել գործարանային կամ գործատէր բուրժուաների խաւի մէջ, միայն թէ ներքին չարքերում: Ինչպէս նաեւ 1–2ից աւելի վարձու մշակները, հօտաղները, հընձուորները եւ հերկողները պահող խոշոր գիւղացուն կարելի է դեռեղել հողատէր դասի մէջ, միայն թէ համարել այնպիսի հողատէրը, որը պարտաւոր է, ինչպէս խոշոր արհեստաւորը, եւ ինքն աշխատել՝ եթէ ոչ իր սեփական բանուորներից աւելի, գո՛նէ նրանց հաւասար չափով, եւ ունենալ վարձու աշխատաւորներ, կեղեքել նրանց, իւրացընել նրանց յաւելեալ արժէքները:

Սակայն ընդունուած է արհեստաւորական եւ գիւղական մանր բուրժուային դիտել իբր բուրժուա դասակարգի մի ինքնայատուկ խաւը, որը թէ՛ աշխատաւոր է եւ թէ միաժամանակ կեղեքիչ:

Ի միջի այլոց՝ ասենք եւ այն, որ մեր երկրներում — Արեւմտեան Ասիայում տարածուած բուրժուական խաւերից ամենամեծ այդ երկու խաւերն են հետներն ունենալով ազնուականութեան (աւատականութեան) մնացորդները, պաշտօնէութեան եւ հոգեւորականութեան վերջին շերտերը: Դեռ եւս իսկական գործարանատէրը, դրամատէրը (բանկիրը), խոշոր հողատէրը (ոչ աւատատէրը) եւ նոյնիսկ խոշոր առեւտրական բուրժուա-

պի չունենք. եղածներն էլ ծովափերից ներս, դէպի հայկական սահմանները չեն թափանցել: Իսկ ծովափերում եղածների էլ մեծագոյն մասը եկուորներ են, եւրոպացիներ, օտար դրամագլխի ներկայացուցիչներ,

Անցնենք այժմ ներկայ հասարակութեան մեծամասնութիւնը կազմող աշխատաւոր դասակարգին եւ նրա խաւերին:

Առաջին հայեացքից իսկ այդ հսկայական զանգուածի մէջ մեր աչքին են ընկնում երեք խոշոր խաւեր. բանուորներ կամ իսկական պրոլետարներ, արհեստաւորներ եւ գիւղացիներ: Ինչ ասել կ'ուզէ, որ այդ վերին երկու խաւերից էլ մենք վերցնում ենք լոկ աշխատաւոր մասերը եւ ոչ կիսաբուրժուական շերտերը, որ մենք զետեղեցինք վերեւում, կեղեքող դասակարգի մէջ: Սկսենք առաջին խոշոր խաւից, պրոլետարներից.

Նախ բնորոշենք, թէ ի՞նչ է պրոլետարը:

Պրոլետարն այն անձն է, որը չունի սեփական արտադրական միջոցներ եւ այդ պատճառով ստիպուած է վաճառել իր աշխատանքն, ապրուստ ձեռք բերելու համար:

Եթէ պրոլետարը, չունենալով արտադրական միջոցներ, չդիմէ վարձուելու եւ չաշխատի, կը դառնայ մուրացիկ, կ'ընկնի պրոլետարների այն խմբի մէջ, որ ընդունուած է կոչել «լումպէն պրոլետարիատ» կամ ցնցոտիաւոր պրոլետարիատ: Սակայն այդ «լումպէն» բառը (ցնցոտի) լաւ չէ բնորոշում այդ խմբակին. աւելի յարմար է նը-

բանց անուանել մակարդոյծ պրոլետարներ, որովհետեւ դրանք աշխատանքից փախչողներից, ծայլերից, դիւրին ապրուստ որոնողներից են բաղկացած: Այդ օտար ու անպատուաբեր խմբի մէջ պէտք է հաշուել մուրացիկների այն մասը, որը կարող է աշխատել, բայց նախընտրում է մուրալ, պէտք է այդ շարքի մէջ դասաւորել բոկոտներին (բօսեակ), դողերին եւայլն:

Սակայն կարող է պատահել եւ մի այլ երեւոյթ: Մի իսկական պրոլետար, իր ժրաջանութեան եւ ծայրայեղ խնայողութեան շնորհով, կարող է տնտեսել մի քանի հարիւր մարկ, դեռեղել խնայողական գանձարանը, պահել «սեւ օրուայ» համար: Բանուորի այդ խնայողութիւնը կարող է հասնել նոյնիսկ 2–3, մինչեւ իսկ 5 հազար մարկի: Նա դրանից կարող է ստանալ նոյնիսկ տարեկան 200 մարկի չափ տոկոս, բայց եւ այնպէս նա կը մնայ պրոլետար, նա կը լինի չհագործուող:

Ստիպուած ենք մի անգամ էլ կրկնել, որ կեանքը չէ սիրում սահմանագծեր, խիստ իրարից տարբերուող, մէկէն ի մէկ իրարից անդունդներով բաժանուող երեւոյթներ: Պրոլետարիատի մի ծայրը գնում թաղւում է աղքատութեան, թշուառութեան թանձր ջրապատյի մէջ, իսկ միւս ծայրն աստիճանաբար բարձրանում է դէպի բարեկեցիկ խաւերը: Եւ կ'արհամարհէի ես այն մտածողներն ու քաղաքական կազմակերպութիւնները, որոնք չէին դրդի բանուորին մի քանի վա-

րա պահել «սեւ օրուայ համար»: Դաժան եւ անմիտ է այսօր այն հնացած վարդապետութիւնը, որը քարոզում էր «որքան վատ, այնքան լաւ» ըսկզբունքը. այսինքն որքան վատանայ բանուորի եւ գիւղացու վիճակը, որքան նա աւելի խոր թաղուի աղքատութեան ու տառապանքի մրուրին մէջ, այնքան աւելի կը զգայ իր վիճակի խակութիւնը, այնքան աւելի կը զայրանայ եւ ջարդ ու փշուր կ'անէ իր կեղեքիչներին:

Դառն մոլորութիւն:

Մարդկային էակն անընդունակ է երկար ժամանակ դիմադրելու ծայրայեղ թշուառութեան, առանց ընկճուելու: Ճնշման, հալածանքի եւ թշուառութեան որոշ աստիճան կայ, մինչեւ որը, յիրաւի, մարդիկ ըմբոստանում են, բորբոքում, իսկ երբ այդ աստիճանն անցնում է, անհատների եւ նոյնիսկ ամբողջ հասարակութիւնների մէջ մեռնում է բողոքելու, ըմբոստացման ոգին, մարդը ընկնում, անասնանում է: Եւ դա բնական օրէնք է — ինչպէս հոգեկան, այնպէս էլ ֆիզիքական աշխարհում: Ջարկեցէք երեխայի ձեռքին նախ կամաց եւ ապա աստիճանաբար աստիճ ու աստիճ: Երեխան սկզբում կը բողոքէ, որովհետեւ ցաւ կը զգայ: Եթէ, չլսելով նրա բողոքին, շարունակէք ձեր ուժգին հարուածները, կը հասնի մի վայրկեան, երբ նրա ձեռքն այլեւս կ'անզգայանայ:

Այդպէս է նաեւ դասակարգային հոգեբանութիւնը: Ամէն չանք պէտք է գործ դնել, որ պրո-

լեռաբիատը կարողանայ աւելի եւ աւելի լաւ ապրել, մանակցել կեանքի վայելքներին: Դրանով ամենեւին չի մեռնի նրա մէջ կռուելու, աւելի եւ աւելի վեր բարձրանալու ձգտումը: Բանուորութիւնը մինչեւ օրս չանք է գործ դրել գրաւել մօտակայ դիրքը, բարձրանալու եւ այնտեղից կազմակերպելու իր ալիքի նոր գրոհը դէպի նոր, աւելի բարձր դիրք: Սա աստիճանական զարգացման տեսութեան գործնական իրականացումն է: Սակայն այդ տեսութիւնը եւ այդ ձեւի գործելակերպը չեն հակասում, արմատապէս չեն ժխտում վերջնական նպատակին հասնելու համար գործադրուելիք յեղաշրջումը:

Թէորիակիսոնները ոմանք պնդում են, որ դասակարգային կռիւն իր բոլոր աստիճանների վրայ կարիք ունի յեղաշրջման կամ ռեւոլիւսիոնի, իսկ ուրիշներ միանգամայն ժխտում են յեղաշրջման գաղափարը եւ պնդում, որ ներկայ բուրժուական կազմի մէջ պէտք է մարզկութիւնն անցնի դէպի ընկերվարութիւն՝ դանդաղ յեղաշրջման կամ էւոլիւսիոնի չնորհով:

Մենք դէմ ենք այդ երկու ծայրայեղութիւններին էլ: Կեանքը չէ սիրում այդպիսի միատեսակ, միապաղաղ եւ ամէնքի համար պարտադիր օրէնքներ: Կան երկիրներ, հասարակութիւններ ու վայրկեաններ, երբ յեղաշրջումը դառնում է ճակատագրական անհրաժեշտութիւն, իսկ մեծ մասով՝ բարեշրջումն է, որ պէտք է դեր կատարէ: Երբ հասարակական դասակարգերի յարաբե-

բութիւնները կամաց-կամաց կը լարուին, երբ նը-
դանց չահերի հակադրութիւնը կը սաստկանայ,
երբ բարեչրջումն անկարող կը լինի հակադիր դա-
սակարգերն իրար մօտեցնել, տաչել, յղկել եւ
իրար հետ ճուլուելու տրամադրել, ահա այն ժա-
մանակ գլուխ կը բարձրացնէ յեղաչրջումը —
բոնի, ճնշիչ միջոցը:

Տնտեսական այդ խնդրին թերեւս մենք վե-
րադառնանք հետեւեալ գլխում. իսկ այժմ կրկին
դիմենք մեր վերլուծութեան թելին:

Պրոլետարը չի դադարի պրոլետար լինելուց,
եթէ որեւէ կերպ հնար գտնէ խնայողական արկղը
յանձնելու 2-3000 ֆրանկի մի չնչին գումար:
Պէտք է խրախուսել այդ ճգտումը բանուորների
մէջ, որովհետեւ դասակարգային ազատամարտի
ահեղ րոպէներին նա չատ մեծ կարիք պիտի ու-
նենայ այդ խնայած, «ատամից կտրած» դրամ-
ներին:

Գաղտնիք չէ, որ ներկայ բուրժուական հա-
սարակակարգի ժամանակ բանուոր դասակարգն,
իբր մի ամբողջութիւն, ոչ մի հնար չունի խնա-
յողութիւն անելու. նրան վճարում են այնքան
աչխատավարձ, որքան անհրաժեչտ է նուազագոյն
ապրուստի համար: Սակայն կեանքի ալիքների
խոչոր վերիվայրումների պահուն, լիապէս հնա-
րաւոր է բազմաթիւ անհատների համար չնչին
չանքով բաւական զգալի խնայողութիւն կատա-
րել:

Ուրեմն՝ մեր խօսքը չէ վերաբերում ամբողջ

պատակարգին, այլ որքան կարելի է չատ թուով անհատների:

Երբ մենք ասում ենք պրոլետարիատ, նրա մէջ ենք զետեղում ա) բոլոր մանր ու խոշոր գործարանների, բ) բոլոր հանքերի, գ) բոլոր մանր ու խոշոր արհեստանոցների բանուորները: Դրա մէջ ենք հաչւում նաեւ դ) բոլոր հողագործ գիւղացիներին, որոնք վարձւում են գիւղերում իբր մշակներ, իբր գիւղական, գիւղատնտեսական բանուորներ: Դրա մէջ ենք համարում նոյնպէս ե) երկաթուղային, նաւային եւ փոխադրական այլ միջոցներում ծառայող վարձու մշակներին ու բանուորներին:

Աչխատաւոր դասակարգի այս խաւը հին քաղաքակրթութեան երկրներում գրեթէ գոյութիւն չունէր, որովհետեւ հին հասարակութիւնները բաժանւում էին երկու խոչոր դասակարգերի. ազնուական և ստրուկ: Ազնուականութեան հարուստ մասն անպայման ստրկատէր էր. նա բանեցնում էր իր սեփական ստրուկներին, իսկ աղքատ ազնուականութիւնն ինքն էր կատարում իր գործը: վարձուող տարրեր գրեթէ գոյութիւն չունէին: Իսկ ազնուականութեան աղքատ մասը համարում էր աչխատանքն ստոր, անվայել պարապմունք. նա միայն իր տնական սեփական գործերն էր կատարում, հպարտօրէն խուսափելով որեւէ այլ գործից:

Հին դարում եթէ եղել են վարձու աչխատող-

ներ, դրանք կազմել են պատահական երեւոյթներ եւ դրանց գլխաւոր բաղադրիչ մասը կազմել են օտարականները:

Միջին դարերում էլ բոլոր հոգեւորական, հոգատէր կամ աղնուական դասերն ունեցել են իրենց ճորտերը, որոնք կատարել են բոլոր անհրաժեշտ գործերը: Աղնուականութիւնն ու հոգեւորականութիւնը դրեթէ չեն դիմել վարձու աշխատաւորներին, որովհետեւ այդ երկու «բարձր» խաւերն էլ առատօրէն ունեցել են իրենց ճորտերը, որոնք կատարել են բոլոր աշխատանքները կա՛մ իբր ուղղակի պարտականութիւն, կամ իբր կոռ ու բեկեար, օլամ, անկարիա եւայլն:

Սակայն միջին դարերում վարձու աշխատանքն արդէն սկսում է դառնալ հասարակական որոշ երեւոյթ, պատկառելի, աչքի ընկնող չափերի հասած: Եթէ հոգեւորական ու աղնուական դասերը, իբր սեփական ճորտատէրեր, կարիք չունէին վարձու բանուորների, եթէ նրանց միակ վարձկանները վարձու կռուողներն էին, միւս կողմում, հասարակութեան միւս խաւերում արդէն սկսում էր ծայր տալ վարձու աշխատանքը: Նախ եւ առաջ նկատենք, որ նոյնիսկ գիւղում, ճորտ ազդաբնակութեան մէջ նիւթական դրութեան անհաւասարութիւնն ստիպում էր կարողաւոր, մի քիչ աւելի հարուստ մի ճորտ գիւղացու վարձել իր չունեւոր դրացու զաւակներից մէկին, օրինակ, իբր հօտաղ, իբր հնձուոր եւայլն: Այդ երեւոյթը պէտք է զարգանար գիւղերում եւ հիմք դնէր գիւ-

գործունեության մէջ ապագայում խստօրէն չեչտուող ներտաւորումների:

Բայց միջնադարեան գիւղը չէ, որ դառնում է վարձու բանուորութեան հայրենիքը, նրան առատ զարգացման նիւթ մատակարարող միջավայրը, այլ միջնադարեան քաղաքն է, պարսպապատ բուրգը: Նախընթաց երեսներից մէկում մենք մի քանի խօսքով նկարագրեցինք այդ քաղաքների ծագումն ու զարգացումը: Նրանց այդ երկարող նկարագրութիւնն անդամ լիապէս բաւական է ցոյց տալու, որ այնտեղ անպատճառ պիտի թագաւորէր վարձու աշխատանքը: Ու այդպէս էլ եղաւ: Քաղաքներում սկիզբ առան համքարութիւնները կան էսնաֆութիւնները, որոնց մէջ վարպետների կողքին անպատճառ պիտի լինէին վարձու օգնականներ ու բանուորներ: Նոյն «բուրգ»երում կենտրոնացաւ առեւտրական դասը, որը չէր կարող ապրել առանց վարձու մշակների, բանուորների ու գործակատարների:

ԺԶ. դարում, երբ երեան եկաւ մանուֆակտուրական արտադրութիւնը, որ համքարական կազմակերպութիւնների հզօր արգելքների չնորհով սահպատած եղաւ նախ ապատանել գիւղերում. միւս կողմից՝ երբ աղնուականութիւնն ու հոգեւորականութիւնն սկսեցին «իրենց հողերի» վրայից արտաքսել գարերով հաստատուած ճորտ գիւղացիներին,— ահա այդ ժամանակ խակական վարձու բանուորութիւնն էլ սկսեց ցրիւ գալ թէ՛ գիւղերում եւ թէ քաղաքներում:

Ձորաստիրութիւնն օրէնքով վերացուած է ԺԷ. դարուն: Նոյն դարավերջում հնարուում են բազմաթիւ մեքենաները, բացուում են իսկական գործարանները եւ վարձու բանուորութեան թիւն սկսում է աճել գլխապտոյտ արագութիւնով:

Սկզբներում վարձու աշխատաւորից պահանջուում է արհեստ, մասնագիտութիւն, իսկ յետոյ, մեքենայի յառաջանալու չնորհով, այդ պահանջն սկսում է ընկնել, մեքենան իրար է հաւասարեցնում բոլոր բանուորներին, թողնելով միայն արհեստաւորներին, գլխաւոր վարպետներին եւ մասնագէտներին:

Այդ բոլորից պարզ երեւում է, որ մեր ակնարկած բոլոր պրոլետարական խաւերը — գործարանային, հանքային, արհեստանոցների, գիւղական, երկաթուղային — բոլորն էլ գրեթէ արդիւնք են ԺԹ. դարի, զաւակ են գործարանների ու սրանց կեանք ու հոգի ներշնչող մեքենաների — շոգեշարժների, ելեկտրաշարժների, գազոմոտորների:

Որքան մի երկիր կուլտուրապէս յառաջադիմում է, այնքան աւելի աճում են մշակուող հանքերը, գործարանները, մեծ ու փոքր արհեստանոցները, երկաթուղիները, շոգենաւերը, կառքերը, ինքնաշարժները (օտոմոբիլ) եւայլն. աճում են, ի հարկէ, եւ դրանց մէջ ու դրանց վրայ աշխատող վարձու բանուորների թիւը. մեծանում, ուռճանում է պրոլետարական բանակը, որը չափազանց նուազ ու խոնարհ չափերի է լինում յե-

տամնաց, անկուլտուր երկրներում:

Աշխատաւորութեան երկրորդ ընդարձակ խաւն է աշխատաւոր գիւղացիութիւնը:

Նախընթաց դլխում մենք արդէն պարզել ենք, թէ ինչ ենք հասկանում «աշխատաւոր գիւղացի» բառերով: Այդ անունը մենք տալիս ենք այն գիւղացիներին, որոնց հողի քանակութիւնը չէ պարտադրում նրանց հրաւիրել վարձու բանուորներ մշակութեան համար, այլ իրենք՝ հողատէրերը և իրենց ընտանիքի աշխատունակ անդամները լիուլի բաւարար են ունեցած հողերը մշակելու, իրենց ճակատի քրտինքով ապրելու, «իրենց իւղով տապակուելու»: Հողի այդ քանակը, որ մշակում է ճիշդ իր տէրերի և նրանց ընտանիքի աշխատանքով, կոչւում է աշխատաչափ հող, իսկ այդչափ միայն և ոչ աւելի հող ունեցող գիւղացին՝ աշխատաւոր գիւղացի: Աշխատաչափից աւելի հող ունեցող գիւղացին աստիճանաբար սկսում է հեռանալ աշխատաւոր դասակարգից և տեղաւորուել կեղեքող կամ բուրժուական դասակարգերի խաւերում: Իսկ աշխատաչափից նուազ հող ունեցող գիւղացին աստիճանաբար մտնում է պրոլետարական խաւերը, դրկուելով արտադրական բոլոր միջոցներից:

Սկսած անյիշատակ ժամանակներից, միշտ դոյութիւն է ունեցել աշխատաւոր գիւղացիութիւն, միայն փոփոխուել է նրա հասարակական դիրքը և ազդեցութիւնը:

Սկզբնական հասարակութիւնները, որոնք դեռ

չէին ստեղծել ստրկատիրութիւն, բաղկացած էին իրար հաւասար խաչնարած, որսորդ եւ այլ ըղբաղմունքի տէր աշխատաւորներից: Երբ ծագեց երկրագործութիւնը, մենք տեսնում ենք, որ մարդն աշխատեց այլ ծանր աշխատանքի բեռը նետել ստրուկների, ճորտերի վրայ: Սակայն Հռոմի փառապանծ շրջանը մեզ պարզ ցոյց է տալիս, որ պատրիկների ազնուական դասի դրեթէ բոլոր անդամները երկրագործներ էին. որ նոյնիսկ Հռոմի վտանգաւոր վայրկեաններում ինքնակալ, անսահման իշխանաւոր հրատարակուած տաղանդաւոր ազնուականն անգամ, փրկելով հայրենիքը վերահաս վտանգից, մի կողմ է նետում դիկտատորութիւնը կամ իշխանապետութիւնը եւ կրկին ձեռքն է առնում իր դութանը: Նոյն երկրագործներին ենք մենք պատահում եւ Յունաստանում, սկզբնական շրջանի պատմութեան մէջ: Սակայն յոյները, լինելով առեւտրականներ, չուտով սկսեցին արհամարհանքով նայել երկիրը մշակելու արհեստին, իսկ հռոմէացիները չատ աւելի երկար պահեցին յարգանքը դէպի երկրագործութիւնը:

Քաղաքակրթութեան կուտակման հետ միասին՝ աստիճանաբար ազնուականութիւնն սկսում է զբաղուել քաղաքական, քաղաքացիական, զինուորական ու դատական գործերով, արհամարհում ֆիզիքական աշխատանքը, երկրագործութիւնը նախ նետում ստրուկների, ապա ճորտերի վրայ: Ամբողջ միջին դարերի ընթացքում ազնը-

ականութիւնն ու հոգեւորականութիւնն ազատ էին երկիրը մշակելու տաժանելի արհեստից. այդ բեռը նրանք բարդել էին ճորտ գիւղացիութեան վրայ, որից տասանորդ էին ստանում եւ որին ըստիպում էին կատարել բազմաթիւ ձրի աշխատանքներ զանազան անունների տակ: Անհնազանդ ճորտերին ազնուականութիւնը հնազանդութեան էր բերում զէնքով, ինչպէս Թուլմաս Մինցէրնի օրերում Գերմանիայում, ինչպէս Ժակերի չարժումը Ֆրանսիայում, Լոլարներինը՝ Անգլիայում եւայլն, եւայլն: Հոգեւոր դասն էլ երկու տեսակ հատու զէնք ունէր իր բազմաթիւ ճորտերին հնազանդութեան մէջ պահելու համար. առաջին՝ խղկական զէնքը: Հոգեւորականն էլ իբր աշխարհական ազնուական, պահում էր զինուած պահակներ, անցնում նրանց գլուխը եւ պատերազմի մասնակցում կամ կոտորում իր անհնազանդ ճորտերին: Երկրորդ զէնքը չա՛տ աւելի հատու էր միջին դարերում, ուր համատարած խաւարն էր թագաւորողը: Դա հոգեւորականի այժմ բաւական բթացած, դուլ զէնքն է — դժոխքն ու դրախտը, բանադրանքը, որոնք դրեթէ ամենազօր էին միջին դարերում: Պապերը կայսրներին էին դողացնում բանադրանքով, իսկ ի՞նչ կը լինէր ողորմելի ճորտի վիճակը, եթէ հրաւիրէր իր վրայ հոգեւորականի զայրոյթը:

Ճորտատիրութեան վերանալով միասին աստիճանաբար սկսեց բարձրանալ երկրագործութեան նշանակութիւնն ու երկրագործի պատիւը: Ազատ

գիւղացին ամօթ չէ համարում մշակել հողը: Եւ գիւղացիութիւնը կազմում է այսօր ամէն տեղ մի հակայական մասը բոլոր երկրների ազգաբնակութեան: Շա՛տ աւելի մեծ է նրա տեղը նոյն երկրների հարստութիւններն արտադրելու գործում:

Որքան մի երկիր աւելի յետամնաց է, այնքան նրա քաղաքների թիւը քիչ է եւ քաղաքներն էլ մանր են, սակաւ բնակիչներով, իսկ գիւղական ազգաբնակութիւնն այնքան աւելի շատ է: Եւ որքան երկիրն առաջ է գնում, այնքան աւելի աճում է քաղաքաբնակների թիւը, նուազում գիւղացիութիւնը: Նախընթաց գլխում տուած լինելով թիւեր, մենք այժմ աւելորդ ենք համարում կրկնել. այսքան միայն անհրաժեշտ է ասել, որ Թուրքիայում, Ռուսաստանում եւ Պարսկաստանում, որոնց մէջ ապրում է հայ ժողովուրդը, գիւղական ազգաբնակութիւնը դեռ եւս կազմում է, գրեթէ բոլորի համար էլ, ազգաբնակութեան առնուազն 75 առ հարիւրը: Կը նշանակէ հայ ազգի բնակավայրերում դեռ եւս ազգաբնակութեան երեք քառորդը գիւղերումն է ապրում, միայն մէկ քառորդը քաղաքներում: Գիւղական ազգաբնակութեան այդ ճնշող թուական առաւելութիւնը մեզ պէտք է դրդէ աւելի մեծ ուշադրութիւնով վերաբերուել դէպի գիւղացիութեան գաւառը, դէպի նրա կրթութիւնը եւ, մանաւանդ, դէպի նրա դասակարգային չահերը:

Մեր փրկութեան հզօրագոյն խարիսխը լինե-

լու է գիւղացիութեան արագ լուսաւորութիւնը, գիւղական ամէն տեսակի ընկերութիւններն ու կազմակերպութիւնները, որոնց վրայ կոթնած, պէտք է կռիւ մղել գիւղացուն քայքայող բոլոր ե-րեւոյթների դէմ, ինչպէս պետական հարկերի ծանրութեան, ինչպէս գիւղացու դէմին բազմած ֆէոդալական և, մասամբ, հոգեւոր դասերի դէմ, վաշխառուների, կեղեքիչ պաշտօնեաների, աւա-զակների եւ այլ ցեղերի դէմ:

Այդ բոլոր հարցերը, լինելով զորձնական քա-ղաքականութեան խնդիրներ, մենք թողնում ենք լուծելու զանազան քաղաքական կազմակերպու-թիւնների եւ առաջ ենք մղում մեր վերլուծու-թեան զուտ տեսական մասը:

Վերեւում մենք պարզեցինք, թէ ինչ ենք հասկանում աշխատաչափ հող բառերով: Սակայն ամէն տեղ եւ ամէն ժամանակ հողի աշխատաչա-փը մի եւ նոյնը չէ: Վայրենին հողագործ չէ. մի կողմ թողնենք նրան: Բարբարոս հողագործի հա-մար աշխատաչափը շատ մեծ պիտի լինի, որով-հետեւ նա մշակում է հողի երեսը չափազանց թե-թեւ, դիւրին ու մատչելի եղանակով, որը սա-կայն այնքան արդիւնարեր չէ, որքան քաղաքա-կիրթ մարդու մշակածը: Բացի այդ, բարբարոսը մի եւ նոյն հողը մշակում է 1–2, առաուաւելը 3 տա-րի եւ ապա մի տարի խամ թողնում, որպէսզի հողը ոյժ առնէ: Նրան անծանօթ է հողի պարար-տացման հարցը: Մի խօսքով, նրա անտեսութիւ-նը կամ մշակոյթն էքստենսիւ է, այսինքն աւելի

տաբածական, աւելի չատ հող պահանջող, քան ծախք ու աշխատանք:

Այդպէս չէ քաղաքակիրթ գիւղացու մշակութիւնը: Նա ունի կատարելագործուած արօր ու գութան. նա լաւ խորն է մշակում իր արտը: Նա ուսումնասիրել է իր հողի յատկութիւնները. գիտէ, թէ ինչ բաղադրիչ մասն է նուազ նրա մէջ: Գիտէ նաեւ, թէ ինչ պարարտացուցիչ բաղադրութիւններ պէտք է խառնել հողի հետ, որպէսզի այսինչ բոյսն աւելի արդիւնք տայ...: Նրա հողը չէ յոգնում, որովհետեւ ամէն տարի աւելացնում է նրա պարարտացուցիչ մէջոցները եւ բնութեան կատարելիք վերանորոգիչ, կենդանարար գործն ինքն է կատարում: Բայլ այդ, նա գիտէ ընտրել ու ցանել այնպիսի բոյսեր, որոնք ե՛ւ աւելի չատ են բերք տալիս, ե՛ւ աւելի սուղ գնով են ծախւում: Մի խօսքով նրա մշակոյթն էքստենսիւ կամ տաբածական չէ, այլ ինտենսիւ կամ առատիկ է:

Այդ համառօտ պարզաբանութիւնից երեւում է, որ ամէն տեղ եւ ամէն ժամանակ գիւղացու հողի աշխատաչափը միեւնոյնը չէ. նա փոփոխւում է, նայած թէ որքան զարգացած է երկիրը:

Մի ուշագրաւ կէտ եւս: Քանի աւելի զարգանում է գիւղացին, այնքան աւելի նրա մարդկային պահանջները աւելանում, այնքան աւելի բազմապատկւում են: Սակայն դրա հետ միասին նրա գիտութիւնը, նրա աշխատունակութիւնն ու արտադրական կարողութիւնն էլ այնքան աճում են: Այնպէս որ՝ մարդկանց աճող կարիքներին եւ ան-

հատների ամող թուին բաւարարութիւն պէտք է տայ զարգացող արտադրութիւնը, կատարելագործուող տեխնիկան (մեքենագիտութիւնը), արհեստները եւ մանաւանդ երկրագործութիւնը: Ֆրանսիացի հանճարեղ քիմիկոս եւ վիճակագիր Բէրտըլոն դրական փաստերով ապացուցանում էր, որ ներկայիս Ֆրանսիան, որ հազիւ է կերակրում 40 միլիոն ժողովուրդ, եթէ կանոնաւորապէս գործադրէ պարարտացման քիմիական մէջոցները, որ յայտնի են արդէն գիտութեանը, դիւրութիւնով կարող կը լինի կերակրել 200 միլիոն ժողովուրդ:

Գիւղացիների եւ բանուորների խնդիրը քննելով նախընթաց գլխում, մենք եկանք այն եզրակացութեան, որ թէ՛ բանուորը եւ թէ գիւղացին հաւասարապէս ընդունակ են ըմբռնելու ընկերվարական վարդապետութիւնը, որ նրանց դասակարգային չահերը պահանջում են մտնել ընկերվարական բանակը, ճիգ ու ջանք թափել ընկերվարական կազմի արագ հաստատման համար, որովհետեւ այդ կազմն իրենց միանգամայն ճեռնտու է: Վէճի այդ տեսական մասից երբ պէտք է անցնել փորձնական գործադրութեան, խնդրոյ սկսում է ստուգման դործողութիւնը:

Աչխատաւոր գիւղացի· սակայն այդ անունը կարելի է տալ ե՛ւ քիւրտ գիւղացուն, ե՛ւ ափրիկեան քաֆրներին, ե՛ւ Ամազոնի ափունքների կուսական անտառներում մասամբ հողը մշակելով, մասամբ ձկնորսութիւնով պարապող Դակոտանե-

րին ու բառակուտներին, և՛ հայ, և՛ ռուս գիւղացիներին, վերջապէս և՛ դանիացի, գերման, ֆրանսիացի ու զուիցերացի գիւղացիներին: Դրանք բոլորն էլ աշխատաւորներ են, որոլորն էլ ապրում են իրենց հալալ աշխատանքով: չեն իւրացնում ոչ ոքի յաւելեալ արժէքը: Բայց դրանք բոլորն էլ հաւասարապէս ընդունակ չեն ըմբռնելու ընկերվարական վարդապետութիւնը:

Բաւական չէ լինել լոկ բանուոր կամ աշխատաւոր գիւղացի, որպէսզի ընդունակութիւն ձեռք բերէ ընկերվարական դառնալու: Այդ եւ նման վարդապետութիւններ ըմբռնելու համար անհրաժեշտ է երկու պայման. նախ՝ արտաքին, երկրորդ՝ ներքին պայման: Արտաքինը երկրի ընդհանուր կուլտուրական վիճակն է, նրա դպրոցների, դրականութեան, նրա հաղորդակցութեան միջոցների, մեքենաների, գործիքների զարգացման աստիճանը: Այնտեղ, ուր հողը մշակւում է մի ոսկրի կտորով կամ մի նահապետական վայտէ չութով, ընկերվարութիւնը հող չունի. այդպիսի երկրում աղգարնակութիւնը չափազանց նօսր է լինում, հողը խիստ առատ, ընկերային հարցերը ոչ մի սրութեան չհասած...: Երկրորդ պայմանն է ներքինը — մարդկանց մտաւոր կուլտուրան: Եթէ այսօր Ռուսաստանի արեւմտեան նահանգներում լեհ, լատիշ, ռուս գիւղացիներն ու բանուորներն ընդունակ են կազմակերպուելու իբր ընկերվարական բանակներ, նոյնը չէ կարելի ասել Սիբիրի գիւղացիների, Արխանգելի մուժիկների

կամ Թուրքեստանի տափարակների սարքերի մասին: Սակայն, նկատեցէք, դրանք բոլորն էլ Ռուսաստանի բնակիչներ են, բոլորի երկրով էլ երկաթուղիներ են անցնում, կան գործարաններ, խոշոր արհեստանոցներ, բանուոր դասակարգ եւ այլն:

Ուրեմն՝ միայն արտաքին պայմանը չէ վըճռողը. անհրաժեշտ է եւ ներքին պայմանը — գիտակցութիւնը, մտաւոր մշակութիւնը, դպրոցը, գրականութիւնը, գիտութիւնը, գեղարուեստը:

Արդեօք ո՞ր պայմանին պէտք է նախապատուութիւն տալ: Երկուսի՛ն էլ միաժամ, կ՚ասենք մենք: Դրանք միշտ իրար հետ են ընթանում: Կան դէպքեր, երբ մտաւորն է աւելի մեր աչքին ընկնում. պակաս չեն այն դէպքերն էլ, երբ արտաքինն է մեր աչքին զարնուողը:

Այսպէս, ուրեմն, երբ մենք ասում ենք աշխատաւոր դիւղացի, որն ընդունակ է կազմել քաղաքական կուսակցութիւնների հիմնաքարը, պէտք է հասկանանք այն գիւղացիութիւնը, որը քիչ ու չատ բարձր կուլտուրական վիճակի վրայ է եւ ընդունակ ըմբռնելու այդ կուսակցութիւնների քարոզները: Իսկ այնպիսի երկրներում, ինչպիսին Թուրքիան, Պարսկաստանը եւ Ռուսաստանն են, գիւղացիութիւնը ներկայացնում է մի անկամ, խաւար ու տգէտ ամբոխ, որին դեռ պէտք է uռվորեցնել — թէ՛ մտաւոր, թէ՛ տնտեսական մշակոյթի պատուաստել, եւ ապա միայն ասել, որ այժմ նա ընդունակ է ըմբռնել ընկերային եւ ըն-

կերվարական գաղափարները: Իսկ առ այժմ նա ամբոխ է — անկերպարան, անգիտակից, որի վրայ կարելի է ազդել, որին կարելի է վարել այս ու այն ուղղութիւնով, բայց որը դեռ խարխափում է անգիտակցութեան ու խաւարի վիհերում:

Աշխատաւորութեան հետեւեալ շերտը կազմում են մանր արհեստաւորները. նրանք, որոնք ունեն մի արհեստանոց, ուր բանում են իրենք, հետներն ունենալով մի երկու աշակերտ եւ մէկ, առ առաւելն երկու բանուոր:

Մանր արհեստաւորութեան վիճակն այսօր այնպէս է, որ այլեւս մի խանութատէր արհեստաւորի եւ իր մօտ խակ աշխատող բանուորի առացած վարձատրութիւնների մէջ գրեթէ ոչ մի տարբերութիւն չկայ: Արհեստաւորի կամ վարպետի զգեստը, բնակարանը, ապրուստը գրեթէ նման են իրար մօտ աշխատող բանուորի թէ՛ զգեստին, թէ՛ բնակարանին, թէ՛ ապրուստին: Նրանց մտաւոր վիճակը, նրանց աշխարհահայեացքն անգամ նոյնութիւն են: Ճաճախ պատահում են այնպիսի պարագաներ, երբ բանուորի վիճակն անպայման աւելի լաւ եւ աւելի ապահով է, քան խանութատէր վարպետինը: Թէ՛ անձնական բազմաթիւ փորձերով, թէ՛ դրքերից դիտենք, որ այդ մանր արհեստաւորներից չատերը, որոնք ունեցել են ոչ թէ մէկ կամ երկու բանուոր, այլ նոյնիսկ 8–10 վարձու գործաւորներ, — առաջարկել են իրենց բանուորներին միանալ իրենց հետ, կազմել մի արտադրական կոոպերատիւ կամ գոր-

ծակցութիւն՝ հետեւեալ պայմաններով. խանութպահէրը, որ առաջնակարգ վարպետ է, դնում է իր բոլոր գործիքները, սեղանները, ամբոխները եւայլն,— այն ամէնը, ինչ որ անհրաժեշտ է արհեստանոցի համար, ինքն էլ, իբր մի անդամ կապերատիւի, մասնակցում է իր աշխատանքով, ինչպէս բոլոր միւս բանուորներն, ստանալով միւս լաւագոյն բանուորներին հաւասար օրավարձ: Եւ այդ առաջարկները դրեթէ միշտ մերժուել են վարձու բանուորների կողմից, որովհետեւ նրանք լաւ գիտեն մանր արհեստաւորի վիճակը: Թէեւ ռուս սոցիալ դեմոկրատները նրանց անուանում են «մանր բուրժուա», բայց նրանց մօտ իսկ վարձու բանող գործաւորները չեն բարեհաճում երբեք ընկնել նրանց վիճակին. եթէ մի օր յաջողւում է մանր արհեստաւորին մի չնչին դումար աւելի ստանալ իր բանուորի օրավարձից, նրա դէմքից յաճախ նա ցուցադրուած է լինում պատահականութեան հովերին,— այո՛, շատ յաճախ նրան աւելի քիչ է մնում վարձատրութիւն, քան իր մօտ վարձով աշխատող բանուորին:

Այդ երերուն ու թշուառ վիճակը մանր արհեստաւորին դարձնում է ընդունակ ըմբռնելու ընկերվարական կազմակերպութիւնների սկզբունքները, դրդում է նրան փարելու այդ կազմակերպութիւնների դրօշակին, նրանց իդէալներին: Բացի այդ, գործնականօրէն, այսօր եւեթ կարելի է մանր արհեստաւորներին միատեղել, կազմել մի արտադրական խոշոր, նոյնիսկ հսկայա-

կան կապերաին եւ չարունակել արտադրութեան գործադրութիւնը: Դրանով, ի հարկէ, լուծուած չի լինի ներկայ ընկերային խնդիրը — կապիտալի եւ աշխատանքի կռիւը, բայց դրանով մենք կը տանք հարցի լուծման հնարաւորութեան մի փորձնական օրինակ:

Արհեստաւորութիւնը նոր երեւոյթ չէ մարդկային պատմութեան մէջ: Արհեստաւորները գոյութիւն ունէին հին դարերում էլ: Սակայն տարբերաիրական եւ միջնադարեան ճորտաիրական տնտեսութիւնները հնարաւորութիւն չէին տալիս արհեստաւորներին տարածուելու եւ ծաղկելու գիւղերում էլ. եւ նրանք մնում էին կենտրոնացած գրեթէ բացառապէս քաղաքներում: Գիւղացիներն իրենք էին կատարում արհեստաւորի գործը, որ պահանջւում էր գիւղերում. դա բնատնտեսութեան թագաւորութիւնն էր:

Քաղաքներում, սկսած ԺԱ. դարից, արհեստաւորներն այնքան են զօրանում, որ նրանց էնաֆութիւնները կամ համքարութիւնները դառնում են ամենազօր տէրեր միջնադարեան քաղաքներում կամ բուրգերում: Ցանախ հպարտ ֆէոդալներն ու զոռոզ հոգեւոր ֆէոդալները պարտքառւ, գլուխ են ծռում համքարական կուռ կազմակերպութիւնների առջեւ:

ԺԶ. դարում սկիզբն է առնում մանուֆակտուրական արտադրութիւնը, որը հալածուելով արհեստաւորական բռնակալ կազմակերպութիւն-

ներից, նախ ապաստանում է գիւղերում, այս ու այն իշխանի կամ եպիսկոպոսի գիւղերը, իսկ յետոյ, երբ աւելի եւ աւելի զարդանում, ուժ է ձեռք բերում, իսկ միւս կողմից, երբ համքարական կազմերը, քարանալով ու բռնակալ դառնալով՝ իրը հնաւանդ սովորութիւններ, դառնում են անտանելի թէ՛ պետութեան, թէ՛ հանրութեան եւ թէ, մանաւանդ, իրենց իսկ անդամների համար, քայքայւում եւ Տիւրգոյի օրով, Մեծ Ցեղափոխութեան նախօրեակին օրէնքով վերացւում են, — այդ ժամանակ ահա մեքենական արտադրութիւնն սկսում է ասպարէզները արագ խլել արհեստաւորական արտադրութեան ձեռքից: Սակայն արհեստաւորութիւնը չէ ոչնչանում: Կան շատ ճիւղեր, որոնց մէջ մեքենան կամ դեռ ամենեւին մուտ չէ գործել, կամ մուտ է գործում չափազանց դանդաղօրէն: Այդ ճիւղերում ահա արհեստները դեռ կը մնան երկար չա՛տ երկար: Բացի այդ, արտադրական բոլոր այն ճիւղերը, ուր պէտք է գործ ունենալ մարդու անհատական ճաշակի հետ, այդ ասպարէզներից էլ արհեստը երբեք չի վերանայ, որքան էլ կատարելագործուին մեքենաները, որքան էլ նրանք էժան արտադրեն: Այսպէս, կօշկակար արհեստաւորը չի վերանայ, որքան էլ մեքենան զարդանայ. չեն վերանայ նաեւ դերձակները, գլխարկ կարողները (կանանց համար) եւայլն, որովհետեւ մեքենան անընդունակ է անհատների ճաշակներին բաւարարութիւն պատճառել, իսկ արհեստաւորը կարող է:

Այսօր արհեստաւորութեան թիւը նոյնիսկ Անգլիայի նման մի յառաջադէմ երկրում, չէ վերացել: Նա կայ և՛ Ֆրանսիայում, և՛ Գերմանիայում եւ ամէն տեղ: Ճշմարիտ է, Եւրոպայում արհեստաւորն ընկել է եւ դեռ չարունակում է ընկնել կապիտալիստի ճանկերի մէջ, աշխատել արտաքուստ ինքնուրոյն ձեւով, բայց ներքուստ՝ կախուած լինել դրամատիրոջ ամենազօր կամքից: Սակայն, չնայելով այդ բոլոր պարագաներին, արհեստաւորութիւն դեռ կայ եւ դեռ երկար կը դիմանայ նոյնիսկ առաջընթաց երկրներում: Իսկ այն յետամնաց երկրներում, ուր ապրում է հայ ժողովուրդը, արհեստաւորութիւնը կազմում է քաղաքների աղքաբնակութեան խոշորագոյն խաւերից մէկը: Այդ պատճառով՝ ամէն մի քաղաքական կուսակցութիւն, որ իրեն յայտարարել է աշխատաւորութեան շահերի պաշտպան, պէտք է մօտենայ աշխատաւորներին, կազմակերպէ նրանց իրենց իսկ դասակարգային շահերի տեսակէտից. պարզացնէ նրանց շահերը, հասկացնէ, որ այդ շահերը կարող են յաջող լուծում ստանալ միմիայն ընկերվարական կարգերում, ընկերվարական ձեւով...

Շատ բան չկայ ասելու հասարակական այդ խաւի մասին: Նրանք գոյութիւն են ունեցել հին դարերից սկսած, միայն զանազան ձեւերով: Նախ նրանք ընտրում էին ստրուկներից, ապա ճորտերից եւ վերջն էլ ազատ վարձուորներից: Նրանք էլ աշխատաւորներ են, ինչպէս միւս բոլոր

աշխատաւորները, միայն թէ նրանց մշտական կեանակցութիւնը տէրերի հետ, այն՝ որ նրանք մշտապէս տէրերի աչքի առջեւն են, նրանց հրամանից կախուած նոյնիսկ դիչերները, այդ եւ մի քանի այլ նուրբ, հոգեբանական հանգամանքներ, այլակերպում, փչացնում են աշխատաւորութեան այդ խաւի նկարագիրը: Գողութիւնը, խորամանկութիւնը, քծնողութիւնը, սուտը եւ կեղծիքն այնքան չեն տարածուած ոչ մի աշխատաւորական խաւի մէջ, որքան այս խաւում: Այդ պատճառով էլ կուսակցական կամ անկուսակցական որեւէ կազմակերպութիւն նրանց մէջ մտցնելու պահուն՝ պէտք է լինել չափազանց չրջահայեաց, զգուշաւոր:

Աչխատաւորութեան մէջ պէտք է համարել նաեւ պետական ստորին պաշտօնեաներից այնպիսիներին, որոնք ազատ վարձուորներ են, ինչպէս երկաթուղիների, փոստ-հեռագրատների եւ այլ հասարակութիւնների ծառաները եւ ստորին պաշտօններ վարողները: Պետութիւնը հանդիսանում է մի հսկայական կապիտալիստ, որ կեղեքում է այդ ողորմելիներին, չաճախ խարելով նրանց մի երկու փայլուն կոճակներով եւ մի ողորմելի համազգեստով: Այդ տեսակ պաշտօնեաների ստացած ռոճիկը հազիւ թէ հասնի բանուորների ստացած օրավարձին. չաճախ նրանց ստացածն աւելի նուազ է, քան բանուորի եկամուտը: Բացի այդ, որանք էլ հանդէս են գալիս իբրեւ անմիջական կեղեքուղները, որոնց չաւելեալ արժէքը իւրացնում

է ամենախոշոր կապիտալիստը, ներկայիս՝ պետութիւնը:

Վերջապէս՝ աշխատաւորների թուումն են նաեւ առեւտրական, բանկային եւ այլ հաստատութիւնների գործակատարները, գրագիրները, հաշուապահները եւայլն:

Աշխատաւորական այս խաւն անպայման կրեւորագոյն խաւերից մեկի մեզ, հայերիս համար, որովհետեւ այդ խաւը բաղկանում է մտաւորական եւ կիսամտաւորական տարրերից, որոնք կարող են շատ յաջողակ տարածողներ լինել քաղաքական եւ կուսակցական համոզմունքների, հանդիսանալ իրը ժրաջան բանուորներ կուսակցական կազմակերպութեան չէնքի կառուցման: Այդ տապարէզն են մտնում հայերիս մէջ այն բոլոր ուժերը, որոնք ազատ արհեստների մէջ գրադրում չեն գտնում: Այսօր գրական, ուսուցչական, բժշկական եւ իրաւաբանական տապարէզներից եօթոյ, ամենից աւելի մտաւորական տարրեր կարող ենք գտնել այդ խաւի մէջ:

Դրանք ամբողջովին հանդիսանում են աշխատաւորներ: Բանկիրը, վաճառականը, գրասենեակի տէրը նրանց ծառայեցնում, նրանց աշխատեցընում են եւ, վճարելով յաճախ մի չնչին գումար ամսական, նրա աշխատանքի իրական արժէքից մնացած յաւելեալ արժէքը նեռում են իրենց անյատակ գրպանը: Ուրեմն՝ սրանք ունեն վաճառ բանուորի բոլոր յատկանիշները: Սրանց կարելի է կոչել աւելի կրթուած բանուորներ:

Սակայն այդ գործակատարութիւնը մի միապաղաղ զանգուած չէ։ Ներանում գոյութիւն ունեցող զանազանաւորումն այնքան փոքր, այնքան չնչին չէ, որքան զուտ գործարանային կամ հանքային բանուորութեան մէջ։ Այստեղ, խաւի ներսում, վիճակների տարբերութիւնը երբեմն այնքան է մեծանում, որ հասարակ քանակական խընդիրը, ինչպէս մի այլ առիթով սրամտօրէն նկատում է գերմանացի փիլիսոփայ Հեգէլը, վեր է ածւում որակի հարցի. քանակական տարբերութիւնները կուտակուելով, փոխում են իրի որակը։

Գիտեմ, առաջին հայեացքից այդ միտքը տարօրինակ, անմիտ կը թուայ։ Ինչպէս՝ որքան կ'ուզես աւելացրու քարի կամ աղիւսի, փայտի ու երկաթի քանակը, բայց նա տուն չի դառնայ, նա կը մնայ նոյն քարը, նոյն աղիւսը, փայտն ու երկաթը, միայն առաջ քիչ էր, այժմ շատ կը լինի։ Սակայն որոշ չափի չարժումը, ինչպէս յայտնի է ֆիզիկայից, դառնում է ձայն կամ լոյս. մի այլ չափը դառնում է տաքութիւն, էլեկտրականութիւն եւայլն։

Այդ նոյն երեւոյթը յաճախ նկատւում է նաեւ մարդկային հոգեբանութեան մէջ։ Երբ մի գործակատար մտնում է մի վաճառականի մօտ չնչին տարեկան ռոճկով, նա կամ լինում է անգիտակից էակ, կամ, եթէ մի քիչ գոնէ ինքնագիտակից է, դժգոհ է լինում իր վիճակից եւ, մանաւանդ, ալրոջ կեղեքումից։ Իսկ երբ նոյն գործակատարը

կամաց-կամաց բարձրանում է գործակատարական անդուխքով դէպի վեր, երբ նրա ռոճիկը մեծանում, բաւական խոշոր չափերի է հասնում թէ՛ տարինների յառաջացման եւ թէ, մանաւանդ, իր ճարպիկութեան ու այլ պարագաների շնորհով, այն ժամանակ նախկին դժգոհ գործակատարը, որի չահերը հակադիր էին տէրերի չահերին, դառնում է լինքնագոհ, տէրերի չահերի ջերմ պաշտպան, որովհետեւ նկատում է, որ իր եւ տէրերի չահերն այժմ այլեւս հակադիր չեն. ընդհակառակը, եթէ լինքն այժմ հեռանայ ներկայ տէրերից, ոչ մի տեղ այդքան խոշոր ռոճիկ կամ այդքան խոշոր %ներ չէ կարող ունենալ:

Նման երեւոյթներ հազուագիւտ չեն գործակատարական ասպարէզում: Այդ հանրային խաւի անդամներից շատերն այնպիսի ռոճիկներ են ստանում, որ յաճախ ճուլւում են գործատէր կապիտալիստների հետ, զգալով իրենց եւ նրանց շահերի զուգահեռական լինելը: Այդ պատճառով էլ՝ գործակատարութեան մէջ պրոպագանդ մղող, այնտեղ կազմակերպութիւն մտցնել ջանացող մարդիկ պէտք է մեծ զգուշութիւն գործ դնեն, որ բուրժուանման գործակատարները, դիմակաւորուելով զանազան սկզբունքներով, չսողոսկին ներս եւ քայքայման սերմեր հետները բերեն: Նրանք յաճախ մուտ են գործում ընկերվարական նոր ու խամ կազմերի մէջ եւ գործատէրերի ձեռքում ծառայում իբր պրովակատոն առաջացնող գործակալներ, վիժել տալով գործադուլներ, բոյկոտներ եւայլն:

Մենք աւելորդ ենք համարում կանգ առնել դռնապաններին, բեռնակիրների եւ այլ տեսակի աշխատաւորական տարրերի վրայ, որովհետեւ նրանց աշխատաւոր լինելն անպայման ընդունելի է բոլորի կողմից. բայց այդ, նրանք այնքան էլ խոշոր եւ ազդեցիկ դեր խաղացող տարրեր չեն աշխատաւորական հսկայական բանակի մէջ:

*
* *

Մտաւորականութիւնը եւ իր դերը.— Հասարակական երկու խոշոր դասակարգերը — բուրժուազիան եւ աշխատաւորութիւնը — կանգնած են իրար դէմ: Դրանք երկու բանակներ են, որոնց գիտակից, իրենց սեփական շահերն ու իրաւունքները ճանաչող մասերը միշտ պէտք կուսակցութիւն, միշտ պարանչող, ձգտում են որոշ խղճալների, որոշ հասարակակարգի, իսկ բանակների մեծագոյն մասը, երկուսեք էլ, դեռ խարխափում են անգիտակցութեան եւ անկազմակերպ, քաոսական վիճակում:

Բայց դրանցով, այդ կեղեքողների եւ կեղեքուողների բանակներով չէ ապառում մարդկային հասարակութիւնը, մանաւանդ նրա այսօրուայ կազմը: Մի քիչ ուշադիր դիտողի աչքին կ'ընկնի անհատների մի երրորդ խումբ, որ իր էութիւնով նման չէ նախընթաց երկու բանակներից եւ ոչ մէկին:

Մեր նոր խումբն աշխատաւորի բնորոշ յատ-

կութիւններ չունի, որովհետեւ նա նիւթական բարիքներ ստեղծող չէ, նա չէ կարում կօշիկներ, պզեստ, նա չէ կերտում կահ-կարասիներ, չէ կառուցանում տներ եւայլն: Մէկ խօսքով, նրա ղերը ներկայիս նիւթական հարստութիւնների ստեղծման գործում աննշմարելի է առաջին նայուածքից:

Սակայն նա կապիտալիստ, գործատէր, նախաձեռնող էլ չէ, ոչ էլ դրամի տոկոսով կամ հոդի րէնտայով ապրող: Մի խօսքով, նա դուրս է ներկայումս գոյութիւն ունեցող դուտ տնտեսական որակումներից:

Բայց նա ղեր ունի մեր կապիտալիստական հասարակութեան մէջ, իւրայատուկ եւ չատ կարեւոր մի ղեր: Նա աչխատում է թերեւս երբեմն չա՛տ աւելի, քան բանուորն ու գիւղացին, սակայն նրա աչխատանքի արտադրոյթը մնում է անհատեալի, որովհետեւ նրա արտադրածն աննիւթ հարստութիւն է, բոլոր նիւթական հարստութիւնների նախապայմանը — գաղափարը:

Նա է, որ կարդալ-գրել է սովորեցնում մեր մանուկներին, նրանց զարգացնում, պիտանի, կեանքի կռուի համար յարմարուած քաղաքացի դարձնում. թուաբանութիւն, պատմութիւն, բնական գիտութիւններ ու լեղուներ սովորեցնում: Նա է, որ կրթում է ժողովուրդն իր գրուածքներով, իր գրքերով, իր լրագիրներով: Նա է, որ գծում է, թղթի վրայ պատկերացնում տունը, գործարանը, երկաթուղին, չոգենաւը, նախքան

նրանց գոյութիւն առնելը, նախքան նրանց էանալը: Նա է, որ բուժում է ձեր հիւանդ անասուններին ու մարդկանցը: Նա է, որ պաշտպանում է ձեր արդար իրաւունքները ներկայ պետութեան դատարաններում: Նա է, որ պահում է ձեր հսկայական հաշիւները բանկերում, կատարում ձեր անվերջ դրամագլուխները եւայլն, եւայլն: Մէկ խօսքով՝ նա մտաւորականութիւնն է, ինտելիգենցիան:

Արդեօք ո՞ր դասակարգից է նա: Ոչ մէկից, այլ բոլոր դասակարգերից: Հասարակական բոլոր դասակարգերն էլ առաջուընէն նետում են իրենց լուման այդ հանրային միջին խաւի մէջ: Սրա անդամները դուրս են գալիս բոլոր խաւերից. սկսած լումպէն պրոլետարիատից (ցնցոտիների պրոլետարիատ), սկսած բանուորական ամենախոնարհ չերտերից, մինչեւ բուրժուազիայի, հողատէրերի եւ հոգեւորականութեան ամենաբարձր ու հարուստ չերտերը մասնակից են լինում նրա կազմակերպմանը. իրենց անդամներից այս ու այն անհատները, որոշ պարագաների բերմունքով, հեռանում են իրենց դասակարգերից, ստիպուած կամ կամովին ընկնում են մտաւորականութեան մէջ:

Մտաւորականութիւնը մի դասակարգ չէ, այլ մի միջդասակարգային մեծութիւն: Նրա մէջ են բժիշկները, վաստաբանները, ճարտարապետները, երկրաչափները, երգիչները, նկարիչները, ուսուցիչները, գրողները, հրապարակագիրները

եւայլն, եւայլն, մի խօսքով այն բոլոր մտաւոր տարրերը, որոնք միաժամանակ չեն հանդիսանում որեւէ գործարանի, արհեստանոցի կամ այլ ձեռնարկութեան տէր: Օրինակ, մի ճարտարապետ, քանի դեռ վարձում է, որպէսզի հակէ բանուորների վրայ, նկարէ տան, եկեղեցու կամ գործարանի յատակագծերը, կառուցանել տայ նպատակադրուած չէնքը, — նա հանդիսանում է մի աշխատաւոր, մի մտաւոր տարր բոլոր միւս աշխատաւորների թուի մէջ, թէեւ տարբեր նրանցից իր որակով: Սակայն եթէ այդ նոյն ճարտարապետը կապալով վերցնէ կառուցանելու նոյն նախագծուող չէնքը, այլեւս նա չէ մնում աշխատաւորի դերում, այլ դառնում է ձեռնարկող, կապիտալիստ կամ կեղեքող, նա պէտք է բանեցնէ բանուորներ ու վարպետներ եւ նրանց յաւելեալ արժէքներով հարստանայ: Կարող է պատահել, որ նոյնիսկ ունեցածը կորցնէ. բայց այն րոպէին, երբ նա հանդիսանում է նախաձեռնող, նա արդէն իսկ ծրագրում է իր մտքում բանեցնել բանուորներ ու վարպետներ, նրանց քիչ օրավարձ տալ, իսկ կապալադրամի աւելորդ մասը նետել իր գրպանը՝ հարստանալու յոյսով:

Մտաւորականութեան մէջ, ինչպէս եւ միւս դասակարգերում, մենք նկատում ենք բազմացուցիչ անհատների վիճակի անհուն տարբերութիւններ: Այդ տարբերութիւններն այս դասի կամ այս հանրային խաւի մէջ երբեմն խիստ ակնբախ, խիստ բողոքող ձեւ ունեն: Այստեղ մենք տեսնում

ենք մի ծայրում կանգնած մի աղքատ գրագէտ, մի օրագրող, մի նախկին ուսուցիչ, այժմ դործի անընդունակ, ընկած նիւթական ծայրայեղ կարիքի մէջ, ապաւինած այս ու այն պիչերային ապատանը, նեռուած բակոտների չարքերը... Իսկ դրա դիմաց բարձրանում է մի «յայտնի» բժշկի կամ վաստակաւանի չաղլիկ կամ գիրուկ դէմքը, ինքնաբաւական կերպարանքը, մատերից մէկի կամ միւսի վրայ նապելիօրէն նստած վայելատակոզ մատանին, կուրծքից կոճետտօրէն կախուած ոսկէ ժամացոյցն ու չղթան, դրպանը միշտ ոսկիով լի, իսկ բանկերում պահած իր արժէթղթերը եւայլն...

Հասարակական հարստութեան անդուխքի դրեթէ բոլոր առիճաններին համապատասխանող տիպեր կը գտնէք դուք այս հասարակական խաւի մէջ:

Ներքին ծայրում հաւաքուած են մտաւորականութեան խեղճ մասերը, նրա զրկուածները, իսկական մտաւոր պրոլետարիատը: Դրանց մէջ են լրագրական աշխատողներ, գրասենեակների գրագիրներ, հաշուապահներ, թղթակիցներ, ժողովրդական դպրոցների ուսուցիչներ, իրաւաբանների օգնականներ եւայլն: Այնուհետեւ գալիս են աւելի եւ աւելի նպաստաւոր առճիկ ստացողներ, աւելի եւ աւելի նպաստաւոր դիրքերի տէրացածներ, մինչեւ որ կը հասնեն տարեկան մի քանի հազար ոսկի վաստակող բժիշկները, փաստաբանները, երկրաչափները եւայլն:

Մտաւորականութեան մի մասը, որ կարող է կոչուել մտաւոր պրոլետարիատ, իր նիւթական եւ հանրային վիճակով շատ մօտ է կանգնած բանուոր եւ գիւղացի աշխատաւորութեան: Վիճակի այդ մօտիկութիւնը եւ մտաւոր աւելի բարձր պատրաստութիւնը նրան դարձնում են մեծ մասով ընկերվարական բանակի անդամ, ջերմ դրօշակից եւ ղեկավար. տալիս են նրան բռնել աշխատաւորի կողմը այն ահաւոր մարտում, որ կոչւում է կապիտալի եւ աշխատանքի կռիւ:

Մտաւորականութեան վերին, հարուստ շերտերը նիւթապէս այնքան են ապահովուած, որքանց չահերն այնքան են սերտօրէն հիւսուած ներկայ հասարակութեան բուրժուական հարուստ եւ կեղեքիչ տարրերի չահերի հետ, որ նրանց համար անպայման դանկալի եւ օգտակար է պահպանել ներկայիս հասարակակարգը, ուր բարձրագոյն խլխում է նիւթական հսկայական անհատասարութիւնը: Իսկ նախընթաց խմբի — մտաւորականութեան աղքատ մասի համար, ընդհակառակը, դանկալի է օր առաջ քանդել գոյութիւն ունեցող հասարակակարգը, օր առաջ ստեղծել եթէ ոչ իսկական ընկերվարական մի հանրութիւն, այլ գոնէ մի այնպիսի հասարակութիւն, որի մէջ նիւթական դրութիւնների անհատասարութիւնը չլինէր այնքան վրդովեցուցիչ, այնքան անարդար, մինչեւ երկինք բողոքող: Նրանցից մէկի համար ներկայ կազմն իր բոլոր անարդարութիւններով բաղձալի է, թէեւ քննադատելի այս կամ

այն մանրամասնութեան մէջ. իսկ միւսի համար՝ ներկայ կազմի սկզբունքն իսկ խոտելի է, անարդար:

Նրանցից մէկը, ինչպէս ասացինք, մասնաւոր պրոլետարիատն է, բանուորի վիճակակից եղբայրը: Եթէ նա իսկական բանուորը չէ, որովհետեւ ֆիզիքական աշխատանք չէ կատարում, ուրեմն նրա եղբայրն է, որովհետեւ կատարում է ուղեղային, աննկատ հարստութիւն արտադրող աշխատանք: Եթէ մի օր, մի շաբաթ, մի ամիս անգործ մնայ, բանուորի նման նա էլ կը դառնայ դրծազուրկ, հացազուրկ, սովի ճանկերում դեգերուող: Նրա եւ բանուորի մէջ գոյութիւն ունեցող տարբերական տարրը միայն արտաքուստ է տարբեր, ներքուստ երկուսն էլ միեւնոյն բանն են նըրանք:

Եւ յիրաւի, ի՞նչ է աշխատանքը: Աշխատանքը մկանների, նեարդների եւ ուղեղի մասնիկների չարժումն է, նրանց դրսեւորուած եռանդը: Ձկայ ոչ մի զուտ ղնդերային կամ մկանային աշխատանք: Մաթեմաթիքօրէն մտածելով, ամէն մի ֆիզիքական աշխատանք, ուր, մեզ թւում է թէ մասնակցում են միայն ղնդերները ու ոսկրները, անպայման կրում է իր մէջ եւ նեարդների, եւ ուղեղի մասնակցութիւն: Մարմինը մի այնպիսի միաձոյլ մեքենայ է, որի մէջ ոչ մի մաս չէ կարող մի մազաչափ չարժում անել, առանց ուղեղի այս կամ այն մասի մասնակցութեան: Կան ընդհանական չարժումներ — սրտի, ստամոքսի, աղիք-

ների, արհեստատար անօթների պատերի, — որոնք թեւում են բնազդական, ինքնաշարժ, մեքենական, բայց նրանք էլ ունեն իրենց ղեկավար յատուկ նեարդները, որոնք իրենց կարգին, միացած են կամ զլխի, կամ մէջքի ուղեղի այս ու այն մասերի հետ: Աշխատանքներից մի քանիսը պահանջում են ուղեղի աւելի մեծ մասնակցութիւն, աւելի մեծ զործունէութիւն, այսինքն ուղեղային, նեարդային եւ ապա մկանային եւ ոսկրային մասնիկների չարժում, իսկ ուրիշ տեսակ աշխատանքների մէջ աւելի դերակշռող են մկանների, ջղերի ու ոսկրների մասնիկների չարժումը. ուղեղի մասնակցութիւնը կայ, բայց նուազ է, ինչպէս առաջին տեսակի մէջ նուազ էր մկանների դերը: Երկրորդ տեսակը 'կոչւում է ֆիզիքական աշխատանք, առաջինը՝ մտաւոր: Երկրորդ տեսակն ակներեւ է, կատարւում է ակնթարթ ձեւով. կարելի է հնարել մի ուժաչափ զործիք եւ հաւաքել այն բոլոր եռանդը կամ էներժին, որ թափւում է, օրինակ, մի երկրազործ, մի կօչկակար կամ մի դարբին: Այդտեղ էլ, ի հարկէ, սկզբներում աւելի հնարաւոր կը լինի չափել միայն մկանների ու ոսկրների դերը, ուղեղի կատարած աշխատամասը դեռ երկա՛ր ժամանակ կը մնայ անչափելի մարդկային գիտութեան համար: Իսկ առաջին տեսակ կամ մտաւոր աշխատանքը չափելու գործիք հնարելը դեռ շա՛տ անհաւանական, շա՛տ հեռաւոր է թւում մեզ ներկայումս, թէեւ ոչ անհնարին: Վերջապէս մարդկային հասարակութիւննե-

բի զարաւոր վորձերը բերել են մեզ այն եզրակացութեան, որ ֆիզիքական աշխատանքը կարելի է չափել ժամանակով: Օրինակ, 4 ժամ դերձակի աշխատանքը հաւասար է ընդունում 4 ժամուայ զարբնի, 4 ժամուայ կօշկակարի, 4 ժամուայ ատաղձագործի եւ այլ արհեստաւորների աշխատանքի, եթէ դրանք բոլորն էլ ա) աշխատում են բարեխղճօրէն, բ) կանգնած են միեւնոյն կուլտուրական բարձրութեան վրայ, այսինքն մէկը չէ աշխատում անզրկհեղհեղեան գործիքներով, միւսը ելեկտրական մեքենայով: Մարքսի արժէքների գնահատումը հիմնուած է զանազան աշխատանքների այս նոյնացման կամ հաւասարեցման վրայ: Սակայն այդ հաւասարեցումը հնարաւոր չէ նեղմտածել. օրինակ, ուսուցչի, զրողի, բժշկի եւ մի պատ չարող որմնադիր բանուորի աշխատանքների մէջ: Ուսուցչի կամ գրողի, բժշկի կամ ճարտարապետի մի ժամուայ մտաւոր աշխատանքը չա՞տ աւելի մաշող, չա՞տ աւելի ուռնդ արտադրող է, քան որեւէ ֆիզիքական աշխատանքի մէկ ժամը: Եւ դեռ այստեղ մենք կանգ չենք առնում տաղանդի ու հանճարի արտադրութիւնների, նրանց աշխատութիւնների գնահատման կնճռոտ խնդրի վրայ:

Աշխատանքների չափելու այս դեռ եւս անլուծելի մնացած հարցերն են, որ առաջ են բերում անտեսական գիտութեան եւ դասակարգերի բաժանման ու նրանց մէջ հարստութիւնների բաշխման բոլոր դժուարութիւնները:

Մեր քննութեան առած հարցի մէջ էլ ահա-դին դժուարութիւն է ներկայացնում մտաւորականութեան աշխատանքի չափի եւ նրա արդար գնահատման հարցը: Եթէ այդ չափն իմանալը հնարաւոր լինէր, այն ժամանակ աշխատաւոր եւ մտաւորականութիւն բառերն իսկ աւելորդ կը լինէին տնտեսական գիտութեան տեսակէտից. երկուսն էլ կը ճուլուէին մէկ բառի մէջ, որովհետեւ մտաւորականութեան մի մասը կը դիտուէր իբր իսկական աշխատաւորութիւն, իսկ միւս մասը՝ իբր իսկական բուրժուա:

Մտաւորականութեան վերին, հարուստ շերտերը, ինչպէս ասացինք, իրենց հանրային դիրքով եւ շահերով, խառնուում են ներկայումս տիրող կեղեքիչ դասակարգերին: Այդ պատճառով վ. Զոմբարտ գերմանացի պրոֆեսորը մտաւորականութեան այդ մասը կոչում է բուրժուազոիդներ կամ բուրժուանմանութիւններ: Սակայն Զոմբարտի այդ բառը շատ յաջող կերպով արտայայտում է մտաւորականութեան միայն վերին շերտերից մի մասի պատկերը, — նրանց, որոնք բաւարար եկամուտներ կամ ռոճիկներ ստանալով (որանց մէջ նաեւ պաշտօնէութեան մի խոշոր մասը), ապրում են բուրժուաների պէս, մտածում նրանց ճեւով, չափում նրանց արշինով: Իսկ այն մասը, — թէ՛ մտաւորական եւ թէ պաշտօնեայ, — որ իր եկամուտի աւելացած մասը ղնում է կամ բանկերի մէջ կամ գետեղում է այս ու այն չհաւատ բաժնետիրական ձեռնարկութիւնների մէջ, ինչ

աեւէլ կ՚ուզէ, արդէն այլեւս բուրժուաւնման չէ, այլ ուղղակի բուրժուա է:

Մեծ է, չա՛տ մեծ մաուորականութեան դերը ներկայ հասարակութեան մէջ: Թէ՛ հին հայեացքներն, թէ՛ հին կարգերի պահպանման տեսարանները դուրս են գալիս մաուորականների չրջանից: Սակայն նոյն այդ խաւից են ծնունդ առնում աչխատաւոր հանրակազմի ամէնից կատաղի, ամէնից տաղանդաւոր քննադատները. ապագայ հասարակութեան, նոր հանրակազմի ըսկզբունքների յայտնագործողները, նրանց քաոտագովները, նոր եւ լուսաւոր ապագայի քարոզիչները, ընկերվարութեան պրոպագանդիստները նոյնպէս ծնունդ են առնում նոյն այդ մաուորականութիւնից:

Մեր ուսումնասիրութեան ծաւալը մեզ թոյլ չէ տալիս աւելի երկար կանգ առնելու այդ մաուորական խաւի վրայ. ով ուզում է աւելի մօտից, աւելի հիմնաւորապէս ծանօթանալ այդ խնդրի հետ, թող դիմէ Կ. Կաուցկու, Վ. Զոմբարտի, Իւանով-Բազումնիկի, Կոզանի եւ ուրիչների աչխատութիւններին յատկապէս այդ հարցի մասին:

Ամփոփենք մինչեւ այժմ երեք դլխում ասածները եւ դետեղենք մի տախտակի մէջ.

1. Բուրժուա դասակարգ
   Ա) Հոդեւորականներ
   Բ) Հոդաւէրներ

Գ) *Կապիտալիստներ*

ա) *Գործարանատէր*

բ) *Հանքատէր*

գ) *Արհեստանոցներ*

դ) *Առեւտրական*

ե) *Բանկային*

զ) *Նաւային, երկաթուղային եւն.:*

2. Կիսաբուրժուական

Ա) *Մոչոր արհեստաւորներ*

Բ) *Գիւղական բուրժուազիա*

3. Աշխատաւորութիւն

Ա) *Պրոլետարիատ*

ա) *Գործարանային*

բ) *Հանքային*

գ) *Արհեստանոցային*

դ) *Գիւղական*

ե) *Երկաթուղային*

Բ) *Մանր արհեստաւորութիւն*

Գ) *Աչխատաւոր գիւղացիութիւն*

Դ) *Մտաւոր պաշտօնեաներ*

Ե) *Գործակատարութիւն*

Զ) *Ծառաներ — տան, արճարանի եւայլն:*

4. Մտաւորականութիւն կամ ինտելիգենցիա:

Խոշոր աւտադրութիւնը.— *Քննենք մի հարց էլ եւ ապա վակենք երրորդ գլուխը, անցնենք դասակարգերի նմանաբանական եւ տարբեր-բիչ տարրերին:*

Մի հարց յաճախ տնկւում է տնտեսական խնդիրներ ուսումնասիրողի առջեւ: Մեր պապերը, մեր հին նախնիքները մի՞թէ մեզանից աւելի երջանիկ չէին. նրանք չունէին աշխատանքի եւ կապիտալի կռիւ, որ այսօր թունաւորում է հանրութեան հանգիստը, կլանում հանրութեան բոլոր դասակարգերի եռանդի հսկայական քաժինը. գործադուլ, բոյկոտ, միջնորդ դատարան, լոկաուտ — արանք բոլորը կռուի զէնքեր են: Իրար են կրծում աշխատաւոր եւ կեղեքող դասակարգերը: Ինչերի՞ս էր պէտք այդ խոշոր արտադրութիւնն իր պրոլետարիատով, իր աշխատաւորութիւնով, իր միլիոնատիրատներով: Այդ խոշոր արտադրութիւնն իր մեքենաներով, իր էլեկտրաշարժներով, շոգեշարժներով ու գազոմոտորներով մեր մարդկային հասարակութիւնը քաժանել է երկու ահագին չերտերի — կեղեքուողների եւ կեղեքողների: Հին դարերում, «քարի ու երջանիկ հին օրերում» էլ եղել են կեղեքողներ եւ կեղեքուողներ, քայց ա՛յնքան չարիք, ա՛յնքան թշուառութիւն դոյութիւն չեն ունեցել: Այսօր աշխատաւոր մեծամասնութեանը քաժին է ընկել ե՛ւ դառն աշխատանքը, ե՛ւ դրա հետ միատեղ աղքատութիւնը, թշուառութիւնը, սովը, տգիտութիւնը, ցրոտին: Նա է ստեղծում ներկայիս հարստութիւնները. յաճախ նրա իսկ ստեղծած արժէքները կուտակւում, ամբարւում են, մնում են առանց գնողի, իսկ իրենք, այդ հարստութիւններն իրենց աշխատանքով ստեղծադործողները կարիք են ունե-

նում այդ նոյն հարստութիւններին, մեռնում են առանց նրանց, բայց թոյլ չէ տրւում նրանց մխա-նալու, թոյլ չէ տրւում բանուորին սպառելու իր իսկ ստեղծագործած հարստութիւնը եւ կեանքից դոհ ապրելու: Մի աննշմարելի պատ բաժանում է նրանց — մասնաւոր սեփականութեան իրաւունքը: Եւ եթէ մեծամասնութիւն կազմող աշխատաւորութիւնը, երբեմն ըմբոստանալով, համաձակւում է դիտակցութեան գալ, գրոհ տալ իր ստեղծած հարստութիւնների վրայ եւ դործ ածել, այն ժամանակ ահա հոգեւորականն առաջ է գալիս իր Աչուին ու Աւետարանով, իր դժոխք ու դրախտով, իր «դարեւոր» սրբութիւններով. բուրժուան դալիս է իր պետութեամբ զօրքով ու ոստիկանութիւնով, իր թնդանօթով ու դնդակիրով... Ձմռում, ջարդ ու փշուր են անում ըմբոստացած ապստամբներին եւ մրրկած ծովը նորից ջնջում իր ափերի կուռ ժայռերի մէջ:

Աշխատաւոր մեծամասնութեան բաժինը մի-այն քաղցածութիւնը չէ: Նա աղէտ է, խաւար: «Դայլն ի՞նչ կ՚ուզէ», հարցնում է ժողովրդական առածը եւ պատասխանում — «մութ դիշեր»: Կեղեքողներն ի՞նչ կ՚ուզեն: Խաւար ամբոխ, տգէտ աշխատաւոր: Որքան տգէտ լինեն, որքան աստմոքի բեռի տակ ճմռւած, այնքան լաւ, այնքան ապահով են զգում իրենց կեղեքողները, աշխարհի զօրաւորները:

Ու ստեղծուել են նոյնիսկ յատուկ բառեր այդ մաքերի համար, որ մենք ամէն օր գործ ենք ա-

ծում եւ ամենեւին չենք վրդովւում։ «Ժողովրդական դպրոց», այսինքն մի դպրոց, ուր հաղիւ մի քիչ գրել-կարդալ, մի քիչ հաշուել եւ հետն էլ մեծ քանակութիւնով կեղծ աստուածպաշտութիւն են սովորեցնում, չնական հնազանդութիւն եւ համակերպութիւն ներարկում մանուկների մատաղ հոգիների մէջ եւ ապա նետում փողոց։ «Ժողովըրդական» դպրոց է, դրանից աւելի սովորեցնելու իրաւունք չկայ ժողովրդի զաւակներին. եթէ բոլորը միջնակարգ եւ բարձրագոյն կրթութիւն ստանային, էլ ո՞վ պիտի աշխատէր, էլ ո՞վ պէտք է հնազանդուէր. չէ՞ որ կրթուած, լուսաւորուած անհատներին այնքան դիւրին չէ սարկացնել, հնազանդութեան մէջ պահել։

Տգիտութեան հետ միասին բանուոր դասակարդի մէջ խոշոր չափով արմատ է բռնում եւ անբարոյականութիւնը, սեռական անբնաբականութիւնը։ Մեքենան, դիւրացնելով ֆիզիքական աշխատանքը, գործարան, արհեստանոց եւ հանքեր քաշեց կիներին ու երեխաներին էլ։ Այդ երեւոյթը մի կողմից պատճառ դարձաւ այր մարդկանց օրավարձի անկման, իսկ միւս կողմից ահեղրեց անբարոյականութիւնը։ Կիսամերկ այրեր ու կիներ, մանուկներ եւ երիտասարդ աղջիկներ աշխատում են կողք կողքի, դեմնի դրկում, հանքերի կիսախաւարի մէջ, հսկայական գործարաններում կամ մենաւոր արհեստանոցներում։ Սեռական ընդհանուր արիւնախառնութիւնը, անմաքրութիւնը եւ այլ բազմաթիւ պատճառներ կու-

տակ ում, Փիլիքապէս քայքայում են բանուոր-բանուորուհիների հոծ բազմութիւնը: Բանուորական օրէնսդրութեան ծայրայեղ ոչնչութիւնը զրկում է աւելացնելու թոքախտաւորների, կոյրերի, խուլերի, ամէն տեսակ հիւանդութիւններով հիւծուողների բանակը: Օր օրի վրայ մեծ ու հսկայական չափեր առնող գործարանները ու նրանցում գործող ժամանակին բարդութեան հասած մեքենաները տարէց տարի դուրս են վիժում կարուած թեւով, ջարդուած ոտով, պոկոտուած մսերով, խեղաթիւրուած, անդամահատուած ու այլանդակուած աշխատաւորների խոշոր թուեր: Ոչ բանուորների ախտաւոր ապահովագրութիւնը, ոչ բուրժուայի եւ հոգեւորականի ստորացուցիչ բարեգործութիւնը, ոչ էլ բուրժուական պետութեան արգելադիր օրէնքները չեն կարողանում զսպել ներկայի խոշոր արտադրութեան առաջ բերած այդ հսկայական վնասները:

Եւ քայքայում, ուժասպառւում է աշխատաւորութիւնը, եթէ նա լինքն իր դլխի ճարը չտեսնէ:

Իսկ ի՞նչ է կանգնած այդ տառապող մարդկային մեծամասնութեան դիմացը: Հարուստներ, երջանիկների, կուշտ մարդկանց մի մեծ խումբ, որ իր ձեռքն է առել իշխանութիւնը, օրէնքը, պետութիւնն ու նրա կազմակերպուած ուժը: Դա-տել, աշխատել ու տքնել է տալիս նա մարդկութեան խոշոր մեծամասնութեանը, աշխատողին թողնում իր աշխատածի, իր արտադրոյթի մի չնչին մասը — ճիշդ այնքան, որքան անհրաժեշտ

է ապրելու, սովից չմեռնելու համար, իսկ մնացած բոլոր արտադրությիը լցնում է իր անյատակ դրպանը: Հարստությեան այդ ասպիճան կուտակումը փոքրամասնությեան ձեռքում՝ հնարաւոր է դարձնում այդ փոքրամասնությեան համար աշխարհի բոլոր վայելքները: Ուրախությիւն, զբաղմունքիւն, կերուխում, զեղեցկությեան բոլո՛ր բոլոր տեսակների միատէր վայելում — սկսած բնությեան հմայքներից, սկսած արուեստի բոլոր հրաշալիքներից, մինչեւ կանանց զեղեցկությիւնը, որ դառել է վաճառքի առարկայ:

Ուրեմն՝ մի կողմում, հասարակությեան մի բեւեռում հաւաքուած են ծայրայեղ աշխատանքը, թշուառությիւնը, կեղտը, որ ուժասպառում, քայքայում են աղքատ խաւերի հոգին ու մարմինը, իսկ միւս բեւեռում կուտակուած են աշխատանքի բացակայությիւնը, ամէն տեսակի վայելքներն ու առիւծքները: Մի ծայրում մարդիկ այլասերում են չափազանց պակասությիւնից, միւս ծայրում այլասերում, հիւծւում, փչանում են չափազանց առատությիւնից:

Եւ ահա ծագում է հարցը. ինչերի՞ս էր պէտք այդ խոշոր արտադրությիւնը, երբ նա մայր է ա՛յդքան չարիքների, ա՛յդքան ոճիրների: Քանդենք ներկայի գործարանները, չարդ ու փշուր անենք ներկայի հրէշ-մեքենաները, ինչպէս արին Անգլիայի Լուդհակ բանուորները ԺԸ. դարի վերջերում, Կարտրայտի մեքենայի վերաբերմամբ... Ցե՛տ, յետ դէպի անցեալը, դէպի բնական հաւա-

սարսափը, արդար, թէեւ բարբարոս հասարակութիւնը:

Ժան Ժակ Ռուսոն դրա նման մի ճիչ արձակեց, երբ Դիժոնի ճեմարանը մրցանակ դրեց, թէ արդեօք զիտութիւնների եւ արուեստների վերածնութիւնն օգո՞ւտ տուին մարդուն: Մի այլ ձեւի ճիչ էլ արձակեց Ժոզէֆ-դը-Մեսարը իր «Soirés de st. Pétérsbourg»ներում, այն երեկոյեան պերճախօս դասախօսութիւններում, որ Սավոյայի հնչին թագաւորութեան տաղանդաւոր խօսող դէսպանը տալիս էր յարերի մայրաքաղաքում՝ Ֆրանսիական Մեծ Յեղափոխութեան օրերին: Սակայն Ռուսոն հետեւանքները դնելով պատճառների տեղ, ուզում էր կանդնեցնել իրերի բնական հոսանքը, իսկ Ժոզէֆ-դը-Մեսարը, լինելով կատաղի միապետական եւ անդրալեռնական, կոչ էր անում ժամանակակիցներին դառնալ դէպի յետ, դէպի բնական մարդկութիւնը, վայրենիներին էլ համարելով ոչ թէ բնական մարդիկ, այլ այլասերուածներ, Աստծու ստեղծած բնական վիճակից, իրենց մեղքերի պատճառով, վտարուած արարածներ:

Նոյնպիսի մի ճիչ մենք լսում ենք ռուս գեղարուեստական հանճարի, բայց Թոյլ փիլիսոփայի՝ Լեւ Տոլստոյի բերանից: Լուսաւորութիւնը վնասում, ախմահացնում է մարդկանց, ուզում է պնդել Տոլստոն իր «Լուսաւորութեան պատուհասը» թատերագրութեան մէջ: Մի հասարակ գիւղացի աղջիկ, բնական առողջ ուղեղի տէր մի ա-

դախին «ձեռք է առնում» իր բոլոր «պրոֆեսոր» տանուտէրերին, նրա ուսուցչապետ, թժիշկ, փաստաբան հիւրերին, ծաղրում է նրանց հիպնոտիզմը, նրանց մանեհիզմը, մեսմէրիզմը եւայլն:

Ցեա դէպի բնականը, դէպի առողջ բնութիւնը:

Այդ կոչն առաջին հայեացքից չատ պեղեցիկ, չատ մաքուր եւ, որ գլխաւորն է, ասպետական է երեւում: Սակայն քննադատ մտքի առաջին չունչն իսկ դիմակազերծ է անում նրան:

Ցեա դէպի սկզբնականը, դէպի բնականը: Էլ ինչո՞ւ էինք յառաջ գալիս, երբ յետ պիտի դնայինք:

Մենք մի կողմ կը թողնենք Ռուսոյի, դը Մեստրի, Տոլստոյի եւ ուրիշների թեզերը եւ կը վերլուծենք միմիայն անտեսական երեւոյթը կամ աւելի ստոյգ է, երեւոյթի անտեսական արմատները:

Որքան էլ հսկայական վնասների, չարիքների ու ճիրների աղբիւր լինի կապիտալիստական կամ խոշոր արտադրութիւնը, մենք չենք կարող պահանջել նրա ոչնչացումը եւ դարձ դէպի մանր, դէպի նախակապիտալիստական արհեստաւորական տնտեսութիւնը կամ նրանցից էլ առաջ եղած բնատնտեսութիւնը: Ներկայի խոշոր կամ կապիտալիստական արտադրելակերպը ճակատագրական մի անհրաժեշտութիւն է:

Պարզենք, թէ ինչու է այդ այդպէս:

Հին եւ միջին դարերում, երբ թագաւորում

էր բնատնտեսութիւնը, ամէն մի տնտեսատէր արտադրում էր իր եւ իր ընտանիքի համար անհրաժեշտ բոլոր արժէքները: Նա իր ընտանիքով մշակում էր իր հողը, չինում էր իր սայլը, արօրն ու դուխանը, խուզում էր ոչխարների բուրդը, թել մանում, շալ գործում, զգեստ կարում. իր ոչխարի մորթից վափախ կարում, իր եզի կաշուից չարուխ կամ տրեխ չինում եւայլն, եւայլն: Ամէն մի ընտանիք կամ տուն իր համար մի ուրոյն, մի փակ աշխարհ էր, որ յարաբերութիւն գրեթէ չունէր միւսների հետ: Եթէ որեւէ գործածական արժէքի, որեւէ իրի պէտք էր ունենում, — այնպիսի իրի, որ ինքն անկարող էր արտադրել, — իր ունեցած արժէքներից տալիս եւ փոխարէնն ստանում էր այդ իրը հեռաւոր գրացիներից կամ պատահաբար անցնող առեւտրականից:

Այդ ձեւի տնտեսութիւնն է, որ կրում է բնատնտեսութիւն անունը:

Սակայն միեւնոյն մարդը չէ կարող լինել միաժամանակ ե՛ւ լաւ երկրագործ, ե՛ւ լաւ դարբին, ե՛ւ լաւ ատաղձագործ, ե՛ւ լաւ դերձակ, ե՛ւ լաւ հօշակակար եւայլն: Նրա արտադրածը կը լինի կոպիտ՝ արտադրական բոլոր ճիւղերում: Բացի կոպիտը, կը լինի նուազ, սակաւ, նրա աշխատանքը չէ կարող լինել բազմարդիւն, խիտ կամ էնտանց:

Մարդկութիւնը կանգ չէ առնում, նրա թիւն աճում է անընդհատ, չնայելով անվերջ պատե-

բազմներին, մահերին, համաճարակներին: Եւ ահա ամող մարդկութեան առջեւ դրուում է մի երկընտրանք կամ մի դիլլէմ. կամ պէտք է փոխել տնտեսութեան բնական սակաւարդիւն ձեւը, դրանել մի նոր տնտեսական արտադրաձեւ, աւելի արդիւնաւոր քան առաջինը, եւ կամ պէտք է ոչընչացնել մարդկութեան ամեցողութիւնը եւ արդէն ամած մասը:

Ու մարդկային հասարակութեան մէջ առաջ է գալիս աշխատանքի հասարակական բաժանումը. ծագում են արհեստները: Արհեստաւորական մանրը տնտեսութիւնը մի հսկայական յառաջդիմութիւն էր, համեմատելով բարբարոսական բնատնտեսութեան հետ: Ամէն մի մարդ, զբաղուելով մի արհեստով, արտադրական մի ճիւղով, է՛ւ աւելի ճարպիկ, աւելի մասնագէտ է դառնում, է՛ւ աւելի կատարելագործում է իր սեփական արհեստի գործիքները:

Ծնունդ առնելով մինչեւ դարերի սկիզբներում, արհեստաւորական տնտեսութիւնը բաւարարութիւն էր պատճառում գոյութիւն ունեցող ժողովուրդին մինեւ ԺԴ. եւ ԺԵ. դարերը: Եւ Ժ.–ԺԵ. դարն արհեստների ու համքարութիւնների ծաղկման շրջանն էր:

Կրկին ամում է մարդկութիւնը, կրկին եղած արտադրական մանը, արհեստաւորական ձեւերը բաւարարութիւն չեն տալիս ուտող բերաններին, բազմացած անհատներին: Եւ մարդը կրկին կանգնում է նոյն երկընտրանքի առջեւ. կամ կատար-

ուել, սովամահ լինել, իջնել Ժ.-ԺԱ. դարերի բնակչութեան թուին, կամ դանել արտադրութեան մի այնպիսի ճեւ, որն աւելի արդիւնաբեր լինի, քան արհեստաւորական տնտեսութիւնը:

Ու մարդը հնարեց մանուֆակտուրական արտադրամեքը, որ անպայման աւելի արդիւնաւոր էր, քան արհեստաւորական-էնաֆականը:

Այդ արտադրամեքն էլ կարողացաւ բաւարարութիւն տալ մինչեւ ԺԸ. դարի կէսերը: Աճող մարդկութիւնն սոխպուած եղաւ հնարել խոշոր կապիտալիստական արտադրութիւնը, որպէսզի կարողանայ բաւարարութիւն պատճառել մէկ միլիառդ եւ 600 միլիոնանչափ մարդ էակներին, որոնք մրջիւնների պէս վխտում են մեր երկրագնդի վրայ:

Պարզ է, ակներեւ. խոշոր արտադրութիւնը ճակատագրական անհրաժեշտութիւն է, այժմ այլեւս անհնարին է բաւարարութիւն տալ դոյութիւն ունեցող մարդկանց ամէն, նրբացած եւ բազմապիսի կարիքներին: Թէ՛ մարդ անհատների թիւն է հասել ահագին չափերի եւ թէ կրթուած անհատների ու հասարակութիւնների պահանջները են բազմապատկուել: Այլեւս ոչ բնատնտեսութիւնը, ոչ արհեստաւորական, ոչ էլ մանուֆակտուրական տնտեսութիւնը կարող են բաւարարութիւն տալ եղած մարդկութեան բոլոր տեսակի կարիքներին: Միակ արտադրամեքը, որի ժամանակ մարդու աշխատանքն ամէնից աւելի սոստիկ (էնտաւս), ամէնից աւելի արդիւնաւոր

է, դա ներկայի խոշոր կամ կապիտալիստական տնտեսութիւնն է: Վերացնել, ոչնչացնել այդ արտադրաձեւը, կը նշանակէ դատապարտել ներկայ մարդկութիւնը սովի, մտաւոր ու բարոյական ամէն տեսակ պրկանքների:

Ուրեմն՝ պէտք է պահել արտադրութեան ներկայ ձեւը, մեքենական խոշոր արտադրութիւնը եւ, որքան կարելի է, աւելի եւ աւելի խոշորացնել, աւելի արագ, աւելի շատ եւ աւելի լաւ հարստութիւններ արտադրել:

Այլեւս ոչնչանում է այն հարցը, թէ ինչերիս է պէտք խոշոր արտադրաձեւը: Նրա տեղ դրւում է մի նոր, մի էական խնդիր: Եթէ խոշոր արտադրութիւնն անհրաժեշտութիւն է, ի՞նչպէս անել, որ նա ե՛ւ գոյութիւն ունենայ, ե՛ւ աւելի ու աւելի աճի, բայց եւ չվնասէ մարդկութեանը, չառաջացնէ այն անհամար չարիքները, զորս մենք հաշուեցինք մի քիչ առաջ: Կարճ, ի՞նչպէս անել, որ խոշոր, կապիտալիստական, մեքենական արտադրութեան բոլոր օգուտներն ստանանք, իսկ նրա հասցրած վնասներից հեռու պահենք հասարակութիւնը: Ահա այն հարցը, որ այսօր կոչւում է սոցիալական կամ ընկերային խնդիր, որի լուծման համար շատ գիտնականներ ու փիլիսոփաներ դրել են իրենց ամբողջ կեանքը, որի լուծման համար այսօր մարտնչում են միլիոնաւոր բանուորներ եւ գիւղացիներ մի կողմից, նրանցից թուով շատ նուազ հոգեւորականները, դրամատէրերը ու հողատէրերը՝ միւս կողմից:

Ու ելքը գտել են տնտեսագէտները եւ մտածողները։

Խոշոր արտադրութեան մէջ էական տեղերից մէկը բռնում է մեքենան, 19րդ եւ 20րդ դարերի հրաշալիքը։ Աւրհեստաւորութեան տնտեսութեան ժամանակ ամէն մի արտադրող աշխատում էր իր սեփական գործիքներով։ Բոլոր գործիքները մանր էին եւ ժամանակ, մի արհեստաւորի կարողութեան ենթակայ — թէ՛ նիւթականի կամ դնելու տեսակէտից, թէ՛ ուժի, գործածելու տեսակէտից։ Ամէն մի մանր արտադրող կարող էր ձեռք բերել իրեն համար անհրաժեշտ գործիքները եւ բանեցընել։ Նեղն ընկած պարագային, արհեստաւորի նախկին վարպետը, դրացիները, էնաֆը «ձեռք էին բռնում», «թաչկինակ ման ածում», մի քիչ դրամ հանգանակում եւ նրան խանութ էին դնում։ Մեքենական արտադրութեան ժամանակ այդ ամէնը գրեթէ անհնար է։ Այլեւս չկայ նախկին մանր, չնչին արժէքով գործիքը. նրանց տեղը բռնել են այնպիսի խոշոր մեքենաները, որ մի անհատի կամ անհատների հոկայական մեծամասնութեան համար այլեւս անկարելի է ձեռք բերել, անկարելի է դնել։ Գնել կարող է կապիտալիստը, որ ինքն այլեւս չի աշխատում, այլեւս ձեռքերի վրայ կոշտեր չունի, որոնք դարեր շարունակ զարդարել են մանր արհեստաւորի ու երկրագործի ձեռքերը։

Ուրեմն՝ նախկին գործիքն այսօր այնքան է աղել, արժէքն այնքան է բարձրացել, որ միմիայն

կապիտալիստն է ընդունակ գնելու, նրա համապատասխան գործարան չինելու, նրա համար անհրաժեշտ հում նիւթեր (բուրդ, կաշի, փայտ եւ այլն) եւ վառելիք ամբարելու եւ ապա մի՛այն գործ սկսելու:

Կապիտալիստից ջոկ՝ հնարաւոր է եւ մի ուրիշ գործարանատէր, բաժնետոմս կամ ակցիոներական ընկերութիւնը: Միանում են բազմաթիւ մանր ու խոշոր դրամատէրեր, ամէն մէկը գնում է մի կամ մի քանի բաժնեթուղթ, գոյանում է մի խոշոր դրամագլուխ, եւ բաց են անում մի գործարան:

Թէ՛ առաջին եւ թէ երկրորդ դէպքերում՝ գործարանատէրը չէ աշխատում. լաւագոյն դէպքում՝ նա դառնում է «գործի ընդհանուր դեկավար»: Վարձու է գործարանի կառավարիչը, վարձու են մեքենագէտներն ու մեքենավարները, վարձու են բոլոր տեսակի բանուորներն ու արհեստաւորները, դրագիրներն ու հաշուապահները... Վարձկանների այս մեծ բանակով գործն սկսւում է:

Ժամանակակից գործարանը, ժամանակակից մեքենան չեն բաւականանում մէկ-երկու մարդով. աշխատողները պիտի լինեն բազմաթիւ եւ նրանք պէտք է միասին, հանրօրէն աշխատեն: Նրանք չեն կարող աշխատել մենակ, առանձնացած, նրանց աշխատանքներն այնպէս են իրար չաղկապուած, իրար հետ հիւսուած, թնջկուած, որ անհնարին է նրանց իրարից բաժանել: Դրուած է մի

հակայական մեքենայ, որի մէջ միաժամանակ դեռեղուած են ե՛ւ բուրդը լուալու, ե՛ւ գզելու, ե՛ւ թել մանելու մասերը: Այդ հսկային ծառայութեան են ղրուած տասնեակներով բանուորներ. մի քանիսը բուրդ են բերում, մի երկուսը հըսկում են ջրի հոսանքի վրայ, միւսները իւղ են ածում, երրորդները հսկում են փոկերի վրայ, մի այլ խումբ վառելիքն է լեցնում ներս եւայլն, եւայլն: Դրանք բոլորն էլ երկաթէ հրէշի հլու ծառաներն են, նրա սարուկները: Առաջ մարդն էր գործիքի տէրը, նրան հրամայողը, իսկ այսօր գործիքը, մեքենան է մարդ արարածի տէրը, նըրան հրամայող պարանը. մարդն է, որ պէտք է ենթարկուի մեքենայի չարժումներին, նրա ցընցումներին, եթէ չէ կամենում թեւը կամ ոտը կորել, մէջքը կամ գլուխը ջախջախուած տեսնել:

Այսպէս ուրեմն՝ բացի մեծանալն ու աղելը, մեքենան ստիպում է աշխատողներին կազմել մի համայնք — փոքր թէ մեծ, այդ միեւնոյնն է, — եւ աշխատել միասին, համայնօրէն: Եւ յիրաւի, այսօր արտադրական աշխատանքների այն բոլոր մասերը, ուր մատ է գործել մեքենան, աշխատանքը կատարւում է ոչ անհատաբար, այլ խմբովին կամ հանրօրէն:

Եթէ աշխատանքը գործարանի ներսում համայնական է, էլ ինչո՞ւ գործարանները չեն չինում միանգամայն առողջապահօրէն, մաքուր օդով, լուսաւոր, ընդարձակ, որպէսզի համայնօրէն աշխատող բանուորները ոչ թոքախտ ստա-

նան, ոչ հիւծուին լոյսի եւ օդի պակասութիւնից, ոչ էլ թեւերն ու ոտքերը մեքենայի բերանն ընկնին, խեղաթիւրուին:

Եթէ աշխատանքը հրամայական է, եթէ այսօրուայ արտադրած հարստութիւնների հսկայական մեծամասնութիւնն արդիւնքն է մարդկանց խմբական կամ հասարակական աշխատանքի, էլ ի՞նչպէս է լինում, որ բանուորները, հարստութիւնների ստեղծագործողները մնում են սոված, նեղութեան մէջ, ցնցոտիների գրկում: Ո՞րտեղից է ծնունդ առնում այս սատանայական կարգը: Մարդն ինքն է չինում մեքենան եւ իր չինած մեքենայի սարուկն է դառնում. մարդն ինքը համայնօրէն աշխատում եւ հարստութիւններ է ստեղծում, ինքը մնում է կրկին աղքատ, կրկին թշուառ, իսկ հարստութիւնը բաժին է ընկնում քէսերին — կապիտալիստներին, հողատէրերին, հոգեւորականներին, պաշտօնեաներին:

Ո՞րտեղից է բխում այդ անարդարութիւնը. ո՞ւր է նրա աղբերակը:

Հասարակական կեանքի բարեխիղճ վերլուծութիւնը մեզ բերում, կանգնեցնում է մի աղբիւրի գլխի:

Աշխատում են շատերը, իւրացնում է մէկը: Հարստութիւնները արտադրում են աշխատաւորները հանրօրէն, արդիւնքը դրպանն է դնում կապիտալիստ առհասարակ: Գործարանների, հանքերի, արհեստանոցների, հողերի կազմակերպուած, հասարակական աշխատանքը մի անտեսա-

նելի խողովակով միացուած է կապիտալիստի, հողատիրոջ, պաշտօնեայի ղրպանի հետ. աշխատաւորները արտադրում են, իսկ այդ անիծեալ խողովակն անընդհատ տանում է նրանց արտադրոյթը դէպի գործատէրերի ղրպանը: Ու այդ խողովակի անունն է մասնաւոր սեփականութիւն: Մի հնար է մնում միայն. կտրել այդ սատանայական խողովակը, չթողնել, որ հանրութիւնն աշխատի, իսկ իւրացնէ անհատը, ու կտրած խողովակի բերանը տանել եւ բանալ աշխատող հանրութեան ղրպանը:

Վերածենք այդ այլաբանութիւնը կեանքի երեւոյթներին: Մարդիկ արդէն աշխատում են խմբովին, այսինքն՝ աշխատանքն արդէն իսկ համայնական է: Բայց այդ աշխատաւոր համայնքի կողքին եկել կանգնել է մի կապիտալիստ, մի հողատէր կամ մի այլ մարդկային էակ եւ պնդում, որ հողը եւ արտադրական միւս բոլոր միջոցները իրենն են, իր մասնաւոր եսիականութիւնը. որ ինքը ձեզ կը թողնէ իր հողի վրայ, իր սեփական արտադրամիջոցներով աշխատելու, եթէ դուք ստանաք ձեր աշխատանքի համար այսքան, իսկ ամբողջ արտադրոյթը թողնէք իրեն: Ասում եմ, մնում է մի բան միայն. բոլոր հողը եւ բոլոր արտադրամիջոցները հրաւարակել բոլոր հասարակութեան սեփականութիւն, որպէսզի բոլոր մարդիկ աշխատեն եւ բոլորն էլ վայելեն իրենց աշխատանքի ամբողջ պտուղը: Ուրեմն՝ մինչեւ օրս բոլոր աշխատաւորների արտադրած հարստու-

թիւնը օրէնքի, կրօնի, Աստծու, սրբերի, դժոխքի ու դրախտի, սովորութիւնների ու բանակնեբի միջոցով խլուղների կամ էքսպրոպրիատորների ձեռքից պէտք է խլել բոլոր արտադրամիջոցները եւ հողը եւ դնել հանրութեան վարչութեան տակ, յայտարարել հանրութեան սեփականութիւն, որպէսզի բոլոր մարդիկ աշխատեն եւ բոլորն էլ վայելեն:

Այն ժամանակ միայն խոշոր արտադրութիւնը կը մնայ, աւելի եւս կը խոշորանայ, աւելի մեծ չափերով հարստութիւններ կ'արտադրուին, իսկ նրա կործանարար, նրա քայքայիչ կողմերը կը չքանան, որովհետեւ այլեւս չի լինի մանաւոր սեփականատէրի կործանարար մրցումը. գոյութիւն չի ունենայ արդ հարստանալու եւ դրա համար ուրիշների, աշխատաւորների կաշին քերթելու, նրանց զրկելու, նրանց կեղեքելու եւ իր զրպանները լեցնելու կիզիչ տենդը: Իրաւատէր եւ գործատէր հասարակութիւնն իր ընտրած մարդկանց ձեռքով կը կարգաւորէ ամբողջ արտադրութեան եւ բաշխման գործը, փրկելով մարդկանց առողջութիւնը եւ կեանքը, մտածելով բոլոր աշխատաւոր հասարակութեան մտաւոր, բարոյական, ֆիզիքական, գեղասիրական հաճոյքների մասին:

Ահա այդ է, որ կոչւում է ընկերվարական կազմակերպութիւն, կամ աւելի լաւ է ասել՝ ընկերվարական ապագայ կազմակերպութեան էական սկզբունքները միայն: Դրան է ձգտում աշ-

խառնուրդեան վիտակից մասը; ղէպի այդ ձեւի կենսական կազմակերպութիւնն է մղում մեզ ներկայի հանրային կեանքի զարգացումը: Այդ իղէալական կազմակերպութեանը հասնելու համար է, որ յայտարարուած է կեանքի ու մահուան կռիւ աշխատանքի եւ կապիտալի միջեւ. դրա համար են իրար բախւում դասակարգերը. դրա տնունով է ծածանւում կարմիր դրօշակը:

Անցնենք այժմ դասակարգերի բախմանը, նրանց ահեղ կռւին:

ԳԼՈՒԽ Դ.

Դասակարգերի տարբերական եւ նմանողական տարրերը — Դասակարգային կռիւը — Ե՞րբ է հնարաւոր դասակարգերի համերաշխութիւնը — Ազգ եւ դասակարգ — Ազգային հարցի լուծումը — Գործնական պահանջներ:

Եթէ մենք բարձրից նայելու լինենք ամբողջ մարդկութեան վրայ, ամէնից առաջ կը նկատենք, որ այդ մարդկութիւն կոչուածը մի ամբողջութիւն չէ. նա ապրում է մանր ու խոշոր խմբակցութիւններով, որոնք կոչւում են անիշխանական հորդաներ. երբ մարդիկ դեռ վայրենի վիճակումն են՝ կոչւում են տոհմեր, ցեղեր եւ ցեղերի դաշնակցութիւններ, երբ մարդը հասել է բարբարոսական շրջանին եւ ուզում է թեւակոխել քաղաքակրթութեան չեմքը: Իսկ եթէ մենք նոյն բարձունքից — à vol d'oiseau, ինչպէս ընդունուած է ասել, — նայենք քաղաքակիրթ մարդկութեան վրայ, մենք նրա մէջ կը նկատենք աւելի խոշոր խմբակցութիւններ, որոնք կոչւում են ազգեր:

Այդ ազգերը հեռուից մեզ երեւում են մի-մի օրգանական, մի-մի բնական ամբողջութիւններ:

Իսկ եթէ այդ օրգանական ամբողջութիւնը վերցնենք առանձին եւ քննութեան առնենք, ահա

այն ժամանակ է, որ պարզօրէն նկատուում է ազգութեան մէջ գոյութիւն ունեցող չերտաւորութիւնը, այն ժամանակ երեւան են գալիս զասակարգերը, որոնք զրեթէ գոյութիւն չունեն վայրենի բարբարոս վիճակներում գտնուող մարդկային համախմբումների եւ միութիւնների մէջ։

Ազգային միութիւնն ու ամրողջութիւնը չպիտի խանգարեն մեզ տեսնելու նրանց ներսում գոյութիւն ունեցող զասակարգերն, ինչպէս եւ զասակարգերի հակամարտ դիրքերն ու չահերը։ Ըստպէտք է խանգարեն մեզ ընդհմարելու, պարզօրէն տեսնելու ազգութիւնների ամրողջական կազմերը։

Ամէն մի մարդ արարածի բնաւորութիւնը կազմակերպւում է երկու որոշ տարրերից, ժառանգական, ի ծնէ հետը բերած որոշ տրամադրութիւններից եւ կեանքի ընթացքում — ծնելուց մինչեւ մեռնելու օրը — անհատին չրջապատող միջավայրից։ Միջավայր ասելով, մենք հասկանում ենք ե՛ւ անհատին չրջապատող անձերը, ե՛ւ այն հասարակութիւնը, որի մէջ նա ապրում է, ե՛ւ նրա զրաղմունքը եւայլն։ Բնական եւ ստացական այդ երկու տարրերի հանդիպումից, նրանց յարաբեր բախումից ստեղծագործւում է մի էակ, մի մարդկային անքաժանելի, մի անհատ։ Եւ այդ հասարակութեան պատուղ ու այդ ժառանգական տարրերի արդիւնք անհատը դառնում է մի նոր աղբիւր անհատների, որոնք, իրենց կարգին, բերում են կեանք իրենց հետ, որոշ ժառանգական յատկութիւններ կամ կանխատրամադրութիւններ,

կեանքից եւ միջավայրից էլ առանում են նոր տե-
պատրութիւններ, գառնում նոր անհատներ, նոր
ու նոր աղբիւրներ նոր սերունդների եւ այդպէս
անվերջ:

Այդ օրէնքը յատուկ չէ միմիայն մարդուն.
բոլոր օրգանական կամ գործարանաւոր մարմին-
ները — բոյսերը, կենդանիները — ենթակայ են
նոյն համաչխարհային օրէնքին:

Ո՞րն է այդ երկու տարրերից աւելի հզօր՝
բնակա՞նը թէ սոցիալականը: Երկուսն էլ կան, եր-
կուսն էլ ուժեղ են: Նրանք մրցող եւ իրար ջնջող
չեն ամէն վայրկեան, այլ շատ յաճախ մէկը միւ-
սին լրացնող ու ամրապնդող: Սակայն որքան կա-
րենանք մենք ժառանգականը վերլուծել սոցիա-
կանի մէջ, չենք կարող, որովհետեւ չենք կարող
երբեք հասնել այն կէտին, որից առաջ չկար ոչ
մի ծնող էակ, որը ժառանգութիւն տար իր ծնած
ժառանգին: Եթէ մենք չենք կարենում ընկնել մե-
տաֆիզիկայի կամ բնազանցութեան մութ խորչե-
րը, պիտի ասենք, որ այդ երկու տարրերն էլ կան,
երկուսն էլ ազդեցիկ են, երկուսն էլ զօրեղ. եւ
այդ երկուսի իրար բախումից, նրանց նոյնացու-
մից է կազմակերպւում անհատի նկարագիրը, նրա
ոգին:

Երբ մի անգամ պարզուի մեզ համար անհա-
տի նկարագրի, նրա ոգու կազմակերպման դեր-
ծողութիւնը, այնուհետեւ մեզ համար դիւրին կը
լինի ըմբռնել աղգային եւ դասակարգային նկա-
րագիրների հարցերը:

Մի ազգութեան մէջ գոյութիւն ունեցող բոլոր դասակարգերի բոլոր անդամներն անպայման՝ պիտի ունենան թէ՛ իրար նմանող եւ թէ իրարից տարբերուող տարրեր: Եթէ նրանց, այլ դասակարգերի բոլոր անդամների մէջ չլինի նմանողական տարրեր, մենք տեսականօրէն, առանց ճանաչելու դրանց, կ՚ասէինք, որ դրանք մի եւնոյն ազգի անդամները չեն: Չէ՞ որ ամէն մի անհատ բերում է իր հետ ժառանգական մի տարր: Իսկ ազգութիւնը մարդկանց մի մեծ թիւ է, որ դարեր շարունակ սերունդից սերունդ ապրելով մի եւնոյն բնական եւ պատմական միջավայրում, դարբնել է որոշ ազգային ոգի: Ահա ազգի բոլոր անդամների հետները բերած ժառանգական տարրը, որ շրջապատող միջավայրը կամ ամրապնդում, աւելի եւս զարգացնում է, կամ կրճատում, քայքայում, ոչնչացնելու է ձգտում: Ամրապնդում է, երբ անհատն ապրում է իր հայրենիքում, իր ազգային շրջանում, կրթւում է իր մայրենի լեզուով, իր ազգային դպրոցներում, իր ազգային դրականութեան միջոցով եւայլն: Լուծւում, թուլանում է, երբ անհատը չէ ապրում իր հայրենիքում, չէ խօսում, չէ դաստիարակւում իր մայրենի լեզուով, իր ազգային դպրոցներում, իր դրականութեան միջոցով եւայլն:

Ազգային նմանաբանական կամ նմանողական տարրերի մասին մենք մանրամասն խօսել ենք մի այլ տեղ(*), այդ պատճառով մենք երկար կանգ

(*) Տե՛ս «Ի՞նչ է ազգութիւն»:

չենք առնի նոյն հարցի վրայ այստեղ: Համառոտակի կ՚ասենք միայն, որ ազգութիւնը կազմող բոլոր դասակարգերի մէջ կայ մի ընդհանուր հաւաքական գիծ — դա ազգային ոգին է, որի արտայայտիչներն են լեզուն, գրականութիւնը, ըմբռոցը, սովորութիւնները եւայլն: Հայ լեզուն, հայ գրականութիւնը, հայ դպրոցը, հայ սովորութիւնները, մի խօսքով՝ հայ ոգին չէ պատկանում ոչ պրոլետարին, ոչ աշխատաւոր գիւղացուն, ոչ բուրժուազիային, ոչ կղերին, ոչ էլ հոգատէրերին կամ կիսաբուրժուական տարրերին. նա պատկանում է բոլոր դասակարգերին եւ այն բոլոր անհատներին, որոնք զգում են իրենց հայ լինելը: Ազգութեան հարցը ուսումնասիրելիս, երկար կանգ առնելով այդ խնդրի վրայ, մենք դուրս ենք բերել նոյնիսկ գործնական քաղաքականութեան կանոններ. բոլոր դասակարգերը պարտաւոր են պաշտպանել ու զարգացնել իրենց ազգային լեզուն, դպրոցը, գրականութիւնը, թատրոնը, ճարտարապետութիւնը, երգը եւայլն, եւայլն, որովհետեւ դրանք են, որ սիրտ կազմեն մարդկութեան մի խմբակի կուլտուրան, նրա — այդ խմբակի տաղանդը կամ հանճարը:

Սակայն միայն նմանողական տարրերը չեն, որ գոյութիւն ունեն: Այդպէս եթէ լինէր, այլեւս չէին լինի դասակարգեր, այլ կը լինէին ազգեր եւ ազգերի ներսում միապաղաղ անհատներ, առանց դասակարգերի: Իսկ մենք գիտենք, որ դասակարգերը կան, եւ այն էլ ի՛նչպէս: «Ես բողոքում եմ,

ես կուտամ եմ, ուրեմն ես կամ», կարող ենք մենք ասել դասակարգերի վերաբերմամբ, հետեւելով ֆրանսիական մեծ փիլիսոփայի՝ Դեկարտի «cogito, ergo sum»ին (մտածում եմ, ուրեմն գոյութիւն ունեմ)։ Նրանք կան, իրար են բախւում եւ ստեղծում եթէ ոչ մարդկային ամբողջ պատմութիւնը, գոնէ նրա մեծագոյն մասը։

Նախընթաց գլուխներում մենք տեսանք, որ դասակարգը տնտեսական արմատից բխած մի երեւոյթ է։ Որոշ թիւ մարդիկ — չատ թէ քիչ — նշանակութիւն չունեն, որոնց չահերը բխում են միեւնոյն աղբիւրից, կամ որոնց բաժին է ընկնում հասարակական հարստութեան միեւնոյն մասը, կազմում են մի դասակարգ։ «Դասակարգերն այլ բան չեն, եթէ ոչ խմբակցութիւններ, որոնք իրենց ներսում ունեն նոյն չահերը», — ասում է պատմագէտ Վիլպէրը(*)։

Ուրեմն՝ նմանութեան տարրերի կողքին ամէնից առաջ մենք տեսնում ենք արդէն մի տարբերական հզօր, չատ հզօր տարր — նիւթական չահը, եկամուտի աղբիւրը, այն՝ թէ հասարակական հարստութիւնների ո՞ր մասն է բաժին ընկնում այս կամ այն դասակարգին, — արդեօք հողի բէնտա՞ն, դրամագլխի չահը եւ նախաճեռնողի վաստա՞կը, թէ՞ վերջապէս աչխատավարձը։ Հա-

(*) Տե՛ս նրա «Պատմական իմացականութեան տեսութիւնը» (ռուսերէն), էջ 266։

մաճայն եկամուտի աղբիւրի եւ դրամմունքի՝ անհատները լինում են այս կամ այն դասակարգի անդամ: Եւ որովհետեւ եկամուտների աղբիւրները տարբեր են իրարից, որովհետեւ հողատէրերն ու կապիտալիստները, անշուշտ զանազան խաբէական անունների տակ, իւրացնում կամ իրր եկամուտ՝ ստանում են ուրիշների, աշխատաւորների յաւելեալ արժէքները, իսկ աշխատաւորներն ստանում են իրենց սեփական աշխատանքի մի մասը միայն, — այդ տեղից բնականօրէն բխում է չահերի հակադրութիւնը: Հասարակական ամբողջ հարստութիւնն արտադրում եմ ես, իսկ դո՛ւ — հողատէրդ կամ բուրժուազ գալիս իւրացնում ես այդ արտադրոյթի մեծագոյն մասը:

Եւ ահա ստեղծւում են կեանքի մէջ, մեր իսկ ազգութեան ներսում, մի շարք նոր պայմաններ: Ես բանուոր եմ, աշխատում եմ ածխահանքերում կամ պղնձահանքերում, դեռնի տակ, կամ խոշոր գործարանում, չրջապատուած ինձ պէս անուս, ինձ պէս կոպիտ, ինձ պէս աշխատանքից երբեք աչքը բանալու ժամանակ չունեցող հին ու նոր բանուորներով: Մնում է կոպիտ իմ բնաւորութիւնը, անմշակ — իմ ուղեղը, զոհւիկ ու անզարգացած իմ զեղասիրական ճաշակը: Ու՝ այդպէս են ինձ հետ միասին բոլոր աշխատաւորները — բոլոր բանուորները, բոլոր մանր գիւղացիները ու գիւղական պրոլետարները, բոլոր գործարանային եւ այլ տեսակի բանուորները, մանր արհեստաւորները եւայլն: Մենք այդպէս ենք մնում,

դեռ այդ քիչ է, այդպէս են կրթում մեր զաւակները էլ: Մեր եկամուտը միայն մեր չնչին աշխատավարձն է, որով հազիւ հազ քարշ ենք տալիս մեր եւ մեր զաւակների ֆիզիքական գոյութիւնը. էլ ի՞նչպէս մտածենք մեր զաւակների դաստիարակութեան մասին, ինչո՞վ կրթենք նրանց: Իսկ դպրոցները սուղ են, չա՛տ սուղ են նիհար գըրպանների, մեր հիւծախտաւոր անտեսութեան համար: Չէ՞ որ ներկայ հասարակութեան եւ պետութեան գործերը վարում են հոգատէր ազանեըը, կապիտալիստները եւ մեծամեծ պաշտօնեաները: Նրանք մեզ եւ մեր զաւակների համար մատչելի են դարձրել միայն տարրական դպրոցը, ուր չա՛տ չնչին է ուսումը, այնքան չնչին, որ աւարտողները յաճախ մոռանում են իրենց տուրքանները էլ, իսկ չմոռացողների ուղեղն էլ շատ տարբերութիւն չունի չրջապատի անուններից: Միջնակարգ եւ բարձր կրթութիւնը մեզ եւ մեր զաւակների համար անըմբռնելի է, որովհետեւ սուղ է, երկար է տեւում. այնինչ մեր զաւակները, հազիւ 14–16 տարեկան եղած, պէտք է մտնեն գործարան կամ հանք: պէտք է առօրին ու գուշանին ճեռք զարնեն, որովհետեւ ապրել է պէտք, հաց վաստակել:

Իսկ մեր ղիմաց կանգնած բուրժուական դասակարգերը եւ շատ մըջոցներ, ե՛ւ շատ էլ ազատ ժամանակ ունեն կրթուելու, դաստիարակուելու: Մենք աշխատում ենք, նրանք են իրենց գրպանները լցնում. էլ ինչո՞ւ չպէտք է միջոց ունենան:

Նրանք եւ նրանց զաւակները մանում են զկրոյ ութ տարեկան հասակից եւ մինչեւ 24–25 տարեկան դառնալը սովորում են, անցնում թէ՛ տարրական, թէ՛ միջնակարգ եւ թէ բարձր ու բարձրագոյն զկրոցները, դառնում մասնագէտներ: Նրանք յաճախում են ամէն տեսակ թատրոնները, օպէրաները, համերգները, պատկերահանդէսները, դասախօսութիւնները եւայլն, եւայլն. զարգանում է նրանց ուղեղը, նրբանում նրանց ճաշակը, բարեկրթւում նրանց չարժուձեւը, նիստ ու կացը:

Եւ ահա զաւակարգերի մէջ եղած տարբերական տարրի ամենամեծ աղբիւրը:

Զբաղմունքներն ստեղծում են տարբեր միջավայրեր, իսկ միջավայրերը կերտում են տարբեր բնաւորութիւն, տարբեր աշխարհահայեացքներ: Եւ այդ տարբերութիւններն այնքան մեծ են եւ ակնարեխ, որ եւրոպական զրողներից մի քանիսն ուզեցին դիտել զաւակարգերն իբրեւ ազգերից անկախ գոյութիւններ. չկան ազգեր, ազգն ու հայրենիքը լոկ բառեր են, զատարկ ու խարէական ընդհանրացումներ. միակ բէէղը կամ իրականը զաւակարգերն են(*): Այդ տեսակէտի ծընունդ էր ԺԹ. զարի կէսերին ձեւաւորուած կոսմոպոլիտիզմը կամ համաշխարհաքաղաքացիութիւնը, որ քարոզում էին լիբերալ բուրժուաները,

(*) Տես Hamon — «Les militaires proffessionels», կամ Հերվէյի գործերը:

ինչպէս Հայնէն, Բէօրնէն, Գիզոն եւ ղրանց հետ էլ, մանաւանդ սկզբներում, ընկերվարականներից չատերը, ինչպէս Մարքսը եւ իր հետեւորդները մինչեւ 1890 թուականները:

Բայց պատմութեան գործնական դասերը եւ կան սթափեցնելու բոլոր միակողմանի ուղղութիւնների երկրպագուներին, եւ ազգութեան, միջազգայնութեան եւ դասակարգերի խնդիրները լուծուեցին՝ դիտութեան տուեալների եւ կեանքի անժխտելի փորձերի հիմքերի վրայ: Մի կողմ նետուեց ազգամերժ եւ անմարմին կոսմոպոլիտիզմը. պարզուեց, որ մարդը համաչխարհաքաղաքացի լինելուց առաջ՝ զաւակ էր իր ազգի, ծընունդ իր հայրենիքի միջավայրի եւ ապա միայն իր դասակարգային միջավայրի: Սակայն պարզուեց նոյնպէս, որ ազգերի առանձնացումը, նրանց տարամերժ, օտարակերը դգացումները ծնունդ են միջնադարեան հին հաղորդակցական եւ փոխանակութեան յետամնաց ձեւերի, ազգային փակ կեանքի, մի խօսքով՝ կուլտուրական յետամնացութեան: Մշակուեց, նախկին կոսմոպոլիտիզմի ազգամերժ տեսութեան փոխարէն, այժմեան առողջ միջազգայնութիւնը կամ էնտերնացիոնալիզմը, նախկին ազգայնամոլութեան փոխարէն, այժմեան առողջ ազգային սկզբունքը — «սիրել եւ թողնել սիրելու ուրիշներին էլ», ամէն ազգ սիրի ազատ, զարգացնէ ազատ իր ներքին բոլոր կարողութիւնները, իր ազգային հանճարը, ինչպէս սիրում են արտայայտուել Ֆրանսական դրողները, իր լու-

ման նեռէ համամարդկային կուլտուրայի դանձանակը, բայց չառէ, չմերժէ եւ ուրիշներին. լինի նրանց սատար եւ օժանդակ, ընթանայ նրանց հետ ձեռք ձեռքի տուած՝ իբր դաշնակից. չճուլուի, բայց եւ չճուլէ ուրիշներին: Ահա ժամանակակից առողջ ազգային եւ միջազգային դոյգ սկզբունքը:

Ազգերը կան: Նրանց ներսում ապրող, նրանց բոլոր անդամներն ունեն որոշ նման գծեր — ազգային ոգի, որի արտաքին նշաններն են լեզուն, գրականութիւնը, բերանացի աւանդութիւնները, սովորութիւնները եւայլն: Դա ազգի ներսում ապրող բոլոր անհատների անկապտելի սեփականութիւնն է. ազգային մեծ միջավայրը բոլորին տուել է այդ նման գծերը: Սակայն ազգի ներսում կան դասակարգեր, որոնք ստեղծում են իրենց սեփական միջավայրը եւ իրենց անդամներին տալիս են որոշ բնութագծեր, որոշ դասակարգային ոգի:

Ուրեմն՝ ամէն մի մարդ էակի մէջ կան նախ ազգային յատկանիշները, իսկ յետոյ դասակարգային բնութագծեր: Ազգային յատկանիշները յատուկ են բոլոր տարրերին — թէ՛ բանուորին, թէ՛ գիւղացուն, թէ՛ արհեստաւորին, թէ՛ կապիտալիստին, թէ՛ հոգեւորականին: Դա նմանութեան տարրն է ազգութեան բոլոր խաւերի մէջ: Այնուհետեւ գալիս են բաժանող գծերը կամ տարբերական տարրերը. այս մէկը հայ բանուորի ոգի ունի, այն միւսը հայ բուրժուայի, եր-

ըորդը հայ հոգեւորականի եւայլն։

Միջավայրերի այդ երկուութիւնն ստեղծում է ազգային եւ դասակարգային բնութագծեր կամ նմանութեան եւ տարբերական տարբերն ազգի բոլոր անդամների մէջ(*)։ *Իսկ այդ երկուութիւ-*

(*) ԾԱՆՕԹ — Մարքսիստները *դասակարգը* որոշում են ոչ թէ արտադրոյթի կամ հարստութիւնների *բաշխման* տեսակէտից, այլ արտադրութեան տեսակէտից։ Դասակարգը մի արտադրական կազմակերպութիւն է, այսինքն՝ նա մարդկանց մի խումբ է, որի հիմնական նշանն այն է, թէ նա ի՞նչ տեղ է բռնում արտադրութեան մէջ կամ ի՞նչ դեր կատարում։ Իսկ աշխատաւորական տեսակէտը դասակարգը որոշում է նրանով, թէ հասարակական հարստութիւնից ո՞վ ինչ մաս է ստանում։

Երկու ուղղութիւններն էլ ընդունում են միջավայրի ազդեցութիւնը, սակայն մարքսիստներից շատերը եւ, մանաւանդ, մի բանի ուրիշ գրողներ, որ յեղում են Մարքսի վարդապետութեան վրայ եւ այլ բացատրութիւն են տալիս նրան, միջավայրի այդ ազդեցութիւնը հասցնում են չափազանցութեան։ Նրանց կարծիքով՝ բոլոր ազգերի պրոլետարները իրար աւելի նման են, քան նոյն ազգի պրոլետարն ու բուրժուան։ Նրանք պնդում են, որ բանուորական միջավայրի պայմանները նման լինելով ամէն տեղ եւ բուրժուական միջավայրն էլ նոյնպէս ամէն տեղ իրար նման լինելով, ամբողջ մարդկութիւնը վեր է ածուել երկու որոշ շերտի. երկու ազգութեան։

Այդ ծայրայեղ վարդապետութիւնը թափանցեց նաեւ

Նից բխում են երկու նոր երեւոյթներ — դասինք կամ համերաշխութիւն եւ կռիւ: Պարզ է. այն բոլոր խնդիրներում, որոնք վերաբերում են ազգայինն բնոյթին, տիրում է եւ պէտք է տիրէ համերաշխութիւնը. պէտք է միահամուռ ուժերով, առանց դասակարգի խորութեան, պաշտպանել ազգի ֆիզիքական գոյութիւնը, եթէ վտանգ է սպառնում նրան. պէտք է պաշտպանել եւ զարգացընել ազգի լեզուն, գրականութիւնը, դպրոցը եւայլն: Դրանից այն կողմ երբեք չպէտք է չարունակել համերաշխութիւնը: Իսկ երբ հարցը գալիս

հայ գրականութեան մէջ, մանաւանդ կովկասում: Երեւացին երիտասարդ ընկերվարական գրողներ, որոնք պնդեցին, թէ բանուոր դասակարգն ունի իւրայատուկ գրականութիւն, գեղարուեստ, դպրոց, լեզու եւայլն, թէ բանուորն ու բուրժուան չունեն ոչ մի կէտ շփման, բացի մայրենի լեզուից...

Հերքելու համար այդ ծայրայեղութիւնը, պէտք է ասել, որ այդ մտածելակերպի տէրերը մոռանում են մի բան. այն՝ որ դասակարգը կայուն մեծութիւն չէ, որ նա ենթակայ է մշտական փոփոխութիւնների. շա՛տ մանր ու խոշոր բուրժուաներ եւ հողատէրեր սնանկանում, ընկնում են *պրոլետարիատի* մէջ, բերելով իրենց հետ նոր բնութագծեր: Բացի այդ, ամէն մի ազգի պրոլետար ոչ միայն իր հետ բերում է իր որոշ ազգային յատկանիշները պրոլետարիատի մէջ, այլեւ շարունակում է ապրել նոյն ազգային միջավայրում, ազգի գրկում: Այսպէս, օրինակ, իտալական բանուորները, մանաւանդ երկրի հարաւում, աչքի են ընկնում

է դասակարգերի նիւթական չահերին, նրանց վայելած եւ վայելելիք իրաւունքներին, նրանց աւելի եւ աւելի լայն կրթութեանն ու դաստիարակութեանը եւայլն, ահա այստեղ այլեւս ոչ մի համեմատչութիւն չէ կարելի. մի կողմ է նեաւում խաղաղութեան դափնին եւ ճեռք առնւում սուրը, մարտի փողը հնչւում: Մարտը կատաղի է եւ ահարկու:

*
* *

Դասակարգային կռիւը.— *Եւ ի՞նչպէս չկըռուեմ, երբ, ինչպէս վերեւում ասացինք, ես աշ-*

իրենց ծայրայեղ կրօնասիրութիւնով. նրանք մոլեռանդ են, մասունքների երկրպագու, հրաշքների հաւատացող... կասկած չկայ, որ դա արդիւնք է նրանց տգիտութեան եւ ծայրայեղ աղքատութեան: Սակայն նոյն նիւթական պայմանների մէջ էին նաեւ անգլիական բանուորները մինչեւ Զարտիզմը — ԺԹ. դարի առաջին քառորդում. նոյն, երբ ոչ աւելի վատ, պայմաններում էին գերման ջուլհակ բանուորները 1840–1850 թուերին. բայց թէ՛ անգլիացիները, որ մեծ թափով նետուեցին Զարտիստական շարժման մէջ, եւ թէ՛ գերմանական ջուլհակները, որոնց անմահացրել է հանճարեղ թատերագիր Հաուպտմանը, միանգամայն ազատ էին կրօնական մոլեռանդութիւնից եւ նախապաշարումներից: Պարզ է. իտալական բանուորը, բացի բանուոր լինելուց, նաեւ *իտալացի* է, որի ազգային միջավայրը յագեցած է, լեցուն է կաթոլիկ հոգեւորականութեան ցանած որոմներով:

խաւում եմ, դու գալիս, կանգնում գլխիս վերեւը, իմ սեփական արտադրոյթի, իմ գառն աչխատանքով գոյացած հարստութիւնների մի չնչին մասը տալիս ես ինձ, հազար անգամ էլ աչխատում ցոյց տալ, որ դու ինձ բարերարութիւն ես անում, ողորմութիւն տալիս, իսկ մեծագոյն մասը դու եւ քեզ նմանները լցնում էք ձեր գրպանները:

Եւ դու — հողաշէրդ ու հոգեւորականդ, կապիտալիստդ ու աղնուականդ — միայն այսօր չէ, որ այդ ձեւով ես վարւում: Շատ դարեր առաջ քո նախահայրերը մարակով բանեցնում էին իմ նախահայրերին կամ ինձ նման խեղճերին, ըստրուկներին: Միջին դարերում քո նախահայրերը կեղեքում էին կրկին իմ նախահայրերին կամ ինձ նման տարբեր խեղճերի — իրենց հողի վրայ բընակող ճորտերին, բոլոր գիւղացիներին, արհեստաւորներին, բանուորներին: Պապերը, կաթողիկոսները, չէյխ-ուլ-իսլամները գալիս, կանգնում էին հզօրների կողքին եւ հաստատում, որ աստուածները, որ Եհովան, որ Քրիստոսն ու Ալլահը այդպէս են կամենում. որ աստուածային դիրք է հարուստն ու աղքատը, տէրն ու ծառան, կեղեքողն ու կեղեքուողը, վերջապէս գայլն ու ոչխարը. «Աստուած այդպէս է ստեղծել. այդպէս եկել է, այդպէս էլ պիտի երթայ»:

Երբ ներքին ու արտաքին հանգամանքները զարգացան, տարուկները հասկացան, որ եղած կարգն անարդար է ու վնասակար. նրանք ստեղծեցին Սպարտակներ, որոնք ապստամբութիւն յա-

ռայ բերին. նրանք այլեւս չէին աշխատում, կամ աշխատում էին շատ դանդաղ, շատ ապարդիւնօրէն: Ու տրկուԹիւնն ընկաւ: Սակայն չազատադրուեց տառապող մարդը: ՏրկուԹիւնը վերացաւ. տրուկի վիճակը լուացաւ, բայց մարդը կրկին մնաց կապուած, կրկին կեղեքուող. նա դարձաւ ճորտ:

Ամրողջ միջին դարերում զարգանում էր մարդու միտքը, կուտակւում բողոքի թոյնը. զարգանում էին եւ արտաքին հանգամանքները — մարդկանց թիւը, հաղորդակցուԹեան ուղիները, արտադրուԹեան գործիքները: Ներքին ու արտաքին ազդակների զարգացումը հնարաւոր դարձրեց վերջապէս փշրել ճորտուԹիւնը: Շա՛տ արիւն հոսեց, մինչեւ որ մարդն ազատուեց: Միայն այդ ազատուԹիւնը չբերեց նիւԹական վիճակի թեթեւացում: Բոլոր մարդիկ յայտարարուեցին իրար հաւասար օրէնքի առջեւ: Ընկան ազնուական եւ հոգեւորական դասերի բացառիկ իրաւունքներն, արտօնուԹիւնները ու առանձնաշնորհումները: Այլեւս մարդը մարդուն չէր կարող տիրել, չէր կարող տրկացնել կամ ճորտ դարձնել: Սակայն այդ ազատուԹիւնը եւ այդ հաւասարուԹիւնը վերաբերում էր միմիայն մարդու անձին, իսկ հողը եւ հարստուԹիւնները մնացին նախկին վիճակում: Հարուստը կրկին մնաց հարուստ, աղքատը կըրկին աղքատ: ԱզատուԹիւն հրատարակուեց թէ՛ անձերի եւ թէ հարստուԹիւնների համար: Դու ազատ ես. գնա՛, որքան կ'ուզես հարստացիր, ինչ

միջոցով կ'ուզես չարունակիր կեղեքել քեզ նմաններին:

Սկսուեց վարձու աշխատանքի չրջանը:

Ես հող չունեմ, որ մշակեմ ու ապրեմ: Հողը տիրապետել ես դու: Գալիս եմ քեզանից մի կտոր հող խլելու, որ մշակեմ, ինձ ու իմ ընտանիքը կերակրեմ. քո գինուած ծառաները, քեզ պաշտպանող պետութեան ոստիկանները, զօրքն ու թընդանօթներն իմ դէմ են դուրս գալիս, — իմ, անզէն, խղճուկ էակիս դէմ: Ես զգում եմ անզօրութիւնս եւ դիմում խնդրի ու աղաչանքի: Սուրբ է մասնաւոր սեփականութիւնը, ասում են ինձ եւ բերում չատ ազդու ապացոյցներ — թնդանօթ, զօրք, բանտ: Ես ստիպուած համոզւում եմ, որ սուրբ է մասնաւոր սեփականութիւնը: Աղաչում եմ քեզ, եւ դու ինձ բարեհաճում ես մի կտոր հող տալ մշակելու, մէյն մի պայմանով. հողիդ համար քեզ պէտք է վարձ տամ: Դու ազատ ու անհոգ թափառում ես, իսկ ես աշխատում, իմ քրտինքի կաթիլները գրամ դարձնում, քեզ հողավարձ վճարում: Չտալ չեմ կարող. բանտ կայ, դնդացիր կայ:

Ես ճորտ էի, ազատուեցի: Բայց անօթի եմ, հաց չունեմ: Երկաթագործ եմ, լաւ վարպետ. մէյն թէ գրամ չունեմ, որ արհեստանոց բաց անեմ, գործիքներ առնեմ, երկաթ ու ածուխ գնեմ, ինձ էլ կերակրեմ, ընտանիքս էլ: Փողն ու գործիքը քո ձեռքդ են: Գալիս եմ մի քիչ քեզանից խլելու, որ ես էլ ապրել ու աշխատել կարողանամ:

ես քեզանից ուժեղ եմ. կը ճզմեմ քեզ, եթէ չըսաս: Բայց կրկին ոսոխական, կրկին սուր ու հրացան, բանտ... Սուրը է մասնաւոր սեփականութիւնը: Յուսահատ՝ խոնարհւում եմ, աղաչում քեզ, որ ինձ գործ տաս: Դու էլ հիմնում ես արհեստանոցներ, գործարաններ եւ հաւաքում ինձ նման թշուառներին. աշխատեցնում ես մեզ օրական, ասենք, 11 ժամ եւ մեր 4 կամ 5 ժամի արդիւնքը մեզ ես տալիս, իսկ մնացեալ 6–7 ժամուայ բոլոր արտադրոյթը դրամ դարձնում, քո անյատակ գրպանը լցնում:

Սակայն մենք չատ ենք, ձեզանից բաւական չատ. ձեր մէկի դիմաց մենք առնուազը տասն ենք: Եւ ահա այն ոսոխականը, այն ժանդարմն ու պինուորը, որ հրացանն ուսերին եւ սուրը կողքերին, եկել են ապշօրէն մեզ հնազանդեցնելու եւ քո հարստութիւնդ պաշտպանելու, — այդ թշուառականները մեր սեփական զաւակներն են, մեզ պէս խղճուկ աշխատաւորներ: Ահա այն թշնդանօթը եւ այն հրացանը, որից պէտք է դուրս դան գնդակները եւ մեր կուրծքերը ծակեն, եթէ համարձակուենք ձեր սրբազան մասնաւոր սեփականութիւնից մենք էլ բաժին պահանջել, տեսնում ենք, այդ գործիքները չինուած են մեր ձեռքերով. նրանց մէջ քարացած են մեր քրտինքի կաթիլները:

Կարճ ասենք. մեզ աշխատեցնում եւ մեր քրտինքի արտադրոյթները դուք էք վայելում, մեզ սոված թողնում: Իսկ երբ այդ հրէշաւոր անար-

դարութիւնը մենք նկատում ենք, իսկոյն մեզ ճնշում է մեր չինած գէնքերով, մեր սեփական զաւակների ձեռքով:

Այդ ամէնը մենք առաջ չէինք հասկանում, որովհետեւ յիմար էինք, ազէա: Իսկ ազէա էինք, որովհետեւ ցրուած էինք. ամէն մէկս աշխատում էր գաշտերում ցրիւ եկած, այս ու այն մանր արհեստանոցներում: Եթէ ստրուկ կամ ճորտ ժամանակներս ապստամբէինք, տէրոզները բազմաթիւ էին եւ լաւ զինուած, իսկ մենք, թէեւ նրանցից չատ էինք, բայց անզէն ոչխարներ էինք. ռազմական ուժը նրանց ձեռքն էր: Իսկ այժմ տարբեր է: Երբ վերայաւ ճորտութիւնը, երբ հիմնուեց ընդհանուր զինուորապրութիւնը, մենք դարձանք կռուող բանակը. զօրքի մեծ մասը մեզանից է առնուում, թէեւ սպաները դեռ եւս կեղեքող դասակարգերից են:

Սակայն այդ դեռ քիչ է. մենք կարող ենք չատ լինել, բոլորս էլ զինուած, բայց ազէա, չըմբռնել, թէ ինչպէս է լինում, որ մենք օրն ի բուն աշխատում ենք, բայց քաղցած ենք մնում, իսկ հոգեւոր հայրը, հողատէրը եւ կապիտալիստը կամ բնաւ չեն աշխատում, կամ չատ քիչ աշխատում, բայց միշտ փառաւոր ապրում: Մենք կարող ենք այդ բոլորի պատճառը չիմանալ կամ համարել աստուածային դիրք:

Ահա այստեղ մեզ օգնութեան է գալիս դիտութիւնը: Պատահում ենք անկեղծ, մաքուր եւ սրտացաւ դիտնականներ, որոնք բացատրում են,

թէ որտեղից եւ ինչպէս են առեղծւում հարստութիւնները: Բացւում են մեր աչքերը: Մենք, որ այժմ հազարներով ենք հաւաքուած գործարաններում, հանքերում եւ խոշոր հողատէրերի կալուածներում, միշտ իրար հետ խօսում, զարդ զարդի ենք տալիս, մեր ցաւը լալիս, ազատուելու, աւելի լաւ ապրելու ճամբաներ խորհում: Մեզանից մի քանիսի զաւակները բաւական կըրթուելիս են առանում՝ այս ու այն պատահմունքի չնորհով: Մեր կրթուած զաւակներից շատերը ծախում են իրենց խիղճն ու հոգին հարուստներին. դառնում նրանց գործակից, նրանց նման կեղեքող: Բայց լինում են եւ այնպիսիները, որոնք մտնում են մեր մէջ, բացատրում մեզ աշխարհի չարն ու բարին, ցոյց են տալիս հարուստների աստցուածքի ագրիւրի, միլիոնների կուտակման ճանապարհները: Մեր աչքերը բացւում են. մենք կազմակերպւում ենք: Մենք զգում ենք, որ թէեւ մենք, աշխատաւորներս ու մեզ կեղեքողները միեւնոյն ազգի զաւակներն ենք, բայց նրանք կեղեքում են մեզ: Մենք համոզւում ենք, որ արտաքին թշնամու, մեր լեզուն, մեր գրականութիւնը, մեր ազգային սովորութիւնները ճնշել կամեցողի դէմ մենք պէտք է կռուենք, ձեռք ձեռքի տուած հողատէրերի եւ կապիտալիստների հետ: Բայց դրանից այն կողմ՝ գալիս է մեր նիւթական եւ բարոյական չահերի խնդիրը, եւ մենք հասկանում ենք, որ որքան լռենք, այնքան աւելի պէտք է կեղեքուենք: Ու մենք վճռում ենք կըռուել մեր իրաւունքների համար:

Մենք հասկանում ենք, որ հողատէրն ու կապիտալիստն ուզում են մեզ չատ աշխատեցնել, քիչ վարձ վճարել: Երբ մենք բողոքում ենք անհատաբար, ամէն մէկս առանձին, մեզ խակոյն ճղմում, յաղթում են: Բազմաթիւ անհատներ մեզանից այդպէս ճղմուեցին, օրուայ հացի կարօտ մնացին, մինչեւ որ մենք խելքի եկանք եւ ըմբռնեցինք, որ մենակ, անհատաբար կռուել չենք կարող· որ պէտք է կռուել խմբով, բոլոր ղրկուածներս, բոլոր կեղեքուողներս միասին:

Այդ խնդրում էլ մեզ օգնութեան հասան մշտաւորական անհատները: Նրանք մեզ բացատրեցին, որ պէտք է կազմակերպուել· որ ամէն մի արհեստի մէջ կեղեքուող բոլոր աշխատաւորները պիտի միանան, մի միութիւն կազմեն· յետոյ պէտք է բոլոր արհեստների մէջ կազմուած միութիւնները միանան կամ դաշնակցեն եւ կազմեն բոլոր կեղեքուողների մի ամբողջ միութիւն կամ աշխատաւորների կուսակցութիւն: Մեր ամէն մի արհեստակցական միութիւնը ներկայացնում է աշխատաւորական մարտնչող բանակի մի վաշտը· բոլոր վաշտերը միացած՝ միահամուռ կռիւ են մղում բոլոր կեղեքողների դէմ:

Մենք դիտմամբ այդ բոլորը պատմեցինք բանուորի բերանով, որպէսզի ցոյց տանք, թէ ինչպէս, ինչ ճանապարհով է կատարուել դասակարգային կազմակերպութիւնը, ինչպէս է յղացուել դասակարգային կռուի պարզ, սկզբնական տեսութիւնը (թէորին) բանուորների եւ նրանց ի-

դէպքերի կամ գաղափարախօսների դէմում։

Շարունակենք այժմ ասրքեր ձեւով։

Բանուորական հատ ու կտոր կազմակերպութիւնների մենք պատահում ենք դեռ եւս ԺԸ. դարում։ Լիոնում, մետաքսագործարանների բազմաթիւ բանուորները մի քանի անգամ գործադուլներ են արել դեռ մինչեւ 1789ի Մեծ Յեղափոխութիւնը(*)։ Այդպիսի փաստեր կարող ենք բերել նաեւ անգլիական բանուորութեան կեանքից։ Սակայն այդ բոլորը կրում են իրենց վրայ պատահականութեան կնիքը։ Նախ այդ կազմակերպութիւնները եղել են խիստ կարճատեւ. նրանց մեծ մասը ծնունդ է եղել օրուայ, վայրկեանի պահանջի։ Կատարել են մի գործադուլ, կամ բաւարարութիւն են ստացել կամ ոչ — երկու դէպքում էլ լուծուել է ժամանակաւոր կազմակերպութիւնը և բանուորութիւնը կրկին մնացել է անհասօրէն, լուծուած վիճակում։ Բացի այդ՝ բանուորութիւնը եթէ նոյնիսկ որոշ չափի կազմակերպութիւններ ստեղծել է, մանաւանդ Անգլիայում, դրանք չեն ունեցել որոշ իդէալներ ապագայ հասարակարգի վերաբերմամբ. նրանց նպատակը եղել է լոկ մի բան — մի քիչ բարելաւել իրենց վիճակը։ Իսկ թէ այդ «վիճակի բարելաւումը» ինչ ուղղութիւնով կը լինի, — դա մի բնաւոյնն է համարուել։

(*) Տես Մ. Կովալեւսկի — «Արդի դեմոկրատիայի ծագումը», Ա. հատոր (ռուսերէն)։

կարող էր պատահել, որ բանուորներից մի քանիսի դրութիւնը կը լաւանար, նոյնիսկ նրանք կը դառնային կեղեքողներ. ընդունելին էր այդ էր: Մի խօսքով, չկար մի ընդհանուր իդէալ ամբողջ աշխատաւորութեան վերաբերմամբ. ամէն խմբակ մտածում եւ գործում էր լոկ իր համար: Բանուորութիւնը դեռ չէր գիտակցում, որ պէտք է ստեղծել այնպիսի հասարակարգ, որի մէջ հնարաւոր չլինի կեղեքման սկզբունքը, մարդը մարդուն չհաղորդելու երեւոյթը:

Դեռ չ՞ա հին ժամանակներից մարդկութեան մէջ տիրող հանրային կամ ընկերական թշուառութիւնների առաջն առնելու համար առաջարկուել են զանազան միջոցներ, որոնք ներկայումս կոչւում են «ուտոպիներ»: Հին դարը տուել է իր Պլատոնը, միջին դարն իր Աքուինացի Թովմասը եւ այլ կրօնական ուտոպիստները, նոր դարն իր Թովմաս Մուրը, Թոմազո Կամպանելլան, իր Սէն Սիմոնը, Ֆուրիէն, Ռոբերտ Օուէնը, Աբբէ Մաբլին եւայլն: Սրանք բոլորն էլ առաջարկել են ծրագիրներ՝ կազմակերպել հասարակութիւնն այնպիսի սկզբունքներով, որ այլեւս թշուառութիւն երբեք չլինի:

Սակայն, երկա՞ր չարք մտածողների, հասարակական փրկարար կազմակերպութիւնների առաջարկողների ձայնը մնում է առանց արձագանգի, գիւղացիների ու բանուորների բանակները մնում էին լիապէս անտարբեր դէպի այդ կրկնուող կոչերը: Անհնարին է ենթադրել, որ այդ աշխատա-

ւոր դասակարգերն այն ժամանակ նեղուած, ըմբոկուած չէին։ Որ նրանք զրկուած եւ թշուառ էին, այդ մենք տեսնում ենք, օրինակ, Ֆրանսիայում ժաքերի չարժման ժամանակ, 1357ին, գիւղացիական այն սոսկալի ապստամբութիւնը, որ ըստացաւ յետոյ ժաքրրի արհամարհական անունը։ Տեսնում ենք Անգլիայում 1381 թուին Ուատ Տայլորի գլխավորութեամբ զազազած եւ արիւն սըփոռող գիւղացիները, որոնց դէմ մանր աղնուականութիւնը ծդ. դարի կէսերին մէկը միւսի հետևից տուեց պարլամէնտի մէջ աշխատանքի վերաբերմամբ սաստիկ նեղիչ օրէնքներ։ Տեսնում ենք 1525ին, Լութերականութեան չարժման օրերին, Գերմանիայում, ուր կեղեքման ծայրը հասած գիւղացիութիւնը, Թոմաս Մինցէրնի գլխավորութեամբ ապստամբում եւ իր որոշ պահանջներն էլ ներկայացնում։

Այդ բոլորը ցոյց են տալիս, որ թշուառութիւնը կար, դժգոհութիւնն էլ կար, բայց չկար դասակարգային գիտակցութիւնը, միանալու, մի ուժ կազմելու եւ ընդհանուր շահերը միասին պաշտպանելու գաղափարը։ Կար բանուորութիւն, կար աշխատաւոր գիւղացիութիւն. դրանք կեղեքւում էին շատ աւելի դաժանօրէն, քան այսօր. կար աշխատաւոր դասակարգ, բայց նա կար լոկ իբր ֆիզիքական էութիւն. պակասում էր գիտակցութիւնը, պակասում էր կուլտուրական տարրը։

Իսկ այդ գիտակցութիւնը, որ նիւթական չէ, չափազանց մեծ նշանակութիւն ունի։ Այսօր գիւ-

մանիայում կայ բանուոր դասակարգ, բայց Կովկասում եւ Թուրքիայում, օրինակ, ե՛ւ կայ, ե՛ւ չկայ միաժամանակ: Ֆիզիքական դոյութիւնը չէ, որ դարեր շարունակ պակասել է, այլ գիտակցութիւնը: Այդ կէտը խոստովանում են Մարքսն ու Ենգելսը, երբ «Մանիֆեստ»ի մէջ (1847 թիւ) մի քանի անգամ պնդում են, որ «իրենց կուսակցութեան մօտակայ նպատակն է պրոլետարը դարձնել դասակարգ» («Bildung des Proletariast zur Klasse»): Այդ միեւնոյն նրանք մի քանի անգամ են արտայայտում ռանգան դարձուածքներով: Դա նշանակում է, որ պրոլետարիատը կար, բայց դեռ դասակարգ չէր, որովհետեւ պակասում էր սեփական գոյութեան գիտակցութիւնը:

«Ֆետեալական յարաբերութիւնները, — ասում է Մարքսը «Փիլիսոփայութեան աղքատութիւնը» գրուածքում, որն ուղղուած է Պրուդոնի դէմ, — աղքատնակութեան դանդուածները դարձրին բանուոր: Կապիտալի տիրապետութիւնն ստեղծեց այդ դանդուածների համար միեւնոյն կոչնութիւն, շահերի նոյնութիւն: Այսպիսով, այդ դանգուածները դարձան դասակարգ՝ կապիտալի վերաբերմամբ, բայց ոչ դասակարգ ինքն իր մէջ (für sich): Մեր ուրուագծած կուռւմ այդ դանդուածները միանում են, կազմաւորուում իբր դասակարգ ինքն իր մէջ կամ ինքն իր համար: Նրա պաշտպանած շահերը դառնում են դասակարգային շահեր: Բայց մի դասակարգի կռիւը միւսի դէմ միշտ քաղաքական կռիւ է»: Սակայն միայն պրոլետարիատի

մասին չէ խօսքը· այդ ճշմարտութիւնը — այսինքն դիտակցութեան անհրաժեշտութիւնը — արդարացի է եւ բուրժուազիի համար: Բուրժուա դասակարգի զարգացման մէջ Մարքսը նոյնպէս նկատում է երկու փուլ (Ֆազիս)· «Նախ այն փուլը, որի ընթացքում բուրժուազին միայն կազմաւորւում էր՝ աւատականութեան եւ բացարձակ միապետութեան տիրապետութեան տակ, եւ երկրորդ՝ այն փուլը, երբ բուրժուազին, իրր արդէն կազմաւորուած դասակարգ, վայր գլորեց աւատականութիւնը եւ միապետութիւնը եւ հասարակութիւնը վերածեց բուրժուական հասարակութեան: Այս փուլերից առաջինն աւելի երկարատեւ էր եւ պահանջում էր մեծ ջանքեր»(*):

Ուրեմն՝ դասակարգը նախ ծնունդ է առնում, ֆիզիքական գոյութիւն է ստանում: Այդ փուլի մէջ նա կայ, կանգնած է միւս դասակարգերի կամ կողքին — եթէ չահերը համեմատելի են, — կամ դիմացը, եթէ չահերը հակադիր են: Սակայն նա դեռ դասակարգ է ուրիշների, հակադիր չահերի տէր եւ աւելի զիտակից դասակարգերի համար, բայց ինքն իր համար, ինքն իր ներսում դեռ դասակարգ չէ, որովհետեւ դեռ գիտակցութիւն չկայ: Այսպէս, ԺԴ· դարի կէսերում անգլիական մանր արհուսականութիւնը գիտակցօրէն օրէնքներ

(*) Ֆ· Մարքս — «Das Elend der Philosophie», էջ 180:

էր քուէարկել տալիս եւ անցկացնում պարլամենտում, այնպիսի օրէնքներ, որոնք ուղղուած էին դիւզացիների շահերի դէմ: Աշխատականութիւնը դիտակից դասակարգ էր, այն՝ որ Մարքսը կոչում է «für sich», ինքն իր համար, իր սեփական գոյութիւնն զգացող: Գիւղացիութիւնը նոյնպէս գոյութիւն ունէր իբր դասակարգ, մանաւանդ նրա սակաւահող եւ հողազուրկ մասը: Նա կեղեքւում էր աշխատականութեան ձեռքով, բայց դեռ չէր զգում իր սեփական գոյութիւնը, մինչեւ որ մանր աշխատականութեան կեղեքող մարակը ցնցեց նրանց, գիտակցութեան բերեց: Այդ ժամանակ նրանք կազմեցին մի իսկական դասակարգ, «für sich» ասուածը. ըմբռնեցին իրենց սեփական շահերը, հետեւեցին Ուատ Տայլորին եւ բաւական ժամանակ զարհուրանքի մէջ պահեցին բարձր դասակարգերը: Վերջիններս միացան, ջարդուփշուր արին դեռ լաւ չհաղմակերպուած գիւղացի դասակարգի ապստամբութիւնը: Չէ՞ որ դասակարգերի կռիւն էլ, ինչպէս ամէն մի կռիւ, իրական ուժերի յարաբերութեան խնդիր է:

Մինչդարեան արտադրական ձեւերը — մանրը հողագործական կամ ճորտատիրական անտեսութիւնը եւ մանր արհեստաւորական կամ համքարական կազմը նպաստաւոր չէին գիւղացի եւ բանուոր աշխատաւորների գիտակցութեան համար: Մանր-մանր երկրագործական տնտեսութիւնները եւ մանր արհեստանոցները ցրում, իրարից բաժանում էին բոլոր աշխատաւորներին. նը-

բանք ամենաւելին հաւաքուելու, համախմբուելու, իրար հետ չփուելու հնար չունէին: Իսկ դա գիտակցութեան ամենաանհրաժեշտ նախապայմաններից մէկն է: Այնտեղ, ուր մենք այդ նախապայմանը տեսնում ենք դէթ մասամբ իրականացած, իսկոյն տեսնում ենք եւ գիտակցութեան առաջին նշոյլները: Այդպէս եղաւ վերածնման շրջանի իտալական մանր հանրապետութիւնների մէջ, ուր popolo grasso (բարձր դասը) եւ popolo minuto (ցածր դասը կամ մանր մարդիկ) կառապի կռիւ էին մղում իրար դէմ՝ իրենց դասակարգերի շահերի համար: Շահն էլ չպէտք է հասկանալ միայն եւ միայն դրամի խնդիր, այլ եւ տիրապետութեան, իշխանութեան, զարգացման, բարոյական եւ այլ գուարճութիւնների շահի խնդիր:

ԺԹ. դարից այս կողմ զարգացող մանուֆակտուրական արտադրութիւնը, մանաւանդ ԺԹ. դարի ընթացքում արագ զարգացող մեքենական արտադրաձեւը հաւաքեցին բանուորներին հսկայական գործարանների մէջ, միատեղեցին նրանց: Միւս կողմից հոդային խոշոր կալուածներում մեծ դանդաղութիւնով ներս թափանցող մեքենական մշակումը, հունձը, կալ ծեծելը եւ այլ աշխատանքներ նոյնպէս հաւաքեցին, գէթ չնչին չափով, գիւղական պրոլետարիատը: Այդ հաւաքումները մի կողմից տեղի տուին աշխատաւոր զանգուածներին իրար հետ չփուելու, զարգանալու, իրար պատմելու իրենց ցաւերը, իրար դարդ լալու, կարճ՝ գիտակցութեան դրդելու: Իսկ միւս

կողմից, օր օրի վրայ արագ զարգացող մեքենաներն աւելացրին մարդկային ստեղծագործող աշխատանքի թափը, նրա արտադրական կարողութիւնը: Գոյացող հսկայական հարստութիւնները պարզ ցոյց էին տալիս բանուորներին իրենց աղքատ ու թշուառ վիճակը: Այդ հարստութիւնների կուտակումը գործատէր սակաւաթիւ անհատների ձեռքում՝ աւելի եւս ամրակացնում էր բանուորի եւ գործատիրոջ հարստութիւնների մէջ եղած վէճը: Ու կամաց-կամաց, աստիճանաբար ծնունդ էր առնում դիտակցութիւնը: Բանուոր դասակարգը, որ մինչ այդ վաղո՛ւց արդէն ֆիզիքապէս գոյութիւն ունէր, այժմ սկսում էր գիտակցել իր դասակարգային գոյութիւնը: ԺԸ. դարավերջից մինչեւ ԺԹ. դարի կէսերը մեքենան ու գործարանները կատարեցին իրենց հաւաքիչ, կենտրոնացնող դերը: Մատուրականները, դիտութիւնը, քարոզն էլ կատարեցին իրենց քացայայտիչ դերը: Այդ երկու տարրերը — արտաքինը կամ օբեկտիւը եւ ներքինը (մատուր) կամ սուբեկտիւը զարնուեցին իրար, միախառնուեցին, գործակցեցին եւ դրանից առաջ եկաւ բանուոր դասակարգի սեփական գոյութեան դիտակցութիւնը:

ԺԹ. դարի սկզբում նորակազմ բանուորական դասակարգի մէջ դիտակցութիւնն այնքան պակաս էր, որ ծնունդ առաւ մի ծայրայեղ համոզում. «Եթէ մարդիկ դիտակցեն, իսկոյն կարող են հիմնել մի այնպիսի իդէալական հասարակութիւն, որ այլեւս գոյութիւն չեն ունենայ ներկայի

տառապանքները»։ Դաշափարներին վերագրում էր այդ ամենազօր ուժը, որովհետեւ մտածողները տեսնում էին, որ դարեր չարունակ գոյութիւն են ունեցել ղեկուղներ ու տառապողներ, բայց նրանք երբեք չեն կարողացել կազմակերպուել եւ փրկուել իրենց նեղ վիճակից։ Այդ երեւոյթն ահա պղտում է Սէն Սիմոնին, Ֆուրիէին, Անֆանտէնին, Բազարին եւ չատ ուրիչ սրատեսաւ անձերի կարծել, թէ փրկութեան միակ հնարը գիտակցութիւնն է։ բաւական է, որ մարդիկ գիտակցեն իրենց դրութիւնը եւ իմանան նրանից դուրս գալու ճամբան — իսկոյն հասարակութիւնը կը փրկուի։ կը թագաւորեն հաւասարասէր կոմունիստական կարգերը։ բոլորը կ'աշխատին եւ բոլորն էլ կ'ապրին իրր հաւասարասէր անհատներ։

Գիտակցութեան այդ կարապետները մեծ հանճարով ասպարէզ լինեն։ Կրակէ բառերով նրանք խարազանում էին իրենց օրերի հասարակական անարդարութիւնները, թշուառութիւնն ու ծայրայեղ չքաւորութիւնը։ Ոգեւորուած կոչեր էին անում աշխատաւոր տառապողներին կազմակերպուելու, դրախտը վերաշինելու այս աշխարհի վրայ։ Նրանք եւ իրենց աշակերտներն ու հետեւորդները կազմակերպում էին նոյնիսկ փորձնական փոքրիկ համայնքներ, չափուած ու ճեւուած իրենց մեծ վարդապետների փրկարար սկզբունքների վրայ։ Բայց ոչինչ չէր օգնում։

Պարոն կապիտալը հսկայական քայլերով առաջ էր վազում։ Շոգենաւերն ու երկաթուղիները

նոր ու նոր չուկաներ էին բաց անում եւրոպական արտադրողների համար: Ապրանքների պահանջը հսկայական չափերի էր հասնում եւ դրան համապատասխան՝ տիտանական քայլերով ընդարձակւում էր արտադրութիւնը: Կապիտալը դրեթէ մի սերունդի աչքի առջեւ՝ զարնում, ջարդ ու փշուր էր անում մանր արհեստաւորներին: Կարտայի հնարած մի մեքենական դազգահը բառացիօրէն ազատեց ոստայնանկութիւնը կամ ջուլհակութիւնը քաղաքակիրթ աշխարհից: «Ազգապիտալը» հզօր թափով սկսեց քաղաքները հաւաքել գիւղական ազգաբնակութեան մը խոշոր մասը: Կարճ, չատ կարճ ժամանակում միջնադարեան հատ ու կտոր վարձկան արհեստաւոր բանուորների տեղ առաջ եկաւ պրոլետարիատի հսկայ բանակը: Հողից, արհեստանոցից, արտադրական բոլոր միջոցներից զրկուած մարդկային ահագին խմբերը լցուեցին արտադրական խոշոր կենտրոնները: Նրանց վիճակը դարձաւ խաղալիկ կապիտալիստների ձեռքին. նրանց կուշտ կամ սոված լինելը, նրանց բարօրութիւնը թշուառ եղէգնի պէս սկսեց տատանուել համաշխարհային պահանջի չունչի առջեւ: Իսկ որ ամէնից ողբալին էր, նրանց ամէն մի հատուածի, նոյնիսկ ամէն մի անհատի երջանկութիւնը կախուած մնաց միւս մասերի եւ անհատների մրցումից:

Ջարհուրելի եղաւ առաջին տպաւորութիւնը: Մարդիկ չչմած էին: Սէն-Սիմոնների ու Ֆուրիէների սրտացաւ եւ մարդասէր կոչերը մնում էին

«ձայն բարբառոյ յանապատի»։ Կեանքը յաղթական, կեանքը բարձրագլուխ՝ առնակոխ էր անում նրանց մեծասիրտ քարոզները եւ սրարշաւ առաջ սլանում։ Մի հանգամանք եւս կակծեցուցիչ էր դարձնում ժողովրդական զանգուածների պրոլետարացումը, նրանց թշուառացումը. այն որ այդ պրոլետարացումն ու թշուառացումն ամէնից առաջ եւ ամէնից արագ կատարւում էր Անգլիայում, ազատութեան այդ օրրանում, յետոյ Ֆրանսիայում, ազատութեան երկրորդ հայրենիքում։ Էլ ինչո՞ւ մանակցեցին աշխատաւորները, յեղափոխութիւնների մէջ. ինչո՞ւ քանդեցին հին կարգերը, ինչո՞ւ այնքան արիւն, այնքան զոհեր, եթէ կրկին պէտք է իրենք թշուառ մնային։ Դեմոկրատիզմը — հանրաքուէն, իրաւունքների հաւասարութիւնը, արտօնութիւնների եւ առանձնաշնորհումների վերացումը, բարքերի դեմոկրատացումը — այս բոլորը առաջ էին ընթանում, կեանքի մէջ արմատ բռնում, բայց այդ բոլոր բաղաքական երեւոյթների դիմաց մնում էր մի շատ էական ասպարէզ ալեկոծութեան ճիրաններում։ Դա տնտեսականն էր։ Կարծես թէ որքան որ դեմոկրատիզմը կամ քաղաքական հաւասարութիւնն ամում էին, այնքան աւելի տնտեսական վիհը մեծանում էր ունեւորների եւ չունեւորների միջեւ։

Եւ տառապող մարդկութեան ուղեղն սկսում է երազել, նոր ու նոր տրամաբանական ուղիներ որոնել. արդեօք չէ՞ կարող պատահել, որ թշուառութեան օր օրի վրայ աւելանալուց ծնունդ

առնէ երջանկութիւնը: Գերմանական մեծ իդէալիստ եւ արամախօս (դիալեկտիք) Հեգէլն արդէն ասել էր, որ բացասականից է ծնում դրականը. որ նախ դրականն է, ապա գալիս է նրա ժխտումը կամ բացասումը եւ վերջ ի վերջոյ այդ ժխտման ժխտումը — նրա բացասումը, «իրի կամ գաղափարի ինքն իրեն գանելը» կամ սինթէզը: Եւ մարդկային տառապող, ճգմուած միտքը մի գեղագոյն ճիգ է թափում, մի յուսահատական փորձի է դիմում, հնարելով մի սոսկալի եւ խենթ մխիթարութիւն իր տառապող ուղեղի եւ փչաքաղուող խղճի համար:

Այդ հողազուրկ, այդ ցնցոտիակոլոլ եւ տառապող մարդիկը, — մտածում է ներկայի հսկայական տառապանքի տակ ճգմուած մտաւորական ուղեղը, — չեն կարող երկար դիմանալ. տառապանքի ա՛յդքան ծով-քանակը պէտք է ստիպէ նրանց չուտով կազմակերպուիլ. թշուառութեան ա՛յդքան լեռնացած բեռը պիտի գաղազեցնէ նրանց եւ մարտի դուռ դաշտը մղէ: Ու խոչոր, մեքենական արտադրութիւնն արդէն իսկ միացրել է նրանց, կազմել բնական վաշտեր, գնդեր ու բանակներ, համախմբելով միեւնոյն չէնքերի, միեւնոյն կենտրոնների եւ չրջանների մէջ:

Այդ տեղից, այդ մտածելակերպից արդէն մի քայլ է մնում մինչեւ այն զարհուրելի եւ խելահեղ տեսութիւնը (թէորի), որ կոչւում է Verelendungstheorie, այսինքն՝ թշուառացման-տեսութիւն: Ներկայ հասարակական թշուառութիւն-

ներլի եղքը պէտք է որոնել նոյնիսկ թշուառութեան մէջ: Թշուառութեան ծայրայեղ աստիճանը պիտի բարիք առեղծէ. պիտի ցնցէ տառապողներին, պիտի կազմակերպէ նրանց եւ փչրէ կապիտալիստական տնտեսութեան բոլոր վնասակար կազմերը եւ պիտի առեղծէ ցանկալի, իղէալական հասարակակազմը: Ուրեմն՝ աւելի լաւ չէ՞, որ ցանկանք հողագրկման, պրոլետարական արագացում, ցանկանք, որ ներկայումս կատարուող հին համայնակարգի քայքայումն արագանայ, մարդիկ աւելի չուտով ստիպուած լինեն քամելու կեանքի դառնութեան ամբողջ բաժակը, որպէսզի գարթնումն աւելի եւս արագանայ: Որքան որ ներկան վատ լինի, որքան որ խորը լինի մարդու ցանկացած ժխտումը, այնքան աւելի մարդը մօտ կը լինի յեղաշրջման, այսինքն՝ իրեն ճնշող ու տանջող կապիտալի համայնական տիրապետութեան: Այստեղից պարզորոշ կերպով բխում է — «որքան վատ, այնքան լաւ»:

Բացի այդ՝ օր օրի վրայ աճում, խոշորանում է կապիտալը. նրա արտադրական զօրութիւնն առնում է այնպիսի չափեր, որ հնարաւոր է դարձնում կապիտալի համայնական տիրապետութիւնը, համայնական աշխատանքը եւ կազմակերպուած բաշխումը: Այլեւս երկիւղ չկայ, որ եղած արտադրամիջոցները չեն կարող առեղծել բոլոր մարդկանց բաւարարութիւն տալու չափ դործնական արժէքներ:

Աղքատացման կամ թշուառացման թէորին

(տեսութիւնը) լիապէս ցուցադրող, իր բոլոր տըրամաբանական հետեւանքներով քարոզող ու պաշտպանող էֆ եղել, բայց նա հզօրապէս աղդել է շատ դրողների ուղեղի եւ երեւակայութեան վրայ: Այսպէս, հին մարքսիզմի այն կարծիքը, թէ դիւղացիները պէտք է հողազրկուին, պրոլետարանան, թէ դա մի բնական երեւոյթ է՝ քանի կայ կապիտալիզմը, թէ դիւղական համայնքը իր համայնական հոդատիրութիւնով պէտք է քայքայուի, թէ պաշտպանել համայնական հողատիրութեան ներկայ ձեւը՝ բուրժուական ձգտում է, թէ այդ քայքայումը, եթէ նոյնիսկ մենք չցանկանանք, հնար չունենք արգիլելու, թէ դիւղացու եւ մանր արհեստաւորի սեփականազրկութիւնը թէեւ ցաւալի է, բայց օգուտ է ընկերվարական երջանիկ կարգերին աւելի արագ հասնելու համար, թէ այդ բոլորի առջեւ մտածող անհատը պէտք է կրկնէ Սպինոզայի խօսքերը — «Ոչ լալ, ոչ խնդալ, այլ հասկանալ», — այդ բոլորը արդիւնք եւ հետեւանք են մեր առած թէորիի:

Սակայն հաճելի չեղաւ ամենագէտ կեանքին թաւալուել այդ սեւ ուղիով: Բանուորները վիւլհոլմ յոլհոլմ չապառնեցին իրենց վիճակի վերջնական թչուառացման: Նրանք այդ կարծիքի չեղան, թէ պէտք է պահանջել կամ բոլորը միանգամից կամ ոչինչ: Ծարաւանուած թչուառութեան առաջին ուժգին հարուածներից, նրանք նախ չըմբռնեցին բանի էութիւնը եւ, օրինակ, Անգլիայում, յարձակուեցին կտորեղէններ գործող գործարան-

նելի վրայ, ջարդուփշուր արին այն հսկայ նորեւլուկ մեքենաները, որոնք իրենց, ջուլհակ բանուորների լեզոնները չպրաել կին փողոց, պրկել աշխատանքից ու հացից: Բայց երբ մի քանի այդպիսի խելագար վորձեր ապացուցին բանուորներին, որ անկարելի է յաղթահարել ամենազօր կապիտալը, նրանք ըմբռնեցին իրենց սխալը եւ ըսկըսեցին մանրակրկիտ պրպտումներ, նոր ուղիների որոնումներ: Անցեալ դարի առաջին կէսի ընթացքում նրանք սկսեցին կազմակերպուել նախ իրը արհեստակցական միութիւններ. սկսեցին ձեռք բերել զանազան տեղական եւ մասնակի բարելաւումներ: Ցետոյ աստիճանաբար դիտակցութիւնն ընդլայնեցաւ, արհեստակցական միութիւնները տեսան, որ ամէն մէկն առանձին անզօր է դիմադրել իր հասարակական հակառակորդին, որ այդ դիմադրութիւնը հնարաւոր է միմիայն կուսակցական կազմակերպութիւնով, որի մէջ պիտի միանան բոլոր արհեստների աշխատաւորները: Եւ 1840 թուերից այս կողմ սկսուեց աշխատաւորութեան կուսակցական քիչ ու չատ կանոնաւոր կեանքը: Բանուորութիւնն սկսեց մասնակցել պետական կեանքին, պատգամաւորներ ընտրել պարլամէնտների համար, մտնել քաղաքական կուռի առպարէզը, գործնական ծրագիր մշակել, դնել նուազագոյն պահանջներ, մղել գործնական քաղաքականութիւն. նա նախ դրեց «աշխատանքի իրաւունքի» հարցը, յետոյ սկսեց հետամտել գործարանական կամ բանուորական օ-

ընդգրկութեան, բանուորի ապահովագրման՝ կըժ-
բախտ դէպքերի եւ ծերութեան պահուն:

Սակայն մինչ այդ գործնական փոփոխութիւ-
նը, բանուոր դասակարգի մէջ մանելը, կատար-
ուեց մի ռէֆսիոն՝ մտածողների ուղեղներում:

Սէն-Սիմոն, Ֆուրիէ, Ռոբերթ Օուէն եւ ու-
րիշները, իրր ռէֆքսիոն եղած իրագործութեան,
յայտարարեցին, որ արտաքին կամ նիւթական
պայմանները ոչինչ են, էականը գիտակցութիւն
է, եթէ մարդիկ գիտակցեն իրենց թշուառու-
թեան պատճառները, կարող կը լինեն նաեւ բու-
ժելու, նրանցից ազատուելու հնար կամ ելք գըտ-
նել: Դա ծայրայեղ գաղափարապաշտութիւնն էր:
Այդպիսի մարդկանց էր, որ Նապոլէոն Բոնա-
փարթն արհամարհոտ ձեւով կոչում էր իդէոլոգ
կամ գաղափարախօս:

Հետագայ մտածողները — նախ ֆրանսական
պատմաբանները, մանաւանդ Օգիւստէն Տիէրին,
եւ յետոյ արդէն գերմանացիներից Մարքսն ու
Էնգելսը — հարց տուին. «Ինչո՞ւ մինչեւ օրս չէր
ծագում այդ գիտակցութիւնը, ինչո՞ւ նա ծագեց
մեքենաների եւ խոշոր արտադրութեան հետ միա-
սին»: Եւ նախկին ծայրայեղ լուէալիզմի դիմաց
դուրս եկաւ մի նոր ռէաքսիոն — ծայրայեղ մա-
տերիալիզմը: Գիտակցութիւն, բարոյականու-
թիւն, քաղաքականութիւն, կրօն, իրաւունք —
ամէն ինչ յայտարարուեցին երկրորդական, միակ
էականը, միակ հիմնականը տնտեսականն է, ար-
տադրութեան ձեւը, որն իր կարգին՝ պայմանա-

ւորւում է արտադրութեան գործիքներով։ Եթէ քո արտադրական միջոցները մանր գործիքներ են, դու կ՚ունենաս մանր արհեստաւորական եւ մանր գիւղացիական անտեսութիւն եւ քո հասարակութիւնդ էլ կազմուած կը լինի համքարութիւններից (Էսնաֆ), մանր հողատէր գիւղացիութիւնից եւ դրանց գլխին կանգնած հնութեան մնացորդ հոգեւորականներից եւ աղնուականներից։ Իսկ երբ քո գործիքներդ կը զարգանան, կը ստեղծուին մեքենաները, այն ժամանակ դու կ՚ունենաս խոշոր գործարաններ, կապիտալիստական խոշոր արտադրութիւն եւ քո հասարակութիւնդ էլ բաղկացած կը լինի արտադրութեան միջոցներից բոլորովին զրկուած պրոլետարներից, հողատուրկ եւ սակաւահող գիւղացիներից, մանր արհեստաւորներից, միջակ եւ խոշոր գործարանատէրերից, առեւտրականներից, հնութեան մնացորդ եւ նոր ծնուած խոշոր կալուածատէրերից եւ հոգեւորականներից։ Մարքսը հաշւում է ութ դասակարգ, ուրիշները, օրինակ՝ պրոֆեսոր Ջոմբարդը մի քիչ աւելի, երրորդները միմիայն 3, եւայլն։

Իսկ երբ այդ մեքենաները, հաղորդակցական եւ արտադրական միջոցները չափազանց կը մեծանան եւ մանր գիւղացին բոլորովին հողազուրկ կը լինի, իսկ մանր արհեստաւորն ու մանր առեւտրականը բոլորովին կը զրկուին իրենց արտադրամիջոցներից եւ չնչին ստացուածքներից, կարճ՝ երբ բոլորը կը դառնան պրոլետար եւ ար-

արդրամիջոցները, ինչպէս եւ հողը կը կուտակուի չնչին թուով մարդկանց ձեռքերում, այն ժամանակ ահա այլեւս անհնարին կը լինի ներկայ կարգերի գոյութիւնը: Թշուառութեան ծայրը հասած աշխատաւորութեան հսկայական բանակը մի հարուածով կը ճղմէ չնչին թուով կեղեքիչներին. բոլոր արտադրութեան միջոցները կը դարձընէ հանրութեան ամբաժան սեփականութիւն. բոլոր մարդիկ կը դառնան աշխատողներ. բոլորը կ'արտադրեն եւ արտադրոյթը կը բաշխեն բոլորի մէջ՝ համաձայն ամէն մէկի թափած հանրօգուտ աշխատանքի:

Բայց, ինչպէս պարզ երեւում է յուցադրածից, դիտակցութիւնն այս գործում կատարում է երկրորդական դեր. գլխաւոր դերիչը, մղիչ հրամանատարը տնտեսականն է — արտադրամիջոցները, նրանց վրայ ձեւուած արտադրութեան ձեւերը եւ նրանց համապատասխանող կամ նրանց վրայ կերտուած դասակարգերը: Մի խօսքով, ամէն ինչ բախում է արտաքին (օբեկտիւ) տնտեսակարգից, իսկ ներքինը կամ սուբեկտիւը այդ արտաքինի կամ օբեկտիւ տնտեսականի արտացոլացումն է: Սա է պատմութեան տնտեսական կամ մատերիալիստական ըմբռնումը:

Դրա հիմնադիրները պնդում էին, որ աղքատացումը (Verelendung) կամ թշուառացումն այնպէս արագ է կատարուելու, պրոլետարացումն այնքան դահավէժ թափով է ընթանալու, որ չատ կարճ ժամանակում, — դեռ ԺԹ. դարը չլրացած,

ասում էր Էնգելսը, — պիտի պայքի բուրժուական հասարակակարգը եւ պիտի թագաւորէ ընկերվարութիւնը:

Այդպէս էին մտածում 40ական թուականներում:

Սակայն գործնական կեանքում բացասական վուլգ աւելի սաբ կերպարանք էր ընդունում: Ընդհակառակը, կամաց-կամաց դէպքերը գալիս էին ապացուցելու Թէորիի սխալները: Պարզւում էր, որ ընկերային եւ անտեսական անխուսափելի համարուած ճգնաժամը հեռանում էր: Կապիտալը կառաղօրէն արշաւում էր, աւերածներ անում. բայց չէր կարողանում բոլորին հոգազուրկ անել: Մոշոր արտադրութիւնը տեղ-տեղ սպանում էր արհեստաւորական անտեսութիւնը, բայց ամենեւին չէր կարողանում արմատախիլ անել արհեստաւորներին, գործարան լցնել բոլորին: Կապիտալի յաղթական թափն այնքան արագ ու հզօր չէր, որքան ներկայացնում էին Մարքսն ու Էնգելսը: Գոյութիւն ունեցող պրոլետարիատն ու միւս աշխատաւորները չուղեցին աւելի եւ աւելի թագուել թշուառութեան մէջ եւ սպասել ադիտացման գործողութեան բնական վախճանին, որպէսզի համաձայն արդարութեան կամ դիալեկտիքայի, միանգամից ստանան բոլորը: Նրանք կազմակերպուեցին եւ սկսեցին գործնական կռիւ մղել իրենց կեղեքիչների դէմ, ինչպէս վերեւում ասացինք: Եւ կեանքը ցոյց տուեց մանաւանդ Անգլիայում, տրէդ-ունիոնների կռւում, որ բանուո-

րական կազմակերպութիւնները կարող են մխա-
նալ եւ իրենք բաց անել գործարանները. յոյժ ար-
ուեց նաեւ այն, որ միացած բանուորութիւնը
կռուի մէջ կարողանում է յաղթել: Կարճ՝ երե-
ւաց, որ թշուառութեան աճելուց չէ որ պիտի
ծնի երջանիկ ապագան, այլ ներկայումս առա-
ճանաբար ձեռք բերուող բարօրութիւնների կու-
տակումից է կազմակերպուելու ապագայ հաւա-
սարասէր հասարակութիւնը. կեանքը ծնունդ է
առնելու կեանքի սաղմից եւ ոչ մահից, ինչպէս
դեղեցկօրէն հաստատում է պատմաբան պրոֆե-
սոր Ռ. Վիպպէրը:

Մեր նպատակը չէ մանրամասն քննութեան են-
թարկել պատմութեան մատերիալիստական ըմ-
բռնումը: Այդ մեծ ու դժուարին աշխատանքը
թողնելով մի աւելի յարմար առիթի, մենք այժմ
կը բաւականանանք մի փոքրիկ քաղուածքով Ռ.
Վիպպէրի աշխատութիւնից.

«Եւ յիրաւի, ի՞նչ ասես որ չէ մանում արդ-
տեսական պայմանները բանաձեւի մէջ: Նրա մէջ
են մարդկանց ֆիզիքական կեանքի բոլոր կարիք-
ների բաւարարումը, մարդու գոյութեան պաշտ-
պանումը, մարդու յարմարումը բնութեանը, ու-
րեմն եւ այդ յարմարման բոլոր մանրամասները,
ինչպէս՝ մարդուն պիտանի բոլոր գործարանաւոր
եւ անգործարան իրերի ջոկելը, արտադրութեան
տեխնիկան (մեքենական կողմը), դնդերային ու-
ժի կազմակերպումը, մեքենաների գործածութիւ-
նը, գիտութեան եւ գիտերի դեկավար դերը,

մարդկանց բոլոր փոխյարաբերությունները, որ անհրաժեշտ են հարստության — արտադրման համար... բաշխման բոլոր յարաբերությունները, դիտական հետազոտության բոլոր աշխատանքները, որոնք պարունակում են իրենց մէջ մարդուն չընչազատող բնության միջոցների եւ ուժերի ուսումնասիրությունը, նոյնպէս եւ մարդկային բնության ուժերի ուսումնասիրությունը, գեղարուեստի ամբողջ աշխատանքը, որ ներկայացնում է մարդու ճարտարարուեստական եռանդի բարձրագոյն ծաղիկը: Զկայ մարդկային կեանքի որեւէ անկիւն, մէջը հաշուած եւ այն լսարանը, ուր մենք նստած ենք, եւ նրա մէջ կատարուող աշխատանքը, չկայ մարդկային գործունէության որեւէ ֆունկցիա (գործողություն), որը չմտնէր տնտեսական կամ նիւթական յարաբերութիւնների շրջանակի մէջ եւ որը հնարաւոր չլինէր քննել տնտեսական տեսակէտից:

«Իսկ նոյնը լիապէս կարելի է ասել եւ միւս երեւոյթի (կատեգորիա) մասին, որ մատերիալիզմը գետեղել է կեանքի նկարագրության հակադիր ծայրում, — տնտեսականին հակառակ ընկած կողմում: Ինչ իրաւունքով որ մենք ասում ենք, թէ տնտեսականը (էկոնոմիկան) թափանցում է ամբողջ կեանքի մէջ, նոյն իրաւունքով կարող ենք պնդել նաեւ, որ իդէոլոգիան, այսինքն կրօնը, իրաւունքը, գիտությունը, գեղարուեստը, կազմում է ամբողջ կեանքը: Եւ յիրա-

*ւի, բոլոր կենսական յարաբերութիւնները կարե-
լի է դիտել իբր գաղափարային ապրումներ: Տըն-
տեսութեան կամ քաղաքականութեան ամէն մի է-
ութիւն ոչ մինչն կարելի է յետոյ բանաձեւել գի-
տակցութեան մէջ, այլեւ նա՝ ինքն ըստ ինքեան
դոյութիւն ունի միմիայն այն չափով, ինչ չափով
որ իւրացւում կամ ապրւում է մարդկանց գի-
տակցութիւնով: Ե՛ւ հարստութեան ծարաւը, է՛ւ
նրա համար մղուող կռիւը, է՛ւ աղքատութեան
ցաւը, է՛ւ աշխատանքի եռանդը պարզօրէն կեր-
պարանաւորւում են, երբ մարդկային գիտակցու-
թիւնն ըմբռնում է նրանց: Կեանքը իրական յա-
րաբերութիւնների ապրումն է գաղափարների
մէջ»(*):*

*Եզրակացութիւնն ակներեւ է. կեանքը բաղ-
կացած չէ ոչ լոկ անտեսականից, ոչ էլ լոկ իդէո-
լոգիական տարրերից որեւէ մէկից: Նա բաղկա-
ցած է այդ բոլորի միաձոյլ ամբողջութիւնից:
Նրա զարգացման մղիչ ուժը ոչ լոկ անտեսականն
է, ոչ էլ լոկ միւս՝ իդէոլոգիական գործօնները,
այլ այդ բոլոր գործօնների միաձոյլ ամբողջու-
թիւնը, նրանց համադրութիւնը կամ սինթէզը:
Սա էլ պատմութեան մոնիստական կամ միաբ-
նատ բացատրութիւն է, բայց ոչ մատերիալիս-
տական, ոչ էլ իդէալիստական մոնիզմ է, այլ*

(*) Ն. Վիպպէր — «Պատմական իմացականութեան տեսութիւնը», էջ 211–212:

համադրական կամ սինթեթիկական մոնիզմ:

Առ այժմ այդքանով բաւականանանք այդ ծաղրը փիլիսոփայական խնդրի առիթով եւ չարունակենք մեր վերլուծութեան թելը:

Անցեալ դարի 40ական թուականներից Արեւմըտեան Եւրոպայում բանուոր դասակարգը գալիս է գիտակցութեան. նա ըմբռնում է, որ բոլոր արհեստներում աշխատողները պիտի միանան, կազմեն մի բանուորական կամ աշխատաւորական բանակ, որ պէտք է կանգնի միւս հզօր բանակի — կեղեքողների բանակի դիմաց: Ստեղծւում է Լոնդոնի «Բանուորական էնտէրնացիոնալը» կամ «Կոմունիստների կուսակցութիւնը»: Կազմակերպւում են այդ էնտէրնասիոնալի կամ միջազգային բանուորութեան մասնաճիւղերը Ֆրանսիայում, Զուիցերիայում, Բրիւքսելում եւայլն: Քայքայւում է հին էնտէրնասիոնալը եւ ապա վերակազմըւում աւելի ուշ, 60ական թուերին: Ընկերվարական չարժումը — թէ՛ մարքսիստական եւ թէ մի քիչ տարբեր ոգով — հսկայական ծաւալ է ընդունում նախ Ֆրանսիայում, ապա Գերմանիայում եւ միւս երկրներում: Ընկերվարական կազմակերպութիւնները հիմք բռնելով եւ ընդարձակուելով իրենց երկրներում, աստիճանաբար սկսում են արհամարհել պետութիւնների դծած սահմանները եւ ազգամոլութեան աստելութեան թոյնը, եւ իրար ձեռք եկնել, կազմել միջազգային ընկերվարական դաշնակցութիւնը, որի առաջին համագումարը տեղի ունեցաւ 1889ին, եւ ո-

րը մինչեւ օրս էլ, երեք տարին մի անգամ, կա-նոնաւոր պարբերական կոնգրէսներ է կազմում Եւ-րոպայի զանազան քաղաքներում: Այդ համագու-մարներին այժմ արդէն անդամակցում են ոչ մի-այն Եւրոպայի, Ամերիկայի եւ Աւստրալիայի բո-լոր ժողովուրդների պատուիրակները, այլեւ լիա-զօր ներկայացուցիչներ են գալիս Եւրոպայից ու Թուրքիայից: Այսօր այդ միջազգային ընկերվա-րական կազմակերպութիւնը դառել է մի տիտա-նական բարոյական ուժ, որ ազդում է նոյնիսկ մեծ պետութիւնների համաչխարհային քաղաքա-կանութեան վրայ: Իսկ առաջնակարգ երկրներում — Գերմանիա, Ֆրանսիա, Անգլիա, Բելգիա — ընկերվարական կազմակերպութիւնների դերն ու ազդեցութիւնը հասել են բաւական ընդարձակ չա-փերի:

Դասակարգային կռիւ մղելու համար անհրա-ժեշտ է, ուրեմն, նախ գիտակցութիւն եւ ապա կազմակերպութիւն:

Կազմակերպւում են բանուորները իբր ար-հեստակցական միութիւններ կամ սինդիկատներ եւ ապա այդ բոլորը մտնում մի ընկերվարական կուսակցութեան մէջ:

Կազմակերպւում են եւ մանր արհեստաւոր-ներն ու գիւղացիները, համախմբուելով իբր ար-տադրական, սպառողական, գիւղացիական եւ այլ տեսակի միութիւնների մէջ եւ դառնալով անդամ նոյն ընկերվարական կուսակցութեան:

Կազմակերպութեան նպատակն է մղել տըն-

տեսական եւ քաղաքական կռիւ իր ընկերային հակառակորդի — կեղեքող դասակարգի դէմ: Կռուի միջոցներն են գործադուլը, սաբոտաժը եւ բոյկոտը: Գործարանի եւ հողի տէրերը կամենում են չատ աշխատեցնել եւ քիչ վարձ վճարել աշխատաւորին, որպէսզի իրենց աւելի յաւելեալ արժէք մնայ: Իսկ աշխատաւորներն, ընդհակառակը, կամենում են քիչ աշխատել — առ առաւելը ութ ժամ, եւ որքան կարելի է չատ աշխատավարձ ստանալ, այնքան՝ որ գործատիրոջը դուռ արդիւնք մնայ ոչ թէ 100–150 բանուորի օրավարձի չափ, այլ մօտաւորապէս մէկ-երկու բանուորի ստացած վճարի չափով:

Գործադուլներով, բոյկոտներով եւ այլ մանր մունր միջոցներով (սաբոտաժ եւայլն) աշխատաւորութիւնը պէտք է աստիճանաբար յառաջդիմէ, գրաւէ դիրքեր մէկը միւսի ետեւից, աստիճանաբար: Այնքան պէտք է նա յարձակում գործէ իր հասարակական հակառակորդի դիրքերի վրայ, այնքան պէտք է զիջումներ դուրս կորզէ նրա ձեռքից իր կառաղի դասակարգային կռուով, որ մի գեղեցիկ օր կապիտալի տէր լինելն այլեւս այնքան նախանձելի չլինի. որ այդ գեղեցիկ օրում գործատէրն ու հողատէրը, յոգնած եւ ուժասպառ, ստիպուած լինեն յայտարարել, թէ իրենք էլ են ուզում բանուոր դառնալ, աշխատել միւսների հետ հաւասարապէս եւ ապրել միւսների հետ հաւասարապէս:

Այս է դասակարգային կռուի նպատակը դուռ տնտեսական դարում:

տում, որովհետեւ բանուորութեան եւ աշխատաւորութեան գիտակից մասի թիւն էլ շատ նուազ էր սկզբներում: Այսպէս, գերմանական Ռայխըստագում ընկերվարական կուսակցութիւնը 1871ին ունէր միայն մի պատգամաւոր, որովհետեւ ընկերվարականների ձայներն էլ չափազանց չնչին էին — միայն մի քանի հազար՝ ամբողջ երկրի մէջ: Արագ աճեց ընկերվարական կազմակերպութիւնը Գերմանիայում եւ դրա համեմատ էլ աճեց նրա պատգամաւորների թիւը Ռայխստագի մէջ. այսօր ստացուած ձայների թիւն է մօտ 4 ու կէս միլիոն, իսկ պատգամաւորների թիւը՝ 10 հոգի, այսինքն՝ գրեթէ ամբողջութեան մի երրորդ մասը:

Նոյն չարժումը նոյն ձեւերով առաջ է մղուել նաեւ եւրոպական միւս երկրներում, թէեւ ոչ նոյն արագութիւնով եւ նոյն միաձոյլ ամբողջութիւնով եւ գինուորական կարգապահութիւնով, ինչպէս որ այդ տեղի ունեցաւ Գերմանիայում:

Ընկերվարական կազմակերպութեան բանակը մղում է անհեռամարտը կեանքի դաշտում — գործարաններում եւ ագարակներում, իսկ նրա պատգամաւորները նոյն մարտի մի այլ մասը — իրաւականը, կառավարչական մղում են օրէնսդիր մարմինների մէջ: Բացի այդ՝ նոյն աշխատաւորութեան գաղափարական պաշտպանները — մտաւորականութեան ընկերվարական տարրերը մղում են ոչ նուազ կատաղի մի կռիւ, — գաղա-

Սակայն դրանով չէ բաւականանում աշխատասիրութիւնը: Նա ներմուծուած է նաեւ ընտրական դործով: Բոլոր քիչ ու շատ քաղաքակիրթ երկրներում այսօր արդէն մուտ է գործել ընտրական իրաւունքը եւ սահմանադրութիւնը: Այլեւս «կամօքն Աստուծոյ թագաւորները» չեն, որ իրենց բարեհայեցողութիւնով բարեհաճում են «հայրախնամ» օրէնքներ տալ «իրենց» ժողովրդներին, այլ ամէն երկիր արդէն ձեռք է բերել իր պարլամենտը: Ժողովրդներից մի քանիսն էլ — Զուիցերիա, Ֆրանսիա, Պորտուգալիա — արդէն դուրս են նետել թագաւորները եւ այսօր փոխանակ դրելու «կամօքն Աստուծոյ թագաւոր» այսինչ, դրում են «կամօքն ժողովրդի՝ նախագահ» այսինչ: Բայց թէ՛ այդ հանրապետութիւնները եւ թէ սահմանադրական միապետութիւնները այսօր կառավարւում են ժողովրդի ներկայացուցիչների մշակած օրէնքներով, նրանց կողմից կարգուած նախարարներով: Ուրեմն՝ այդ պատգամաւորների ժողովում կամ պարլամէնտներում կատարւում է օրէնսդրական աշխատութիւն. դրանք են, որ վարում են երկրի ներքին ու արտաքին քաղաքականութիւնը: Բնական է ուրեմն, պէտք է մանանակցել այդ պարլամէնտների ընտրութիւններին, որովհետեւ այնտեղ են սահմանւում օրէնքները:

Ու աշխատասիրութիւնը մեծ թափով նետուեց ընտրական դործի մէջ: Նա ընտրեց իր ներկայացուցիչները եւ ուղարկեց պարլամէնտ: Նրա մարդկանց թիւը նախ շատ քիչ էր պարլամէն-

վարի կռիւ։ Նրանք ղէմ են դուրս գալիս տիրող դասակարգերի տեսութիւններին, մերկացնում նրանց խախուտ հիմքերը, դիմակները պատռում նրանց խաբեբայական դաղափարների երեսից եւ ապացուցանում աշխատաւորութեան հսկայական ստեղծադործող դերը, իսկ տիրող դասակարգերի պորտաբուծական կեանքը։ Նրանք մտնում են աշխատաւոր ու մութ խաւերի մէջ, լոյսի ճառադայթներ տանում այնտեղ երենց գրչով ու լեզուով, կազմակերպում գիտակիցներին, ցնցում, զարթեցնում խաւարի անգիտակից արգանդում մրափողներին։

Կատաղի է կռիւը։ Դիւրութիւնով տեղի չեն ուզում տալ տիրողները։ Նրանք մօտ 3000 տարի է սերունդից սերունդ վարժուել են հանգիստ ապրելու։ Մարաը կատաղի է եւ յուսահատական։ Դարերով հաստատուած եւ արմատացած կարմը դժուար է չուտով քանդել, եւ դեռ դուցէ երկա՞ր տեւէ կեանքի ու մահուան այս ահաւոր մարտը։

Դրուած նպատակի ծանրութիւնը եւ նրան հասնելու դժուարութիւնն այնքան մեծ են, որ նոր կռուի մտած եւ յաճախ յաղթահարուող չափազանց դանդաղ առաջ գնացող աշխատաւորական բանակի մէջ չատերը թերահաւատացան, չատերը յուսակտուր եղան, չատերն էլ սխալ յայտարարեցին կռուի ընտրուած ճանապարհը։

Դրանից առաջ եկան մի քանի ուշադրութեան արժանի երեւոյթներ, որոնց վրայ արժէ կանգ առնել։

Ամէնէն առաջ հարց դրուեց, թէ արդեօք ատիճանական յառաջդիմութիւնը կամ բարեշրջումը բաւակա՞ն է, թէ աշխատաւոր դասակարգը միայն բարեշրջումով կարո՞ղ է արդեօք ստիպել կեղեքող դասակարգերին զինաթափ լինել, հողը եւ արտադրական միջոցները դնել բոլոր հասարակութեան տրամադրութեան տակ, որպէսզի կազմակերպուի համայնական աշխատանքը — բոլորը աշխատին եւ արդիւնքը բաժանեն համաձայն ամէն մէկի աշխատաչափին: Բաւակա՞ն է միայն բարեշրջումը, թէ պէտք է, ստիպուած, դիմել նաեւ յեղաշրջման: Էվոլիւա՞ն թէ ռեւոլիւսիոն: Եղան դրողներ, մտածողներ եւ գործողներ, որ դաւանեցին միայն առաջինը. եղան եւ չատերը, որ ջատագովեցին երկրորդին՝ իբր փրկութեան միակ խելացի եւ արագ միջոց:

Այդ խնդրի առիթով մենք արդէն մեր կարծիքը յայտնել ենք նախընթաց էջերում, այլեւս կանգ չենք առնի: Ասենք միայն այն, որ եղան եւ դեռ կան չատ այնպիսի անհատներ, որոնց համար ընդունելի է ընկերվարական ապագայ խղճալը, որին հասնելու միակ միջոցը համարում են ոչ միայն էվոլիւսիոնը, այլեւ փաստերով պրոպագանդը: Սրանք դաւանում են, որ ապագայում պէտք է ընկերվարական կարգեր լինեն, բայց իշխանութիւն, պետութիւն ատուած բանը չպէտք է լինի, նոյնիսկ այնպիսի պետութիւն եւ իշխանութիւն, որի միակ նպատակը լինի կանոնաւորել արտադրութիւնը, որպէսզի հասարակութիւնը

չմնայ առանց նիւթական, անհրաժեշտ գործածական արժէքների: Ո՛չ, — ասում են նրանք, — ամէն մի իշխանութիւն ենթադրում է ճնշում անձի բացարձակ ազատութեան: Թողէք մարդկանց ազատ, բացարձակ ազատ եւ նրանք եղբայրաբար կը միանան իրար հետ՝ առանց որեւէ իշխանութեան կամ ճնշման, այնպէս՝ ինչպէս կենդանիները մէջ առաջ են գալիս գործակցութիւններ կամ ասոսիասիոններ:

Դրանք անիշխանականներն են: Այդ վարդապետութեան հետ միացած է նաեւ փաստերի պրոպագանդի գաղափարը. ռումբ նետել, ոչնչացընել բուրժուաներին, թագակիրներին, տիրողներին... փաստն ինքն ըստ ինքեան արդէն հզօր պրոպագանդ է ընկերվարական գաղափարի: Այս է նրանց միակողմանի եւ ախտաւոր մտածելակերպը:

Կասկած չկայ, որ երկար մտածելու բան չէ անարշիզմի կամ անիշխանութեան ազատայ իդէալը — բացարձակ ազատութիւնը: Մենք նախամարդու եւ կենդանիների կեանքից արդէն դիտենք, որ բացարձակ ազատութիւնն ամէն բանում, նոյնիսկ տնտեսական կեանքում, տանում է դէպի ուժեղի տիրապետութիւնը, դէպի լիակատար անհաւասարութիւն: Ապագայի հաւասարակը կարգերը պէտք է ունենան կառավարութիւն, միայն իրերի, հարստութիւնների, արտադրոյթի կառավարութիւն եւ ոչ մարդկանց բանտարկութիւն, նրանց համոզումների ճնշում...

Աւելորդ է ասելն անգամ, որ անիշխանական վարդապետութեան հետեւանքները ոչ մի կերպ չեն մասնակցում պարլամէնտական ընտրութիւններին: Ընտրութիւններին մասնակցել, գնալ պարլամէնտ, օրէնքներ մշակել՝ կը նշանակէ մասնակից լինել կառավարական գործին, այսինքն արմատից ժխտել անիշխանական համոզումները: Ընդհակառակը, նրանք ամէն կերպ աշխատում են քանդել պարլամէնտները, կործանել կապիտալիստական արտադրաձեւերը, ոչնչացնել ամէն տեսակ հասարակակարգ եւ օր առաջ մատնել քաոսական վիճակի ներկայի փշացած եւ ախտաւոր հասարակութիւնը, որպէսզի «մեռնող հասարակութեան» մոխիրների վրայ ծլի ու ծաղկի «ազատական սոցիալիզմը» կամ անիշխանութիւնը(*):

Պարլամէնտական գործունէութիւնը միայն անիշխանականներին չհետաքրքրեց. նա զրգռեց իր դէմ նաեւ ընկերվարական բանակի մի խոշոր մասը, մանաւանդ Ֆրանսիայում: Բանուորների զանգուածն քրտինքով անուած, նրանց չահերն իրենց ո-

---

(*) Այս ուղղութեան հիմնադիրները կն համարւում Ֆրըդրանսիայում Պրուդոնը, Գերմանիայում Շտիրները: Նրա խոշոր ներկայացուցիչներից էր ռուս հռչակաւոր եւ հանճարեղ գործիչ Մ. Բակունինը: Իսկ այսօր նրա փիլիսոփան են համարւում Պ. Կրոպոտկինը, Ժան Գրաւը եւ ուրիշները: Ջմոռանանք ասել, որ էլի եւ էլիզէ Ռէկլիւսները եւս անիշխանական էին:

տի տակ սանդուխք ծառայեցնելով՝ մինչեւ պարլամէնտ հասած չատ մտաւորական ընկերվարական-պատգամաւորներ այնպիսի դեր կատարեցին, որ աշխատաւորութեան մաքուր չարքերը զզուանք զգացին։ Բացի այդ, ներկայումս տիրող ընտրողական անարդար կարգերը — չրջանների բաժանումները, զրամի եւ ուրիշ կողմնակի ազդեցութիւնների կատարած դերն ընտրութիւններում, աշխատաւորութեան ազիտութիւնը իր սեփական չահերի ըմբռնման գործում եւ ուրիշ բազմաթիւ պատճառներ կուտակուելով, եկան մթագնելու դեմոկրատիզմի եւ նրա գլխաւոր սկզբունքի — հանրաքուէի եւ ժողովրդապետութեան նըշանակութիւնը։ Աշխատաւորութիւնը տեսնում էր եւ դեռ այսօր էլ տեսնում է, որ պարլամէնտ ուղարկած իր ներկայացուցիչները — չատ են թէ քիչ — անկարող են որեւէ բարելաւում մտցնել աշխատաւորների վիճակի մէջ օրէնսդրական կարգով։ Փոխանակ սառնասրտօրէն քննելու այդ բարդ երեւոյթի արմատները եւ մաքառելու նրանց դէմ, փոխանակ հասկանալու տիրող դասակարգերի ղօրութիւնը եւ նրանց ձեռք բերած դրեւոր ունակութիւնների ու հզօր միջոցների որպիսութիւնը եւ նրանց դէմ աւելացնելու իրենց եռանդը, — ընդհակառակը, աշխատաւորութիւնն ընկաւ մի այլ ուղի, մի ծուռ ճանապարհի վրայ։

Քաղաքական կեանքը — ընտրութիւնն ու օրէնքը մեզ ոչինչ չեն տալիս, մտածեցին խոհուն աշխատաւոր գլուխներից չատերը. պարլամէնտ-

նները ծառայում են լոկ մի քանի փառամոլ անհատների շահերին: Մասնավորականները քանդում են աշխատասիրության տունը: Ուրեմն՝ կորչին մասնավորականները: Ահա այն ախտաւոր մտածելակերպը, որին հետեւեցին ոչ միայն բանուորները, այլ նաեւ մասնավորականները, ինչպէս Սորել, Հիւբէր Լագարդէլ եւ շատ ուրիշներ: Ամենայն ինչ պէտք է կատարուի իրենք — աշխատաւորներն իրենց համար. իրենց դասակարգից չեղող ոչ մի անձ չէ կարող որեւէ կերպ ըմբռնել իրենց վիճակը պահանջուած ճշդութիւնով: Պէտք է կազմակերպել արհեստակցական միութիւններ կամ սինդիկատներ ամէն մի արհեստի համար, կազմել նրանցից նախ մասնակի դաշնակցութիւններ եւ ապա բոլորից կազմել մի ընդհանուր ֆեդերասիոն կամ դաշնակցութիւն, հիմնել աշխատանքի բորսաներ եւայլն, եւայլն: Եւ այդ ամէնի մէջ չընդունել ոչ ոքի, որ անմիջապէս աշխատաւոր չէ:

Այդ միութիւնները իրենք իրենց մէջ պիտի կազմաւորուին ու պատրաստուն ապագայ ընկերութեան սաղմերը: Նրանք պիտի կռիւ մղեն ներկայ կարգերի եւ դասակարգերի դէմ՝ իրենց կազմակերպած բոյկոտներով ու գործադուլներով, մինչեւ որ մաշեն ու վինաթափ անեն ներկայի նեխուած հասարակութիւնը եւ դասակարգերը: Նրանք պատրաստում են նոյնիսկ մի օրում դադարեցնել կեանքն ամբողջ երկրում, քայքայել պետութիւնը, աղքատացնել ու անհնարին դարձնել

ներին... Սա է ուղղակի գործողութիւն կամ աֆսիոն տիրէիք կոչուածը:

Դժուար չէ նկատել, որ սինդիկալիզմը չէ կարողանում ժամանակաւոր թերութիւնները, որ խիստ շատ եւ ուժեղ են պարլամէնտարիզմի մէջ, զանազանել սկզբունքային խնդրից. որ նա թերութիւններն ու հիւանդական արտայայտութիւններն ընդունում է իբր սկզբունքից բխած, նրա էութեան հետ կապուած պակասութիւն:

Սինդիկալիզմի այս մտածելակերպի մէջ եթէ մի ուղիղ բան կայ, դա այն է, որ սինդիկատներն իրենց մէջ մշակեն եւ կազմաւորեն ապագայ ընկերվարական կարգերի սաղմերը: Մեր կարծիքով՝ օրէնսդրական եւ սինդիկալ ուղիների միահամուռ գործակցութիւնն է, որ պէտք է առաջ մղէ աշխատաւորութիւնը թէ՛ ամբողջական դասակարգային կազմակերպութիւնը եւ թէ նրա շահերի հզօրագոյն պաշտպանութիւնը:

Այսպէս ուրեմն՝ անիշխանութիւնը եւ սինդիկալիզմը դասակարգային կազմակերպութեան եւ դասակարգային կռուի տեսութիւնից խոտորումներ են, հիւանդագին եւ միակողմանի չեղումներ, որոնք ուշ կամ կանուխ նորից պիտի գան եւ մտնեն դասակարգային կռուի առողջ հունի մէջ:

*
* *

Դասակարգային համերաշխութեան խնդիրը.— Մի քանի էջ առաջ մենք տեսանք, թէ ինչպէս

Մարքսն ու Էնգելսը եւ մի շարք ուրիշ մտածողներ յայտարարեցին, թէ մարդկային հասարակութիւնն առաջ մղող ուժը մարդկային հասարակութեան անտեսակարգն է, արտադրամիջոցները: Արտադրութեան միջոցներն ստեղծում են որոշ ճեւի արտադրութիւն, որի մէջ այս կամ այն յարաբերութեան մտած եւ այս կամ այն դերը խաղացող անհատները կազմում են դասակարգերը:

Նոյն այդ տեսութեան անհրաժեշտ լրացուցիչ մասը կազմում է դասակարգային կռուի վարդապետութիւնը:

Մարդկային պատմութիւնը ոչ այլ ինչ է, ասում է պատմութեան մատերիալիստական ըմբռնումը, եթէ ոչ դասակարգերի կռիւ: Մոռացութեան տրուել մարդկային պատմութեան ամենախոշոր նահանգներից մէկը — ազգերի, ցեղերի, տոհմերի ընդհարումները: Ամէն մի պատերազմ յայտարարուել լոկ իբր տնտեսական շահերի ծնունդ, տնտեսական եւ դասակարգային միտումներից բխած: Այդ տարազը եղաւ մի տեսակ ռէաբսիոն նախկին ծայրայեղ գաղափարապաշտ ուղղութեան: Մոռացուել, որ յաճախ ոեւէ տիրող ընտանիքի կամ դինաստիի շահերի, յաճախ նոյնիսկ անհատի փառքի, քաջագործութեան համար են մղուել պատերազմները:

Քննելով մարքսիզմի այդ սկզբունքը, Պետերբուրգի համալսարանի պրոֆեսոր եւ երբեմն համոզուած մարքսիստ Տուգան-Բարանովսկին առաջ է բերում Էնգելսից հետեւեալ կտորը. «Ամէն մի

քաղաքական կռիւ դասակարգերի կռիւ է, եւ ամէն մի դասակարգային կռիւ, որ մղւում է այդ դասակարգի ազատագրման համար, չնայելով նրա ըստ ամենայնի անհրաժեշտ քաղաքական ձեւին, — չէ՞ որ ամէն դասակարգային կռիւ քաղաքական կռիւ է, — դրծը վերաբերում է դասակարգերի տնտեսական ազատագրմանը» (Ենգելս — «Անտիդիւրինգ», էջ 165)։ Այս կտորը մէջ բերելով, Տուգան-Բարանովսկին ասում է. «Չէ կարելի հակադրել քաղաքական «բռնութիւնը» (իշխանութիւն) «տնտեսական չահին» (հարստութիւն), այն պատճառով, որ իշխանութիւնը կարող է լինել եւ շատ յաճախ լինում է ինքն իր նպատակը, իսկ հարստութիւնը միշտ ծառայում է իբր միջոց որեւէ այլ բանի»(*)։

Եւ իսկապէս, եթէ աչքէ անցընենք մարդկային պատմութեան արիւնոտ բեմի վրայ թաւալուած բոլոր պատերազմները, մենք կը տեսնենք, որ տնտեսական օգուտներ ձեռք բերելու համար մղուող պատերազմներից նուազ չեն թուում նաեւ այն պատերազմները, որոնց նպատակն է փառասիրութիւնը, յաճախ մխանգամայն վնասաբեր եւ նիւթապէս քայքայող նուաճումը եւ շատ այլ պատճառներ։

Եթէ խստօրէն քննադատենք դասակարգային

(*) Տուգան-Բարանովսկի — «Մարքսիզմի տեսական հիմքերը», (էջ 27, ռուսերէն)։

կռուի տեսութիւնը, մենք կը տեսնենք, որ նրանով անհնարին է բացատրել գիտութեան եւ բարոյականութեան խնդիրները եւ այլ բազմաթիւ երեւոյթներ:

Ջուտ դասակարգային տեսակէտից նայելով, **մեզ համար** անըմբռնելի պէտք է մնայ մտաւորականութեան դերը որի մասին Կ. Կաուցկին այսպէս է խօսում. «Մտաւորականութիւնը հասարակական մի խաւ է, որն ամէնից աւելի դիւրութիւնով կարողանում է բարձրանալ դասակարգային եւ դասային սահմանափակութիւններից. համակուլ իդէալիստական ձգտումներով եւ հանդիսանալ արտայայտիչ ոչ թէ ժամանակաւոր եւ առանձնացած շահերի, այլ ամբողջ հասարակութեան մշտական համոզումներին»(*):

Ի՞նչպէս բացատրել ջուտ դասակարգային տեսակէտով այն, որ բուրժուական տարրերն առաջին անգամ ներմուծեցին բանուորական օրէնսդրութիւնը, փոքրահասակների աշխատաժամի կրճատումը եւայլն: Այդ արդելարիթ օրէնքների եւ բանուորական միութիւններ կազմելու ազատութիւնը ձեռք բերողները եւ չանք թափողները չեղան բանուորները, այլ, օրինակ՝ Անգլիայում Ռիչարդ Օսալէրը եւ ուրիշներ, այսինքն՝ լիբերալ բուրժուաները:

(*) Կաուցկի —«Bernstein und das social demokratische Programm», էջ 133:

Ազգերի պատմութիւնը մեզ ցոյց է տալիս, դանազան ժամանակաշրջաններում հասարակութիւնները համակուել են որոշ գաղափարներով, որոնք դառել են համատարած եւ ընդհանրական հասարակութեան գրեթէ բոլոր չահերի համար: Շատ հեռուները չընկնենք. վերածնութեան շրջանում հիւմանիտէր կամ մարդասէր գաղափարները, բարին ու գեղեցիկն էին, որ տիրում էին մարդկանց մտքերին, որ տիրականօրէն դեկավարում էին հասարակական խաւերը. կրօնական ռեֆորմասիոնի կամ յեղաշրջման պահուն՝ միջին եւ հիւսիսային Եւրոպան գրեթէ ամբողջապէս կլանուած էր կրօնական հարցերով — բանականութիւնն ու Աստուածաշունչն իրար հետ հաշտեցնելու գրեթէ անհնարին խնդրով. Ֆրանսական Մեծ Յեղափոխութեան նախօրեակին եւ արիւնոտ օրերին ամբողջ Ֆրանսիական ազգը — առանց դասակարգերի խորութեան, ոգեւորուած եւ տարուած էր ազատութեան եւ հաւասարութեան կամ դեմոկրատիզմի գաղափարով: Իսկ ժ-ժ. դարի ընթացքում հարստութիւնների արտադրութիւնն այնքան զօրացաւ, հասարակական խաւերի նիւթական կարողութիւնների մէջ եղած վիհն այնքան մեծացաւ եւ դեմոկրատիզմն այնքան տարածուեց, որ կամայ-ակամայ, մարդիկ ընկան մի նոր միակողմանիութեան մէջ: Բոլոր մարդիկ իրար հաւասար են օրէնքի առջեւ, — ահա դեմոկրատիզմի էութիւնը: Սակայն կեանքն անհերքելիօրէն ցոյց է տալիս, որ տնտեսապէս մարդիկ ամենեւին իրար

հաւասար չեն եւ որ այդ իսկ ասպարէզում տիրող անհաւասարութիւնից են ծագում ներկայի բոլոր հասարակական թշուառութիւնները: Այստեղից մինչեւ պատմութեան մատերիալիստական ըմբռնումը մի քայլ է:

Ամենայն ինչ ծնւում եւ չարժւում է արտադրամիջոցների շնորհով եւ մարդկային պատմութիւնը միայն ու միայն հակադիր շահեր ունեցող դասակարգերի կռիւ է: Դժուար չէ, ուրեմն, եզրակացնել, որ դասակարգերի շահերն իրար հակառակ են. նրանք համերաշխ լինել չեն կարող. եթէ համերաշխին էլ, այդ համերաշխութիւնը կը լինի շատ կարճատեւ: Փաստերը շատ են. անգլիական բանուորներն ու գործատէրերը երկար ժամանակ սրտառուչ համերաշխութիւն էին ցոյց տալիս գաղութային խնդիրներում, որովհետեւ երկուսի էլ շահը ժամանակաւորապէս համերաշխ եղաւ: Նոյն Անգլիայում թնդանօթներ չինող գործարանների բանուորները պաշտպանում էին Բոէրների դէմ յայտարարուած անարդար նուաճողական պատերազմը եւ այդ հարցում ձեռք-ձեռքի տուած էին ընթանում Չեմբըրլէյնի պէս մի կլանող քաղաքականութեան հետեւող անձի հետ եւայլն, եւայլն: Սակայն, կրկնում ենք, այդ համերաշխութիւնը ժամանակաւոր է. իսկ մշտական դրութիւնը՝ շահերի հակադրութիւնն է:

Այդպէ՞ս է արդեօք: Քննենք:

Շահերը հակադիր են, ասում են մատերիալիստները: Սակայն ո՞ր շահերը, — ահա էական

խնդիրը: Մատերիալիսը շահեր ասելով՝ հասկանում է միայն նիւթական շահերը: Այո՛, այդ մտքով, յիրաւի, դասակարգերի շահերն իրար հակառակ են, ինչպէս վերլուծեցինք եւ ապացուցեցինք Բ. գլխում: Բայց մենք տարբերւում ենք մատերիալիստներից նրանով, որ շահեր ասելով՝ չենք ըմբռնում միմիայն նիւթական շահերը. մեզ համար կան եւ այլ տեսակի շահեր — քաղաքական, ազգային, բարոյական, կրթական, — մի խօսքով՝ իդէոլոգիական կամ գաղափարախօսական շահեր: Մարքսիստներն էլ ընդունում են այս շահերի գոյութիւնը իբր փաստ, բայց պնդում են, որ դրանք արտադրեալներ կամ բխեալներ են, վերնաշէնք, ինչպէս բնորոշել է Մարքսը, — մի վերնաշէնք, որ կառուցուած է տնտեսական հիմունքների վրայ: Այդ պատճառով նրանք պնդում են, որ եթէ դասակարգերի հիմնական շահերն իրար հետ համերաշխ են, այդ վերնաշէնքի խնդիրներում էլ համերաշխ կը լինեն:

Այդտեղ է ներկայ դիալեկտիբական մատերիալիզմի միակողմանիութիւնը, նրա խոցելի կողմը: Մենք վերեւում արդէն տեսանք, որ այդ միակողմանի փիլիսոփայութիւնը չէ դիմանում քննադատութեան: Եթէ մարդկային պատմութիւնը ներկայացնենք մի հաստ եւ անհունօրէն չարունակուող ճոզ — բաղկացած նիւթական, բարոյական, գաղափարական, իրաւական, քաղաքական եւ այլ հիւսուածքներից եւ քննադատական սուր դանակով կտրենք այդ ճոզը թէ՛ նախապատ-

մական թէ՛ հին, թէ՛ միջին եւ թէ նոր պատմութեան դարերի շրջաններում՝ բոլոր կալուածների մէջ էլ մենք կը տեսնենք նոյն հիւսուածքները. ոչ մի կորուածքի չենք հանդիպի, որի մէջ պահպանէր կամ նիւթականը, կամ դաղափարականը, կամ որեւէ մէկը յիշուած հիւսուածքներից: Մեզ ասում են, թէ արմատում միայն տնտեսականն է: Սակայն, որքան էլ մենք վայր վայր ենք իջնում մարդկային պատմութեան տանդուխքով, ամէն տեղ դտնում ենք այդ բոլոր բաղադրիչ մասերը. նրանք բոլորն էլ դոյութիւն ունեն թէ՛ քաղաքակիրթ անգլիացու, թէ՛ բարբարոս նեգրի եւ թէ վայրենի Բուշմէնի, Ֆուէջիի, Դակոտայի, Բատակումի, Էսկիմոսի եւ ցէյլոնի Վէդդահի մէջ: Այդ բաղադրիչ հիւսուածքներից մէկը կարող է հասած լինել, միւսը բարակ, սակայն նրանք բոլորն էլ կան մարդկային պատմութեան երեւակայական ճողի մէջ եւ բոլորն էլ ընթանում են իրար հետ միատեղ, զուգահեռաբար:

Մեր այդ համոզումից պարզօրէն բխում է, որ դասակարգերն էլ ունեն բազմաթիւ շահեր եւ որ այդ շահերից ոչ մէկը չէ ճուլւում միւսի մէջ, ոչ մէկը չէ բխում միւսից, այլ բոլորն էլ միատեղ կազմում են մի ամբողջութիւն — մարդ անհատի կարիքները:

Այսպէս ըմբռնելով դասակարգային շահերը, տեսնենք թէ արդեօք համաձայնութեան եղրեր կա՞ն դանազան դասակարգերի մէջ:

Այս գլխի սկզբում մենք ասացուցինք, որ մի

ազգի գրկում գոյութիւն ունեցող դասակարգերի մէջ կան նմանողական եւ տարբերական տարրեր: Մենք եկանք այն եզրակացութեան, որ ազգի ֆիզիքական գոյութեան, լեզուի զարգացի, գրականութեան, զեղարուեստի եւ այլ շատ այդպիսի խնդիրներում դասակարգերն, իրը միեւնոյն ազգի գրկում եղած ստորաբաժանումներ, ունեն իրար հետ նման տարրեր, ուրեմն եւ նման շահեր:

Ֆրանսիական ազգի ֆիզիքական գոյութիւնը հաւասարապէս անհրաժեշտ է թէ՛ բանուորի, թէ՛ բուրժուայի, թէ՛ աշխարհականի եւ թէ հոգեւորականի համար: Այդ չահերի ընդհանրութիւնն էր, որ դրդեց Բէբէլի նման մի ֆանատիկոս ընկերվարականի յայտարարել դերմանական Ռայխըստագի մէջ, թէ ինքն առաջինը կը լինի, որ գէնք կ'առնէ եւ կը սլանայ թշնամու դէմ, եթէ նա կամենայ մտնել Գերմանիա եւ ոչնչացնել գերմանական ազգի անկախութիւնը: Ցար եւ նման յայտարարութիւն են արել նաեւ Ժորէսը եւ ուրիշ ընկերվարականներ:

Այո՛, Հայրենիքի եւ Ազգի փրկութեան խընդրում բոլոր դասակարգերի չահերն էլ համերաշխ են: Եթէ վատ վարուած միջազգայնութիւնը մթաղնում է այս կամ այն անհատի ուղեղը, տրամադրում է նրան հակազգայնօրէն եւ ընդդէմ Հայրենիքի — բնական եւ ոչ բռնութեամբ գրաւուած Հայրենիքի վիհ գաղափարին, դա պէտք է համարել մի դժբախտ թիւրիմացութիւն եւ ամէն կերպ ջանալ փարատել այդպիսի անձերի խակ ուղեղնե-

բում կուտակուած մշուշը:

Դպրոց, գրականութիւն, լեզու, գեղարուեստ, սովորութիւններ եւայլն՝ ընդհանուր են ազգի ներսում գոյութիւն ունեցող բոլոր դասակարգերի համար: Ուրեմն նրանց բոլորի չահն էլ պահանջում է, որ իրենց ազգային լեզուն, ազգային գրականութիւնն ու դպրոցը, ազգային գեղարուեստը — թատրոն, երգ, պար, եւայլն, եւայլն, ոչ միայն յարատեւեն, այլեւ զարգանան, յառաջդիմեն:

Այս առպարէզում էլ, անկասկած, ամէն մի դասակարգ աշխատում է եւ պէտք է աշխատի ներմուծել, պատկերացնել եւ իրագործել իր դասակարգային իդէալը: Օրինակ, թատրոնում աշխատաւորութիւնը կը ձգտի ցուցադրել իր սեփական կեանքը, իր տառապանքը, իր մասին մտածող հերոսներին (օրինակ՝ Հաուպտմանի «Ջուլհակները», Միրբոյի «Ժան Ռուլը» եւայլն)· միւս դասակարգերն էլ կը ձգտին բեմ հանել իրենց կեանքն ու հերոսներին... Եւ դասակարգերից որն աւելի ուժեղ է ե՛ւ թուով, ե՛ւ նիւթականով, ե՛ւ մտաւորով ու բարոյականով, նա աւելի տեղ կը բռնէ ազգային գեղարուեստի մէջ:

Մինչեւ վերջին ժամանակները մշտապէս յաղթողը լինում էր կեղեքող դասը — բուրժուանեբը, հողատէրերը եւ հոգեւորականները, որովհետեւ միայն նրանք էին, որ շատ ազատ ժամեր եւ նիւթական միջոցներ ունէին նուիրուելու համար գեղարուեստի եւ գիտութեան տաճարին: Իսկ աշ-

խառաւորութիւնը մինչեւ ԺԹ. դարի երկրորդ կէսերն այնպիսի ողորմելի նիւթական եւ մտաւոր պայմաններում էր, որ ոչ մի հնար չունէր նուիրուելու այդ ասպարէզին: Սակայն երբ դեմոկրատիզմը մի քիչ թափանցեց ժողովրդի վարքուբարքի մէջ, երբ բանուորութիւնը իր կռուով կարող եղաւ ձեռք բերել աշխատաժամերի որոշ կրճատում եւ օրավարձի մի չնչին բարձրացում, վերջապէս՝ երբ ուսումն ամէն տեղ պարտադիր դարձաւ, երբ ժողովների, մամուլի եւ խօսքի ազատութիւնն իրականացաւ կեանքի մէջ, — աշխատաւորութիւնն էլ սկսեց իր միջից արտադրել տաղանդաւոր բանաստեղծներ, հռչակաւոր ճառախօսներ, գիտնականներ, հրապարակագիրներ եւայլն: Բուրժուական դասակարգերն, ընդհակառակը, սկսեցին խամրիլ աստիճանաբար: Այսօր այդ զոյգ գործօղութիւնը կատարւում է մեր աչքի առջեւ. մի կողմից պարզօրէն նկատւում է բուրժուական գրողների անկումը, նրանց օր օրի վրայ աւելի եւ աւելի տաղտուկ ու ձանձրալի դառնալը, բուրժուա գիտնականների ծանծաղիլը, իսկ դրա հակառակ՝ ընկերվարական գրողների աստիճանական զօրանալը, նրանց բարգաւաճիլը, ընկերվարական գիտնականների հեղինակութիւն ձեռք բերելը:

Անցան ընդմիշտ այն օրերը, երբ Հայնէն համոզուած էր, թէ դեմոկրատներն ու ընկերվարականները, որոնցից ամենավատ տեսակի ծխախոտի հոտ է փչում, մի օր պէտք է իր «Buch der

Lieder»ի (երգերի գիրք) թղթելով հաւկիթ կամ կանաչի փաթաթեն... Այո՛, անցան այն օրերը, երբ բոլորն էլ համոզուած էին, որ դեմոկրատիզմն ու ընկերվարութիւնն անընդունակ են ըմբռնելու գեղարուեստը. որ նրանց համար «կօշիկներն աւելի բարձր են քան Շէյքսպիրը», ինչպէս պնդում էր ռուս հռչակաւոր քննադատ Պիսարեւը 1860-70 թուերին: Վէբհարնի, Մաքսիմ Կորքիի, Ազա Նէդրիի եւ շատ ուրիշ ընկերվարական գրողների բարձր բանաստեղծական գործերը եկան ապացուցելու, որ ընկերվարութիւնը դէմ չէ գեղարուեստին, որ աշխատաւորն ու գեղեցիկը իրար չնչող չեն, այլ առողջապէս իրար լրացնող. որ բուրժուական հարուստ խաւերի փչացած, այլասերուած ջղերն այլեւս անընդունակ են ըմբռնելու իսկական գեղեցիկն իր բոլոր պարզութեան եւ վեհութեան մէջ. որ այդ հիւանդ ջղերի եւ այլասերուող ճաշակի արդիւնք են դեկադանսը եւ այլ իրը թէ նոր ուղղութիւնները գեղարուեստի մէջ:

Ազգի մէջ գոյութիւն ունեցող դասակարգերի չահերը համերաշխ են ազգային հարցերում, իսկ նիւթական խնդիրներում նրանք հակամարտ են:

Ո՞ր հարցերն են, որ կեանքի մէջ գերակշռող ուժ են հանդիսանում: Մարքսիստներն, առանց երկար մտածելու, իսկոյն կը պատասխանեն այդ հարցին.— տնտեսական չահերը: Հանճարեղ ուսուցիչն այդպէս է ասել եւ ամէնքն էլ կրկնում են նորանը: Սակայն երբ մենք ուշադրութեամբ հե-

տեւում ենք մեր չուրջը թաւալուող երեւոյթնե-
րին, գալիս ենք տարբեր եզրակացութեան: Հա-
յահալած քաղաքականութիւնը Կովկասում — հայ
դպրոցների, հայ ընկերութիւնների, հայ մամու-
լի հալածանքն ու փակումը, հայ ազգային-եկե-
ղեցական կալուածների բռնի գրաւումը, հայ-
թաթար ընդհարումները, — այդ բոլորը ցոյց են
տալիս, որ տիրող կառավարութիւնը, ուրեմն եւ
տիրող դասակարգերը չեն հալածում միայն հայ
աշխատաւորին: Երբ փակում են հայ դպրոցը,
երբ խափանում են հայ հրատարակչական, բարե-
գործական եւ այլ ընկերութիւններ, երբ ամէն
տեսակ խոչընդոտ են հանում հայ մտքի եւ ար-
ուեստի զարգացման առջեւ. դրանով վնասուողն
ամենեւին չէ կարելի համարել միայն աշխատա-
ւորը. հաւասարապէս եթէ չասենք, գէթ որոշ չա-
փով, վնասւում են բոլոր դասակարգերն առանց
բացառութեան:

Երբ Թուրքիայում հայահալած քաղաքակա-
նութիւնը պարզօրէն գործադրւում է յատկապէս
հայկական վեց վիլայէթներում, վնասը կամ հար-
ուածը կրկին հասնում է այնտեղի բոլոր հայե-
րին, առանց որեւէ դասակարգային բացառու-
թեան: Նամոյէ Ռաչոն կամ Քէօռ Հիւսէյին փա-
շան երբ յարձակւում են այս կամ այն տեղի վը-
րայ, իրարից չեն խնայում աշխատաւոր, պրոլե-
տար գիւղացուն՝ գիւղական կիսաբուրժուայից
կամ վաչխառուից. նրանք կողոպտում եւ սպան-
նում են բոլորին հաւասարապէս:

Այս բոլորն աչքի առաջ ունենալով, մենք պա-
տիս ենք այն եզրակացութեան, որ Ֆրանսիայում,
Գերմանիայում, Անգլիայում, ուր ազգի դէմ հա-
յածանք չկայ, կեանքի մէջ անպայման առաջին
տեղը բռնում է դասակարգերի կռիւն իրար մէջ:
Այդ պարագաներում տարբերական տարրն է զը-
լուխ բարձրացնում. իրար դէմ կատաղի կռիւ են
մղում դասակարգերը, որպէսզի առաիճանաբար
թուլացնեն իրենց հակառակորդներին: Բայց այն
բոլոր վայրերում, ուր գոյութիւն ունի ազգային
հալածանք, ուր մի տիրող կամ մի հզօր ղրացի
կամենում է կլանել մի այլ հպատակ կամ ղրացի
թոյլ ժողովուրդ, այդ բոլոր վայրերում ազգի
ներսում մէջդասակարգային կռիւը լռում, թու-
լանում է. լռում են նիւթական չահերը եւ բարձ-
րագլուխ ըմբոստանում, ասպարէզ են գալիս ազ-
գային չահերը: Բոլոր հակամարտ չահերի տէր
դասակարգերը միանում, մի բանակ են կազմում,
որպէսզի դիմադրեն արտաքին վտանգին. թոյլ
չտան ոչնչանալու իրենց ազգային գոյութիւնը,
իրենց լեզուն, գրականութիւնը, դպրոցը եւայլն:

Մղուող ազգային ընդհանուր կռիւը ժամա-
նակաւոր կերպով մոռացնել է տալիս դուս դա-
սակարգային չահերը: Այնպէս է թւում, որ մի
ազգի ներսում բոլոր դասակարգերն իրար հետ
համերաշխ, իրար բարեկամ են: Որքան յաճախ
եւ երկարատեւ լինեն այդպիսի ազգային կռիւնե-
րը, այնքան աւելի մթագնում եւ խամրում է դա-
սակարգային գիտակցութիւնն աշխատաւորու-

թեան մէջ, այնքան աւելի թուլանում է ընկերվարական ապագայ երջանիկ կազմի համար մղուող մարտը:

Դրա դէմն առնելու երկու հնարաւորութիւն է մեզ ներկայանում: Կարելի է եւ պէտք է այնպէս անել, որ այլեւս ազգային հարց չլինի, որն ամպէտ հակամարտ դասակարգերին ձեռք ձեռքի տըւած առաջ գնալ հանրային թշնամու դէմ: Յատկապէս այդ նպատակին հասնելու համար է, որ երկու ուղի կամ երկու հնարաւորութիւն է ներկայանում մեզ: Ազգային հարցը կամ ազգային բախումները կարելի է ոչնչացնել մի կարճ, մի կտրուկ միջոցով, մտածում են չատերը. լինել կոսմոպոլիտ կամ համաչխարհաքաղաքացի. արհամարհել ե՛ւ ազգ, ե՛ւ հայրենիք: Փոքր ազգերը պէտք է ձուլուեն հզօրների, մեծ ազգերի մէջ: Ազգերն էլ կեղծռնանալու են, ինչպէս կեղծռնանում են կապիտալները, հողերը, առեւտուրը եւայլն: Ով մտածում է ազգի եւ հայրենիքի մասին, նա նացիոնալիստ է, ազգամոլ է, չովէն է: Թողնենք այդ «բուրժուական կատէգորիները» եւ ըդբաղուենք միայն դասակարգային կռուով եւ կոչենք.— «Մեզ համար գոյութիւն ունի միմիայն երկու ազգ. բոլոր երկիրների պրոլետարները մէկ ազգ են, բոլոր երկիրների բուրժուաները էլ մէկ ազգ»:

Ազգային հարցը քննենք, մենք տեսանք, որ այդ ճանապարհը չատ հեռու չի տանի մեզ: Տեսանք, որ այդ քարոզը տալիս էր Մարքսը եւ նը-

բան հետեւելով, կրկնում էին Լիբկնեխտն ու շատ ուրիշները: Բայց տեսանք նոյնպէս, որ կեանքը եկաւ ու փշուր-փշուր արեց այդ անմիտ, այդ անմարմին կոսմոպոլիտիզմը: Ընկերաբանական գիտութիւնների համար միանգամայն պարզուեց, որ դասակարգային կռիւը պէտք է մղել եւ, փաստօրէն մղւում է, ազգի գրկում, ազգը կազմող դասակարգերի մէջ: Ինչպէս որ բնութեան բոլոր երեւոյթները տեղի են ունենում տարածութեան եւ ժամանակի մէջ, այնպէս էլ հանրային բոլոր երեւոյթները — ուրեմն եւ դասակարգերի կռիւը — տեղի են ունենում ազգի ներսում: Շատ էլ մենք կ'արհամարհենք ազգային հարցը, շատ էլ ճուլման կողմնակից կը լինենք· բայց դրանով նա չի դադարի: Մենք կ'արհամարհենք, բանց նա ամէն անգամ մեր դէմ կը ցցուի խէնչարի պէս, մեզ կ'արգիլէ որեւէ դասակարգային գործ կատարել, առանց հաշուի առնելու ազգայինը — լեզուն, գրականութիւնը, դպրոցը եւայլն, — մի խօսքով՝ ազգային ոգին: Գերեզմանի ափին հասաւ Ալբատրոսին, որովհետեւ ամենեւին չուզեց հաշուի առնել այդ չարաբաստիկ ազգային հարցը: Եւ խնդրի էական կամ արմատական լուծումն էլ մենք պարտական ենք Աւստրիային, ազգային հարցի այդ դասական հայրենիքին, մանաւանդ նրանում գործող ընկերվարական կուսակցութեանը, որի գլուխ են անցած Ադլէրի, Օտտօ Բաուէրի, Դաչինսկու, Պերնէրսթորֆէրի, Շպրինգէրի նման խոհուն, զարգացած եւ փորձուած գործիչներ ու

տեսարանները: Դրանք մշակեցին երկրորդ ուղին:

Ազգային հարցի լուծման երկրորդ ուղին կամ հնարաւորութիւնը հետեւեալն է. որպէսզի հնարաւոր լինի առողջ դասակարգային կռիւ մղել առանց ընդհարումների, առանց ակամայ համերաշխութեան տարրի, նախ եւ առաջ պէտք է լուծել ազգային խնդիրը զրական մաքով. չպէտք է արհամարհել Ազգն ու Հայրենիքը եւ կարծել, թէ այդ թատերական ժեստով կամ չարժուածքով ամէն ինչ վերջացաւ, այլ պէտք է ստեղծել հասարակական, պետական եւ միջազգային այնպիսի կարգեր, որոնց մէջ այլեւս հնարաւորութիւն չլինի ազգերի բռնի ճուլում, ազգային հալածանք, նոյնիսկ պատերազմ ազգերի մէջ: Թող մնան պետութիւնները, կազմեն աւելի եւ աւելի ընդարձակ պետութիւններ. թող փշուր-փշուր դան մեծ պետութիւնները, մանրանան,— միայն թէ այդ բոլոր պարագաներում ազգերի լեզուն, զրականութիւնը, զպրոցը — մի խօսքով՝ նրանց ոգին կամ ազգային կուլտուրան ազատ թողուի, չընդհատուի նրանց ուրոյն, նրանց անկախ զարգացումը:

Բոլոր տիրող ժողովրդների կղերական, հզդատէր եւ կապիտալիստ խաւերը կատաղօրէն մերժում են այդ առաջարկը: Նրանք պահանջում են ճուլում, դրաւում. հրով եւ սրով ստիպել բոլորին դառնալ մի ազգ — այն էլ իրենց, այդ տիրողների ազգից: Նրանք պէտք ունեն այդ բախումներին, այդ պատերազմներին. չէ՞ որ աշ-

խաւաւոր զանգուածները կը զբաղուէն զրանցով եւ այլեւս ժամանակ չէն ունենայ մտածելու իրենց հասարակական կամ տնտեսական հակառակորդի դէմ կազմակերպուելու: Դրանց մի խոշոր մասն էլ — յատկապէս բուրժուազին, ցանկանում է տիրել, նուաճել նոր երկրներ, կլանել նորանոր աղբեր, որպէսզի նոր չուկայ բացուի իր ապրանքների համար: Զենք ժխտում եւ այն, որ պաշտօնէութիւնն էլ յաճախ նիւթականին համահաւասար, մի ուրիշ շահ էլ ունի այդ այլամերժ քաղաքականութեան մէջ, — դա փառասիրութիւնն է:

Այդպէս չեն աշխատաւոր խաւերը: Նրանց համար սուրբ եւ անձեռնմխելի է Ազգութիւնն իր բոլոր առողջ եւ առաջաւոր արտայայտութիւններով, Հայրենիքն իր տարածման բնական սահմաններով եւ ոչ բռնատիրուած, զէնքի ուժով կամայականօրէն գծուած պետական սահմաններով: Այդ պատճառով ամէն մի ընկերվարական խորապէս հակառակ է ամէն տեսակ բռնակալութեան, ամէն տեսակ միապետութեան, նրա պահանջն է հանրապետութիւն: Նա դէմ է ամէն տեսակ ցուաճողական պատերազմի: Բոլոր երկրների ընկերվարական կուսակցութիւնների միահամուռ բողոքներն Իտալիայի յայտարարած գրաւողական պատերազմի դէմ 1911 թուին, պարզ ապացոյց են այդ խաղաղասէր ձգտման: Եւ ո՞վ կարող է դրականապէս պնդել, թէ 1911 թուին, Մարոկեան կնճռոտ խընդրի համար իրար չպէտք է զարնուէին Գերմա-

Նիան եւ Ֆրանսիան, եթէ այդ երկու մեծ ազգերի ընկերվարական մեծ կուսակցութիւնները չսպառնային ընդհանուր եւ քայքայիչ գործադուլ յայտարարել երկու երկիրներում էլ եւ զօսացնել թէ՛ բանակի, թէ՛ ռազմանիւթերի ու պաշարեղէնների փոխադրութիւնը եւ թէ ամբողջ ճարտարարուեստն ու հանքագործութիւնը: Խաղաղութիւնն ընկերվարականների համար այնքան անհրաժեշտ է, որքան ջուրը ձկան համար: Արդարանալի եւ մի անգամայն սրբազան է մի պատերազմ — ազատարար պատերազմը. երբ թշնամին խուժում է քո հայրենիքը եւ գրաւել կամենում, երբ ազդդ լծի տակ է եւ բռնազաւտուած վիճակում եւ դու կամենում ես ու պարտաւոր ես ազատել հալածանքի լծից ազդդ ու հայրենիքդ — այդ ժամանակ ահա ամէն մի ընկերվարական պարտաւոր է զէնք առնել եւ պաշտպանել իր ազգն ու հայրենիքը. այդ դեռ քիչ է. բոլոր ազդերի ընկերվարականները պարտաւոր են բարոյապէս եւ նիւթապէս օգնել այդ ազատամարտին:

Աշխատաւորութիւնը պարտաւոր է դէմ լինել պատերազմի. խաղաղութիւն պահանջել, որովհետեւ պատերազմի բոլոր քայքայիչ բեռը ինքն է, որ կրում է իր ուսերի վրայ. բոլոր ծախքերը, բարդուելով պետական ելեւմուտքի վրայ, դառնում են գլխաւորապէս անուղղակի հարկեր եւ ծանր քարի պէս ճնշում աշխատաւոր խաւերի գրպանը. բանակի գրեթէ 90% ը լցնում են աշխատաւորների զաւակները: Իսկ այդ բոլոր զոհաբե-

բութեան պատուհները քաղում են միայն կեղեքող դասակարգերը, եթէ պատերազմը նուաճողական է։

Դրութիւնը կրկնապէս ծանրանում է ընկերվարականների համար, երբ իրենց ապրած պետութիւնը բաղկացած է չատ ազգերից։ Տիրող ժողովուրդն ուզում է կլանել տիրուածներին, ոչընչացնել նրանց լեզուն, դպրոցը, գրականութիւնը, սովորութիւնները, ազգային ոգին։ Այդպէս է վարւում Պրուսիան լեհերի հետ, այդպէս են անում գերմաններն Աւստրիայում ապրող չեխերին, սլովակներին, հրեաներին, լեհերին. այդ նոյն վարուելակերպն ունի ռուս կառավարութիւնը դէպի հայերը, լեհերը, վրացիները, թուրքերը. նոյն կործանարար ուղին են բռնել վերածընունելու փափաքող Նոր-Թուրքիայի Երիտասարդ Թուրք կոչուող դեկավարները. մի՞թէ նոյնը չէր անում եւ ազատ Անգլիան Իրլանդիայի դաւակնեբի վերաբերմամբ։

Այդ երկրներում ահա ընկերվարականների դրութիւնը չա՛տ աւելի բարդանում է։ Այդ տեղերում տիրող ազգն արհեստականօրէն պահպանում է ազգային ատելութիւնն ու քէնը, որպէսզի առաւելեալ վիճակ ունենայ թէ՛ նիւթական, թէ՛ մտաւոր եւ այլ առպարէզներում։

Եւ այդ երկրներում, ուր ներքին կեանքը դժոխք էր դառել՝ ազգերի բախման չնորհիւ, երկա՛ր տառապեցին ընկերվարականները։ Անհնար էր մղել որեւէ դասակարգային կռիւ ազգերի ներ-

սում, որովհետեւ ազգերի մէջեւ տեղի ունեցող անընդհատ բախումները եւ լարուած վիճակն ամէն մի ազգ վեր էին ածել մի ուրոյն եւ մարմնչող բանակի. չեխ բանուորը, գիւղացին, բուրժուան, հողատէրն ու կղերը մշտապէս դուրս էին գալիս իրը մի բանակ, պաշտպանելու չեխ լեզուի, գրականութեան, դպրոցի, թատրոնի եւն. իրաւունքները: Ամէնօրեայ կռիւն վարժեցնում էր աշխատաւորներին նայելու իրենց ազգային բուրժուազիի եւ հողատէրերի վրայ իրը բնական զինակիցների: Այդ համոզումն ամրանում էր նրանց մէջ, իսկ դասակարգային դիտակցութիւնը մթագնում. չեխ աշխատաւորը չէր կարողանում ըմբռնել, թէ ինչպէս կռուի այսօր այն ազգի եւ հողատէրի դէմ, որի հետ երէկ միատեղ արիւն էր թափում կամ բողոքի ցոյց էր կազմակերպում Վիեննայի կամ Պրագայի փողոցներում. որի հետ երէկ աւստրիական բանակում, երբ իրենց անունը կարդացին, իրենք «դէ» (այստեղ — չեխերէն) պոռացին եւ ոչ պահանջուած hier (գերմաներէն՝ այստեղ) եւ դրա համար միասին նեռուեցին զինուորական հաւպտվախտը կամ բանտը, երկուսն էլ մի խցիկի մէջ... Ի՞նչպէս մոռանալ այս երկարամեայ սրտառուչ դինակցութիւնը, տանջանակցութիւնը:

Բուրժուական յառաջադէմ տարրերը հնարեցին մի միջոց. բաժանել Աւստրիան իր պատմական երկրամասերին — Կարինթիա, Շաւրիա, Բոհեմիա, Լեհաստան, Տիրոլ եւայլն, եւ ամէն մի

երկիրը կամ Landը յատկացնել այդ երկրի պատմական ազգին, տալով նրա երկրին աւտոնոմիա (օտոնոմի) կամ քաղաքական ինքնօրինութիւն: Ամէն մի երկիր Աւստրիայում ունի իր սեփական պարլամէնտը — լանդտագը, որ սահմանում է օրէնքներ իր չրջանի համար, դուրս չգալով համաւստրիական Բայխսրաթի տուած չրջանակներից: Սակայն դէպքերը եկան ապացուցելու, որ 60ական թուերին ազատական բուրժուաների տրուած այդ պետական ձեւը չափազանց ախտաւոր է. մի առ ժամանակ խաղաղութիւնը վերահաստատուեց, բայց չուտով երեւաց, որ ազգերի բախումը վերսկսուեց եւ այն էլ աւելի կատաղօրէն:

Գաղտնիքը նրանումն էր, որ պատմական հայրենիքները վաղո՛ւց դադարել էին իսկական հայրենիքներ լինելուց. չեխերը բազմացել, լցրել էին գերմանական այսպէս կոչուած մի մասը, գերմաններն եկել լցրել էին Բոհեմիայի այնպէս կոչուածը եւայլն: Բացի այդ՝ հրեաները տարածուած էին բոլոր երկրներում, թէեւ քիչ թիւով: Պէտք էր նոր, աւելի դրական գիտութեան վրայ հիմնուած լուծում գտնել հարցին: Ու այդ լուծումը գտան աւստրիական ընկերվարականները. դա ազգերի դաշնակցութեան եւ ազգ-երկրային ինքնավարութեան խնդիրն է:

Պէտք է լուծել ազգային հարցը, մտածեցին ընկերվարականները, որպէսզի երկիրը վերջապէս խաղաղուի եւ հնարաւոր լինի գործարաններ հիմնել, հանքեր մշակել, դպրոց, լեզու, գրականու-

թիւն, դեղարուեստ մշակել — մի խօսքով՝ կուլտուրան առաջ տանել: Պէտք է միանգամ ընդմիշտ վերջ տալ այս ներքին բախումներին երկիրը կազմող ազգերի միջեւ, որովհետեւ առանց դրան մեզ՝ ընկերվարականներիս համար անհնարին է դործել, դասակարգային գիտակցութիւն զարթեցնել, դասակարգային գիտակցութիւն առաջ բերել եւ դասակարգային կուիւ մղել. ազգերի այդ անվերջ բախումները մթագնում են ամէն տեսակի դասակարգային ըմբռնում:

*
* *

Լուծումը: Ընկերվարականները սկսեցին լրենց ամբողջ ուժով կուիւ յայտարարել ռազմոյթի կամ միլիտարիզմի դէմ, կատաղի կուիւ ներկայ պետութիւնների գինուած խաղաղութեան եւ առհասարակ ամէն տեսակ պատերազմի դէմ: Իսկ մինչ այդ վերջնական եւ արմատական նպատակին հասնելը, նրանք նախ եւ առաջ ուզեցին բազմացեղ պետութիւնների ներքին կեանքում խաղաղութիւն սահմանել, վերացնելով ազգային բախումները:

Ազատական բուրժուազին արդէն ընդգծել էր հարցի լուծման ուղին. նա յայտնել էր իրագործել «ամէն մի ժողովուրդի իր հայրենիքի մէջ քաղաքական ինքնավարութիւն տալու» սկզբունքը, մնում էր մշակել այդ սկզբունքը, մանրակրկիտ քննադատութեան բովով անցկացնել:

ՖինաղատուԹեան առաջին փորձից իսկ ցոյց տուին, որ ներկայումս ժողովուրդները չափազանց խառն են ապրում. որ պատմական հայրենիքներն այլևս այսօր չեն համապատասխանում ժողովրդների կամ ազգերի տարածման իրական սահմաններին. որ նոյնիսկ ամէն տեղ ազգերն ապրում են խառը, մի տեղ խիտ, մի այլ տեղ ԹեԹեւ կերպով իրար մէջ մտած, իրար հետ հիւսուած լինելով:

Երբ այդ ԹերուԹիւնը արդէն ապացուցուեց, այլևս դժուար չէր առաջարկել նոր միջոցներ, որոնք զերծ լինէին այդ պակասուԹիւններից: Իսկոյն ծնունդ առան երկու նոր առաջարկներ. ա) հողային կամ երկրային (տէրրիտորիական), բայց ոչ պատմական հայրենիքի ինքնավարուԹեան ընկերակցութիւնքի եւ բ) ազգային կամ արտահողական (էքստէրրիտորիական) սկզբունքի վրայ հիմնուած:

Պարզաբանենք այդ երկու առաջարկները, քննենք նրանց ուժեղ եւ Թոյլ կողմերը եւ յետոյ առաջարկենք մեր միջոցը — Ազգ-երկրային (տէրրիտորիական-ազգային) ինքնավարուԹեան սկզբունքը:

ՊետուԹեան գլխում ազգային հարցը լուծելու, ազգերի բախումներից ազատ մնալու համար առաջարկուած միջոցներից մէկը հողային կամ երկրային (տէրրիտորիալ) օԹոնոմիի կամ ինքնորինուԹեան սկզբունքն է: Համաձայն այդ սկզբունքի, պէտք է բազմացեղ պետուԹեան երկիրը

բաժանել այնպիսի գաւառների եւ երկրամասերի, որ իւրաքանչիւր բաժանման վրայ ապրին մի-մի ազգութիւն, ի հարկէ, որքան կարելի է անխառն: Եթէ ազգերը այնպէս են զետեղուած պետութեան մէջ, որ ամէն մէկն ունին իրենց տարածման որոշ սահմանները, եթէ նրանք ցրիւ եկած, իրար մէջ հիւսուած ու խառնակեաց չեն, այն ժամանակ կառավարելու խնդիրը շատ կը դիւրանայ: Օրինակ՝ Աւստրիան, Ռուսիան, Թուրքիան եւայլն, կը բաժաննք այնպիսի նահանգների, որ ամէն մի նահանգ համապատասխանէ տրուած ազգի էական տարածման սահմաններին:

Այդ բաժանումը կատարելիս, երբեք չպէտք է տարուել պատմական հայրենիքի գաղափարով, այլ պէտք է աչքի առաջ ունենալ ազգութեան տարածման, նրա լեզուի այժմեան սահմանները միայն:

Երբ այսպիսի ազգային նահանգները կազմուեցին, այնուհետեւ կը տանք նրանց վարչական և օրէնսդրական լայն ապակենտրոնացում(*), այսինքն ամէն մի նահանգ կ'ունենայ իր սեփական ընտրովի պատգամաւորական օրէնսդիր ժողովը, իր ընտրած կառավարութիւնը, ոստիկանութիւնը, ընտրովի դատաւորները եւայլն, միայն թէ

(*) Վարչական եւ օրէնսդրական ապակենտրոնացման կամ տեղական ինքնավարութեան եւ օթոնոմիի մասին նայել մեր «Դէպի ֆեդերացիա» գրութիւնը:

երկրի ընդհանուր կամ կենտրոնական պարլամէնտի սահմանած օրէնքները միշտ պէտք է առաջնութիւն ունենան նահանգական ժողովների որոշումներէն։ Երկրի գլխաւոր կամ կենտրոնական պարլամէնտը կը գծէ որոշ սահմաններ գաւառների, նահանգներուն կամ երկրամասերի օթոնոմիի համար, կը տայ այն չրջանակը կամ այն հարցերը, որոնցէ դուրս գալու իրաւունք չպէտք է ունենայ գաւառական օրէնսդիր ժողովը։ Բացի այդ, եթէ միեւնոյն հարցի մասին գաւառական ժողովը հրատարակել է արդէն մի օրէնք, իսկ յետոյ կենտրոնական օրէնսդիր մարմինը հրատարակում է նոյն խնդրի մասին մի տարբեր օրէնք — յաղթողը կամ գործադրուողը պէտք է լինի կենտրոնական մարմնի օրէնքը։

Պարզ է. բոլոր տեղական խնդիրները, բոլոր տեղական ազգային ըմբռնումները եւ առանձնայատկութիւնները լիապէս բաւարարութիւն կը գտնեն կառավարական կամ քաղաքական այդ ձեւի մէջ։ Ամէն մի ազգային նահանգի օրէնսդիր եւ գործադիր վարչութիւններին է թողնւում իր նահանգի բոլոր տեղական գործերը. սահմանիր օրէնքներ եւ կարգադրիր քո նեղքին գործերդ ինչ պէս կը կամենաս — լեզու, դպրոց, գրականութիւն, թատրոն, թանգարաններ, ազգ հասարակութեան հոգսը, գաւառական եւայլն, եւայլն, — մի խօսքով՝ այն բոլոր խնդիրները, որոնք կազմում են մի ազգի զարգացման խարիսխները։ Դուրս են մնում համապետական խոշոր հարցերը

— փոստ եւ հեռագիրը, բանակ եւ նաւատորմ, չափերը ու կշիռները, դիպլոմասի կամ քաղաքականութիւն եւայլն, դրանք էլ պէտք է վարեն համաշխարհական օրէնսդիրը եւ գործադիրը իշխանութիւնները:

Այլեւս այդպիսի վարչական եւ օրէնսդրական ճեւի մէջ անհնարին է ազգերի ներքին բախում, անկարելի է ազգային հարցի ծագում: Այլեւս ազգութեան բոլոր դասակարգերը բռնադատուած չեն միանալու, միահամուռ ուժով ղէմ դնելու իրենց ազգային հակառակորդին, իրենց ազգութիւնը կլանել կամեցող թշնամուն: Այդպիսի թշնամի չկայ, եւ ամէն մի ազգութեան ներսում դասակարգերը լիապէս ազատ են. նրանք կարող են կազմակերպուել դասակարգօրէն եւ կռիւ մղել իրենց դասակարգային չահերի տեսակէտից, որքան դա հնարաւոր կը լինի թէ՛ համաճայն ժողովրդի զարգացման, թէ՛ երկրի տնտեսական յառաջդիմութեան աստիճանին: Եթէ տրուած ազգային նահանգի տնտեսութիւնը չատ առաջ գնացած եւ ժողովուրդն էլ լուսաւորուած կամ գիտակցութեան գէթ մի քիչ հասած կը լինի, դասակարգային կռիւը կարելի կը լինի մղել մեծ չափերով, պահանջները դնել աւելի խոտօրէն եւայլն, եթէ ոչ դասակարգային կռիւը թոյլ կը լինի, տրուած պահանջները պարկեչա կամ խոնարհ չափեր կ'ունենան:

Տեսականապէս չատ գեղեցիկ եւ միանգամայն

ամբողջական է ազգային հարցը լուծելու այս առաջարկը: Աւելի ի միջի այլոց, որ քննելով Աւստրիայի ներկայ պատմաերկրային կազմը, կ. Կաուցկին առաջարկում է հարցի լուծման այդ ձեւը եւ կարծում է, որ եթէ այդ ձեւով բաժանում կատարուի, ազգութիւնների խնդիրը լուծուած կը լինի Աւստրիայում: Սակայն տեսականօրէն գեղեցիկ այդ կառուցուածքը գործնականի մէջ օդն է ցնդում արագ:

Ներկայումս չափազանց շատ են այն նահանգները, որոնց մէջ մի ազգ չէ ապրում: Այսպէս Բոհեմիան, չեխերի պատմական հայրենիքը պարունակում է մեծ թիւով գերմանացիներ, որոնք բոհեմական մի քանի գաւառներում նոյնիսկ բացարձակ մեծամասնութիւն են կազմում, թէեւ հետները ընակւում են միեւնոյն վայրերում եւ չեխեր. մի քանի ուրիշ գաւառներում չեխերն են մեծամասնութիւն, բայց կան եւ փոքրամասնութիւն կազմող գերմաններ: Աւստրիական Լեհաստանում (Գալիցիա) այսօր կան գաւառներ, ուր մեծամասնութիւն են կազմում ռուսինները, որոնց դրեթէ ճորտացրել է լեհ ազնուականութիւնը կամ չլեհատան: Իսկ այդ երկու երկրներում էլ ցրիւ են եկած բազմաթիւ հրեաները, որոնք ոչ մի տեղ, ոչ մի գաւառում չեն կազմում ազգաբնակութեան մեծամասնութիւնը: Նոյնը կարելի է ասել Կովկասի, Թիւրքեստանի եւ Մակեդոնիայի շատ մասերի վերաբերմամբ:

Այդպիսի խառն ազգաբնակութիւն ունեցող

երկրների համար երկրային կամ հողային սկզբունքի վրայ յենուած ինքնավարութիւնը չէ կարող ազգային հարցի լուծման միջոց համարուել: Եթէ օթոնոմին մոցուեց այդ երկրները՝ վերեւում ասուած ձեւով, այն ժամանակ իրար են զարնուելու արուած գաւառում բնակուող երկու երեք ազգերը: Բնականաբար յաղթողը լինելու է մեծամասնութիւն կազմող ազգը, իսկ փոքրամասնութիւնները կրկին մնալու են ճնշուած, հալածուած ու զրկուած. ուրեմն կրկին պէտք է ասպարէզ գայ չարաբաստիկ ազգային կնճիռը: Կը նշանակէ, այդ միջոցով հարցն արմատապէս չլուծուեց, այլ համապետական խոշոր ընդհարումներից դարձաւ նահանգական, մանր, բայց աւելի բազմաթիւ, աւելի յաճախակի, փոխանակ իրար զարնուելու, օրինակ, Վիեննայի համաւստրիական Բայխսրաթում, պէտք է իրար զարնուին նահանգական ժողովներում կամ Լանդտագներում, փոխանակ միաժամանակ մի քանի ազգերի — լեհերի, չեխերի, գերմանների, ռուսինների, իտալացիների, հրեաների, սլովէնների եւայլն ընդհարման, մենք կ'ունենանք, օրինակ, լեհերի, ռուսինների եւ հրեաների ընդհարում Բոհեմիայում, գերմանների եւ իտալացիների ընդհարում Տիրոլում եւայլն, եւայլն:

Հողային կամ երկրային սկզբունքի այդ խոշոր թերութիւնները աչքի առաջ ունենալով, առաջարկուեց ու մշակուեց երկրորդ սկզբունքը — արտահողային կամ էքստէրրիտորիալ օթոնոմին:

Ազգերի խնդիրը շղթաք է կապել երկրի կամ հողի հետ. այլ ամէն մի ազգութիւն պէտք է ղեկտել իւր մի ուրոյն եւ հողից անկախ բարոյական անձնաւորութիւն: Ամէն մի պետութեան մէջ, ուր էլ որ բնակուած լինեն, որ մասերում եւ ծայրերում էլ ցրիւ եկած լինեն մի ազգութեան անդամները, նրանք կազմելու են մի ամբողջութիւն: Նրանք պէտք է ընտրեն իրենց ազգութեան օրէնսդիր եւ գործադիր մարմինները եւ կառավարեն իրենց ազգին վերաբերող բոլոր գործերը — թէ՛ նիւթական, թէ՛ բարոյական ու մտաւոր: Ազգութեան բոլոր անդամները, լինելով տրուած պետութեան անդամները, մասնակցում են պետական կեանքին վերաբերող բոլոր խնդիրներում, բայց դրանից դուրս՝ նրանք անդամ են իրենց ազգային միութեան: Այսպիսով ամբողջ պետութիւնը կազմուած կը լինի ազգերի միութիւններից, որոնք իրենց բոլոր ազգային գործերում կը լինեն միանգամայն անկախ, բայց բոլորը միասին կը կազմեն ազգերի մի եղբայրական դաշնակցութիւն, մի ամբողջացած պետութիւն: Որքան ազգերը զարգանան, այնքան նրանց պետական միութիւնը կը զօրանայ, թէեւ նոյնքան էլ ազգերն առանձին առանձին աւելի եւ աւելի իրաւունքներ կը ստանան, իբր բաղադրիչ մասեր նոյն պետութեան:

Արտահողային կամ էքստէրրիտորիալ սկզբունքի յայտողն ու մանրամասնօրէնն մշակողը մի աւստրիացի գրող է, — Ռուդոլֆ Շպրինգէրը կամ Սինոպտիկուսը, որին արձագանգ տուին չատ ու-

ըիչ գրողներ էլ(*)։

Ռուզվելթ Շպրինգէրն իր առաջարկած սխեմայի թոյլ կողմը լաւ էր զգում, երբ գրում էր, թէ վերջ ի վերջոյ ամէն մի ազգի համար անհրաժեշտ է, գոնէ մանր համայնքներում, կազմակերպուել հողային սկզբունքով, որովհետեւ չէ կարելի երեւակայել ուէյ ժողովուրդ բացարձակօրէն անհող։ Աւստրիական, միաժամանակ ռուսական յայտնի հրեայ գրող Բաանէրը, հետեւելով Շըպրինգէրին, արտահողային սկզբունքով կազմակերպութեան նման մի բան գտնում է Թուրքիայում եւ Միացեալ Նահանգներում։ Կրօնական համայնքներն, ասում է նա, Թուրքիայում եւ Միացեալ Նահանգներում ունեն մասնաւորապէս այն ձեւի կազմակերպութիւն, ինչ որ առաջարկում է Ռ. Շպրինգէրն ազգերի համար։

Սակայն որքան էլ չանանք ազգերը կազմակերպել արտահողային սկզբունքով, այնուամենայնիւ գալու են շատ գործնական հարցեր, որոնք պերազանցօրէն ազգային լինելով հանդերձ, պէտք է պահանջեն հողային սկզբունք, որոշ երկիր, որի վրայ կազմակերպուին, որի վրայ ապրին։ Հողային սկզբունքի վերջնական անհրաժեշտութիւնը եւ նրա անխուսափելի կարեւորութիւնը մեզ ստիպում են որոնել մի երրորդ կամ մի խառը լու-

(*) Թէ՛ այդ եւ թէ առաջին միջոցը՝ մենք մանրամասնօրէն առաջ ենք բերել «Դէպի Փիլիբայիա» գրուածքում։

ծում է։ Դա ազգ-երկրային սկզբունքն է։

Բազմացեղ պետութիւնը պէտք է բաժանել մանր գաւառների այնպէս, որ որքան հնարաւոր է՝ միատեսակ ազգութիւններ զետեղուին ամէն մի գաւառում, գաւառակում եւ նոյնիսկ գիւղական համայնքներում։ Երբ մենք կը տառանք այնպիսի հողային մանր միութիւններ, որոնց վրայ կ՝ապրին ազգայնօրէն միապաղաղ զանգուածներ, այնուհետեւ գործը չատ կը դիւրանայ։ Միեւնոյն ազգին պատկանող բոլոր մանր հողային միութիւնները, որքան էլ իրարից հեռու, բաժան-բաժան ընկած լինեն, կը կազմեն մի ազգային ամբողջութիւն, որը կ՝ունենայ իր ազգային ղեկավար մարմինները — թէ՛ օրէնսդրական, թէ՛ վարչական, միանգամայն մնալով անբաժան մաս իրենց պետութեան։

Այնուհետեւ կրկին դալիս է, նոյնիսկ ամենափոքր հողային միութեան մէջ, — ուրիշ ազգային հատ ու կտոր տարրերի, չնչին փոքրամասնութիւնների խնդիրը։ Այդտեղ ահա հողային ըկղբունքին օժանդակութեան կը հասնի արտահողայինը։ Այն փոքրամասնութիւնները, որոնք ոչ մի հնար չունեն կազմակերպուելու իրը ուրոյն հողային միութիւններ կամ համայնքներ, այլ խառնուած են միւս ազգութեան մէջ, ինչպէս օդը միւս մարմինների ծակոտիներում, դրանք կը կազմակերպուեն արտահողային սկզբունքով, իրը ազգային մի համայնք։ Դրանք իրենց պետական եւ տնտեսական խնդիրների մեծագոյն մասը կը վա-

ըեն իրենց բնական երկրի հողակից, բայց ոչ ազգակից եղբայրների հետ. իսկ բոլոր ազգային հարցերում նրանք սերտօրէն կապուած կը լինեն իրենցից հողով բաժան ազգակիցների մեծ խմբի հետ, նրանց հետ միատեղ կը լուծեն իրենց կուլտուրային վերաբերող բոլոր խնդիրները միանգամայն ինքնուրոյնաբար:

Ահա առաջարկուած երեք ձեւերի համառօտ նկարագրութիւնը: Առաջին երկուսն ունէին եւրոպական գրականութեան մէջ հեղինակաւոր անուններ, որոնք առաջարկել ու մշակել են այդ սկզբունքները. իսկ երրորդ առաջարկը, որ մի տեսակ համադրութիւն է նախկին երկու սկզբունքների, մեր առաջարկն է, իբր գործնական ելք ազգային կնճռոտ խնդրից այն երկրներում, ուր ազգարնակութիւնը շատ վայրերում խիստ խառն է ապրում: Գրականութեան մէջ ամփոփ եւ ամբողջական, մշակուած ձեւով ոչ ոք չէ առաջարկել այդ սխեմը, որքան մեզ յայտնի է: Ռուսական գրականութեան մէջ պրոֆեսոր Գրուշեւսկին է, որ մի ակնարկ է նետել փոքրամասնութեան իրաւունք կոչուած սկզբունքի վրայ, բայց չէ մշակել ազգ-երկրային օթոնոմին: Այդ պատճառով մենք չենք կարող յանձնարարել որոշ աղբիւրներ եւրոպական գրականութիւնից, ինչպէս արել ենք մի քանի այլ հարցերի վերաբերմամբ: Մեր «Դէպի ֆեդերացիա» աշխատութեան մէջ մենք մանրամասն մշակել ենք ազգ-երկրային օթոնոմիի սկզբունքները, նոյնիսկ բերել ենք փորձնական օրի-

նակներ Կովկասի հայերի, վրացիների եւ թուրքերի բնակավայրերի կամ բնագաւառների կեանքից, երկարօրէն պարզաբանել ենք փոքրամասնութեան իրաւունքի հարցը երկրի, նահանգի եւ ազգային բնագաւառի ելեւմուտքի վերաբերմամբ: Այդ պատճառով մենք այլեւս կանդ չենք առնում այդ խնդիրների վրայ, այլ՝ հետաքրքրուղներին յանձնարարում ենք թերթել այդ աղբիւրը:

*
* *

Գործնական խնդիրներ.— Տեսական մասի վերլուծութիւնը վերջացնելով, անցնինք գործնական հարցերի:

Համոզուած եմ, որ մեր այս աշխատութիւնը կարդացող հայ պահպանողականը, ուսերը թօթուելով, պէտք է ասէ. «Այդ բոլոր տեսութիւնները դասակարգերի եւ նրանց կռուի մասին — անկախ այն հարցից, թէ որքան ուղիղ կամ սխալ են, — յատկապէս մեզ՝ հայերիս համար անօգուտ են, որովհետեւ ոչ գործարաններ կան մեր երկրում, ոչ պրոլետարներ»:

Մենք կը պատասխանենք. այո՛, այսօր կա՛մ բոլորովին չկան գործարաններ եւ պրոլետարներ, կամ չափազանց նուազ են, բայց աչքդ լաւ բաց արա, բարեկամ, մեր երկրի վաղուան օրն է, որ մենք նկարագրել ենք մեր այս գործում: Եթէ ամէն տեղ մենք օրինակներ ենք բերել Ֆրանսիայի, Անգլիայի, Աւստրիայի կամ Գերմանիայի կեան-

քից, դրանով մենք զծել ենք հայերիս եւ չրջապատող բոլոր մեւս ժողովուրդների անցնելիք ուղին: Երբ 1870 թուերին Կ. Մարքսը լոյս աշխարհ հանեց իր «Կապիտալ»ի առաջին հատորը, զգաց, որ նոյն վաղաժամութեան առարկութիւնը պէտք է անեն իր դերման հայրենակիցները. այդ բոլորը, — պէտք է ասէին նրանք, — լաւ է Անգլիայի համար, իսկ մեր երկրի համար նշանակութիւն չունի: Դրան Մարքսը պատասխանեց մի իտալական առածով. «Անունը փոխած՝ առակը քո մասին է պատմուում»:

Իսկ այսօրուան օրը մենք հայերս ո՞ւր ենք. արդեօ՞ք չունենք դասակարգային կռիւ: Այո՛, այսօր էլ մենք մղում ենք մի դասակարգային կատաղի մարտ, բայց դեռ եւս դա աշխատանքի եւ կապիտալի կռիւը չէ:

Մեր դլխին կանգնած են հնութեան մնացորդ երկու խոշոր դասակարգեր — աւատականութեան դպալի մնացորդները — քիւրտ աշիրէթապետերը, բէկերը, աղաները, միւթէդալիպէները, թուրք հողատէրերը եւ, մանաւանդ, 600 տարուց ի վեր դրեթէ բացառապար դէնքը եւ կառավարելու արհեստը իւրացրած տիրապետող թուրք տարրը:

Մեր բնագաւառում, աւերակ Հայաստանում, լիապէս աւատական կամ ֆէոդալական յարաբերութիւնները են տիրում: Կ. Պոլսի կենտրոնական պետական իշխանութիւնը 1830-1860 թուականներում ոչնչացրեց այնտեղ տիրող դէրէբէյութիւնը, 1835 թուին Ռաչիդ փաշան յաղթեց Խան-Մահմուտ

հզօր դէրէբէյին, իսկ 1847 թուին Օսման փաշան ջարդեց Բէտր-խան բէկի ուժը: Երկուսն էլ դերի առնուեցան եւ մէկին Սիլիստրիայի բերդը, Դանուբի ափին, միւսին Կրետէ կղզին աքսոր ուղարկեցին: Սակայն Պոլսի կենտրոնական կառավարութիւնը չէարունակեց իշխանութեան կենտրոնացման կամ հաւաքման այլ փառաւոր դործը. խոշոր դէրէբէյերն ընկան, բայց մանրները մնացին Դերսիմում, Շատախում, Բաղէշի, Վանի, Դիարպէքիրի եւ Խարբերդի վիլայէթներում ամրողջապէս, Էրզրումի վիլայէթի մի մասում — Բայազէտի եւ Ալաշկերտի չրջաններում: Այդ աւատականն հողատէր ու կողոպտիչ տարրերի հետ միացած է նաեւ թուրք պաշտօնեայ եւ հողատէր տարրը: Մինչեւ 1880 թուականները Թուրքիայի կենտրոնական իշխանութիւնն ամէն կերպ աշխատում էր փչրել քիւրտ աւատական տարրերի ուժը, իսկ 1890ից յետոյ Համիտի վարչութիւնն, ընդհակառակը, ամէն կերպ աշխատում էր վերականդնել քիւրտ աւատական տարրերը, մանաւանդ վոչ աղնուականութիւնը, կազմակերպելով նրանցից իր Համիտիէի դնդերը:

Այսօր հայկական նահանդներում մղւում է դասակարդային կատաղի կռիւ, միայն թէ ամբողջ հայ աշխատաւորութիւնը, բաւական լաւ կազմակերպուած, կազմում է առաջապահ դունդը, իսկ նրա հետ, իրը ժամանակաւոր պլոք կազմողները, միաւոր են ընթանում եւ նորածիլ հայ բուրժուաները (առեւտրական եւ վաշխառուական չնչին կա-

պիտալի ներկայացուցիչներ), եւ հայ հոգեւորականութիւնը: Դրանց հետ սկսել են դիտակցութեան գալ նաեւ քիւրտ ճորտ տարրերը եւ աստիճանաբար միանալ հայ աշխատաւորութեան հետ, կռիւ մղելու համար քիւրտ աւատական տարրերի դէմ:

Քէօռ Հիւսէյիններ, Նամոէ Ռաշոներ, Զարսանջակի բէկերը, Մուսաները, Ղասըմները եւն. — հասարակ աւազակներ չեն, այլ քիւրտ ազնուականները, որոնք վարժուել են, դարեր շարունակ, սերնդից սերունդ կողոպտել ռայա հայ ժողովուրդը:

Օսմանեան թուրք տարրն էլ, լինելով ընդամէնը 7–8 միլիոն, այսօր տիրապետում է կայսրութեան դրեթէ 25–26 միլիոն ժողովրդին: Օսմանեան կայսրութեան հիմնարկութեան օրից այդ փոքրիկ ցեղը, ճուլելով իր մէջ փոքրաթիւ սելջուկներին, դարձաւ տիրող ցեղ. ղրկեց զէնքից բոլոր քրիստոնեաններին եւ ինքը դարձաւ կամ զինուոր, կամ պաշտօնեայ: 600 տարի, սերնդից սերունդ, ժառանգաբար վարուեց տիրող ցեղը միայն պատերազմ մղելու եւ կառավարելու, եւ այսօր մենք տեսնում ենք, որ թուրք ցեղը կորցրել է իր աշխատունակութիւնը, պահել միայն զինուորի եւ պաշտօնեայի յատկութիւնները:

Եղան նոյնիսկ ընկերվարական գրողներ, որոնք անկարող լինելով պարզել թուրքիայի յետամնացութիւնը, նրա զեկավար եւ տիրող տարրի անընդունակութիւնը՝ չուտով ըմբռնելու եւ իւ-

բացնելու եւրոպական դաշափարներն ու կարգերը, մնացին չուարած այդ երեւոյթի առջեւ եւ սխալուած եղան, բացատրութիւն տալու համար, դիմել ցեղերի կամ ռասաների խախուտ տեսութեանը: Նրանք չըմբռնեցին, որ 600 տարուայ զինուորական եւ բիւրոկրատիական աղնուականութիւնը չէ կարող արագ ձեւափոխուել, այն էլ 3-4 տասնամեակների ընթացքում: Զբաղմունքի եւ ժառանգականութեան խնդիրը կապ չունի Կոմս դը Գոբինոյի առաջարկած ռասական մերժուած տեսութեան հետ(*):

Դասակարգային այս քաղաքականութեան հետ միատեղ եւ միաժամանակ պէտք է մղել նաեւ ազգային քաղաքականութիւն:

Աշխատաւորութիւնը պարտաւոր է պահպանել եւ զարգացնել իր մայրենի լեզուն, գրականութիւնը, դպրոցները եւայլն: Նա պարտաւոր է մտնել հայ ներքին կեանքի ազգային գործերի մէջ. նա պէտք է ջանայ իր ձեռքն առնել թաղական խորհուրդները, ազգային ժողովները ու վարչութիւնները, մանուկ սերնդի դաստիարակութիւնը, ազգային կալուածների գիկը եւայլն: Երբ նա դուրս կը վանէ այդ տապարէզներից հին ազգայական տարրերը, այն ժամանակ նա կը ձգտի վերանորոգել, թարմութիւն ներմուծել լճացած եւ նեխուած ազգային գործերի մէջ:

(*) Տես Le Comte de Gobineau — «Essai sur l'inégalité des races humaines», 1884, Paris.

Առաջին եւ ամէնից տխպողական խնդիրն է դպրոցական կրթական գործը: Ընկած են մեր դպրոցները, տգէտ են մեր ուսուցիչները: Պէտք է զարգացնել այդ գործը, պէտք է տարրական եւ միջնակարգ դպրոցների մի խիտ ցանցով ծածկել Վանի, Բաղէշի, Կարնի, Դիարբէքիրի, Սվազի եւ Խարբերդի հայկական վիլայէթները: Պէտք է բանալ ուսուցչանոցներ, եթէ ոչ՝ կոյրը կոյրին եթէ առաջնորդէ, երկուսն էլ կ'ընկնեին խորխորատ: Սակայն դրա համար անհրաժեշտ են նիւթական միջոցներ: Ո՞րտեղից ճարել:

Նախ պէտք է պետութեան բիւդջէից պահանջել հայ կրթական հիմնարկութիւնների բաժինը — համեմատ հայերիս թուին: Երկրորդ՝ պէտք է մենք մեզ վրայ ազգային հարկ սահմանելու եւ պետական միջոցներով գանձելու իրաւունք ձեռք բերենք. ուրեմն՝ պէտք է մի այդպիսի յօդուած մտցնենք հայկական Սահմանադրութեան մէջ:

Այնուհետեւ պէտք է վերջապէս ոչնչացնենք կ. Պոլսի արտօնեալ եւ խեղդիչ ազդեցութիւնն ազգային բոլոր գործերի վրայ: Դրա համար մի ճար կայ. Ազգային ժողովի երեսփոխանների ընտրութիւնը դարձնել ընդհանուր, գաղտնի եւ հաւասար ամբողջ Թուրքահայ ժողովուրդի համար, հաշուելով 30-40 հազար հոգուն մէկ պատգամաւոր, եւ ընտրելու իրաւունք տալ ոչ թէ 25, այլ 20 տարեկանից սկսած բոլոր հայ անձերին — այլ թէ կին: Պէտք է ճգտել, որքան որ պետական պայմանները կը թոյլատրեն, աշխարհականացնել

(laïfier) մեր Ազգային Սահմանադրութիւնը...

Եւ այս ազգային չարժման մէջ հայ աշխատաւորութիւնն է միայն, որ ընդունակ է կեանք եւ թարմութիւն ներարկել, եթէ ոչ՝ կղերական եւ աղայական տարրերն ամէն ինչ ծառայեցնում են իրենց նեղ եսական ու դասակարգային չահերին:

Փառաւոր ապագայ է սպասում հայ աշխատաւորութեանը, եթէ նա եռանդով եւ խմաստորէն կարողանայ մղել իրեն բաժին ընկած դոյդ կռիւը — դասակարգային եւ ազգային ահեղ տընտեսական, մտաւոր եւ բարոյական մարտը:

Նա կը յաղթէ: Լաւատես գուշակութիւն չէ այս, այլ առաջնթաց ազգերի ընկերական չարժումների բարեխիղճ ուսումնասիրութիւնից ըստ-ած մի ժայռ համոզում:

ՎԵՐՋ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ 5

ՅԱՌԱՋԱԲԱՆ 9

ԳԼՈՒԽ Ա.— 11–59

Մարդկային պատմութեան բաժանումն ըստ դասակարգերի — Առաջին շերտաւորումներ — Կին եւ այր — Մարդակերութիւն — Մարդը մարդու համար գայլ — Սկըզբնական համայնքի քայքայումը — Ստրկութիւն — Դասեր Հռոմում եւ Աթենքում — Դաս, *класс* [խաւ] եւ դասակարգ — Ճորտատիրութիւն — Հին եւ միջնադարեան աշխարհի բախումը — Քաղաքներ եւ համքարութիւններ կամ էսնաֆութիւններ — Սրանց քայքայումը — Մանուֆակտուրա կամ ձեռագործ արտադրութիւն — Մեքենան եւ դրամատիրութիւնը [capitalisme] — Վարձու բանուորութիւն:

ԳԼՈՒԽ Բ.— 60–186

Կեղեքուած դասակարգը — Ցաւելեալ արժէք — Ներկայի գլխաւոր երեք դասակարգերը· հողատէր, դրամատէր եւ աշխատաւոր — Ադամ Սմիթ եւ Մարքս — կառուցկին իբր շարունակող Մարքսի տեսակէտի — Ենգելս — Ար-

տադրութի՞ւնը թէ բաշխումն ընդունել հիմք դասակարգերի բաժանման — ժամանակակից պրոլէտարիա՞տ թէ աշխատաւորութիւն — Աշխատաւորական տեսակէտը — Գիւղացին եւ բանուորը — Թուեր եւ տեսակէտներ — Ո՞ր դասակարգերն են ընդունակ ընկերվարօրէն մտածելու — Ընկերվարականները եւ գիւղացին:

ԳԼՈՒԽ Գ.— 187–277

Բաժանման գիծը — Բուրժուական դասակարգ — Աշխատաւորութիւնը — Դրանց ստորաբաժանումները — Մտաւորականութիւնը եւ նրա դերը — Խոշոր արտադրութիւնը — Նրա նակատագրական անհրաժեշտութիւնը — Նրա լաւ եւ վատ կողմերը — Նրա վատ կողմերը վերացնելու միակ միջոցը:

ԳԼՈՒԽ Դ.— 278–371

Դասակարգերի տարբերական եւ նմանողական տարրերը — Դասակարգային կռիւը — Ե՞րբ է հնարաւոր դասակարգերի համերաշխութիւնը — Ազգ եւ դասակարգ — Ազգային հարցի լուծումը — Գործնական պահանջներ:

Գ ի ն՝ 12 լ. Ոսկի

Կեդրոնատեղի

HAMASKAÏNE BOOKSHOP
10, Hussein Beyhoum Street
Beirut — Lebanon

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ
ՎԱՀԷ ՍԷԹԵԱՆ ՏՊԱՐԱՆ

Պատուէր	548
Տպաքանակ	2000
Պրակ	23,5
Աւարտում	20-2-1981

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՎԱՀԷ ՍԷԹԵԱՆ ՏՊԱՐԱՆ

Printed in Lebanon by Hamaskaïne W. Sethian Press

Աշխատաւորական տեսակէտն, ուրեմն, սկըզբունք է ընդունում հասարակական հարստութեան բաշխումը. ով ապրում է իր սեփական աշխատանքով, առանց ուրիշների յաւելեալ արժէքը իւրացընելու, առանց կեղեքելու, — նա աշխատաւոր է. իսկ ով մասամբ կամ ամբողջովին ապրում է յաւելեալ արժէքով, — նա բուրժուա է: Այս որոշումը պարզ է արեւի լոյսի նման: Ամէն տեսակի բանուորներ, բոլոր մանր արհեստաւորները, բոլոր մանր հողատէր, սակաւահող եւ անհող գիւղացիները աշխատաւորներ են: Աշխատաւորներ են նաեւ մտաւոր պրոլետարները, որոնք իրենց սոցիալական դրութիւնով աւելի մօտ են կանգնած աշխատաւորութեան, որովհետեւ լոկ իրենց մտքի աշխատանքով են ապրում, մասնակից չլինելով յաւելեալ արժէքի, այլ յաճախ իրենք եւս կեղեքուելով: